Հ. Տ.-ԱՎԱԳՅԱՆ

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂՀՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ 1935

4/3 [illegible]

18 DEC 2017

Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԽԻՎ

ԳՅՈՒՂՀՐԱՏ • 1935 • ԵՐԵՎԱՆ

Աշխատությունը նայված յեվ խմբագրված է մեղվաբույծ մասնագետներից կազմված խմբագրական հանձնաժողովի կողմից, մասնակցությամբ՝ Հ. ՀԱՄԲԱՐՅԱՆԻ (նախագահ), Դր. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ (քարտուղար), Հ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ, Խ. ՏԵՐ-ԱՎԱԳՅԱՆԻ յեվ Վ. ԴԱԳԵՍՅԱՆԻ

Խմբագիր՝ Հ. Համբարյան
Տեխ. խմբ.՝ Հ. Մուրադյան
Լեզվ. խմբ.՝ Արբ. Գրիգորյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

Գլավլիտի լիազոր Մ—365, հրատ. № 284
Պատվեր № 699, տիրաժ 2500
Հանձնվել է արտադրության 29/XI 35թ.
Ստորագրված է տպագրելու 9/XII 35թ.

Գյուղհրատի տպարան, Յերեվան, Նալբանդյան 11.

ԱԶԳԱՅԻՆ
II-241205գր

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր յերկրի ողջ գյուղատնտեսության վերակառուցման ու վերելքին զուգընթաց, գնալով աճում ու ամրապնդվում է նաև սոցիալիստական մեղվաբուծությունը։

Մինչ պրոլետարական մեծ հեղափոխությունը ԽՍՀՄ-ում, բավականին խոշոր և արդյունաբերական բնույթ կրող մեղվանոցները գտնվում եյին կուլակային տնտեսությունների ձեռքին։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աշխատավոր գյուղացիությունն լայն հնարավորություն ստացավ մեղվաբուծությամբ զբաղվելու և զարգացնելու։

Գյուղատնտեսության սոցիալիստական, տեխնիկական վերակառուցման ամուր բազայի վրա, գնալով ուժեղանում ու ամրապնդվում է ինչպես ողջ գյուղատնտեսության, այնպես և մեղվաբուծության նյութական-տեխնիկական բազան։ Մեղվի ընտանիքների աճի հետ միասին՝ աճում է մեղվի արտադրանքը, վորակը և արտադրության կազմակերպման նորանոր ռացիոնալ ձևեր են ստեղծվում։

Սակայն դեռևս անբավարար են մինչև հիմա ձեռք բերած հաջողությունները. կան խոշոր թերություններ կերի բազայի, նրա օգտագործման, մեղուների բուծման, փոշոտման, արտադրողականության բարձրացման և այլ բնագավառներում։

Յելնելով այս բոլորից, Խորհուրդների 7-րդ համագումարն առաջարկեց Հողժողկոմատին և Խորհտնտժողկոմատին մշակել կոնկրետ միջոցառումներ՝ խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների մոտ, մեղվաբուծության զարգացման, ամրապնդման մասին։

Մեղվաբուծության բնագավառում մեր առաջ դրված խնդիրների կատարման և հատկապես մասսայական կադրերի պատրաստման ու վերապատրաստման գործում մեղվաբուծական մասսայական գրականությունը հսկայական դեր ունի խաղալու, այնինչ այդ բնագավառում մեր գրականությունը չափազանց աղքատ է։

Հրատարակելով ներկա ձեռնարկը, մեր նպատակն է վորոշ չափով բավարարել մեղվաբուծական գրականության սուր պահանջը։

Անկասկած, աշխատությունը զերծ չէ վորոշ թերություններից։ Հրատարակչությունը խնդրում է ձեռնարկն ոգտագործողներին իրենց դիտողությունները ուղարկեն մեզ հետևյալ հասցեյով՝ Յերևան, Նալբանդյան № 11, Գյուղհրատ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինչ արդյունք է տալիս մեղուն

Մեղուն մեզ անմիջականորեն տալիս է մեղր և մոմ։ Միաժամանակ ձագ տալու միջոցով տարեցտարի ավելանում է նաև մեղվի ընտանիքների թիվը։ Առայժմ ընդհանրապես ամբողջ մեղվաբուծության մասշտաբով վերցրած, փեթակի միջին բերքը բավականին քիչ է։

Ամերիկայի Միացյալ Նահանգներում, վորտեղ մեղվաբուծական տեխնիկան չափազանց զարգացած է, արդյունաբերական մեղվանոցներում միջին բերքը 30—40 կգ. յե հասնում։

Մեղրաբերքի պայմանները մեզ մոտ բավականին լավ են և առանձին դեպքեր խոսում են այն մասին, վոր հատուկ տեխնիկայով խնամելու և գործին կատարելապես տիրապետելու դեպքում միջին բերքը կարող է բարձրանալ 20—30 կգ և ավելի։

Այսպես, որինակ՝ Միության սահմաններում հաճախակի յեն դեպքեր, յերբ կոլտնտեսային և խորհտնտեսային մեղվանոցները տվել են միջին հաշվով 40—50 կգ մեղր և 50—100 տոկոս աճ։

Ուրեմն մեղվի տված յեկամուտը մեղրով և մոմով մենք չպիտի հաշվենք միայն այն, ինչ ընդհանուր առմամբ հիմա յենք ստանում, այլ այն, վոր կարող ենք ստանալ, յեթե առանձին տնտեսությունների փորձն ու հաջողությունը տեղափոխենք ամբողջ մեղվաբուծական արտադրական բազան։

Բացի այդ, կա նաև մի ուրիշ յեկամուտ, վորն անմիջապես աչքի չի ընկնում, բայց ավելի մեծ է քան առաջինը. այդ այն խոշոր բերքն է, վոր շնորհիվ մեղուների կատարած փոշեվորման աշխատանքի ստանում ենք գյուղատնտեսական մի շարք բույսերից։

Շատ բույսեր (պտղատու ծառեր, բանջարաբույսեր, ցանովի խոտեր, բոստաններ) գրեթե բացառապես միջատների միջոցով են փոշեվորվում։

Վայրի մրջյունները պատահական են, անկազմակերպ ու հաճախ շատ սակավաթիվ։ Իսկ մեղուներն իրենց կազմակերպված, ահագին մասսաներով ուժեղ ու սիստեմատիկ աշխատանք են կատարում։

Ով չի՞ դիտել մեղուներով պատած՝ ծաղկած ծիրանի և այլ պտղատու ծառերը։ Ո՞վ չի տեսել այն բազմաթիվ մեղուներին, վորոնք որն ի բուն աշխատում են կորնգանի, յերեքնուկի, վիկայի, արևածաղկի, վարունգի և ուրիշ շատ բույսերի ծաղիկների վրա։

Գյուղատնտեսության սոց. վերակառուցման պայմաններում ահագին տարածություններ զբաղեցված են և զբաղեցվում են զանազան գյուղատնտեսական մշակույթներով։ Վայրի, խոպան տարածությունների մշակման հետևանքով, վայրի միջատները, վորոնց մեջ կան նաև մեծ թվով վնասատուներ, գնալով վոչնչանում ու վոչնչացվում են և նրանց թիվը խիստ նվազում է։

Այսպիսով գյուղատնտեսության մշակույթները ծավալվելու շնորհիվ միևնույն ժամանակ մենք զրկվում ենք նաև վայրի փոշոտողներից, վորոնք, ընդհանրապես, ընդունակ չեն սիստեմատիկ փոշոտման լայն աշխատանք կատարելու, ուստի և պարզ է, թե այս գործում ինչ հսկայական դեր են խաղում մեղուները։

Այդ դեպքում արդեն վորոշակի կերպով կարելի յե ասել, վոր փոշոտման իր աշխատանքով մեղուն ավելի շատ ոգուտ է տալիս, քան մեղրով ու մոմով։ Բերենք մի քանի փաստ մեղվի փոշոտման աշխատանքից։

Դեռ պատերազմից առաջ ագրոնոմ Կլինգենն իր փորձերով ապացուցել է, վոր կարմիր յերեքնուկը մեղուների միջոցով փոշոտվելիս յերկուս ու կես անգամ ավելի շատ սերմ է տալիս։ Նույն բանն ապացուցել են ագրոնոմ Մանոխինը և, Գերմանիայում՝ պրոֆեսոր Ցանդերի փորձերը։

Միջին-Ասիայում բամբակի դաշտերում կատարած փորձերից պարզվել է, վոր բամբակենու արդյունքը վորոշ չափով բարձրանում է, յերբ փոշոտման աշխատանքին մասնակցում են մեղուները։

Պտղատու ծառերը և հատապտուղային թփերն առանձնապես կարիք են զգում մեղուների փոշոտմանը։ Ամերիկայում պրոֆեսոր Կուկի կատարած փորձերը ցույց են տվել, վոր ցանցով պատած ճյուղերի արդյունքը հսկայական չափով ավելի պակաս է յեղել, քան այն ճյուղերինը, վոր բաց են յեղել մեղուների համար։

Որինակ՝ խնձորենու ցանցով պատած ճյուղից ստացվել է մի հատ պտուղ, իսկ չպատած ճյուղից՝ 20 հատ։

	Ցանցով պատած ճյուղից	չպատած ճյուղից
Տանձենին տվել է	0	50
Բալենին » »	3	40
Յելակը » »	9	27

Բերված թվերից յերևում է, վոր մեղուների այցելած ճյուղերը 3—10 անգամ ավելի շատ պտուղ են տվել, քան մեկուսացված ճյուղերը։

Պրոֆ. Ցանդերի կատարած փորձերից պարզվել է հետևյալը.

	Ցանցով ծածկած ճյուղեր	չծածկած ճյուղեր
Խնձորենին տվել է	0,5	6,9
Տանձենին » »	0	8,1
Բալենին » »	0	10,6
Կեռասենին » »	1,3	14,6
Յելակը » »	24 (մանր)	60

Միևնույն հետևանքներն են ունեցել նաև բանջարանոցներում դրված փորձերը։

Ամերիկայում այգետերերը, միջատափոշոտվող զանազան կուլտուրաներ մշակողները մեղվապահներին հաճախ փեթակին 10 ռուբլի յեն վճարում, վոր ծաղկելու ժամանակ մեղվանոցները նրանց մշակույթներին մոտիկ դնեն։

Գերմանիայում պրոֆ. Բորներ հաշվել է, վոր գյուղատնտեսության մեջ մեղուների տված արդյունքը 15 անգամ ավելի յե, քան մեղվաբուծության արտադրանքը՝ մեղրն ու մոմը։

Սոց. մեղվաբուծության արտադրական խնդիրներ

Քանի վոր մեղվաբուծական ճյուղն էլ գյուղատնտեսական մյուս ճյուղերին զուգընթաց ապրում է իր վերջնական վերակառուցման և վերելքի ետապը, ապա մեր առջև դրված են մի շարք հրատապ խնդիրներ, վորոնք անհապաղ լուծման կարիք ունեն։ Այն է՝

1. յեղած մեղրատու բազան ոգտագործել լրիվ չափով, վորպեսզի հնարավոր լինի ձեռք բերել բնության մեջ ահագին քանակությամբ արտադրվող նեկտարը, վոր առանց մեղուների անոգուտ պիտի կորչի.

2. գյուղատնտեսական մշակույթներն ապահովել լրիվ փոշոտումով՝ մեղուների միջոցով։

Ուրեմն մեր նպատակն է.

ա) մեր վողջ մեղրատու բազան ապահովել մեղվի ընտանիքներով, վորպեսզի մեղրատու տարածությունների, նույնիսկ, ամեն մի փոքրիկ մասը մեղուներով բնակեցված լինի.

բ) կատարելագործված տեխնիկայի ոգտագործմամբ յուրաքանչյուր ընտանիքի միջին արդյունավետությունը հասցնել բարձրագույն ցուցանիշների։

Մեզ մոտ այժմ կազմակերպվում են հետևյալ տիպի տնտեսություններ.

1. մեղվաբուծական խորհրդային տնտեսություններ.

2. կոլտնտեսություններին կից ապրանքային ֆերմաներ։

Հիմք ունենալով համապատասխան որգանների առաջադրանքները մեղվաբուծական տնտեսությունը, միաժամանակ հաշվի առնելով տեղական արտադրական պայմանները, պիտի ձգտի հասնել բերքատվության առավելագույն չափին։

Որինակ՝ կան վայրեր, վորտեղ ընտանիքի զարգացումը լավ չի ընթանում, մայրերի բեղմնավորումը հաճախ անհաջող է լինում, սեզոնը՝ կարճ, գլխավոր բերքն էլ ուժեղ ու կարճատև։ Այսպիսի վայրերում, ի հարկե, ուժեղ բազմացման գործ հնարավոր չի կազմակերպել։

Մի ուրիշ վայրում սեզոնը շատ յերկար է, մանավանդ քոչվոր մեղվապահության պայմաններում, քամիները, վատ յեղանակները քիչ են, ուրեմն մայրաբուծության և բազմացման գործը հաջող կընթանա։

Ի հարկե կլինեն այնպիսի շատ վայրեր, վորտեղ կարելի յե ունենալ թե ձագի և թե մեղրի խոշոր արտադրանք, մանավանդ, յերբ բերքը համեմատաբար ուժեղ է։

Յեթե տվյալ վայրը վաղորոք ուսումնասիրվել է, ուրեմն հեշտ է, ի հարկե, նախորոք ընտրել տնտեսության արտադրական բնույթը։ Իսկ յեթե տվյալ վայրը ուսումնասիրված չի, ուրեմն այդ հաշիվը մոտավոր ձևով պիտի անել ու հետագայում, արտադրական աշխատանքի ընթացքում միայն հետազոտել բոլոր տվյալները և մյուս տարում գործի մեջ մտցնել այս կամ այն կազմակերպչական ու տնտեսական շտկումները։

Յեթե մի տնտեսություն մեղր է արտադրում, ի հարկե, այդ չի նշանակում, թե ձագ բոլորովին չպետք է վերցնի, կամ յեթե բուծում է, մեղր բոլորովին չպետք է ունենա։

Կատարելով իր գլխավոր առաջադրությունները, տնտեսու-

թյունը հաճախ խոշոր չափով լրացնում է նաև մյուս արտադրանքները և տնտեսական մեծ եֆեկտ է ստանում։

Ինչ վերաբերում է կոլտնտեսականի, բանվորի (համաձայն Գյուղատնտեսական արտելի կանոնադրության) կամ աշխատավոր մենատնտեսի բակում դրված մի քանի հատ փեթակին, նրա առորյա կարիքներն է հոգում։ Այդ մեղվանոցն իր տերոջը չի կտրում իր հիմնական աշխատանքից, կամ նրա ընտանիքի անդամը հնարավորության սահմաններում այդտեղ գործադրում է իր ազատ ժամերը, մեղուներին խնամում ու վորոշ արդյունք ստանում։

Արտֆինպլանն ու նրա կատարումը

Տարվա սկզբին կազմվում է տնտեսության արտադրական-ֆինանսական պլանը։ Յեթե մեղվանոցը վորևե տնտեսության ոժանդակ ճյուղն է, ուրեմն մտնում է ընդհանուր արտֆինպլանի մեջ և կազմում է նրա անբաժան մասը։

Արտֆինպլանն ընդգրկում է.

ա) տնտեսության արտադրական բազան իր բոլոր արտադրական միջոցներով.

բ) տարվա ընթացքում կատարվելիք ներդրումների, սոցկուտակման և արտադրական բազայի ընդլայնման ցուցանիշները.

գ) վորոշվում է բերքատվության չափը մեղրով, ձագով և մոմով.

դ) սահմանվում է մեղվաբուծական զոովետմինիմումը։

Սոցիալիստական մեղվաբուծական տնտեսությունը ղեկավարվում է այն ընդհանուր տնտեսական ու կազմակերպչական կանոններով, վոր գոյություն ունեն նաև մյուս ճյուղերի նկատմամբ։

Թե խորհտնտեսություններում և թե կոլտնտեսություններում մեղվապահն ու իր աշխատակիցները կազմում են մի բրիգադ (մեղվապահ-բրիգադավար), վորը և ղեկավարում է կազմակերպչական և տեխնիկական աշխատանքն ու պատասխանատու յե դառնում վարչության առաջ բրիգադի պլանի կատարման համար։

Բրիգադները կիրառելով աշխատանքի սոցիալիստական մեթոդներ (սոցմրցում, հարվածայնություն), հատուկ պայմանա-

գրեր են կնքում հարևան բրիգադների հետ, տնտեսությունը տնտեսության հետ, և բրիգադի ներսում առանձին աշխատողներ միմյանց հետ։ Կիրառելով հարվածայնության սկզբունքը՝ ապահովում են պլանների կատարումն ու ամեն ջանք գործ դնում գերակատարելու այն, ինչպես և բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, իջեցնելու արտադրանքի ինքնարժեքը, պայքարելու կորուստների դեմ և այլն։

Որպեսզի շահագրգռված լինի, պլանը գերակատարողները հավելյալ վարձատրություն կամ աշխօրեր են ստանում իրենց գերակատարած արտադրանքի չափով, համաձայն տարվա սկզբին վարչության կողմից ամեն մի բրիգադին տրված առաջադրանքի։ Այստեղ նշվում է նաև, որ բրիգադի հանցանքով պլանները թերակատարելիս նույն ձևով իջեցվում են բրիգադին հասանելիք աշխօրերը. հիմք՝ «Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրություն»։

Պլանի կատարումն ու գերակատարումն ապահովելու գլխավոր գործոններն են.

1. ձմեռը բոլոր նախապատրաստական աշխատանքներ կատարելը՝ մեղվանոցը զանազան գույքով, սարքավորումով և նյութերով (փեթակ, կորպուս, շրջանակ, մոմաթերթ, տաքացման պարագաներ, մանր ինվենտար—դանակ, վանդակ և այլն) ապահովելու համար.

2. յեղած գույքը և պատրաստված պարագաները պահեստում կանոնավոր դարսելը, փչացումից, ջարդվելուց, խոնավությունից պահպանելը։ Զեչերը մկներից և ցեցերից ապահովելը, պահեստները կանոնավոր վիճակի մեջ պահելը.

3. ամբողջ գույքը հաշվի առնելը, կորուստների և գողությունների դեմ պայքարելը և ամեն մի կորած և փչացած իրի համար նյութական պատասխանատվություն կրելը, հատուկ մեղվանոցային գույքի ցուցակ կազմելն ու ամեն մի փոփոխություն այդ ցուցակի մեջ մտցնելը.

4. հատուկ ուշադրություն դարձնելը գույքի ընդհանուր վերանորոգման, փեթակները ներկելուն և այլն.

5. տեխնիկական աշխատանքը կազմակերպելն ու տեխնիկային տիրապետելը։

Տեխնիկայի տիրապետման հիմունքները

Արտադրության յուրաքանչյուր աշխատող, լինի ղեկավար մասնագետ, մեղվապահ թե նրա աշխատակիցը, պետք է աշխատի ուսում-

նասիրել այդ արտադրության յուրահատուկ պայմաններն ու տեխնիկական ձևերը։

Բերենք մի քանի օրինակ.

Առանց կանոնավոր մայրաբուծության մեղվապահությունն յերբեք չի կարող լրիվ արդյունք տալ։ Ուրեմն մենք պարտավոր ենք այդ գործում այնքան վարպետանալ, որ ամեն մի րոպե, տարվա որ ժամանակին էլ լինի, անհրաժեշտ թվով պահեստի մայրեր ունենանք պակասող մայրերին փոխարինելու համար։

Ձագ վերցնելու ժամանակ մենք նուկլեուսներ (մանր ձագեր) ենք կազմակերպում։ Այդ նուկլեուսների մի վորոշ մասը լուծարքի յե յենթարկվում և մի վորոշ մասն է օգտագործվում (հասնում իր նպատակին)։ Օգտագործվող նուկլեուսների թիվը վորքան բարձր լինի, կնշանակի մեղվապահն յուրացրել է փոքր ընտանիքների կազմակերպման, մայրերի և ընտանիքների ուժի պահպանման, մոր ձվողունակության և ուրիշ գործոնների օգտագործման տեխնիկան։

Մեղվի ձմեռելու պայմանները խոշոր ազդեցություն են ունենում ընտանիքի կենսունակության և, հետևապես, նրա արտադրական աշխատանքի վրա։ Ուրեմն անպայման հատուկ ուշադրություն պետք է դարձնել մեր ձմեռանոցները հարմարեցնելու և օրինակելի ձմեռանոցներ կազմակերպելու գործին, այնպես, որ անպայման ապահովված լինի մեղուների ձմեռումը 6—7 աստիճան ջերմության տակ, և ամբողջ ձմեռվա ընթացքում, մինչև դուրս հանելը, ձմեռանոցի ջերմաստիճանը միապաղաղ լինի ու տատանումներ չլինեն։

Յեվ այսպես ամեն մի աշխատանքի՝ հատակը մաքրելու, ձագատնդի, հիվանդությունների դեմ պայքարելու, բները լայնացնելու, մեղր քամելու, բները դասավորելու, տաքացումներ տալու, մեղուները ձմեռանոց դնելու, դուրս հանելու և այլ աշխատանքների ընթացքում այդ բոլորի բնույթն ու ռացիոնալացումը մեղվապահը պետք է լավ ըմբռնի և կյանքի մեջ կիրառի։

Այսպիսով սոցիալիստական աշխատանքի բնույթը յերկու գլխավոր մոմենտ ունի.

1. առանձին բարեխղճությամբ ու գիտակցաբար յուրացնել թե բանավոր և թե գրավոր հրահանգներն ու ցուցումները, և իր գիտելիքները խելացիորեն գործադրել կյանքի մեջ.

2. ուշի-ուշով ուսումնասիրել ու տիրապետել արտադրության բոլոր մոմենտներն ու տեխնիկական ձևերը, և այն կի-

րառել արտադրության մեջ խելացիորեն։ Գործնականում պետք է կիրառել մեր մեծ առաջնորդ ընկ. Ստալինի հանճարեղ ցուցմունքը։

«Սոցիալիզմը պահանջում է ոչ թե ծուլություն անել, այլ այն, որ բոլոր մարդիկ աշխատեն ազնվորեն, աշխատեն ոչ թե ուրիշների համար, ոչ թե հարուստների ու շահագործողների համար, այլ իրենց համար, հասարակության համար։

Յեվ յեթե մենք աշխատենք ազնվորեն, աշխատենք մեզ համար, մեր կոլտնտեսությունների համար, ապա կհասնենք այն բանին, որ մի յերկու-յերեք տարում բոլոր կոլտնտեսականներին, թե նախկին չքավորներին, թե նախկին միջակներին կբարձրացնենք ունևորների մակարդակին, որոնք օգտվում են մթերքների լիառատությունից և կատարելապես կուլտուրական կյանք են վարում»։

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ՄԵՂՎԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մեղվի տեղը կենդանական աշխարհում

Մեղուն պատկանում է թաղանթաթև միջատների խմբին, որ կազմված է մի շարք ընտանիքներից՝ մրջյուններից, բրդոտ կրետներից, իսկական կրետներից, փորող կրետներից և այլ միջատներից, որոնց շարքն է դասվում նաև մեղվայինների ընտանիքը։

Ըստ Ցանդերի, այս ընտանիքը կազմված է մի քանի ցեղերից, որոնցից մեկը մեղուների ցեղն է։ Այս ցեղը բաժանվում է տեսակների, որոնցից ամենից աչքի յեն ընկնում մեղրատու մեղուն, հնդկական մեղուն, հսկա մեղուն և՝ գաճաճ մեղուն։

Վերջին յերեք տեսակը մեզ համար տնտեսական արժեք չունի։ Հնդկական մեղուն (apis indica) միայն Հնդկաստանում են պահում և որոշ օգուտ ստանում։

Մեղվի ընտանիքն ու նրա բնութագրումը

Իբրև համայնական կյանքով ապրող, դրանց ամենակատարյալ ձևը մեղրատու մեղուն է։

Մեղվի ընտանիքը բավական խոշոր կենսաբանական միամբողջություն է, որ մինագամայն հարմարվել է իր շրջապատի բնական պայմաններին և ի վիճակի յե պաշտպանելու իր գոյությունն ու տեսակի շարունակությունը։

Մեղվի ընտանիքը թե՛ իր կյանքի ձևերով, և թե՛ աշխատանքի բնույթով ունի այն բոլոր տվյալները, որոնք մեզ հնարավորություն են տալիս մեղու պահել և նրանից արդյունք ստանալ։

Բայց, իհարկե, մեղվի ընտանիքն ամեն ինչով բավական տարբերվում է մեր սովորական ընտանի կենդանիներից։

Բնակեցնելով մեղվին մեր շինած փեթակներում և ոգտվելով նրա արտադրական աշխատանքի արդյունքներից՝ մենք այնուամենայնիվ չենք կարող մեղվի ընտանիքն ընտելացած համարել։

Մեղվի ընտանիքը՝ թողնվելով իր կամքին՝ բնության ծոցում իր համար բնակարան է ճարում (ժայռի խոռոչ, ծառի փչակ և ուրիշ որևէ պաշտպանված տեղ) ու վայրի վիճակում հեշտությամբ կարողանում է պահպանել իր գոյությունը։

Մեր միջամտությունը

Յերբ մենք սկսում ենք մեղու պահել ու մեր շահերի համար ոգտագործել, ուրեմն մենք պարտավոր ենք նախ՝ ծանոթանալ նրա կյանքի պայմաններին, նրա սովորություններին և ապա միջամտել՝ հարմարեցնելու և նրա կենսական պրոցեսներին արտադրական ճիշտ ուղղություն տալու ու աշխատանքի պայմանները բարելավելու համար։ Մեղվին մենք չենք կարող վորևէ իմացականություն կամ գիտակցություն վերագրել։ Նա ապրում և աշխատում է շնորհիվ այն բնազդների, վոր միջավայրի պայմանների ազդեցության տակ վաղուց ի վեր ստեղծվել են նրա մեջ։

Ուրեմն մենք պետք է ուսումնասիրենք մեղվի ընտանիքի բնազդներն ու սովորենք նրա գործողությունները ղեկավարել և անհրաժեշտ ուղղություն տալ։ Բացի այդ, մեղվին պետք է տանք հարմար բնակարան ու բավականաչափ մոմաթերթ։ Տեղի ընտրության միջոցով կամ մեղրատու բազան բարելավելով՝ լավ մեղրաբերքը պետք է ապահովենք։ Հատուկ խնամքի ձևեր պետք է մշակենք և կյանքում կիրառենք՝ տալով հարմար ձմեռանոցներ և առհասարակ ապահովելով այն բոլոր նպաստավոր պայմանները, վորով հնարավոր է մեղվի աշխատանքն ամենաբարձր արդյունավետության հասցնել։

Այդ բոլորի հետ միասին, իհարկե, անհրաժեշտ է ծանոթանալ նաև անհատ մեղվին, վորովհետև ընտանիքն այդ անհատներից է կազմված։

Մեղվի ընտանիքի կյանքն ու առանձին մոմենտները

Ընտանիքի տարեկան կյանքը բաժանվում է չորս գլխավոր շրջանի։

1) զարգացման շրջան, 2) գլխավոր մեղրաբերքի շրջան, 3) նվազման շրջան, 4) հանգիստ վիճակ։

Գարնան առաջին կեսին, յերբ դեռ ընտանիքը նոր է զարթնել ձմռան թմրությունից, մայրը դեռ քիչ է ձու դնում, յեղանակները ցուրտ են և փոփոխական, ոժանդակ բերքերը շատ թույլ են լինում ու ընդհատվող մեղվի ընտանիքը կամաց-կամաց սկսում է իր կազմը փոխել. հին, ձմեռած մեղուները հետզհետե մեռնում, վոչնչանում են, նրանց տեղ նոր մեղուներ են դուրս գալիս, և այդ կազմի փոփոխման ժամանակ աշխատավոր մեղվի թիվը դեռ մի քիչ էլ պակասում է, և վոչ թե ավելանում։

Այս դրությունը տևում է դուրս դնելուց մոտ մեկ ամիս, յերբեմն ավելի։ Այդ ժամկետի վերջում, ճիշտ է՝ մեղուների թիվը չի ավելանում, բայց դրա փոխարեն.

1. ամբողջ կազմը գրեթե փոխվում է և անցյալ տարվա մեղուների տեղը յերիտասարդ, կենսունակ մեղուներ են բռնում։

2. Վորդի ու ձվի թիվը բավական շատանում է (սովորաբար 4—5 շրջանակ՝ մինչև 15.000 բջիջ), և մայրը քանի գնում ձվարկությունն ուժեղացնում է։ Մինչ այդ մայրն որական 300—800 ձու հազիվ եր դնում։ Դրանից հետո, ձվարկությունը բարձրանում է մինչև 1000-ի, իսկ հետագայում, յերբ յեղանակներն ավելի յեն տաքանում և ոժանդակ բերքն ուժեղանում է, որական ածած ձվերի թիվը հասնում է 1200—1500-ի։

Դուրս դնելուց 20—30 որ հետո մայրն սկսում է ձու դնել նաև բոռաբջիջների մեջ, և ընտանիքում շուտով սկսում են առաջ գալ նաև բոռեր, վորոնց թիվը քանի գնում ավելանում է և աշխատանքի շրջանի ամենագլխավոր մոմենտին գլխավոր բերքի ժամանակ—բավական մեծ չափերի յե հասնում։

Որեցոր ավելանում է նաև աշխատավոր մեղվի թիվը։

Գարնան յերկրորդ կեսին և ամառը՝ մինչև գլխավոր բերքի սկսվելը՝ ընտանիքի անդամների թիվը քանի գնում ավելանում է և գլխավոր բերքի նախորյակին, վոր լեռնային վայրերում հուլիսի 10—12-ին է լինում, այդ թիվը՝ համեմատած ձմեռվա թվի հետ՝ 4—5 անգամ մեծ է լինում, այսինքն՝ աշխատավոր մեղուների թիվը հասնում է մինչև 50—60 հազարի, իսկ բոռերի թիվը՝ մինչև 1000—1500-ի։ Վորդի ու ձվի թիվը նույնպես հասնում է իր առավելագույն չափին՝ 30—35.000-ի, յերբեմն և ավելի։

Վերև բերված թվական տվյալներն այն միջին նորմաներն են, վորոնք հատուկ են նորմալ մայր ունեցող, նորմալ մեծության ընտանիքին, և այժմ մեզ մոտ ավելի բարձր ցուցանիշներ չունենք։

Երբ գործը կանոնավոր կերպով է դրված և մեղվանոցում աչքի ընկնող թերություններ չկան, այդպիսի ընտանիքների թիվը, համեմատած ավելի թույլ ընտանիքի հետ, ինչքան հնարավոր է շատ պետք է լինի։

Այդ ամբողջ ժամանակի ընթացքում մեղվի ընտանիքն իր հին պաշարն է սպառում, ոժանդակ բերքից է օգտվում ու յերբեմն էլ մենք ենք կերակրում, և մինչև գլխավոր մեղրաբերքը, սովորաբար մեղրի կուտակում չի նկատվում։ Միայն այն դեպքում կարող է վորոշ կուտակում լինել, յերբ ամառվա ոժանդակ բերքը բավական ուժեղ է և միաժամանակ, ինքը՝ մեղվապահը հոգ չի տանում մեղվի բունը լայնացնելու և նրան բավականին աշխատանք տալու, այսինքն՝ ռացիոնալ խնամք չի տարվում։

Ուժեղացած և վերջնական զարգացման հասած ընտանիքը մտնում է գլխավոր մեղրաբերքի շրջանը և 15—20 որվա ընթացքում այնպիսի աշխատանք է կատարում, վորն ընտանիքին ապահովում է աշնան, ձմռան և գարնան պաշարով ու նույնիսկ մեղրի և մոմի յեկամտի մեծ ավելուրդ է տալիս։

Այս ամենակարևոր մոմենտն անցնելուց, այսինքն՝ գլխավոր մեղրաբերքը վերջանալուց հետո մեղվի ընտանիքը նվազման շրջան է մտնում։

Բոռերին դուրս են քշում փեթակից, մայրը ձվարկությունը դադարեցնում է, աշխատավոր մեղուների թիվը քանի գնում պակասում է և, վերջապես, մնում է այն թիվը, վոր և պահպանվում է իբրև արտադրական միավոր։

Այդ այն մեղուներն են, վորոնք աշխարհ են յեկել մեղրաբերքի վերջերին կամ նրանից հետո. դրանք յերիտասարդ են, աշխատանքի չեն մասնակցել. ուրեմն՝ կենսունակ են ու միանգամայն ընդունակ յերկար ապրելու։

Մեղվի ընտանիքի համար բնական է նկարագրած շրջանառությունը և այդ հետևողականությունը յերբեմն միայն խանգարվում է այն ժամանակ, յերբ տեղափոխության և բերքից-բերք տեղափոխելու հետևանքով ժամկետները յերկարում են կամ նոր դրություն է ստեղծվում։

Որինակ՝ լեռնային գլխավոր բերքից հետո, յերբ մեղուն տեղափոխում ենք բամբակացան շրջան, մոր ձվարկությունը նորից ուժեղանում է, մեղուների յեղած սերունդն աշխատանքի ընթացքում նորից վոչնչանում է, նրանց տեղը նոր մեղուներ են առաջ գալիս, բոռերի հալածումը հետաձգվում է։

Միևնույն դրությունն ավելի թույլ կերպով լինում է յերբեմն նստակյաց մեղվանոցներում, յերբ աշնան անձրևների հետևանքով առատորեն ուշ մեղրատուներ են ծաղկում, ու սկսվում է աշնան բավական ուժեղ ոժանդակ բերք։

Յերբ աշնան ցրտերն ընկնում են և բերք այլևս բոլորովին չկա, հանգիստ վիճակն է սկսվում, աշխատանքը բոլորովին դադարում է, ու մեղուն հանգիստ նստած է շրջանակների վրա։

Այնուհետև հանգիստ վիճակը շարունակվում է ձմեռանոցում և տևում է մինչև գարուն։

Այս դրության մեջ մեղվի ընտանիքը լինում է վորոշ ուժի, վոր լավ պայմաններում պահպանվում է մինչև գարուն և միանգամայն ի վիճակի յե վերսկսել ընտանիքի զարգացումն ու ապահովել այդպիսով հետագա արտադրական աշխատանքը։

Մեզ մոտ դաշտային շրջանների համար ընդունված է 6—7 շրջանակ՝ իրենց վրա նստած մեղուններով, իսկ լեռնային վայրերում՝ մինչև 9—10 շրջանակ։

Մեղվի ընտանիքի կազմը

Մեղվի ընտանիքի մեջ գոյություն ունի բազմաձևություն, այսինքն՝ բացի մեղվի եգից—մորից ու վորձից՝ բոռից, կա նաև մի ուրիշ ձև՝ աշխատավոր մեղուն, վոր անզարգացած եգ է և միայն կատարում է զանազան աշխատանքներ ու սերունդ արտադրելու անընդունակ է։

Ընտանիքում մի հատ մայր է լինում, շատ հազվագյուտ դեպքերում՝ յերկու մայր, այն էլ կարճ ժամանակով, մեկ կամ մի քանի տասնյակ հազար աշխատավոր մեղու և գարնանն ու ամառը՝ մի քանի հարյուր կամ ավելի բոռ։

Դրանցից ամեն մեկն իր հատուկ դերն ու նշանակությունն ունի ընտանիքի կյանքի մեջ, և յերեքով միասին ապահովում են ընտանիքի գոյությունն ու նորմալ աշխատանքը։

Նրանք բոլորն էլ ճանաչում են իրենց փեթակն ու վերջինիս դիրքը, և յեթե փեթակը տեղից շարժում ենք ու հեռացնում, սկսում են փեթակը հին տեղում փնտռել։

Ամեն անգամ, յերբ փեթակներից մեկի մեղուն մի ուրիշ փեթակ է ընկնում, նրան սպանում են, բացառությամբ [illegible], վորին ոտար փեթակը մեղուներն ընդունում են առանց դժվարության։

ԱՐԽԻՎ
ԳՐԱԴԱՐԱՆ

Աշխատավոր մեղվին այն դեպքում չեն սպանում, յերբ մեղրի կամ ծաղկափոշու բեռով է մտնում օտար փեթակը։ Այս իսկ պատճառով, յերբ բերքի ժամանակ յերկու փեթակ տեղափոխում և մեկ մյուսի տեղ ենք դնում, կոտորած համարյա չի առաջանում, և մի փեթակը մյուսի մեղուներին ընդունում է։

Մայր

Մոր արտաքին տեսքն այնքան է տարբերվում աշխատավոր և բոռ մեղուներից, վոր նրան հեշտությամբ կարելի յե գտնել շրջանակի մեղուների մեջ։

Նա ավելի մեծ է, վոտները սովորաբար դեղին գույն ունեն։

Յերիտասարդ մայրը (դեռ չբեղմնավորված) թեթևաշարժ է, վորովայնի ծայրը սուր։ Բեղմնավորված մայրը ծանրաշարժ է, վորովայնը շատ յերկար ու հաստ, մանավանդ ուժեղ ձվարկության ժամանակ։

Այն բոլոր որգանները՝ լեզուն, զանազան գեղձեր, վորոնք աշխատավոր մեղվի մոտ լավ զարգացած են և հատուկ աշխատանք են կատարում, մոր մոտ զարգացած չեն։ Բացի այդ, նա զուրկ է նաև համապատասխան բնազդներից։

Որինակ՝ ինչքան էլ մենք ձեռքի մեջ չարչարենք նրան, նա մեզ չի խայթի։ Չի կարող նաև վորդին կերակրել, ծաղիկներից մեղր չի հավաքի, մոմ չի արտադրի և այլն։

Այս բոլորի փոխարեն, չափազանց զարգացած են մոր սեռական որգանները։ Վորովայնի առջևի մասում սկիզբ են առնում և խոշոր տեղ են բռնում զույգ ձվարանները, վորոնք կազմված են ձու արտադրող խողովակներից։

Սկզբում նեղ և վոլորված՝ ձվարանները քանի գնում հաստանում են և ներքևում առանձին խողովակներով (ձվատար) միանում իրար։ Կազմվում է մոր զուգավորման անցքը։ Այդ անցքի հետ կեռ ու մեռ խողովակով միանում է սերմընդունիչ պարկիկը, վորի մոտ զետեղված են գեղձեր, վորոնք, ինչպես յենթադրում են, առնասերմի բջիջները սնող նյութ են արտադրում։

Սերմընդունիչ պարկիկը բոռից ստացած առնասերմի պաշարն իր մեջ է պահում։ Ամեն անգամ, յերբ պատրաստի ձուն մոր զուգավորման անցքով դեպի դուրս է գնում, հատուկ մկանների միջոցով պարկից առնասերմի բջիջներ (սպերմատոզոիդներ) են դուրս բերվում ու մղվում դեպի անցքը։

Յերբ արդեն ձվի հետևի ծայրն անցել է ու առջևի ծայրը հավասարվել պարկիկի խողովակի բերնին, ձվի այդ ծայրին (վորտեղ ապագա վորդի գլուխն է գոյանում) յեղած մանրիկ անցքով սպերմատոզոիդներից մեկը կամ մի քանիսն անցնում են ներս, ու նրանցից մեկը բեղմնավորում է ձուն։

Ահա այդ բեղմնավորված ձվերից մայրեր և աշխատավոր



Նկ. 1. Մոր սեռական գործարանները։ Վերևում E—ձվարաններ, Er—ձվատար խողովակներ, Ee—զույգ ձվատարներ, Sb—սերմընդունիչ, D—լրացուցիչ գեղձ

մեղուներ են ստացվում։ Մայրերը խնամվում են հատուկ մայրապատուկներում և կերակրվում են հատուկ կերով։

Մայրը կարող է բեղմնավորված և չբեղմնավորված ձվեր ածել:

Տարիների ընթացքում սերմերի պաշարը պակասում է և վերջապես բոլորովին սպառվում:

Մայրն ապրում է մինչև 5 տարի: Բջիջից դուրս գալուց հետո լրիվ հասունացման է հասնում 7-րդ օրը (երբեմն ավելի շուտ) և այնուհետև հարմար րոպե է սպասում դուրս թռչել՝ բոռի հետ զուգավորվելու համար:

Հաճախ ցրտերի ու վատ եղանակների հետևանքով, կամ երբեմն նաև բերքի սակավության պատճառով, թռիչքն ուշանում է: Երբեմն բոռերի սակավության պատճառով թռիչքն անհետևանք է անցնում:

Համենայն դեպս մայրերի բեղմնավորման մեծագույն տոկոսն ընկնում է 8—9-րդ օրը:

Երբեմն ինչ-ինչ պատճառներով բեղմնավորումը շատ է ուշանում՝ մինչև 20—25 օր և ավելի: Ընդունված է, վոր 20 օրից ավելի չբեղմնավորվող մայրը բեղմնավորվելու ընդունակությունը կորցնում է, չնայած լինում են դեպքեր, վոր մինչև 30 օրական մայրն էլ է բեղմնավորվում:

Համենայն դեպս այդպես ուշացած մայրերին սովորաբար մեղուներն իրենք են վոչնչացնում, հակառակ դեպքում մեղվապահն ինքն է վոչնչացնում և աշխատում այդ մայրերին նոր մայրերով փոխարինել ու զուր ժամանակ չկորցնել:

Բոռ

Բոռը գոյանում է մոր այն ձվերից, վորոնք բեղմնավորված չեն, այսինքն ձվերի մեջ բոռի առնասերմի բջիջներ չկան:

Այս երևույթը կոչվում է կուսածնություն և գոյություն ունի մի շարք միջատների կյանքում:

Առնասերմի բջիջները կոչվում են սպերմատոզոիդներ: Դրանք շատ փոքր, պոչավոր բջիջներ են և ամեն մի բոռի մոտ նրանց թիվը միլիոնների է հասնում:

Բոռեր են գոյանում նաև այն ձվերից, վոր երբեմն աշխատավոր մեղուն է ածում, վորոնք բեղմնավորված չեն:

Ըստ իր կառուցվածքի ու բնազդների, բոռն անընդունակ է վորևէ աշխատանք կատարելու: Նա միայն ընդունակ է մոր հետ զուգավորվելու:

Բոռի սեռական գործարանները բավական բարդ կազմություն ունեն, այն է՝ բաղկացած են յերկու սեռական գեղձից, յերկու սերմնափուչիկից, յերկու լորձունքային լրացուցիչ գեղձից և զուգավորման օրգանից:

Յերբ մայրը բեղմնավորվելու նպատակով դուրս է թռչում, ոդում թռչող բոռերը նրան հետապնդում են: Այդ բոռերից ամենաուժեղը, ուրեմն և ամենակենսունակը, բոլորից առաջ է անցնում, հասնում է մորն, ու նրանք ոդի մեջ միավորվում են:

Հենց այդ ժամենտին բոռը մեռնում է, և նրանք յերկուսով ընկնում են գետին: Այդտեղ մայրն ազատվում է բոռից՝ իր հետ տանելով նրա պոկված սեռական օրգանը:

Բոռի ամբողջ սերմնապաշարն անցնում է մորն ու ծծվում սերմընդունիչի մեջ: Այդտեղ սերմը մնում և հետագայում քիչ-քիչ գործադրվում է ձվերի բեղմնավորման համար:

Դեռևս հայտնի չէ, թե բոռն ինչքան ժամանակ է ապրում, վորովհետև նա գոյանում է գարնանը և ամառը, ապա բնի կերպով վոչնչանում բերքից հետո: Իսկ հատուկ հետազոտություններ չեն կատարված: Յերբեմն միայն անմայր ընտանիքում բոռեր են մնում ու ձմեռում:

Առնասերմը բոռի սեռական գեղձերում գոյանում է դեռևս նրա հարսնյակ վիճակում՝ վերջին օրերը:

Բայց դուրս գալուց, առնվազը 12 օրից հետո նա հասնում է լրիվ հասունացման և կարողանում է մորը բեղմնավորել:

Արտաքին տեսքը.— Ինքը խոշոր է, մարմինը՝ հաստ ու բրդոտ, փորիկի ծայրը բութ է, բարդ, աչքերն անհամեմատ ավելի խոշոր են, խայթոց չունի, կնճիթը շատ կարճ է ու անզարգացած: Թռչելիս բարձր տզզոց է բարձրացնում:

Տարվա մի վորոշ ժամանակ բոռերի շատ լինելը կենսաբանորեն վորոշ հիմք ունի, քանի վոր մայրն ոդում է բեղմնավորվում: Յեթե բոռերը շատ չլինեն, մայրը հանկարծ կարող է բոռին չհանդիպել ու առանց բեղմնավորվելու վերադառնալ փեթակ: Բացի այդ, բնական ընտրության խնդիրն էլ դժվար կլինի:

Հազարավոր բոռերից մեկին հազիվ է վիճակվում մոր հետ զուգավորվելու:

Աշխատավոր մեղուն

Աշխատավոր մեղուն սեռականապես անզարգացած էգ է և առաջանում է բեղմնավորված ձվերից՝ բանվորաբջիջների մեջ:

Մայրը կարող է բեղմնավորված և չբեղմնավորված ձվեր ածել։

Տարիների ընթացքում սերմերի պաշարը պակասում է և վերջապես բոլորովին սպառվում։

Մայրն ապրում է մինչև 5 տարի։ Բջիջից դուրս գալուց հետո լրիվ հասունացման է հասնում 7-րդ որը (յերբեմն ավելի շուտ) և այնուհետև հարմար րոպե յե սպասում դուրս թռչել՝ բոռի հետ զուգավորվելու համար։

Հաճախ ցրտերի ու վատ յեղանակների հետևանքով, կամ յերբեմն նաև բերքի սակավության պատճառով, թռիչքն ուշանում է։ Յերբեմն բոռերի սակավության պատճառով թռիչքն անհետևանք է անցնում։

Համենայն դեպս մայրերի բեղմնավորման մեծագույն տոկոսն ընկնում է 8—9-րդ որը։

Յերբեմն ինչ-ինչ պատճառներով բեղմնավորումը շատ է ուշանում՝ մինչև 20—25 որ և ավելի։ Ընդունված է, վոր 20 որից ավելի չբեղմնավորվող մայրը բեղմնավորվելու ընդունակությունը կորցնում է, չնայած լինում են դեպքեր, վոր մինչև 30 որական մայրն էլ է բեղմնավորվում։

Համենայն դեպս այդպես ուշացած մայրերին սովորաբար մեղուներն իրենք են վոչնչացնում, հակառակ դեպքում մեղվապահն ինքն է վոչնչացնում և աշխատում այդ մայրերին նոր մայրերով փոխարինել ու զուր ժամանակ չկորցնել։

Բ ո ռ

Բոռը գոյանում է մոր այն ձվերից, վորոնք բեղմնավորված չեն, այսինքն ձվերի մեջ բոռի առնասերմի բջիջներ չկան։

Այս յերևույթը կոչվում է կուսածնություն և գոյություն ունի մի շարք միջատների կյանքում։

Առնասերմի բջիջները կոչվում են սպերմատոզոիդներ։ Դրանք շատ փոքր, պոչավոր բջիջներ են և ամեն մի բոռի մոտ նրանց թիվը միլիոնների յե հասնում։

Բոռեր են գոյանում նաև այն ձվերից, վոր յերբեմն աշխատավոր մեղուն է ածում, վորոնք բեղմնավորված չեն։

Ըստ իր կառուցվածքի ու բնազդների, բոռն անընդունակ է վորևե աշխատանք կատարելու։ Նա միայն ընդունակ է մոր հետ զուգավորվելու։

Բոռի սեռական գործարանները բավական բարդ կազմություն ունեն, այն է՝ բաղկացած են յերկու սեռական գեղձից, յերկու սերմնափուչիկից, յերկու լորձունքային լրացուցիչ գեղձից և զուգավորման օրգանից։

Յերբ մայրը բեղմնավորվելու նպատակով դուրս է թռչում, ոդում թռչող բոռերը նրան հետապնդում են։ Այդ բոռերից ամենաուժեղը, ուրեմն և ամենակենսունակը, բոլորից առաջ է անցնում, հասնում է մորն, ու նրանք ոդի մեջ միավորվում են։

Հենց այդ մոմենտին բոռը մեռնում է, և նրանք յերկուսով ընկնում են գետին։ Այստեղ մայրն ազատվում է բոռից՝ իր հետ տանելով նրա պոկված սեռական օրգանը։

Բոռի ամբողջ սերմնապաշարն անցնում է մորն ու ծծվում սերմընդունիչի մեջ։ Այստեղ սերմը մնում և հետագայում քիչ-քիչ գործադրվում է ձվերի բեղմնավորման համար։

Դեռևս հայտնի չէ, թե բոռն ինչքան ժամանակ է ապրում, վորովհետև նա գոյանում է գարնանը և ամառը, ապա բռնի կերպով վոչնչանում բերքից հետո։ Իսկ հատուկ հետազոտություններ չեն կատարված։ Յերբեմն միայն անմայր ընտանիքում բոռեր են մնում ու ձմեռում։

Առնասերմը բոռի սեռական գեղձերում գոյանում է դեռևս նրա հարսնյակ վիճակում՝ վերջին որերը։

Բայց դուրս գալուց, առնվազը 12 որից հետո նա հասնում է լրիվ հասունացման և կարողանում է մորը բեղմնավորել։

Արտաքին տեսքը.— *Ինքը խոշոր է, մարմինը՝ հաստ ու բրդոտ, փորիկի ծայրը բութ է, բարդ, աչքերն անհամեմատ ավելի խոշոր են, խայթոց չունի, կնճիթը շատ կարճ է ու անզարգացած։ Թռչելիս բարձր տզզոց է բարձրացնում։*

Տարվա մի վորոշ ժամանակ բոռերի շատ լինելը կենսաբանորեն վորոշ հիմք ունի, քանի վոր մայրն ոդում է բեղմնավորվում։ Յեթե բոռերը շատ չլինեն, մայրը հանկարծ կարող է բոռին չհանդիպել ու առանց բեղմնավորվելու վերադառնալ փեթակ։ Բացի այդ, բնական ընտրության խնդիրն էլ դժվար կլինի։

Հազարավոր բոռերից մեկին հազիվ է վիճակվում մոր հետ զուգավորվելու։

Աշխատավոր մեղուն

Աշխատավոր մեղուն սեռականապես անզարգացած էգ է և առաջանում է բեղմնավորված ձվերից՝ բանվորաբջիջների մեջ։

Նա այնպիսի կառուցվածք և բնազդներ ունի, վորոնց շնորհիվ բոլոր անհրաժեշտ աշխատանքները կատարում և փեթակի պաշտպանությունն ապահովում է, և վորոնք չկան կամ քիչ են զարգացած բոռի ու մոր մոտ։

Առանձնապես զարգացած են՝ մեղվի լեզուն, մեղրի մշակման նյութեր արտադրող գեղձերը, վորդի կերակուր արտադրող գեղձերը, մոմի գեղձերը, վոտքերի վրայի ծաղկափոշու զամբյուղիկները, ինչպես և խայթոցը։

Բջիջից դուրս գալուց հետո աշխատավոր մեղուները մի յերկու որ գրեթե վոչինչ չեն անում և հաճախ հենց նույն չեչի վրա ել մնում են։ Մնալով փեթակի ներսում նրանք կատարում են հետևյալ աշխատանքները. բջիջները և ընդհանրապես փեթակի ներսը մաքրում, վորդն են խնամում, չեչ են կառուցում. մեղրի հասունացման ու պասավորման, փեթակի պաշտպանության և ողափոխության աշխատանքն են կատարում։

Այսպիսով 15—20 որ մեղուն մնում է փեթակում, դաշտային աշխատանքների չի թռչում։ Միայն յերբեմն կեսորներից հետո դուրս են գալիս ու գլուխը դեպի փեթակն արած, այս ու այն կողմն են թռչում փեթակի դիրքին և շրջապատին ծանոթանալու համար։

Փեթակում յեղած և զանազան աշխատանքներ կատարած ժամանակ նրա գեղձերն ել խոշոր զարգացման են հասնում և ուժեղ կերպով համապատասխան նյութեր արտադրում։ Որինակ՝ վորդին կերակրելիս կեր մշակող գեղձերն են զարգանում, կառուցումներ կատարելիս՝ մոմի գեղձերը, մեղր վերամշակելիս՝ թքի գեղձերը։

Դաշտ թռչող և դաշտային աշխատանք կատարող մեղուների մոտ ել կարիք յեղած դեպքում այդ գեղձերը նորից սկսում են գործել, բայց ավելի թույլ կերպով, քան առաջ։

Ընդհակառակը՝ պաշտպանության դերը—խայթոցն իր թույնի գեղձերով թռչող մեղվի մոտ հարկ յեղած դեպքում ուժեղ կերպով է գործադրվում, այնինչ յերիտասարդ մեղուն փեթակի մեջ չափազանց խաղաղասեր է և հազվադեպ է խայթում։

Աշխատավոր մեղվի սեռական գործարանները շատ քիչ են զարգացած և նա ընդունակ չի բոռի հետ զուգավորվելու։ Յերբեմն միայն ձվարաններն սկսում են զարգանալ ու վորոշ թվով ձու արտադրել։ Աշխատավոր մեղուն հանգիստ վիճակում կարող է ապրել 8—10 ամիս։

Ուժեղ աշխատանքի ժամանակ ապրում է վոչ ավելի, քան մեկ ամիս կամ ամիս ու կես, վորովհետև աշխատանքից շուտով զառամում ու ծերանում է։

Բացի այդ, աշխատանքի ժամանակ զանազան տարերային պատահարներից ել (քամուց, անձրևից, ցրտից) շատ է կոտորվում։

Մեղվի զարգացումը

Ձու.—Մեղուն այն ձվերից է գոյանում, վոր մայրը բջիջներում է ածում։

Ձուն դնելու համար մայրն իր մարմնի յետևի մասը (վորովայնը, փորիկը) բջիջի մեջ է իջեցնում և ձու ածում, վորն իր ներքևի ծայրում յեղած մածուցիկ նյութի շնորհիվ մնում է կանգնած վիճակում (քիչ թեք) ու ամրանում է բջիջի հատակին։

Յերկրորդ որը ձուն սկսում է թեքվել, 3-րդ որը պառկում



Նկ. 2. Մեղվի վորդի զարգացումը. a_1 a_2 a_3—ձվերն առաջին, յերկրորդ և յերրորդ որերին. в—դատարկ բջիջ. 1, 2, 3, 4 և 5 համարներին համապատասխան վորդերի զարգացման որերը

է հատակին ու այդ որվա վերջին ձվից դուրս է գալիս վորդը։

Հենց այդ ժամանակ խնամող մեղուները վորդի համար բջիջի մեջ արդեն կերակուր են լցնում։ Այնուհետև այդ կերը միշտ բավական առատ է լինում բջիջում, և վորդն ուղղակի լողում է այդ կերի մեջ։

Որդ յեվ հարսնյակ

Վորդը մի վորոշ ժամանակ այդ կերով սնվելով մեծանում է, վորից հետո այլևս կերի պահանջ չի զգում։

Մինչև այդ վորդն արտաքորելու կարիք չի զգում, և այդ

ժամանակ յետևի անցքը դեռ բաց չի։ Կղկղանքը հավաքվում է ստամոքսի ծայրամասում ու մնում է այնտեղ։

Այդ օրից մեղուները բջիջի բերանը կնքում են մոմի և ծաղկափոշու բարակ և ծակոտկեն շերտով, այնպես վոր վորոշ չափով օդ կարողանա ստանալ։

Յերբ արդեն բջիջի բերանը փակ է, վորդը ներսում տեղից շարժվում, սկսում է բերնից բարակ թել բաց թողնել և իր շուրջը կոկոն հյուսել, ուստի և անընդհատ շուռ ու մուռ է գալիս բջիջում։ Հենց այդ ժամանակ նրա յետևի անցքը բացվում է ու նա իր կղկղանքը բաց է թողնում բջիջի հատակին, վորտեղ այն ծածկվում է հյուսած թաղանթով։

Յերկու որվա ընթացքում այդ կոկոնը բջիջի ներսում պատրաստ է լինում, ու վորդն իր շարժումները դադարեցնում է։ Նա ձգվում է ամբողջ բջիջի յերկարությամբ՝ գլուխը դեպի բջիջի բերանը և մեջքը՝ ներքևի պատին հենած։

Այդ դրության մեջ մնում է այնքան, վոր բոլորովին կերպարանափոխվում, դառնում է մեղու և բջիջի կափարիչը ներսից ծակում դուրս գալիս։

Մեղուների զարգացման պայմանները

Աշխատավոր մեղուները զարգանում են բանվորաբջիջներում, բոռերը՝ բոռաբջիջներում, իսկ մայրերը՝ հատուկ մայրապտուկներում։

Առաջին յերկու ձևի բջիջները մշտական են և բնում միշտ գոյություն ունեն, իսկ մայրապտուկները ժամանակավոր բնույթ են կրում, շինվում են չեչի կողքերին, ներքևներում կամ չեչի յերեսին՝ ազատ տեղերում։ Յերբ մայրերն արդեն դուրս են յեկել, մեղուներն այդ պտուկները քանդում, վոչնչացնում են։ Կերերը նույնպես տարբեր են թե վորակով և թե քանակով։

Մեղրով և ծաղկափոշով սնվելով՝ մեղուն գլխում յեղած գեղձերի միջոցով կաթնանման հյութ է արտադրում (կերակրախյուս)։

Մորը մինչև վերջ էլ ավելի նուրբ կերից են տալիս։ Այդ կերից այնքան շատ են լցնում բջիջի մեջ, վոր նրա մի փոքրիկ մասը հազիվ է օգտագործվում, իսկ մեծ մասը մնում ու բջիջի հատակին պնդանում է։ Միայն վորոշ դեպքերում, յերբ մայրապտուկները շատ են ու խնամողները քիչ, այդ կերից շատ քիչ է ավելանում։

Աշխատավոր մեղվի վորդին յերեք օր նույնպիսի նուրբ կերակուր տալուց հետո, 4-րդ օրն սկսում են միջակ վորակի կեր տալ, իսկ բոռին ամենից ավելի կոշտ կեր է տրվում։

Նրանցից ամեն մեկը մեծանալով իրեն հատուկ պայմաններում՝ դառնում է հասունացած մեղու, իրեն հատուկ ձևն է ունենում և իրեն հատուկ աշխատանքն է միայն կատարում։

Աշխատավոր մեղվի մոր և բոռի զարգացման ժամկետները տարբեր են։

Ահավասիկ ժամկետների տախտակը.

Մեղու	Ձու վիճակում	Վորդ վիճակում	Կնքված վիճակում	Ընդամենը ձու դըրած օրից մինչև դուրս գալը
Աշխատավոր մեղու . . .	3	6	12	21
Մայր	3	5	8	16
Բոռ	3	7	14	24

Նկարագրած դրությունից յերբեմն շեղումներ են լինում, վոր ընտանիքի աննորմալ դրության արդյունք են։ Յերբ ընտանիքը հանկարծակի վորբանում է, յերբ վորևէ պատճառից հին մայրը վոչնչանում է, կամ ձագ են վերցնում, թողնում են, վոր այդ ձագն ինքն իր մոր կարիքը հոգա։

Մինչև յերեք օրական բանվորավորդերից մեղուները կարող են մայրեր պատրաստել, վորովհետև մինչև այդ ժամանակ բանվորավորդի և մոր վորդի կերերը գրեթե տարբերություն չունեն։ Մեղուները շրջապատի բջջապատերը քանդում—մայրապտուկ են շինում։ Միաժամանակ սկսում են կերակրել հատուկ կերով, և ստացվում է նորմալ մայր։

Յերբ համապատասխան հասակի աշխատավորդեր չկան, կամ յերբեմն նրանց ներկայությամբ մեղուները նույն բանը բոռավորդերի հետ են անում, ինարկե՝ այդ վորդերից վոչինչ չի ստացվում։ Անսովոր կերի ու խնամքի հետևանքով նրանք կնքված բջիջի մեջ սատկում են։

Այդպիսի պտուկներն իսկույն աչքի յեն ընկնում. ա) պատերը հարթ և բարակ են լինում, պտուկները հաճախ անճոռնի ձև են ունենում. բ) գրեթե միշտ այդ ձևի մայրապտուկի կողքերին մի քանի հատ կնքած կամ չկնքած բոռավորդ է լինում,

իսկ բանվորավորդ և վոչ մի հատ, վորը և հաստատ նշան է, թե այդ պտուկը շինված է բոռավորդերի վրա։

Յերբ մայրը յերկար ժամանակ փեթակից բացակայում է, ընտանիքի մեջ ձու և սերունդ ունենալու բնազդը հաճախ արթնանում է խնամող մեղուների մոտ. կուտակվում է այն կերը, վոր նրանք պիտի տային վորդերին։ Այդպիսով, յերբ աշխատավոր մեղուներից շատերն ուժեղ սնունդ են ստանում, նրանց ձվարանները զարգանում են և նրանք սկսում են բանվորաբջիջների մեջ ձու դնել։

Այս դեպքում մի բջիջում յերկու ձու յե դրվում և ավելի ու ցրիվ (անկանոն)։ Բայց այդ ձվերից բոռեր են ստացվում, վորոնք զարգանալով փոքր բջիջներում՝ իրենք էլ փոքր են լինում (լրիվ զարգացման հասած չեն լինում)։

Ուրեմն, նշված շեղումներից լրիվ գործնական հետևանք է ստացվում, յերբ դեռ յերկու-յերեք որական բանվորավորդերից մայր են դուրս բերում է, վորոշ չափով, յերբ բանվոր մեղվի ածած ձվերից բանվորաբջիջների մեջ բոռեր են գոյանում։

Մեղվի կառուցվածքը

Ընդհանուր գծեր.— Մեղվի մարմինը կազմված է գլխից, կրծքից և փորովայնից։ Այս յերեք մասն իրար հետ կապված են բարակ ու շարժուն հոդերով և ծածկված են խիտինյա կոչված կոշտ կեղևով, վոր և նրա կմախքն է (արտաքին կմախք)։ Մարմնի ներսում զետեղված են զանազան օրգանները (գործարանները)։ Կրծքի մեջ կան նաև մի քանի խիտինյա ջլեր, վորոնք ամրություն են տալիս նրա կրծքին, և վորոնց վրա ամրացված են կրծքի մեջ առատորեն զետեղված մկանունքները։

Խիտինն ամրություն և դիմացկունություն է տալիս մեղվի մարմնի բոլոր անդամներին, և դրսի կողմից ծածկված է խիտ աղվամազով, վորը պաշտպանում է նրա մարմինը։

Գլուխ.— Գլուխը դրսից ունի հետևյալ կարևոր մասերը՝ աչքեր հինգ հատ, բերան իր մասերով և յերկու շոշափուկ (բեխիկներ)։

Աչքերից յերկուսը կոչվում են բարդ աչքեր, վորոնք խոշոր են, լոբիաձև և բռնում են գլխի յերկու կողմը։ Դրանք բաղկացած են մանր, իրար մոտ դասավորված աչքերից—բանվոր մեղվինն ու մորը 3—4 հազար հատ են, բոռինը՝ մինչև 6 հազար։

Աչքի այդ մանր մասերը (ֆասետկաներ) միայն մանրադիտակի տակ են յերևում, և ամեն մի աչքն առանձին կարող է իր տեսածը տպավորել, այնպես վոր մեղուն իր աչքի մի մասով կարող է վորևէ իր տեսնել և ճանաչել։

Յերեք հատ մանր աչքը յեռանկյունու ձևով զետեղված են նրա գլխի գագաթի վրա՝ յերկու մեծ աչքերի արանքում։ Յենթադրվում է, վոր դրանք հեռուն չեն տեսնում և ծառայում են մեղվին մոտիկ առարկաներ տեսնելու համար։

Բեխիկներ.—Կազմված են մի քանի հոդից, վորոնցից ներքևինը յերկար է և ծայրին մի քանի կարճ հոդեր ունի։ Դրանց վրա զետեղված են շոշափման և հոտառության զգայարանները։ Առանց շոշափուկների մեղուն յերկար չի ապրում, վորովհետև այլևս անընդունակ է դառնում համակերպվելու իր շրջապատին։

Բերան.— Կազմված է վերևի շրթունքից, վոր մի յերկարավուն խիտինյա ջերտիկ է (հորիզոնական), վերևի յերկու ամուր ծնոտից, վորոնցով մեղուն զանազան իրեր է բռնում կամ կրծում, մոմից իրեն կառուցվածքներ է կերտում։

Այդ ծնոտների տակ են գտնվում կնճիթները, վորոնք կազմված են փափուկ ու յերկար ներքևի յերկու ծնոտից և ներքևի շրթունքից, վորի վրա ամրացած է կզակը։ Կզակի ներքևից յերկարում են լեզվիկի ներքևի յերկու շոշափուկը։

Լեզվիկը բավական յերկար ջերտիկ է՝ խիտ մազով ծածկված։ Նրա միջտեղով, յերկարությամբ մի անցք է ձգվում, և յերբ լեզվի կողքերը միանում են իրար, մի նեղլիկ խողովակ է կազմվում։ Լեզվիկի ծայրը կլոր ու տափակ է և կոչվում է գդալիկ ու նույնպես խիտ մազերով է ծածկված։

Կնճիթի այդ բոլոր մասերն իրար միանալով կազմում են մի շարժուն խողովակ, վորով մեղուն մեղր կամ ուրիշ հեղուկ է ծծում։

Կուրծք.—Կուրծքը կազմված է մի քանի տարբեր մեծության վահանիկներից, վորոնք ամուր կերպով կապված են իրար հետ ու կազմում են կրծքի պատյանը։ Կողքերին ամրացած են վոտքերն ու թևերը։

Վոտներ.—6 հատ են. ամեն մի կողքին յերեք հատ։ Ամեն մի վոտք մի քանի մասերից է բաղկացած։ Առջևի զույգն ավելի փոքր է, մեջտեղինը՝ միջակ մեծության, իսկ ամենամեծ ու զարգացած վոտքերը յետևի զույգն է։ Ամեն մի վոտքը չորս խոշոր մասից է կազմված, իսկ նրանց ծայրին թաթն է, վոր մի քանի հոդերից է կազմված, իսկ ծայրին բռնիչներն են, վոր ճանկերի

իսկ բանվորավորդ և վոչ մի հատ, վորը և հաստատ նշան է, թե այդ պտուկը չինված է բոռավորդերի վրա։

Յերբ մայրը յերկար ժամանակ փեթակից բացակայում է, ընտանիքի մեջ ձու և սերունդ ունենալու բնազդը հաճախ արթնանում է խնամող մեղուների մոտ. կուտակվում է այն կերը, վոր նրանք պիտի տային վորդերին։ Այդպիսով, յերբ աշխատավոր մեղուներից շատերն ուժեղ սնունդ են ստանում, նրանց ձվարանները զարգանում են և նրանք սկսում են բանվորաբջիջների մեջ ձու դնել։

Այս դեպքում մի բջիջում յերկու ձու յե դրվում և ավելի ու ցրիվ (անկանոն)։ Բայց այդ ձվերից բոռեր են ստացվում, վորոնք զարգանալով փոքր բջիջներում՝ իրենք էլ փոքր են լինում (լրիվ զարգացման հասած չեն լինում)։

Ուրեմն, նշված շեղումներից լրիվ գործնական հետևանք է ստացվում, յերբ դեռ յերկու-յերեք որական բանվորավորդերից մայր են դուրս բերում և, վորոշ չափով, յերբ բանվոր մեղվի ածած ձվերից բանվորաբջիջների մեջ բոռեր են գոյանում։

Մեղվի կառուցվածքը

Ընդհանուր գծեր.—Մեղվի մարմինը կազմված է գլխից, կրծքից և փորովայնից։ Այս յերեք մասն իրար հետ կապված են բարակ ու շարժուն հոդերով և ծածկված են խիտինյա կոչված կեղևով, վոր և նրա կմախքն է (արտաքին կմախք)։ Մարմնի ներսում զետեղված են զանազան օրգանները (գործարանները)։ Կրծքի մեջ կան նաև մի քանի խիտինյա շերտեր, վորոնք ամրություն են տալիս նրա կրծքին, և վորոնց վրա ամրացված են կրծքի մեջ առատորեն զետեղված մկանունքները։

Խիտինն ամրություն և դիմացկունություն է տալիս մեղվի մարմնի բոլոր անդամներին, և դրսի կողմից ծածկված է խիտ աղվամազով, վորը պաշտպանում է նրա մարմինը։

Գլուխ.—Գլուխը դրսից ունի հետևյալ կարևոր մասերը՝ աչքեր հինգ հատ, բերան իր մասերով և յերկու շոշափուկ (բեխիկներ)։

Աչքերից յերկուսը կոչվում են բարդ աչքեր, վորոնք խոշոր են, լոբիաձև և բռնում են գլխի յերկու կողմը։ Դրանք բաղկացած են մանր, իրար մոտ դասավորված աչքերից—բանվոր մեղվինն ու մորը 3—4 հազար հատ են, բոռինը՝ մինչև 6 հազար։

Աչքի այդ մանր մասերը (ֆասետկաներ) միայն մանրադիտակի տակ են յերևում, և ամեն մի աչքն առանձին կարող է իր տեսածը տպավորել, այնպես վոր մեղուն իր աչքի մի մասով կարող է վորևէ իր տեսնել և ճանաչել։

Յերեք հատ մանր աչքը յեռանկյունու ձևով զետեղված են նրա գլխի գագաթի վրա՝ յերկու մեծ աչքերի արանքում։ Յենթադրվում է, վոր դրանք հեռուն չեն տեսնում և ծառայում են մեղվին մոտիկ առարկաներ տեսնելու համար։

Բեղիկներ.—Կազմված են մի քանի հոդից, վորոնցից ներքևինը յերկար է և ծայրին մի քանի կարճ հոդեր ունի։ Դրանց վրա զետեղված են շոշափման և հոտառության զգայարանները։ Առանց շոշափուկների մեղուն յերկար չի ապրում, վորովհետև այլևս անընդունակ է դառնում համակերպվելու իր շրջապատին։

Բերան.—Կազմված է վերևի շրթունքից, վոր մի յերկարավուն խիտինյա շերտիկ է (հորիզոնական), վերևի յերկու ամուր ծնոտից, վորոնցով մեղուն զանազան իրեր է բռնում կամ կրծում, մոմից իրեն կառուցվածքներ է կերտում։

Այդ ծնոտների տակ են գտնվում կնճիթները, վորոնք կազմված են փափուկ ու յերկար ներքևի յերկու ծնոտից և ներքևի շրթունքից, վորի վրա ամրացած է կզակը։ Կզակի ներքևից յերկարում են լեզվիկի ներքևի յերկու շոշափուկը։

Լեզվիկը բավական յերկար շերտիկ է՝ խիտ մազով ծածկված։ Նրա մեջտեղով, յերկարությամբ մի անցք է ձգվում, և յերբ լեզվի կողքերը միանում են իրար, մի նեղլիկ խողովակ է կազմվում։ Լեզվիկի ծայրը կլոր ու տափակ է և կոչվում է գդալիկ ու նույնպես խիտ մազերով է ծածկված։

Կնճիթի այդ բոլոր մասերն իրար միանալով կազմում են մի շարժուն խողովակ, վորով մեղուն մեղր կամ ուրիշ հեղուկ է ծծում։

Կուրծք.—Կուրծքը կազմված է մի քանի տարբեր մեծության վահանիկից, վորոնք ամուր կերպով կապված են իրար հետ ու կազմում են կրծքի պատյանը։ Կողքերին ամրացած են վոտքերն ու թևերը։

Վոտքեր.—6 հատ են. ամեն մի կողքին յերեք հատ։ Ամեն մի վոտք մի քանի մասերից է բաղկացած։ Առջևի զույգն ավելի փոքր է, մեջտեղինը՝ միջակ մեծության, իսկ ամենամեծ ու զարգացած վոտքերը յետևի զույգն է։ Ամեն մի վոտքը չորս խոշոր մասից է կազմված, իսկ նրանց ծայրին թաթն է, վոր մի քանի հոդերից է կազմված, իսկ ծայրին բռնիչներն են, վոր ճանկերի



Նկ. 3. Բանվոր մեղվի գլուխը, пг—հասարակ աչքեր, сг—բարդ աչքեր, у—բեղիկներ, г—վերին շրթունք, ж—վերին ծնոտներ, нч—ներքևի ծնոտներ, я—լեզվիկ, ш—ներքևի ծնոտի շոշափուկներ, щ—լեզվի շոշափուկներ



Նկ. 4. Մեղվի ոտքերը C և E—առաջին զույգ, a—սանրիկ՝ բեղիկները մաքրելու համար, к—փական, д—երկրորդ զույգ, ш—խթանիկ, A և B—ոտքերի երրորդ զույգը, б—ազդր, г—սրունք, лп—թաթիկ, щ—ունելիքներ, кр—զամբյուղիկ, щт—խոզանակ հետևի ոտքի վրա, шт—խոզանակ առաջի ոտքի кг—ճիրաններ։

տեսք ունեն։ Այդ ճանկերի արանքում կա նաև փափուկ բարձիկ, որի միջոցով նա կարող է ման գալ հարթ մակերեսի վրա (օրինակ՝ ապակու)։

Առջևի ոտների յերկու խոշոր մասերի արանքում փոքրիկ հանվածքներ կան՝ ներսի բերանը խոզանակի նման մազերով պատած։ Այդ հանվածքները նույնպես խոզանակի նման մի շերտիկով են փակվում։ Այդ հանվածքները բեխիկները մաքրելու համար են։

Միջնեղի ոտքերը (յերկրորդ զույգ) փոքրիկ խթաններ ունեն, որոնցով հրում, հետևի ոտներից վայր են գցում ծաղկափոշու գնդիկները։

Յետևի ոտների թաթի առաջին հոդը, մյուսների համեմատությամբ, շատ խոշոր է և ծաղկափոշի հավաքելու համար կողքերից մազիկներ ունի։ Սրունքի դրսի կողմից մազիկներով շըրջապատված մի փոսիկ կա, որը կոչվում է զամբյուղիկ և որի մեջ ծաղկափոշի յե հավաքում ու բերում փեթակ։ Կրծքի վերևի կողմից յերկու զույգ թև կա։ Ամեն մի կողմում մի մեծ և մի փոքր թև։ Այդ փոքր թևը սովորաբար թագնվում է մեծի տակ, իսկ թռիչքի ժամանակ յերկու թևի ներսի յեզրերին յեղած համապատասխան կեռերով միանում են իրար, ու մի մեծ թև է կազմվում։

Փորովայնը.—Կազմված է 9 օղակից, որոնցից միայն 6 հատն է լավ յերևում։ Մնացած յերեք հատը փորովայնի ծայրումն են, շատ փոքր են, գրեթե թագնված, իսկ վերջինն ամրացված է խայթոցին։

Փորովայնի ամեն մի օղակը յերկու մասից է բաղկացած՝ վերևի և ներքևի, որոնք կողքերին շարժուն ձևով միանում են իրար։ Օղակներն իրար հետ միանում են փափուկ, բայց ամուր թաղանթով, այնպես որ յետևի օղակը կիսով չափ մտնում է առջևի օղակի տակ։ Այսպիսով փորովայնը հարկ յեղած դեպքում կարող է լայնանալ ու փոքրանալ (կծկվել-բացվել)։

Օղակների ներքևի մասի լայնացած տեղում ներսի կողմից դետեղված են մոմ արտադրելու 4 զույգ գեղձ։ Փորովայնի ծայրին վերջին հոդերով պաշտպանված խայթոցն է, որն ասեղի պես սուր է և ծայրի կողքերից սղոցի ատամների նման կտրըվածքներ ունի, որոնց ծայրերն ուղղված են դեպի յետ։ Այսպիսով, խայթոցի ծայրը հեշտությամբ մտնում է մարմնի մեջ, իսկ դուրս գալիս այդ ատամները խանգարում են, որի հետևանքով, յերբ մեղուն խայթում է, խայթոցը մեղվի մարմնից պոկվում ու

մնում է մաշկի մեջ։ Պոկվելով նա իր հետ հանում է նաև օրգանների մի մասը, և այսպիսով մեղուն այլևս ապրել չի կարողանում ու սատկում է։

Խայթոցի հիմքի մոտ թույնի փուչիկն է, իսկ նրա կողքին թույն արտադրող գեղձերը։ Այդ փուչիկից մի անցքով թույնը մտնում է խայթոցի մեջ յեղած խողովակը և անցնում կաշու տակ (սրսկվում մարմնի մեջ)։

ՆԵՐՔԻՆ ՈՐԳԱՆՆԵՐ

Ստամոքս.—Կոկորդում սկիզբ է առնում կերակրափողը, որը կրծքի միջով անցնում—մտնում է փորովայնը, որտեղ լայնանալով կազմում է մեղրափուչիկը։ Այդ մեղրափուչիկի մեջ մեղուն, նայած իր կարիքին՝ նեկտար, մեղր, ջուր է հավաքում և բերում է փեթակ ու լցնում բջիջի մեջ։

Մեղրափուչիկը մի անցքով կապվում է ստամոքսի հետ։ Այդ անցքը բռնվում է հատուկ փականով։ Ստամոքսը բավական ընդարձակ մի աղիք է փորովայնում։ Մեղրափուչիկից մեղրը և ծաղկափոշին անցնում են ստամոքսն ու այնտեղ մարսվում։

Ստամոքսը միանում է հետին աղիքին։ Ստամոքսի միացման տեղում ամրացված են բազմաթիվ բարակ ու յերկար խողովակներ—մալպիգյան անոթներ, որոնք նույն դերն են կատարում, ինչ յերիկամունքները՝ կենդանու մոտ։

Հետին աղիքը բաղկացած է առջևի ստամոքսից բարակ և վերջից՝ հաստ աղիքից, որի մեջ հավաքվում են կերի անպետք մասերն ու կղկղանքի ձևով դուրս գալիս մեղվի հետույքով։

Հաստ աղիքը լայնանալու մեծ ընդունակություն ունի, և ձմեռվա ընթացքում նրա մեջ ահագին քանակությամբ կղկղանք է հավաքվում, որի շնորհիվ մեղուն ձմեռվա ընթացքում դուրս չի գնում, մինչև դուրս գնելը։

Գեղձեր.—Մեղուն ունի յերեք զույգ խոշոր գեղձ, որոնք կապ ունեն կերի յուրացման հետ, և որոնցից մի զույգը բերնի կողքերին, այտերի տակն է, մյուս զույգը կոկորդին մոտիկ, իսկ յերրորդը՝ ամենամեծ զույգը՝ գտնվում է կրծքում։

Առաջին զույգը տարբեր խողովակներով բացվում է կոկորդի մեջ և որդի համար կերակրանյութ է արտադրում։ Այդ զույգն ուժեղ կերպով զարգացած է աշխատավոր մեղվի մեջ։ 2-րդ զույգը բացվում է վերին ծնոտների հիմքերի մոտ։ Դրանց նշա-

նակությունը դեռ պարզված չի։ Զարգացած է աշխատավոր մեղվի և մոր մեջ։ 3-րդ զույգն ընդհանուր խողովակով միանում է



Նկ. 5. Մեղվի օրգանների դասավորության ընդհանուր տեսքը։ 1—բեխիկ, 2—բարդ աչք, 3, 4, 5—առաջին, 2-րդ և 3-րդ վոտքերը (կտրված), 6—շնչանցք, 7—հետույքի անցքը, 8—ուղեղ (առաջին նյարդային հանգույց, 9—փորիկի նյարդային շղթայի հանգույցներից մեկը, 10—նյարդ, 11—կրծքի նյարդային հանգույց, 12—նյարդային սյունիկ, 13—կերակրափող 14—միջին աղիք (ստամոքս), 15—մեղրափուչիկ, 16—փական, 17—բարակ աղիք, 18—հաստ աղիք, 19—մալպիգյան անոթներ, 20—հետին աղիքի գեղձեր, 21—խայթոց, 22—փոքր թույնի գեղձ, 23—թույնի փուչիկ, 24—մեծ թույնի գեղձ, 25—ոդային պարկեր, 26—շնչառության խողովակներ, 27—ձվարան։

լեզվի հիմքի առջևի մասի հետ և թուք է արտադրում, և թուքը քիչ-քիչ միանալով ծծված նեկտարի հետ՝ զանազան թթվուտային նյութեր է տալիս նրան։ 3-րդ զույգն առանձնապես զարգացած է աշխատավոր մեղվի մեջ։

Շնչառություն.—Մեղուն իր վորովայնի և կրծքի կողքերին յեղած անցքերով է շնչում։ Եթե մեղվի նստած ժամանակ ուշադրությամբ դիտենք, պարզ կտեսնենք, վոր նրա վորովայնը մեկ բացվում, մեկ կծկվում է (ռիթմիկ շարժումներ է գործում)։ Այդ նրա շնչառությունն է։ Այդ անցքերը միանում են շնչափողներին, վորոնք հաստ ու բարակ խողովակներով և զանազան ճյուղավորումներով միանում են իրար և այսպես անցնում մեղվի ամբողջ մարմնով ու մարմնի զանազան մասերով։ Մաքուր ոդն այդ խողովակների պատի միջով անցնում է արյան մեջ, և արյան միջից միևնույն ձևով փչացած ոդն անցնում է խողովակների մեջ ու արտաշնչվում։

Վորովայնի մեջ յերկու տեղ խողովակները լայն տոպրակների ձև են ընդունում։ Թռչելու ժամանակ մեղուն այդ տոպրակներն ոդ է լցնում, վորի շնորհիվ մարմնի ծավալը մեծանում ու հեշտությամբ է մնում ոդի մեջ։

Արյան շրջանառություն.—Արյան անոթները բաղկացած են յերկու գլխավոր մասից. առաջինը՝ սիրտը կազմված է հինգ բաժանմունքից (կամերներից), վորոնք վորովայնի վերևի մասում խիտինի տակ են գտնվում։ Այդ կամերներից ամեն մեկն իր կողքերից անցքեր ունի, իսկ ամբողջ սիրտը շրջապատված է մկանների հանգույցներով, վորոնք և ղեկավարում են սրտի շարժումները (կծկվել-բացվելը)։

Սրտի առջևի ծայրից մի խողովակ է սկսվում, վորը վորովայնից կուրծքն անցնելու տեղում մի քանի վոլորաններ է տալիս և ապա կրծքի միջից անցնելով բացվում է գլխի մեջ։

Սրտի ռիթմիկ շարժումների հետևանքով կամերների կողքերի անցքերով արյունը լցվում է սրտի մեջ ու ապա մղվում առաջ։ Խողովակներով արյունն անցնում-լցվում է գլխի մեջ ու այդտեղից, վողողելով մարմնի բոլոր մասերը, վերադառնում է յետ ու նորից լցվում սիրտը։

Նյարդային համակարգություն.—Բաղկացած է կենտրոնական գլխավոր մասից ու զանազան ճյուղավորումներից։

Կենտրոնական մասը ձգվում է ամբողջ մարմնի յերկարությամբ և բաղկացած է նյարդային հանգույցներից, վորոնցից

ամենագլխավորը գտնվում է գլխում, և ապա մի քանի հատ հանգույցներից՝ կրծքում և փորովայնում։ Այդ հանգույցները զույգ նյարդային սյունիկներով միանում են իրար և բազմաթիվ նյարդային թելիկներ արձակում, վորոնցից մի մասը տարածվում է մարմնի ամենահեռավոր ծայրերն ու ընդունում արտաքին զգացումները—հոտառություն, շոշափելիք, լսելիք, ցավի զգացում, տեսողություն և այլն, իսկ մի մասը ներքին որգաններն է սպասարկում։

Մեղվի զգայարանները.—Հոտառելիքների և շոշափելիքների



Նկ. 6. Աշխատավոր մեղվի կտրվածքը յերկարությամբ. А—արյունատար խողովակի բացվածքը՝ գլխում, З—մեղրափուչիկ, бн—փորիկի նյարդային շղթա, ск—միջին աղիք, ну—ուղեղ, гу—կրծքի նյարդային հանգույց, бу—փորիկի նյարդային հանգույց, а—արյունատար խողովակ, с—սրտի առանձին կամերը, О—սրտի անցքերը՝ կողքերից, вд—մեջքի միջնապատ, п—կերակրափող, нд—փորիկի միջնապատ, г—արյունատար խողովակի վալվանները, х—կնճիթ (լեզու)

որգանները բեխիկների վրա յեն գտնվում, Դրանք զանազան ձևի ուռուցքներ են, վորոնց բացվածքները համապատասխան ձևով հարմարեցված են։ Լսելիքները, ինչպես յենթադրում են, զետեղված են վոտքերի ազդրերի վրա։

Հետաքրքրվողներին խորհուրդ ենք տալիս մի խոշորացույց ձեռք բերել, վորի միջոցով կարելի յե հեշտությամբ ուսումնասիրել մեղվի մարմնի կազմությունը, առանձնապես դրսի որգանները՝ լեզուն, վոտքերը, բեխիկները և այլն։

ԳԼՈՒԽ ՑԵՐՐՈՐԴ

ՓԵԹԱԿՆ ՈՒ ՄՅՈՒՍ ԻՆՎԵՆՏԱՐԸ

Մեղվի բնակարանը

Մեղուն բնական դրության մեջ բնակվում է ծառերի փչակներում, ծառերի խոռոչներում և բնական ուրիշ հարմար տեղերում։ Շատ վայրերում, վորտեղ այդպիսի հարմար բնակարաններ կան, գլխավորապես անտառոտ տեղերում, հաճախ մեղվի ընտանիքներ են գտնում ու յերբեմն հավաքում—բնակեցնում են փեթակների մեջ։

Այս բնական բնակարաններին բավական նման են այն կթոցներն ու կոճղերը, վորոնց մեջ դեռ շատ տեղ (Դարալագյազ, Գյառնի, Զանգեզուր և այլ վայրեր) հենց հիմա էլ մեղու յեն պահում։

Այդ փեթակների մեջ մեղվի բունը չի քանդվում և մեղվապահը չի կարողանում միջամտել մեղվի ընտանիքի կյանքին ու խնամել ինչպես հարկն է։

Տարբերությունը հետևյալն է.

1. այս փեթակներն իրենց տերն ունեն, անձրևներից ու զանազան պատահարներից պահպանվում և ձմեռը դրվում են ձմեռանոց.

2. բնական ձագը բռնվում ու բնակեցվում է նոր կթոցում.

3. փչացած ընտանիքի բունը մաքրվում, ժոմը, հալվում է այդ կթոցի մեջ նոր ընտանիք է բնակեցվում.

4. բերքից հետո կթոցի յետևից հացերի մի մասը կտրվում հանվում է իբրև ավելորդ մեղր, իսկ առջևի մասում թողնվում է մեղվի բունը.

5. բերքի ուժեղ ժամանակ, յերբ կթոցը մինչև յետևը լցվում է, մի կցորդ (կարճ կթոց) է կցվում, վորը մեղվին տեղ է տալիս նոր հացեր կառուցել ու մեղր լցնել։

Այս բոլորին հակառակ, բնության ծոցում մեղվի ընտանիքն

իր կամքին ե․ Նա ինքն է բնակարանը հարմարեցնում, խորդուբորդ պատերն ակնամոմով սվաղում, ծակերը ծեփում, արկանոցն իր պահանջներին հարմարեցնում, հացերը կառուցում է պատահական ձևերով, առանց վորևէ սիստեմի, պահպանելով միայն յերկու գլխավոր օրենք. 1. հացերը միշտ ամրացվում են վերևից և ուղղահայաց իջնում ներքև. 2. հացերի արանքի տարածությունը միշտ նույնն է և չի փոխվում (12—13 մմ):

Շրջանակավոր փեթակների գյուտը

1860-ական թվականներին Լանգստրոտը Միացյալ Նահանգներում և Բեռլեպշը Գերմանիայում, գրեթե միաժամանակ և իրարից անկախ, հնարում են շրջանակավոր փեթակը։

Այդ յերկու գյուտերի տարբերությունն այն է, վոր Բեռլեպշի փեթակի ձևն ու շրջանակի չափը, վորոշ անհարմարությունների պատճառով, չեն ընդհանրացել, և այդ փեթակն այժմ գրեթե վերացել է, նույնիսկ իր հայրենիքում՝ Գերմանիայում։ Իսկ Լանգստրոտի փեթակը գրեթե հենց նույն ձևով ու չափսերով մինչև այժմ էլ խոշոր տեղ է գրավում կուլտուրական մեղվապահության մեջ ու քանի գնում ծավալվում է։

Այն բոլոր փոփոխությունները, վոր մի շարք յերկրներում մտցվել են այդ փեթակի մեջ (Դադանբլատը, Լանգստրոտ, Ռուտ, Լայոնս և ուրիշներ), հիմնականում չեն փոխում այդ փեթակի բնույթը, և այդ գյուտը գրեթե ամբողջությամբ մնում է ու կմնա իբրև անփոփոխ մի գործոն՝ համաշխարհային մեղվապահության մեջ։

Փեթակի արտաքին ձևն է միայն խոշոր փոփոխություններ կրել և ամեն մի յերկրում իր պայմաններին հարմար հատուկ տեսք ընդունել։

Գործածության մեջ գտնվող փեթակները

Այժմ գրեթե ամբողջ աշխարհում տարածված է փեթակի յերեք գլխավոր տիպ՝ Դադանբլատը, Լանգստրոտ-Ռուտ և Լայոնս։

Մեզ մոտ՝ թե Հայաստանում և թե ամբողջ Միության մեջ Դադանբլատի փեթակն է տարածված, իսկ վերջերս Լանգստրոտի փեթակն է տարածվում։ Այս նույնն է, ինչ Դադանբլատինը, միայն թե ներքևից կտրած, այսինքն՝ Լանգստրոտի շրջանակը բավական ցածր է Դադանբլատինից։ Այս յերկու փեթակն էլ կանգնող փեթակներ են (ուղղահայաց), այսինքն՝ նոր հարկեր են ընդունում, վորոնք դրվում են իրար վրա և մեղվին հնարավորություն տալիս դեպի վեր ծավալվել։

Կա նաև պառկած փեթակ (հորիզոնական)՝ Լայոնս մեղվապահի հնարած։

Մեզ մոտ փորձեր են արվել այդպիսի հորիզոնական փեթակներ գործածելու՝ Դադանբլատի չափսի շրջանակներով շինվել են յերկար փեթակներ, վորոնք 12 շրջանակի փոխարեն վերցնում են 16, 20, 24 ու յերբեմն 30։

Բայց այդ տիպի փեթակները չեն տարածվում այն պարզ պատճառով, վոր չափազանց ծանրաշարժ են և տարվա մեծ մասը—գարուն, աշուն, ձմեռ մեղվի բույնը նրա միայն մի փոքրիկ մասն է բռնում։ Ուրեմն և այդ ձևի փեթակում բույնը տաքացնելն էլ դժվար է։

Բացի այդ, Հայաստանի մեղվապահությունը մեծ մասամբ քոչվոր է, իսկ տեղափոխության համար, իհարկե, ամենից ավելի հարմարն այնպիսի փեթակն է, վորը մի քանի մասերից է բաղկացած և հարկ յեղած դեպքում կարող է փոքրանալ ու մեծանալ։

Թե Դադանբլատը և թե Լանգստրոտը հավասար բերք տալու տեսակետից մեզ մոտ առայժմ նույն նշանակությունն ունեն, այսինքն՝ չի նկատված, վոր Դադանբլատն իր շրջանակի մեծության շնորհիվ ավելի բերք տա։

Իսկ Լանգստրոտը, դրա հետ միասին, արտադրական նշանակություն ունեցող մի շարք առավելություններ ունի, այն է.

1. փեթակն ավելի հեշտ է գլուխ գալիս, վորովհետև բնի համար ավելի նեղ տախտակներ են պետք.

2. փեթակն ավելի թեթև է թե վերցնել-դնելու և թե տեղափոխության համար ավելի հարմար է, մանավանդ յերբ տանիքը հարթ է.

3. յերկրորդ հարկը վերցնում է բնի շրջանակներ, և այդպիսով վերևի ու ներքևի շրջանակները կարելի յե դասավորել ու փոխանակել մեկը մյուսով,

4. շրջանակն ավելի թեթև է և վրան աշխատելը թե ավելի հեշտ է և թե տեղափոխությունների ժամանակ ավելի քիչ է ճզմվում.

5. թույլ ընտանիքներն այդ փեթակի մեջ ավելի շուտ են զարգանում ու դառնում նորմալ ընտանիք։ Այդպիսով արհեստական բազմացման գործն էլ անհամեմատ ավելի հաջող է գնում։

Սակայն պետք է վորոշակի կերպով ասել, վոր բերքի օգտագործման համար այդ յերկու տիպի փեթակների տարբերու-

թյունը մեծ չի, և շնորհքով մեղվապահը միևնույն հաջողությամբ կարող է յերկու փեթակից էլ լավ բերք ստանալ։

Միայն տնտեսություններում անհրաժեշտ է մտցնել մի սկզբունք—միևնույն մեղվանոցում չպահել յերկու տիպի փեթակ, վորով գործը շատ է դժվարանում՝ պետք է տարբեր չափի մոմաթերթ ունենալ, տարբեր չափի շրջանակներ, տարբեր չափի փեթակներ շինել և այլն։

Դադանբլատի յեվ Լանգստրոտի փեթակների գծագրությունը յեվ չափերը

Հայաստանի պայմաններում, վորտեղ քոչվոր մեղվապահությունը խոշոր դեր է խաղում, ամենից ավելի հարմարը հարթ տանիքն է և ցածրիկ վոտքավոր հատակը։ Այս պատճառով գծագրությունների մեջ տրված է այդ ձևը։

Հարթ տանիքի հարմարությունն այն է, վոր հնարավորություն է տալիս թե տեղափոխության ժամանակ և թե ձմեռանոցում փեթակներն իրար վրա հեշտությամբ շարել։

Վերացվում են նաև տանիքի տախտակների ավելցուկները, վորոնք սաստիկ խանգարում են իրար կողքի շարելու ժամանակ։

Հարթ տանիքի պակասությունն այն է, վոր անձրևի ջուրը վրայից չի հոսում ու ճեղքերից ներս է լցվում։ Ցեխե թիթեղով պատել, ի հարկե, այդ խնդիրը կվերանա։

Կարելի յե թիթեղի փոխարեն գործածել նաև փաների կտորներ, ի հարկե, լավ ներկելու պայմանով։

Ամերիկական տիպի շուռտվողի հատակները, վորոնց մի ցերեսը մյուսից բավական խոր է և ձմեռվա ընթացքում է այդ յերեսը գործածվում, մեզ մոտ դժվար թե հաջողություն ունենան, վորովհետև մենք հնարավորություն չունենք ամեն մի հատակի համար առանձին պատվանդան շինել ու մառ ածել հետներս, քանի վոր այդ հատակը վոտներ չունի։ Առանց պատվանդան էլ ստիպված ենք, ամեն անգամ, մի վորևէ տեղ դնելիս տակը քար շարել, վոր գետնից բարձր լինի։ Բայց քարերի վրա դրած փեթակն անկայուն է լինում ու գլխացավանք է պատճառում։

Ուրեմն հատակը ցածրիկ վոտքերի վրա պետք է շինել, այսինքն այնքան, վորքան մեր պայմաններում անհրաժեշտ է փեթակը գետնից քիչ բարձր պահելու համար։



Նկ. 7. Լանգստրոտի փեթակի կտրվածքը։ Բունը, կորպուսը և վերնահարկը



Նկ. 8. Դադանբլատի փեթակի կտրվածքը՝ բունը և վերնահարկը

Կորպուսներ յեվ կիսակորպուսներ (վերնահարկ)

Ամեն մի մեղվանոց փեթակների համար պիտի ունենա վերևի հարկ։

Լանգստրոտի փեթակների համար սովորաբար գործ ենք ածում կորպուսներ, այսինքն՝ պահեստի բներ։ Այդ կորպուսները, ինչպես յերևում է գծագրությունից, շինվում են ուղիղ բնի շրջանակների չափով։

Բացի այդ, գործ է ածվում նաև կիսակորպուս (վերնահարկ), վոր կորպուսի ուղիղ կեսն է կազմում և հաճախ կորպուս չլինելու դեպքում յերկու հատ կարելի յե իրար վրա դնել և այսպիսով փոխարինել մի կորպուսին։

Դադանբլատի փեթակների համար գործ է ածվում վերնահարկ, վորի իսկական բարձրությունը պիտի լինի 167 մմ, բայց այժմ մենք գործ ենք ածում ավելի ցածր վերնահարկ, վորը նույնպես Դադանբլատի կորպուսի կեսն է կազմում։

Գործ են ածվում նաև այնպիսի կորպուսներ, վորոնք նույն հնարավորություններն են տալիս Դադանբլատին, ինչ վոր Լանգստրոտին.

Ամեն յերկու հիմնական փեթակին, մեր պայմաններում, պետք է ունենալ առնվազն մեկ կորպուս և մեկ կիսակորպուս, վորը կապահովի ընտանիքների զարգացումն ու ոգտագործումը։

Վերևի հարկերն աշնանից գործադրվում են չեչերը և մեղրով շրջանակները տեղավորելու և պահպանելու համար։

Մեղրահան

Մի մեքենա յե այդ, վորի մեջ շրջանակներից մեղր են քամում։

Թիթեղե մեծ, կլոր աման է, հեցերով (обруч) պատած, վորի ներսում ուղղահայաց մետաղե առանցքի վրա ամրացրած է շրջանակային վանդակը՝ մետաղե բարակ ձողիկներից և ցանցից շինած։

Առանցքի ներքևի ծայրը հենվում է կոնաձև հատակի մեջտեղում ամրացրած հիմքի վրա և մտնում է այդ հիմքի մեջ յեղած փոսիկի մեջ, վորտեղ գցված է պողպատե մի գնդիկ, վորը հեշտացնում է առանցքի պտտվելը (շփումը պակասում է)։

Վերևի կողմից առանցքն անցնում է փայտե հաստ ձողի միջով, որը կամուրջի պես ամրացած է ամանի յեզրերին։

Այդ կամուրջի վրա ամրացված է բավական հաստ ու պինդ պատվանդանը՝ իր մեծ անիվով (շեստերնյա), որ ատամներով բռնում է առանցքի վերևի կողմում ամրացրած փոքր անիվին (փոքր շեստերնյա), իսկ առանցքի ծայրը մտնում է պատվանդանի վերևից կորացած և ուղղահայաց իջնող ծայրի մեջ։

Նկ. 9. Մեղրահան

Մեծ անիվը պատվանդանի բռնիչների միջով մի հորիզոնական մետաղե ձողով միանում է կոթի (բռնակի) հետ։

Մեղրահանի ամանը (չանը) ներքևի կողմից մի անցք (ծորակ) ունի, մոտ 6 սմ լայնությամբ, որ հատուկ կալնիչով փակվում է։

Մեր գործածած մեղրահանները սովորաբար միանգամից չորս շրջանակ են վերցնում, բայց կան և ավելի փոքր մեղրահաններ 2 կամ 3 շրջանակ վերցնող։

Խոշոր արտադրության մեջ գործածվում են նաև ավելի շատ շրջանակներ վերցնող մեղրահաններ, բայց դրանք հարմար են նստակյաց մեղվանոցների համար։ Դրանցից կան 8, 16, 40, 64 և ավելի շրջանակ վերցնող։

Վանդակում սովորական 2—4 շրջանականոց մեղրահանի մեջ շրջանակներն իրար դեմաց են դրվում, յերեսները դեպի առանցքը։

Բայց յերբ շրջանակների թիվը ավելանում է, այդ ձևով հնարավոր չի դասավորել։ Դրա համար էլ ներսի վանդակն այնպես են շինում, որ շրջանակները շառավղաձև դասավորվեն առանցքի շուրջը, ինչպես անիվի ճաղերը։ Այդ մեղրահանները կոչվում են շառավղային։

Մինչև այժմ մեզ մոտ յեղած մեղրահանների վանդակներն այնպես են սարքված, որ շրջանակը, մի յերեսը քամելուց հետո, պետք հանել, շուռ տալ ու նորից դնել, որ մյուս յերեսն էլ քամվի։ Բայց հիմա արդեն գործի յենք դնում նաև ինքնաշուռ մեղրահաններ, այսինքն՝ ամեն մի շրջանակի համար. վանդակը

վրայից ցանցավոր տուփ ունի, որ հատուկ բռնիչների վրա ինքն իրեն շուռ է գալիս տեղում, այնպես որ, յերբ մեղրահանի բռնակը (թևը) մի ուղղությամբ ենք պտտեցնում, շրջանակի մի յերեսն է քամվում, իսկ յերբ ուղղությունը փոխում ու հակառակ կողմն ենք պտտեցնում, շրջանակները տուփերի հետ իրենք իրենց շուռ են գալիս ու մյուս յերեսներն էլ քամում։

Շառավղային մեղրահանի մեջ շրջանակները շուռ գալու կարիք չունեն։ Նրանց դասավորությունն ինքնստինքյան այնպես է, որ բռնակը որ կողմի վրա պտտեցնես, շրջանակների այն յերեսն էլ կքամվի։

Քամելու ժամանակ մեղրահանը մի հարմար տեղ այնպես պետք ամրացնել, որ չշարժվի և կողքի վրա ծռված չլինի (կշեռք լինի)։

Շրջանակների մեջ պետք վորոշ ընտրություն կատարել, այնպես որ իրար դիմաց դրվող շրջանակները մոտավորապես միևնույն ծանրությունն ունենան։ Յերբ մեկը մյուսից թեթև է լինում, մեղրահանը թափ է տալիս, տեղից խախտում է և չեչերն ավելի շուտ են կոտրվում ու փչանում։

Մեղրահան մեքենայի համապատասխան տեղերը, մանավանդ անիվները և առանցքի ներքևի ծայրը յերբեմն պետք է յուղել։

Մեղրահան մեքենան սովորաբար ձեռքով են բանեցնում, բայց խոշոր արտադրության մեջ անհրաժեշտ է էլեկտրականության միջոցով մեքենայական շարժում մտցնել։

Մեղրահանից մեղրի դուրս գալն ու ամանները լցնելը նույնպես կարելի յե մեքենայացնել։

Սերկների ամանը թիթեղից շինած մի քառակուսի աման է՝ 30 սմ լայնությամբ, 60 սմ յերկարությամբ և 30 սմ բարձրությամբ, որի մեջ հագցրած է մի ուրիշ թիթեղե անոթ, և որի հատակի տեղը մետաղե ցանց է ամրացված։

Տեղափոխման ժամանակ այդ ցանցավոր ամանը մտնում է մյուսի մեջ, իսկ գործի ժամանակ այնպես ենք վեր բարձրացնում, որ ներքևի մասը մի 10 սանտիմետրի չափ մնա ներքևի ամանի մեջ։ Վորպեսզի այդ դրության մեջ մնա, յերկու շերտ կորացրած թիթեղ կամ հաստ մետաղալար հագցնում ենք ներքևի ամանի յեզրերին ու այդ շերտերի վրա հարմարեցնում ցանցավոր անոթը

Ցանցավոր անոթի բերնի վրա հարմարեցնում ենք փայ-

տե ձողիկավոր մի վանդակ, վորի վրա և հենում ենք շրջանակն ու սերեկներն առնում։

Դանակի բերնից սերեկները թափվում են ամանի մեջ՝ ցանցի վրա, վորտեղից մեղրը քամվելով լցվում է ներքևի ամանի մեջ։ Դանակն ամեն անգամ քսում ենք վանդակի ձողերին (բեչոտկա), մեղրի ու մոմի կտորտանքը մաքրում ու նորից սերեկն առնում։

Պատյան պատվանդան

Մեղրահանի համար մի փայտե արկղ ենք շինում, վորին աշխատում ենք կլոր ձև տալ։ Այդ արկղն այնպես է շինվում, վոր մեղրահանը կիսով չափ մտնում է մեջը։ Տեղափոխելու կամ հանգիստ կանգնելու ժամանակ այդ արկղը ծառայում է իբրև պատյան, իսկ մեղր քամելու ժամանակ մեղրահանը միջից հանում, այդ արկղը շուռ ենք տալիս բերնի վրա ու մեղրահանը դնում վրան։

Կողքերից մի քանի հատ մեխ ենք խփում, վոր մեքենան տեղից չշարժվի։ Ծորակը կախ ենք անում, վոր տակն աման դրվի։

Արկղը շինվում է յերեք սմ հաստություն ունեցող տախտակից։



Նկ. 10 Գ[illegible]լխացանց

Գլխացանց (յերեսի բող)

Սովորաբար կարվում է բարակ կտորից՝ չթից, մառլայից, և աչքերի համար մի կողմում ցանց—տյուլ է կարվում, վոր միջից սև ու նուրբ պետք է լինի՝ հեշտ տեսնելու համար։

Ցանցը ներսից այնպիսի հարմարություն պետք է ունենա, վոր կողերը մարդու յերեսից և ընդհանրապես մարմնից բավական հեռու լինեն, վորովհետև շորի միջից մեղուները խայթում են։ Ուստի հաճախ հարմար է լինում գլխարկի վրայից հագնել (ամենից հարմարը կեպին է)։

Ծխարար

Թիթեղից շինած մի կարճ խողովակ է՝ նեղ ծխանցքով կափարիչը դեպի առաջ թեքված։ Խողովակի յետևը փուքսն է ամրացված։

Ծխարարի մեջ կարելի յե վառել հին շոր, փտած փայտ, աթար, բայց ամենից ավելի հարմարը չոր աթարն է։ Նախ՝ աթարի ծուխը դառը չի և մեղվին չի ջղայնացնում, յերկրորդ՝ աթարը շուտ է վառվում, հեշտ է մխում, առատ ծուխ է տալիս ու ծխարարի մեջ չի հանգչում։

Ծխարարը վառել և վառ պահել մեղվապահները հաճախ բավական դժվարանում են։ Ամենից հեշտ վառելու միջոցը հետևյալն է։

Մեղվապահը հոգատարությամբ պահում է մոմոտված հին ծածկոցները, վորոնք արդեն անպետք են գործածության համար։ Ամեն անգամ մի փոքր կտոր այդ մոմոտ շորից վառում գցում են ծխարարի մեջ, բորբոքում, աթարի մանր կտորները լցնում վրան ու անընդհատ բորբոքում։ Շուտով աթարն սկսում է ծխալ։ Նրա վրա նոր կտորներ են ավելացնում, ծխարարը լիքը լցնում ու կափարիչը փակում։

Ուրեմն, մեղվապահն ապահով տեղում իրեն համար միշտ պետք է ունենա մոմոտված շորեր և չոր աթարի պաշար։

Մեղվանոցում աշխատելիս ծխարարի գործածությունը միշտ անհրաժեշտ է. ծուխը մեղվին այնքան է հանգստացնում, վոր քող գործածելու հաճախ կարիք չի լինում։ Միևնույն ժամանակ ծխի գործածությունը հնարավորություն է տալիս արագ և հաճախ առանց յերեսը ծածկելու աշխատել մեղվանոցում։

Քերիչ (ստամեսկա)

Զանազան ձևի քերիչներ կան, վորից ամենահարմարը Ռուտի քերիչն է։

Փոքրիկ, ձեռքի միջի մետաղե գործիք է, վորի յերկու ծայրերը հարթ, լայն ու բավականին սուր են։ Մի ծայրն ուղիղ է, մյուսը՝ կորացրած (կարթաձև)։

Այդ քերիչով շրջանակն ենք տեղահան անում, փեթակի միջից մոմերն ու կեղտոտությունները քերում։

Խոզանակ

Թափ տված շրջանակի վրայից մնացած մեղվին թափելու համար գործ ենք ածում հատուկ խոզանակ՝ նեղ, երկար, խիտ մազերով, փայտե երկար կոթով։ Բայց փորձը ցույց է տվել, որ կարելի է այդ խոզանակը չգործածել։ Ամենից հարմարը փոքրիկ ավելն է, որ կարելի է համապատասխան բույսերից պատրաստել և բանեցնել։

Նկ. 11. Խոզանակ

Ձեռնասայլակ

Անհրաժեշտ է ձեռք բերել և մեղվանոցում գործածել զանազան ձևի 1—4 անվավոր փոքրիկ ձեռնասայլակ։ Ամենից հարմարը 4 անիվանի սայլակն է, բավական լայն պլատֆորմով և ցածր կողերով։ Եթե սայլակը ռեսորներով լինի, ավելի լավ։

Տարժական արկղ

Մեղվանոցում գործածելու համար պետք է շինել ֆաներից մի թեթև ձեռնափեթակ—կափարիչավոր արկղ, որ վերցնի 6 հատ բնի շրջանակ։ Արկղի երկու կողմից մի փոքրիկ փոկ են ամրացնում ու թևը գցած կամ ձեռքին կախ՝ հետները ման են ածում և, հարկ եղած դեպքում, փեթակի միջից հանած շրջանակները ժամանակավորապես դնում մեջն ու կափարիչը ծածկում։

Կշեռք

Կշռափեթակի համար գործ ենք ածում տասնորդական կշեռք։ Պատրաստում են նաև հատուկ կշեռքներ, որոնք ավելի թեթև են և հարմար՝ տեղափոխության համար։ Բայց առայժմ մեզ համար միակ հարմար կշեռքը տասնորդականն է, որից ամեն մի խոշոր մեղվանոց մեկ հատ պետք է ունենա։

Մայրավանդակը մետաղե ցանցից է պատրաստվում ու տարբեր ձևի (հարթ, կլոր) և երկու կողմից անցք է ունենում և այնպիսի չափով, որ շրջանակների արանքը հեշտությամբ տեղավորվի։

Եթե պատրաստի վանդակներ չկան, ինքը՝ մեղվապահը

մետաղացանցից կարող է թիթեղի մկրատով մի քառակուսի կտոր կտրել (երկարությունն ու լայնությունն 8—9 սմ), խողովակի պես կլորացնել, եզրերն իրար միացնելով ծայրերին՝ փայտե խցաններ ամրացնել կամ մի ծայրն ուղղակի մոմով բռնել։

Կերամաններ

Լինում են տարբեր ձևի։ Կան այնպիսիները, որ բնի վերևից ծածկոցի տակ դնելու համար են հարմարեցվում, բայց մեզ համար ամենից լավը բնի կողքին դրվող կերամանն է, որ սպիտակ թիթեղից շինած մի աման է՝ խորությունը մինչև 12 սմ, լայնությունը 4—5 սմ և այնպիսի երկարություն ունենա, որ հեշտությամբ տեղավորվի շրջանակի մեջ։ Կողքի ականջները ներսի կողմից մեխվում են շրջանակի կողերին և այդպես շրջանակի մեջ հարմարեցված դրվում է բնի կողքը, փեթակի մեջ։ Մեջը բարակ, երկար, ծակծկված տախտակի կտորի մի լաստ է գցված, որ լողում է շաքարաջրի երեսին, ու մեղուները նստելով նրա վրա՝ կողքերից ու ծակերից շաքարաջուր են վերցնում։

Պատերի ներսի կողմից ականամոմի և մոմի տաք լուծույթ պիտի քսել, որ կողքերին սահելով մեղվին հնարավորություն է տալիս հեշտությամբ իջնել կերամանի մեջ ու բարձրանալ։

Առանց այդ էլ կոկ թիթեղի վրայով մեղուները դժվարությամբ են իջնում-բարձրանում և հաճախ թափվում են շաքարաջրի մեջ ու կոտորվում։ Լաստն էլ այնքան լավ հարմարեցված պիտի լինի, որ շաքարաջրի մակերեսի հետ հեշտությամբ իջնի ու բարձրանա։

ԱՅԼ ԻՆՎԵՆՏԱՐ

Անհրաժեշտ պարագաներից շատերի նկարագրությունը տրված է խնամքի համապատասխան գլուխներում, իսկ մի քանիսը, որ չեն մտել այդտեղ, կտանք այս գլխում։

1. Բոչվոր մեղվանոցային սեղան

Շինվում է փայտից ու հարմարեցվում է քանդելու և տեղափոխելու համար։

10 սանտիմետր լայնք և հաստություն ունեցող փայտե ձողերից ամուր շրջանակներ են պատրաստվում, որոնց մեջը ֆաները կամ բարակ տախտակ են մեխում։

Խոզանակ

Թափ տված շրջանակի վրայից մնացած մեղվին թափելու համար գործ ենք ածում հատուկ խոզանակ՝ նեղ, յերկար, խիտ մազերով, փայտե յերկար կոթով։ Բայց փորձը ցույց է տվել, վոր կարելի յե այդ խոզանակը չգործածել։ Ամենից հարմարը փոքրիկ ավելն է, վոր կարելի յե համապատասխան բույսերից պատրաստել և բանեցնել։

Նկ. 11. Խոզանակ

Ձեռնասայլակ

Անհրաժեշտ է ձեռք բերել և մեղվանոցում գործածել զանազան ձևի 1—4 անվավոր փոքրիկ ձեռնասայլակ։ Ամենից հարմարը 4 անիվանի սայլակն է, բավական լայն պլատֆորմով և ցածր կողերով։ Յեթե սայլակը ռեսորներով լինի, ավելի լավ։

Շարժական արկղ

Մեղվանոցում գործածելու համար պետք է շինել ֆաներից մի թեթև ձեռնափեթակ—կափարիչավոր արկղ, վոր վերցնի 6 հատ բնի շրջանակ։ Արկղի յերկու կողմից մի փոքրիկ փոկ են ամրացնում ու թևը գցած կամ ձեռքին կախ՝ հետները ման են ածում և, հարկ յեղած դեպքում, փեթակի միջից հանած շրջանակները ժամանակավորապես դնում մեջն ու կափարիչը ծածկում։

Կշեռք

Կշռափեթակի համար գործ ենք ածում տասնորդական կշեռք։ Պատրաստում են նաև հատուկ կշեռքներ, վորոնք ավելի թեթև են և հարմար՝ տեղափոխության համար։ Բայց առայժմ մեզ համար միակ հարմար կշեռքը տասնորդականն է, վորից ամեն մի խոշոր մեղվանոց մեկ հատ պետք է ունենա։

Մայրավանդակը մետաղե ցանցից է պատրաստվում ու տարբեր ձևի (հարթ, կլոր) և յերկու կողմից անցք է ունենում և այնպիսի չափով, վոր շրջանակների արանքը հեշտությամբ տեղավորվի։

Յեթե պատրաստի վանդակներ չկան, ինքը՝ մեղվապահը

մետաղացանցից կարող է թիթեղի մկրատով մի քառակուսի կտոր կտրել (յերկարությունն ու լայնությունն 8—9 սմ), խողովակի պես կլորացնել. յեզրերն իրար միացնելով ծայրերին՝ փայտե խցաններ ամրացնել կամ մի ծայրն ուղղակի մոմով բռնել։

Կերամաններ

Լինում են տարբեր ձևի։ Կան այնպիսինները, վոր բնի վերևից ծածկոցի տակ դնելու համար են հարմարեցվում, բայց մեզ համար ամենից լավը բնի կողքին դրվող կերամանն է, վոր սպիտակ թիթեղից շինած մի աման է՝ խորությունը մինչև 12 սմ, լայնությունը 4—5 սմ և այնպիսի յերկարություն ունենա, վոր հեշտությամբ տեղավորվի շրջանակի մեջ։ Կողքի ականջները ներսի կողմից մեխվում են շրջանակի կողերին և այդպես շրջանակի մեջ հարմարեցված դրվում է բնի կողքը, փեթակի մեջ։ Մեջը բարակ, յերկար, ծակծկված տախտակի կտորի մի լաստ է գցված, վոր լողում է շաքարաջրի յերեսին, ու մեղուները նստելով նրա վրա՝ կողքերից ու ծակերից շաքարաջուր են վերցնում։

Պատերի ներսի կողմից ակնամածի և մոմի տաք լուծույթ պիտի քսել, վոր կողքերին սառելով մեղվին հնարավորություն է տալիս հեշտությամբ իջնել կերամանի մեջ ու բարձրանալ։

Առանց այդ էլ կոկ թիթեղի վրայով մեղուները դժվարությամբ են իջնում-բարձրանում և հաճախ թափվում են շաքարաջրի մեջ ու կոտորվում։ Լաստն էլ այնքան լավ հարմարեցված պիտի լինի, վոր շաքարաջրի մակերեսի հետ հեշտությամբ իջնի ու բարձրանա։

ԱՅԼ ԻՆՎԵՆՏԱՐ

Անհրաժեշտ պարագաներից շատերի նկարագրությունը տրված է խնամքի համապատասխան գլուխներում, իսկ մի քանիսը, վոր չեն մտել այդտեղ, կտանք այս գլխում։

1. Քոչվոր մեղվանոցային տնակ

Շինվում է փայտից ու հարմարեցվում է քանդելու և տեղափոխելու համար։

10 սանտիմետր լայնք և հաստություն ունեցող փայտե ձողերից ամուր շրջանակներ են պատրաստվում, վորոնց մեջը ֆաները կամ բարակ տախտակ են մեխում։

Տնակի ամենահարմար չափսերն են՝ լայնությունը յերկու մետր, յերկարությունը՝ յերեք մետր և բարձրությունը յերկու մետր, ամբողջ ծավալը՝ 12 խմ, տանիքը կարելի յե առջևից դեպի հետ թեք անել, բայց ավելի լավ է, վոր յերկթեք լինի դեպի կողքերը։

Տնակը սովորաբար 8 կտորից է լինում — առաջին և յետևի պատերը յերկուական կտորից, կողքի պատերը՝ մեկական կտորից և տանիքը՝ յերկու կտորից։

Այս կտորներն այնպես են շինված, վոր հեշտ լինի իրար հետ համարեցնել, ամրացնել ու տնակ դարձնել։ Կարելի յե ճարմանդներով ամրացնել իրար հետ։

Տնակն ունենում է մի դուռ և դռան յերկու կողմերից՝ մեկական փոքր լուսամուտ՝ ցանցով պատած։

Փոքրիկ մեղվանոցի համար կարելի յե ավելի փոքր ու թեթև շինել, բայց մեր տված չափսն ամենից հարմարն է, վորովհետև կարող է մեջը տեղավորել մեղրահանն իր պարագաներով, բավականաչափ մեղրամաններ և կորպուսներ մեղրի շրջանակներով։

Ցանցավոր վրան՝ գող մեղուներից պաշտպանվելու համար

4—5 սմ հաստություն ունեցող փայտե ձողիկներից շինվում են ամուր շրջանակներ ու ծխնիներով կամ ճարմանդով ամրացվում իրար։

Դրանց վրա մեխվում է մետաղացանց կամ մառլա (թեթև լինելու համար)։ Սովորաբար այդ վրանի պատերը ծալվում են իրար ու մի կողմ դրվում։

Վրանի չափսը

Լայնությունն ու յերկարությունը 1,25-ական մետր է, բարձրությունը՝ 1,5 մետր։

Գործածելու համար վրանը բացվում և ամրացվում է իր սովորական դիրքով ու կազմվում վրանը։

Մեղվապահը մտնում է վրանի տակը, ներսում գտնվող բըռնակներից վեր բարձրացնում վրանն ու վորևէ փեթակի վրա դնում այնպես, վոր ներսը՝ վրանի տակ մնում են ինքն ու փեթակը։ Այդպիսի վրանով պաշտպանված փեթակի համար հարկ յեղած անհրաժեշտ գործերը կատարում ու հետո տեղափոխվում է մի ուրիշ փեթակի վրա։

Ախտահանման կամեր

Հիվանդոտ ինվենտարն ախտահանելու համար միենույն բժշկական (սանիտարական) կամերն է այդ. և յեթե մեղվանոցին մոտիկ այդպիսի կամեր լինի, ապա այդ կլինի ախտահանության ամենահարմար միջոցը։

Թե փեթակները և թե ուրիշ պարագաներ դրվում են կամերի մեջ և ուժեղ գոլորշու կամ տաքացրած օդի միջոցով ախտահանվում, վորի համար մի ժամը բավական է։

Թիթեղից կարելի յե մի կամեր շինել, հարմարեցնել անիվների վրա ու գործածել հատկապես մեղվանոցների համար։

Ջրի տաշտ

Մեղվանոցը հաճախ դրվում է այնպիսի տեղ, վորտեղ ջուրը հեռու յե։ Անհրաժեշտ է ունենալ փայտե թեթև տաշտեր, վորոնք դնում են մեղվանոցի մոտ և մեջն ամեն առավոտ ջուր լցնում։ Ջրի մեջ խոտ և փայտի կտորներ են դնում, վոր մեղուները վրան նստեն և ջուր վերցնեն։ Ջուրը կարող է ծորալ տակառից կամ ծորակ ունեցող հատուկ ամանից։

Արկղ-տաբուրետ

Տախտակներից մի փոքր նստարան են շինում, մեջը մի



Նկ. 12. Արկղ տաբուրետ

արկղ, կողքերը դուրս ցցված ու բերանը բաց։ Այդ արկղի մեջ մանր մունր գործիքներ ու պարագաներ՝ մուրճ, աքցան, քերիչ, ծխարար, աթար, լուցկի և այլ բաներ են դնում։

Մեղվապահն այդ տաբուրետն աշխատանքի ժամանակ հետը ման է ածում, նստում է վրան ու միևնույն ժամանակ ձեռքն ընկած մոմի կտորը գցում մեջը։

Արևի մոմահալ

Սա մի արկղ է՝ կափարիչը թեք և ապակեպատ։ Վերևից մի մեծ տաշտ է դրվում մեջը, իսկ ներքևից՝ փոքր։ Մեծ տաշտի յերեսին մետաղե ցանց է ամրացված։ Հավաքած մոմերը գցում ենք այդ ցանցի վրա։ Արևի տաքությունից ապակու տակ մոմերը հալվում են ու քամվելով՝ ցանցի միջով լցվում տաշտը։



Նկ. 13. Մոմահալ

Վերևի տաշտի առջևի մասում շինված ծորակով հալված մոմը լցվում է ներքևի յերկար ու նեղ տաշտը և սառում, կաղապարվում է։

Մոմի չհալված մնացորդները ցանցի վրայից հետզհետե վերցնում ու հավաքում են մի կողմի վրա և վերջում կաթսայի մեջ ջրով հալում ու տալիս մամուլի։

Հյուսնի գործիքներ

Բացի բոլոր պարագաներից ու գործիքներից, ամեն մի մեղվապահ իր մեղվանոցում պիտի ունենա հյուսնի անհրաժեշտ գործիքներ՝ ռանդա, շերխեթել (ղոլախ), դուր, ստամեսկա (իզմիր), շաղափ, սղոց և ուրագ։

Պատգարակը սովորական շինարարական պատգարակի ձև ունի։ Բայց վերջինս բավական ծանր է, յերկու փայտե ձողի վրա, իրարից բավական հեռու, միայն յերկու նեղ տախտակ պետք է խփել ու փեթակը դնել վրան։ Բավական հաջողությամբ գործ են ածում նաև յերկու իրարից անջատ տախտակի կտոր՝ 20 սմ լայնությամբ, 3 սմ հաստությամբ և մետրուկես յերկարությամբ։ Այդ տախտակի կտորների ծայրերը կլորացնում են, վոր բռնելու համար հարմար լինի։ Յերկու բանվոր պատգարակի ձեվով բռնած՝ այդ տախտակների տափակ յերեսը յերկու կողմից հուպ են տալիս փեթակի կողքերին ու բռնեցնելով փեթակի կողքի շրիշակներին (պլինտուս)՝ փեթակը վերցնում-տանում են։

Յեթե շրիշակներն ամուր են ու բանվորներն զգույշ, այդ ձեվով փեթակ տեղափոխելը չափազանց հարմար է, վորովհետև փեթակն այլևս վոչ վերցնում ենք, վոչ դնում և վոչ էլ նորից իջեցնում պատգարակի վրայից։

Մեղվանոցային շենքեր

Ձմեռանոցների նկարագրությունը և հարմարեցումը տրված է ձմեռելու մասին յեղած գլխում։ Բացի այդ, մեղվանոցի աշխատանքների համար կառուցվում են նաև հատուկ շենքեր, վորոնք ծառայում են իբրև աշխատանոց, իբրև պահեստ՝ ինվենտարի, մեղրի և այլ բաների համար։

Մեղվանոցի մոտ կառուցվող շենքերն ավելի լավ է մեղվանոցի ներքևի կողմը կառուցել, վոր ծանրությունները ձեռքով կամ սայլակով դեպի ներքև տանելը հեշտ լինի։ Այս շենքերն անհրաժեշտ են հատկապես նստակյաց մեղվանոցների համար։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԳԱՐՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵՂՎԱՆՈՑՈՒՄ

Տեղի ընտրությունը

Սովորաբար ամեն մի մեղվանոց ունենում է իր տեղը, վորտեղ նա դրվում է ձմեռանոցից դուրս հանելիս։ Նոր տեղ ընտրելիս պետք է ուշադրություն դարձնել հետևյալ պայմանների վրա.

1. ինչքան հնարավոր է, այդ տեղը պիտի մոտ լինի ձմեռանոցին, վորպեսզի հանելը (դուրս դնելը) դժվար չլինի.
2. պաշտպանված լինի քամիներից.
3. լինի արևկող, այսինք արևելքից, հարավից ու արևմուտքից չլինեն այնպիսի պատվարներ (բարձր շենքեր, ծառեր և այլն), վորոնք իրենց հովի մեջ պահեն մեղվանոցը կամ նրա մի մասը.
4. այնքան հեռու չլինի դաշտերից, վորպեսզի մեղուն ստիպված լինի յերկար ճանապարհ անցնելու մինչև բերքին հասնելը.
5. խոնավ կամ ճահճոտ չլինի.
6. դաշտային վայրերում անհրաժեշտ է դնել ծառերի հովում (վոչ այնքան խիտ).
7. մոտերքում չլինեն մեծ ջրեր, իսկ առջևից առու չանցնի, վորովհետև դաշտից վերադարձող մեղուները հաճախ թեթև քամու անգամ թափվում են ջուրն ու փչանում.
8. բավական հեռու լինի մեծ, փոշոտ ճանապարհներից, կալերից և ընդհանրապես աղմկոտ ու փոշոտ տեղերից.

Տեղի հարմարեցումը

Նախ քան դուրս հանելը, մեղվանոցի տեղը պիտի հարմարեցնել։ Ամենից առաջ պիտի հոգ տանել, վոր ցեխ չլինի։ Յերբ արդեն մեղուները հանելու ժամանակն է, հաճախ մեղվանոցի տեղը դեռ ձյուն է մնացել, ուստի նախորոք պետք է մեղվանոցի տեղն ազատել ձյունից, վորպեսզի, մինչև մեղուները դուրս հանելը, այդ տեղը վորոշ չափով չորանա։ Կարելի յե ուղղակի ձյունը ցցել— հեռացնել։ Բայց դա դժվար է։

Ամենից ավելի հեշտը հետևյալն է. ձյունի վրա պետք է բարակ շերտով ցրիվ տալ հող կամ մոխիր, վորից ձյունը շատ շուտ հալվում է։

Յեթե տեղն անհարթ է (դար ու փոս կա, քարեր, աղբ և այլն), այդ բոլորը պիտի մաքրել և հարթել։

Հարկ յեղած դեպքում անհրաժեշտ է նաև փեթակների տակը քարեր շարել։

Մեղվանոցային պատվարներ (հողմարգելներ)

Յեթե առաջուց շինված ցանկապատ չկա, մեղվանոցի տեղը պիտի անպատճառ ցանկապատել տախտակներով (մինչև յերկու մետր բարձրությամբ)։ Տախտակների միջև պետք է թողնել 3—4 սանտիմետր արանք, վորպեսզի քամին ցանկապատին խփվելիս վորոշ չափով անցնի, ինչպես ասում են, «մաղվի» տախտակների արանքով։

Գյուղական փոքրիկ մեղվանոցները գրեթե միշտ արևկող և չորս կողմից լավ պաշտպանված տեղերում են գտնվում։ Իսկ պետական մեղվանոցները խոշոր են և հաճախ անհրաժեշտ է դնել գյուղից դուրս, բաց դաշտում։

Ամեն տարի գարնանը ցուրտ քամիներ են լինում, և մեղվի ընտանիքները տուժում են ավելի կամ պակաս չափով։

Ուստի արդյունաբերական մեղվանոցների համար մեղվանոցային հատուկ պատվարներ (հողմարգելներ) սարքելն անհրաժեշտ պիտի համարել։

Յեթե մեղվանոցն ամեն տարի գարնանը միևնույն տեղումն է դրվում, ամենից ավելի լավ պատվարը ցածր ծառերից կամ բարձր թփից յեղած ցանկապատն է, վոր հաճախ կարող ենք մենք ինքներս տնկել։

Փեթակների շարվածքը մեղվանոցում յեվ արկանոցների բացումը

Նախ քան դուրս դնելը փեթակների արկանոցները պետք է փակել, իսկ դրսում արկանոցներն ուղղում ենք սովորաբար դեպի հարավ։ Փեթակները դրսում շարելիս առաջ պետք է դնել առջևի շարքն ու շարելով գալ դեպի յետ։

Յերբ շարքը դրվում է, միանգամից ամբողջ շարքը պիտի շարել և վերջացնել։ Այդպիսով նոր դրված փեթակների մեղուները չեն շփոթվի և չեն մտնի ուրիշ փեթակների մեջ։

Փեթակներն իրարից 1 մետր հեռավորության վրա պետք է դնել, իսկ շարքերն իրարից մեկ ու կես մետր հեռու։ Յերբ տեղը

փոքր է, կարելի չէ ավելի մոտիկ դնել, բայց այնպես, վոր հնարավոր լինի ազատ անցուդարձ անել և աշխատել։ Յեթե յեղանակը տաք է ու մեղուներն անհանգիստ են, լավ կլինի հենց դուրս դնելու հետ միասին շուտ բացել արկանոցները, վոր մեղուն շուտ սկսի թռչել։

Բացելու կարգը հետևյալն է. մեղվապահը փեթակի հետևում կանգնած՝ կռանում է փեթակի վրա, ձախ ձեռքով հենվում կտուրի վրա, աջ ձեռքով զգուշությամբ բացում արկանոցը և իսկույն ձեռքը հետ քաշում։

Այդպիսով փեթակից դուրս թռչող մեղուն անմիջապես վոչ վոքի չի տեսնում և չի չարանում։ Այդ ձևով շարունակելով բացել արկանոցները՝ պետք է սկսել աջից շարքի առաջին փեթակից, վերջացնել ամբողջ առաջին շարքը, անցնել յերկրորդ շարքը, ապա յերրորդ, և այդպես մինչև վերջին շարքը։



Նկ. 14. Փեթակների շարվածքը մեղվանոցում

Իսկ յեթե մեղուները խանգարում են աշխատանքին, ուրեմն պետք է արկանոցները բացել շարելուց և վերջացնելուց հետո։

Բոլոր արկանոցները բացելուց հետո, նորից ստուգել արկանոցները, թե արդյոք փակ արկանոց չի՞ մնացել։

Առաջին ստուգում

Արկանոցները բացելուց անմիջապես հետո պետք է ստուգել բոլոր փեթակները, թե արդյոք հանգած ընտանիքներ չկա՞ն։ Նույն կարգով մեղվապահը շարքից-շարք անցնելով բարձրանում է կտուրներն ու նայում բնի ներսը։ Յերբ նկատում է հանգած ընտանիք, անմիջապես հեռացնում է մեղվանոցից։

Ի միջի այլոց, մեղվանոցից և մեղվանոցի մոտերքից պետք է հեռացնել սպիտակեղենները և ուրիշ արժեքավոր իրեր, վորովհետև մեղուների թռիչքի ժամանակ կկղանքն անձրևի նման թափվում է ներքև ու կեղտոտում ամեն ինչ։

Յերբ սկսվում է թռիչքը, մեղվապահն ուշադրությամբ դիտում է բոլոր արկանոցները և ամեն մի փեթակի մեղուների թռիչքը։ Յեթե կան սատկած մեղուներով բռնված արկանոցներ, պիտի մաքրել և միաժամանակ նայել փեթակի ներսը. յեթե կան

այնպիսի փեթակներ, վորոնց մեղուները թռիչք չեն կատարում, ուրեմն պիտի նայել նաև փեթակի ներսը և իմանալ, թե բանն ինչումն է։ Կատարելով այդ դիտողությունները՝ նա հեռանում է մեղվանոցից, վորպեսզի մեղուները հանգիստ կերպով կատարեն իրենց թռիչքը։

Յերբ թռիչքն սկսում է թեթևանալ, մեղվապահը նորից ստուգում է առանձին փեթակների մեղուների թռիչքն ու արկանոցների դրությունը և յեթե վորևէ կասկածելի բան է նկատում, նշում է տետրում, և ամենից առաջ այդ փեթակներն է ստուգում։

Կարող են լինել այնպիսի փեթակներ, վորոնք ձմեռվա ընթացքում խոշոր կորուստ են տվել, հատակի վրա շատ մեռել կա թափված և բորբոսնած, կան խիստ բորբոսնած չեչեր, կամ փեթակի պաշարն այնչափ սպառվել է, վոր մեղուն այլևս դիմանալ չի կարող, կամ մուկը բուն է դրել ու բավական վնասել մեղվին և բնի շրջանակներին, այդպիսի փեթակներին հենց այդ ժամանակ պիտի օգնության գալ, այսինքն պետք է հատակները մաքրել, շրջանակով մեղր տալ, բորբոսնած չեչերը բոլորովին հեռացնել կամ դնել բնի կողքերից, բունը մաքրել, կարգի բերել, սեղմել, տաքացումը կանոնավորել։

Հատակների մաքրում

Փեթակները դուրս դնելուց 1—2 օր հետո, յերբ արդեն մեղուները թռել են, պետք է հատակները մաքրել։

Բացի սովորական մեղվանոցային գործիքներից, ձեռքի տակ պիտի ունենալ հետևյալ գործիքներն ու հարմարությունները.

1. բավականին մեծ մի ֆաների տախտակ (դիկտ) կամ փեթակի տափակ կտուր.
2. մի հին պարկի (մեշոկի) կտոր.
3. դամասկայի ստամեսկա (յերկաթե փոքրիկ թիակ՝ սուր բերանով).
4. աքցան և մուրճ.
5. պատրաստել մի կտուր կամ մի տաշտակ.
6. մեղվանոցի կողքին փորել բավականին մի մեծ փոս։

Մեղվապահը և իր օգնականը անցնում են աշխատանքի հենց առավոտյան, յերբ արևը մի քիչ տաքանում է։ Օգնականը ծուխ է տալիս արկանոցից, աքցանով քաշում է հատակի մեխերը, հետո յերկու ձեռքով բռնում է փեթակի կողքերից ու բարձրացնում փեթակի բունը կտուրի (տանիք) հետ միասին։ Յեթե

փոքր է, կարելի չէ ավելի մոտիկ դնել, բայց այնպես, որ հնարավոր լինի ազատ անցուդարձ անել և աշխատել։ Յեթե յեղանակը տաք է ու մեղուներն անհանգիստ են, լավ կլինի հենց դուրս դնելու հետ միասին շուտ բացել արկանոցները, որ մեղուն շուտ սկսի թռչել։

Բացելու կարգը հետևյալն է. մեղվապահը փեթակի հետևում կանգնած՝ կռանում է փեթակի վրա, ձախ ձեռքով հենվում կտուրի վրա, աջ ձեռքով զգուշությամբ բացում արկանոցը և խցուկն ձեռքը հետ քաշում։

Այդպիսով փեթակից դուրս թռչող մեղուն անմիջապես վոչ վոքի չի տեսնում և չի չարանում։ Այդ ձևով շարունակելով բացել արկանոցները՝ պետք է սկսել առջևի շարքի առաջին փեթակից, վերջացնել ամբողջ առաջին շարքը, անցնել յերկրորդ շարքը, ապա յերրորդ, և այդպես մինչև վերջին շարքը։

Նկ. 14. Փեթակների շարվածքը մեղվանոցում

Իսկ յեթե մեղուները խանգարում են աշխատանքին, ուրեմն պետք է արկանոցները բացել շարելուց և վերջացնելուց հետո։

Բոլոր արկանոցները բացելուց հետո, նորից ստուգել արկանոցները, թե արդյոք փակ արկանոց չի մնացել։

Առաջին ստուգում

Արկանոցները բացելուց անմիջապես հետո պետք է ստուգել բոլոր փեթակները, թե արդյոք հանգած ընտանիքներ չկան։ Նույն կարգով մեղվապահը շարքից-շարք անցնելով բարձրանում է կտուրներն ու նայում բնի ներսը։ Յերբ նկատում է հանգած ընտանիք, անմիջապես հեռացնում է մեղվանոցից։

Ի միջի այլոց, մեղվանոցից և մեղվանոցի մոտերքից պետք է հեռացնել սպիտակեղենները և ուրիշ արժեքավոր իրեր, վորովհետև մեղուների թռիչքի ժամանակ կղկղանքն անձրևի նման թափվում է ներքև ու կեղտոտում ամեն ինչ։

Յերբ սկսվում է թռիչքը, մեղվապահն ուշադրությամբ դիտում է բոլոր արկանոցները և ամեն մի փեթակի մեղուների թռիչքը։ Յեթե կան սատկած մեղուներով բանված արկանոցներ, պետք է մաքրել և միաժամանակ նայել փեթակի ներսը. յեթե կան

այնպիսի փեթակներ, վորոնց մեղուները թռիչք չեն կատարում, ուրեմն պետք է նայել նաև փեթակի ներսը և իմանալ, թե բանն ինչումն է։ Կատարելով այդ դիտողությունները՝ նա հեռանում է մեղվանոցից, վորպեսզի մեղուները հանգիստ կերպով կատարեն իրենց թռիչքը։

Յերբ թռիչքն սկսում է թեթևանալ, մեղվապահը նորից ստուգում է առանձին փեթակների մեղուների թռիչքն ու արկանոցների դրությունը և յեթե վորևէ կասկածելի բան է նկատում, նշում է տետրում, և ամենից առաջ այդ փեթակներն է ստուգում։

Կարող են լինել այնպիսի փեթակներ, վորոնք ձմեռվա ընթացքում խոշոր կորուստ են տվել, հատակի վրա շատ մեղու կա թափված և բորբոսնած, կան խիստ բորբոսնած չեչեր, կամ փեթակի պաշարն այնչափ սպառվել է, վոր մեղուն այլևս դիմանալ չի կարող, կամ մուկը բույն է դրել ու բավական վնասել մեղվին և բնի շրջանակներին, այդպիսի փեթակներին հենց այդ ժամանակ պետք է օգնության գալ, այսինքն պետք է հատակները մաքրել, շրջանակով մեղր տալ, բորբոսնած չեչերը բոլորովին հեռացնել կամ դնել բնի կողքերից, բույնը մաքրել, կարգի բերել, սեղմել, տաքացումը կանոնավորել։

Հատակների մաքրում

Փեթակները դուրս դնելուց 1—2 օր հետո, յերբ արդեն մեղուները թռել են, պետք է հատակները մաքրել։

Բացի սովորական մեղվանոցային գործիքներից, ձեռքի տակ պետք է ունենալ հետևյալ գործիքներն ու հարմարությունները.

1. բավականին մեծ մի ֆաների տախտակ (դիկտ) կամ փեթակի տափակ կտուր.
2. մի հին պարկի (մեշոկի) կտոր.
3. դամասկայի ստամեսկա (յերկաթե փոքրիկ թիակ՝ սուր բերանով).
4. աքցան և մուրճ.
5. պատրաստել մի կտուր կամ մի տաշտակ.
6. մեղվանոցի կողքին փորել բավականին մի մեծ փոս։

Մեղվապահը և իր օգնականը անցնում են աշխատանքի հենց առավոտյան, յերբ արևը մի քիչ տաքանում է։ Օգնականը ծուխ է տալիս արկանոցից, աքցանով քաշում է հատակի մեխերը, հետո յերկու ձեռքով բռնում է փեթակի կողքերից ու բարձրացնում փեթակի բույնը կտուրի (տանիք) հետ միասին։ Յեթե

կտուրը շատ ծանր է և կողքերը լայն են, իհարկե՝ ավելի լավ է առաջուց կտուրը վերցնել. այժմյան նոր շինված տափակ կտուրներով բները մեկ մարդը կարող է հեշտությամբ բարձրացնել։ Յեթե փեթակը ծանր է, ուրեմն պետք է յերկուսով միասին բարձրացնեն։ Օգնականը բունը վեր է բարձրացնում, մեղվապահն այդ ժամանակ բռնում է հատակը, որ բնի հետ միասին չբարձրանա։ Հենց որ բունը պոկվեց հատակից, նա քաշում է հատակը, հանում փեթակի տակից ու նրա տեղը դնում փոխնրկա։ Տափակ կտուրները կարելի յե օգտագործել փաների տեղ։

Օգնականը բունն իջեցնում է այդ փաների (կամ յեթե կտուրը տափակ է՝ յետևում դրված կտուրի վրա) վրա, իսկ մեղվապահն այդ ժամանակ մաքրում է հատակի վրայի աղբը, մեջոկի կտորով սատկած մեղուները սրբում ու լցնում է իր մոտ դրված կտուրի վրա կամ տաշտակի մեջ, մոմի և ակնամոմի կտորտանքը քերում և թափում է նույն կտուրի վրա, ապա շորով լավ սրբում ու մաքրում է հատակը։

Մաքրելուց հետո, հատակը տեղն ենք դնում ու բունը հարմարեցնում վրան։

Հատակները մաքրելուց, վերջացնելուց հետո, ամբողջ հավաքված աղբը հենց նույն տաշտակի կամ կտուրների մեջ մի քանի անգամ թափահարում ենք, յերես-յերես վերցնում սատկած մեղուններին ու թաղում առաջուց պատրաստված փոսի մեջ։ Աղբի մնացած մասը բավական մոմ է պարունակում (մեղրի սեքենիներից թափված մանր թեփիկներ, մոմի կտորտանք), որից գունդ ենք կազմում ու հավաքում՝ հետագայում հալելու համար։

Արկանոցների փոքրացումը

Հատակները մաքրելուց հետո պետք է փոքրացնել արկանոցները։ Այս աշխատանքը կարելի յե կատարել փայտե ձողիկներով (պլանկաներով), թղթով, ցեխով և այլն։

Ամենից հարմարը պլանկաներն են, որոնք միայն այնպես պետք է հարմարեցնել, որ շատ կիպ լինեն ու նրանց տակից քամին չանցնի ներս։

Արկանոցի յերկու կողմից այդ պլանկաները պետք է այնպես մեխել, որ բնի ուղիղ դիմաց 4—5 սանտիմետրից ավելի անցք չմնա։

Առաջին գլխավոր ստուգումը

Փեթակը դուրս դնելուց հետո ըստ հնարավորին շուտ պետք է կատարել առաջին գլխավոր ստուգումը։

Յերբեմն պատահում է, որ յեղանակները վատ լինելու հետևանքով թե հատակների մաքրումը և թե այդ ստուգումն ուշանում է. օրինակ՝ գրեթե անընդհատ անձրևներ են գալիս, ցուրտ քամիներ են փչում, յերբեմն և ձյուն է գալիս։

Մեղվապահն ընդհանրապես պիտի, իհարկե, զգուշանա այդ վատ յեղանակներից ու ստուգումը հետաձգի, որովհետև ցուրտը կարող է վնասել որդերին։ Բայց նա պիտի գիտակցի և այն, որ ամեն օրվա ուշացումը սաստիկ վտանգի առաջ է դնում մի շարք ընտանիքներ, որոնք կարող են շուտափույթ օգնության կարիք ունենալ։

Ստուգումը կարող է կատարվել ընդմիջումներով թե վատ յեղանակներին և թե մեղվի գողության (վրա տալու) պատճառով։

Մեղվապահն այնքան ուշադիր և գործունյա պիտի լինի, որ հաշվի առնելով այդ խոչընդոտները, համենայն դեպս, շուտ կատարի ստուգումներն ու տեղյակ լինի ամեն մեկ ընտանիքի դրությանն ու գրանցի տետրի մեջ։ Առաջ, իհարկե, ստուգվում են այն կասկածելի ընտանիքները, որոնք առաջուց աչքի յեն ընկել։

Փեթակների համարակալումը

Ընդհանրապես անհրաժեշտ է փեթակները համարակալել ու տետրի մեջ ամեն մեկ փեթակին հատկացնել մի յերես՝ գրանցումները կատարելու համար։

Տետրում համարները նշված են ըստ կարգի (1,2,3,4,5,6,7 8,9 և այլն)՝ սկսած առաջին եջից։ Ամեն մի ընտանիքին հատկացվում է մի եջ իսկ որպեսզի տվյալ համարը կարիք յեղած դեպքում տետրի մեջ հեշտությամբ գտնվի, ամեն մեկ համարի դիմաց՝ թերթի վերևի անկյունում՝ գրվում է շարքի համարը։

Յերբ մեզ հարկավոր է գտնել, յենթադրենք, № 75 փեթակը, մենք նայում ենք տետրի մեջ 75 համարը, որի դիմաց գրված է շարքի համարը, դիցուք 5 (շարք 5). ուրեմն այդ փեթակը փնտրում ենք 5-րդ շարքում։

Յերբ այդ մեղվանոցը տեղափոխվում է ուրիշ տեղ և հա-

մարները խառնվում, նոր շարքերը նորից են համարակալվում և ամեն մեկ փեթակի համարի դիմաց հին շարքի նշումը ջնջվում է (մի գիծ են քաշում վրան) ու գրվում է նոր շարքի նոր համարը. այսպես—շարք 12, այսինքն արդեն նույն փեթակը գտնըվում է վոչ թե 5 շարքում, այլ 12։ Յերբ նորից է տեղափոխվում մեղվանոցն ու այդ փեթակն ընկնում մի ուրիշ շարք, որինակ՝ 8-րդ, տետրում շարքը նշվում է 8-րդը։

Ստուգման ձևը

Աշխատանքը պետք է սկսել սովորական կարգով, այսինքն առջևի շարքի առաջին փեթակից սկսելով վերջացնել առաջին շարքն ու այսպես շարք-շարք անցնելով ստուգել ամբողջ մեղվանոցը։

Ամեն անգամ՝ փեթակը բանալուց առաջ՝ պետք է արկանոցից յերկու-յերեք քուլա ծուխ բաց թողնել ներս, վորպեսզի բոլոր մեղուներն զգան ծխի ազդեցությունը, վորից հետո նոր միայն բաց անել փեթակը։

Ոգնականը կտուրը վերցնում է, և մեղվապահը փեթակի բերանը բացում։ Ծածկոցը չպետք է ամբողջովին վերցնել ու փեթակի ամբողջ յերեսը բաց անել. սկզբում պետք է բացել կողքի 2—3 շրջանակն ու ծածկոցը ծալել վրան։ Ոգնականն անմիջապես ծուխ է տալիս շրջանակների արանքով դեպի ներս, այնպես վոր բոլոր մեղուներն զգան ծխի ազդեցությունը։

Մի քանի անգամ ծուխ տալուց հետո նա դադարում է, իսկ մեղվապահն սկզբում հանում է կողքի շրջանակն ու դնում մի կողմ։

Կարելի յե ունենալ մի կորպուս՝ ծածկոցը մի կողմից վրան մեխած և շրջանակը դնել այդ արկղի մեջ ու ծածկել՝ գողության վտանգից զերծ պահելու համար։ Կորպուսի տակի կողմից պետք է մեխել մի բարակ տախտակ։

Այդ կորպուսի փոխարեն կարելի յե փաներից շինել նաև մի հատուկ թեթև արկղ ու մեղվանոցում ման ածել աշխատանքի ժամանակ։

2-րդ շրջանակն արդեն չպետք է հանել փեթակից, մեղվապահը նայում է նրա մի յերեսը, ապա շրջում է տեղից և դնում միջնատախտակի մոտ։ Հետո շրջում է նաև 3-րդը և 4-րդը։

Յեթե արդեն 2-րդ կամ 3-րդ շրջանակի վրա վորդ է նկա-

տում, ուրեմն էլ կարիք չկա քանդել ամբողջ բույնը, այլ իսկույն պետք է շրջանակները դնել իրենց տեղն ու ծածկել փեթակը։

Աշխատանքի բնույթը

Գարնանը սովորաբար, յերբ դեռ բերք չկա մեղվանոցում, կարող են գողության դեպքեր լինել։

Դրա համար աշխատանքը պետք է կատարել շատ արագ և ներդաշնակ կերպով։

Ի հարկե հնարավոր չի լինի բնի բոլոր շրջանակները մանրամասնորեն նայել ու ճիշտ վորոշել, թե ինչքան մեղր կա և ինչ քանակությամբ և ինչ վորակի վորդ ու ձու։ Յեթե մեղվապահն ամբողջ բնի մեջ կնքած վորդ չի նկատում, հանում է կենտրոնի շրջանակներն ու նայում է, թե կա՞ արդյոք ձու և մատաղ վորդ։

Առաջին ստուգումը բավական կլինի, վոր մեղվապահը մոտավորապես ստուգի պաշարի դրությունը և մոր պետքական լինել կամ չլինելը։ Ոգնականն ստուգված փեթակի յերեսը ծածկելուց և մյուս փեթակի կտուրը վերցնելուց հետո թողնում է, վոր մեղվապահն իր ստուգումը կատարի, իսկ ինքը տետրի մեջ համապատասխան համարի տակ գրանցում է հետևյալ տեղեկությունները 1 կամ 2 տողի վրա, այս հետևողականությամբ.

1. ամսաթիվը.
2. շրջանակների քանակը.
3. պաշարի մոտավոր քանակը (բավարար, պակաս, չկա).
4. աշխատավորդի գոյությունը.
5. մեղվի մոտավոր ուժը (մեղուն շատ, միջակ, նվազ)։

Սրանք այն տեղեկություններն են, վոր բոլոր փեթակների մասին պիտի անպատճառ գրել տետրում։ Բացի այդ, տետրում գրվում են նաև փեթակում նկատված թերությունները բոռաձվի մասին, վորդ ու ձու ունի թե վոչ, վորդն անկանոն է՝ ցրիվ, բոռի հետ խառը, կա բորբոս, մեղրը բավական շաքարել է, մկան հասցրած վնասը և այլն։

Ստուգումի գրանցման ձևը հետևյալն է՝

№ 37—շարք 7.

20|3,6 շրջանակ, պաշարը բավարար, կնքած վորդ, մեղուն շատ։

№ 38—շարք 10.

22|3,7 շրջանակ, պաշարը պակաս, մատաղ վորդ ու ձու, մեղուն միջակ.

№ 49—շարք 10.

22|3,5 շրջանակ, պաշար չունի, վորդ ու ձու չկա, մեղուն նվազ. բոլորս չեչերի մեջ, մեղրի մի մասը շաքարած.

№ 50—շարք 5.

23|3,7 շրջանակ, պաշարը բավարար, կնքած վորդը ցրիվ, հատ-հատ բոռավորդեր, մեղուն շատ.

№ 54—շարք 8.

23|3,6 շրջանակ, պաշարը պակաս, բռաձու, մուկը բուն է դրել հատակի վրա, կրծոտել է մի քանի չեչ և բավական մեղու յե փչացրել։

Ընդհանրապես ընտանիքների կացության մասին լավ կլինի գրանցումներ կատարելիս ամեն անգամ նոր տողից և իրար յետեվից գրել առանց սյունակների, վորովհետև սյունակները շատ տեղ են բռնում ամեն անգամ տարբեր տեղեկություններ գրելու պատճառով։ Միևնույն ժամանակ այդ գրանցումների տետրը պիտի հնարավորին չափ փոքր լինի։

Գոգնոցի վրա պիտի մեկ գրպան կարել ու տետրը մատիտի հետ միասին դնել այդ գրպանի մեջ։

Յերբ մեկ որվա ընթացքում վորոշ քանակությամբ փեթակներ ստուգվում են, աշխատանքը վերջացնելուց հետո պետք է ստուգել բոլոր գրանցումներն ու տետրի վերջին յերեսներից մեկի վրա գրել այն ընտանիքների ցուցակը, վոր վորևէ թերություն ունի և կարիք կա շուտով ոգնության հասնել.

Այդ ցուցակի միջոցով մեղվապահը միշտ հնարավորություն ունի անմիջապես ոգնության գալ այս կամ այն փեթակին, փոխանակ միշտ թերթելու ամբողջ տետրն ու փնտրելու կարևոր գրանցումները։

Յեթե այդ որը գողությունը խանգարում է, կարելի յե առայժմ միայն կնքած վորդը դիտել, իսկ յեթե կնքած վորդը չի նկատվում, այդ որը չստուգել, ծածկել փեթակը և նշել այդպիսի ընտանիքների մասին։

Ստուգումը վերջացնելուց հետո հաջորդ որը մեղվի հանգստի ժամանակ կարելի յե արդեն ավելի մանրամասն ստուգել նշված փեթակները։

Ստուգման յեզրակացություններ յեվ ոգնությունը

Յեթե ընտանիքի բունը բարեկարգ վիճակում է, պաշարը՝ բավարար, կանոնավոր վորդ ու ձու ունի, ուրեմն այդ ընտանիքն առայժմ կարիք չունի վոչ մի խնամքի։

Իսկ թերությունները, նրանց նշաններն ու ոգնությունը հետևյալն են.

1. յեթե մեղր քիչ է յերեւում շրջանակների մեջ, ուրեմն պետք է տալ մի մեղրով շրջանակ պահեստից կամ մի ուրիշ փեթակից, վորն ունի ավելորդ մեղրով շրջանակներ (առողջ փեթակներից).

2. յեթե վորդ ու ձու բոլորովին չկա, պետք է նորից ստուգել այդ փեթակն ու փնտրել և մորը գտնել։ Այդպիսի ընտանիքում մեղուները սովորաբար հանգիստ չեն լինում, ցրիվ են յեկել շրջանակների վրա, չարացած են լինում, անկանոն և ուժեղ ձայն են հանում։ Այդ նշաններն արդեն կարող են կասկած առաջացնել մեղվապահի մեջ։ Դրա համար էլ մեղվապահը հանում է կողքի շրջանակը, փեթակը ծածկոցով ծածկում է ու նայում է սկզբում շրջանակի մի յերեսը, հետո շուռ է տալիս մյուս յերեսը, փնտրելով մորը։ Վերջացնելով այդ աշխատանքը՝ նա շրջանակը դնում է փեթակի մեջ, բնից քիչ հեռու, հետո հանում է հետևյալ շրջանակն ու նայում։ Այդպես մինչև աշխատանքի ավարտումը։ Յերբ նա ստուգում է մեկ, յերկու անգամ ու չի գտնում մորը, ուրեմն այդ ընտանիքը մայր չունի։

Ոգնությունը

Յեթե մայր չունեցող ընտանիքը շատ թույլ է (1—2 շրջանակի վրա) պետք է միացնել մայր ունեցող մի թույլ ընտանիքի հետ, իսկ յեթե բավական ուժեղ է, պետք է նուկլեուսից բեղմնավորված մայր տալ, յեթե կա։ Որվա տաք ժամին զգուշությամբ բռնել մորը, դնել վանդակի մեջ ու վանդակը տեղավորել մայր չունեցող փեթակի բնի կենտրոնում, մեղվի կծիկի ներսում վոր չմնա դրսում ու ցրտից վնասվի։

Յեթե նուկլեուս չկա, պետք է միացնել մայր ունեցող մի թույլ ընտանիքի հետ։

Պառավ մայրեր

Յերբ կնքած վորդը խառն է և ցրիվ, այսինքն մի մասը բոռավորդեր են, մի մասն էլ աշխատավորդեր, ուրեմն մայրը պառավ է ու անպետք։

Ոգնություն

Այդ ընտանիքը պետք է ստուգել, գտնել մորը, սպանել ու նրա հետ վարվել այնպես, ինչպես մայր չունեցող ընտանիքի հետ։

Բոռածու ընտանիքներ

Յերբ կնքած վորդն ամբողջովին բոռերից է բաղկացած, ուրեմն այդ ընտանիքը կամ մայր չունի և իրենք բանվոր մեղուներն են ձու դնում կամ մայրն աշնանը չի բեղմնավորվել ու գարնանը նրա դրած ձվերից բոռեր են դուրս գալիս, կամ վերջապես մայր ունի, բայց այնքան ծեր է, վոր վոչ մի հատ բանվոր մեղու արդեն չի դուրս գալիս նրա ձվերից, այսինքն նրա բոլոր ածած ձվերը բեղմնավորված չեն։

Որբություն

Առաջին դեպքում ընտանիքն անմայր է, իսկ մյուս յերկու դեպքում պետք է գտնել մայրերին ու սպանել, այսինքն վորբացնել և վարվել նրանց հետ այնպես, ինչպես վերևում ասված է։ Հաջորդ օրն այդպիսի ընտանիքներին մայր ենք տալիս, իսկ առաջին դեպքում, յերբ իրենք՝ մեղուներն են ձու դնում, այդպիսի ընտանիքները շատ դժվարությամբ են նոր մայր ընդունում։ Դրա համար էլ նրանց պահեստի մայր տալը վտանգավոր է, վորովհետև կարող են սպանել։



Նկ. 15. Կնքած բոռաբջիջներ

Հաճախ նույնիսկ մայրապտուկը չեն ընդունում ու փչացնում են։

Դա բացատրվում է նրանով, վոր այդ ընտանիքի մեղուները կարծես այլասերվել են ու մայր ունենալու բնազդը նրանց մեջ տարօրինակ կերպով խեղաթյուրվել է (փոխվել է)։ Այդպիսի ընտանիքին օգնելու ամենալավ միջոցը հետևյալն է.

Արկանոցից ուժեղ ծուխ տալ, վորպեսզի մեղուները մեղրի պաշար վերցնեն (ծծեն), մի քիչ հետո մեղուն թափ տալ փեթակի մեջ, հանել բոլոր շրջանակները, մեղուն թողնել առանց շերի, լավ ծածկել փեթակը, 24 ժամից հետո տալ նոր՝ մեղրով շրջանակներ և վանդակով մայր։

Մայր չլինելու դեպքում միացնել մի ուրիշ ընտանիքի հետ։ Յեթե սրանով չի հաջողվում ուղղել, ուրեմն անհրաժեշտ է այդ մեղուների կազմը փոխել և բավարար քանակությամբ նոր մեղուներ ավելացնել նրանց վրա։

Դրա համար էլ պետք է այդ ընտանիքին տալ կնքած ու հասունացած վորդով 2 շրջանակ, ապա վանդակով մայր, վորը 2—3 օր չենք բաց թողնում, մինչև վոր նոր տված վորդերից դուրս կգան ջահել մեղուներ, իրենք՝ հին մեղուներն էլ կսովորեն մորն ու յերբ մորը բաց թողնենք, կընդունեն։

Պակասավոր մայրեր

Յերբեմն պատահում է, վոր փեթակում մայր կա, բայց կամ բոլորովին չի ձվում, կամ վորդը շատ ցրիվ է ու քիչ։

Այդպիսի մորը պիտի լավ հետևել ու դիտել նրա արտաքինը, ստուգել նրա մարմինը, թե արդյոք ջարդվածներ չունի՞, ստուգել վոտքերը կտրված չե՞ն, կամ գոսացած չեն (թուլացած). ստուգել նրա հետույքն՝ արդյոք սպիտակ խցանի նման բան չկա՞ հետևում, վորովայնն (փորը) արդյոք շատ չի՞ ուռած։ Յեթե մայրն այդ թված թերություններից վորևէ մեկն ունի, ուրեմն պիտի անմիջապես բռնել, սպանել մորն ու վարվել ինչպես անմայր ընտանիքի հետ։ Լինում են դեպքեր, յերբ մայրն արտաքինով շատ առողջ է և կարծես վոչ մի պակասություն չունի։

Այդպիսի մայրը կարող է աշնանից բեղմնավորված չլինել, հետևաբար և անպետք է։ Կարող է և բեղմնավորված լինել բայց վորևէ պատճառից բոլորովին չբեր է դարձել։ Սակայն լինում են նաև այնպիսի դեպքեր, յերբ այդպիսի մայրը բոլորովին առողջ է, բայց միայն ձվարկությունն է ուշացնում։ Պատահել են դեպքեր, յերբ մայրը չի ձվել 7—10 օր, բայց վերջն սկսել է ձվել և լավ աշխատանք կատարել։

Դրա համար էլ արտաքինով առողջ մորը չպետք է միանգամից վոչնչացնել, այլ պետք է տաքացումն ուժեղացնել, մանր բաժիններով կեր տալ և, յեթե մեղուն քիչ է, մի քիչ մեղու ավելացնել ուրիշ տեղից։ Յեթե այդ բոլորն անելուց հետո մայրը

երկար ժամանակ ձու չի տալիս, ուրեմն պիտի ոչնչացնել ու վարվել ինչպես անմայր ընտանիքի հետ։ Բավականաչափ պահեստի մայրեր ունենալու դեպքում, ի հարկե, ձեռնտու չէ չսպասել ու անմիջապես փոխել այդպիսի մորը։

Թույլ ընտանիքներ

Եթե ընտանիքը թույլ է, մեղուն շատ պակաս է (2—3 շրջանակի վրա քիչ չափով), ուրեմն պիտի միացնել մի անմայր թույլ ընտանիքի հետ։ Իսկ եթե այդպիսի անմայր ընտանիք չկա, ապա այդ թույլ ընտանիքը պիտի պահել վորպես կանոնավոր ընտանիք, կամ մայրն օգտագործել։

Հաճախ անհրաժեշտ է լինում այդպիսի թույլ ընտանիքները (նուկլեուսները) զույգ-զույգ զետեղել մի փեթակի մեջ և կողքբից տաքացրած դնել։

Միացում

Տարբեր փեթակների մեղուներ իրար հետ միացնելու համար հարկավոր է մորը բանտարկել, հետո մի բաժակում պատրաստել քաղցր ջուր (բաժակին 4 թեյի գդալ շաքարավազ) և մի քիչ անանուխի կաթիլներ խառնել։ Եթե կաթիլներ չկան, կարելի է դաղձ ճզմել մեջն ու դարձնել հոտավետ։

Ցերեկոյան, երբ արդեն արևը մայր է մտել ու գող մեղուների հարձակման վտանգ չկա, անմայր ընտանիքը մոտեցնում են այն փեթակին, վորի հետ պիտի միացնեն։

Սկզբում բաց ենք անում մայր ունեցող փեթակի յերեսը, հանում ենք շրջանակները մեկ-մեկ, շաքարաջրից մի կում առնում ենք բերանը ու մանր փոշիացած կաթիլներով թեթև փչում առաջ շրջանակի մի յերեսի, հետո մյուս յերեսի վրա նստած մեղուների վրա։ Յերբ այդպիսով բոլոր մեղուները սրսկված են հոտավետ շաքարաջրով, պետք է բաց անել մյուս փեթակի յերեսը ու նրա շրջանակները մեկ-մեկ հանելով ու նույն ձևով սրսկելով շաքարաջրով, միացնել մյուս փեթակի բնին։ Միացրած բներով շրջանակներն այնպես պիտի դասավորել, վոր բնի մեջտեղում իրար կողքի դրվեն վորդով շրջանակները։ Իսկ կողքերին դրվեն մեղրով շրջանակներն ու չիչերը։

Կա և մի ուրիշ ձև ընտանիքները միացնելու, վորը ավելի հեշտ է։

Յերկու միացվող ընտանիքներին լավ ծուխ ենք տալիս և յերկուսը միասին իրենց շրջանակներով դնում ենք մի փեթակի մեջ, վորտեղ դեռ նրանց չենք միացնում, այլ արանքում դնում ենք մի միջնատախտակ կամ թողնում ենք դատարկ մի շրջանակի տեղ։ Զգուշության համար մորը կարելի յե բանտարկել։

Այդ ձևով իրար կողքի դրված ընտանիքների վրա շաքարաջուր ենք փչում վերև նշված ձևով և փեթակը լավ ծածկում։ 24 ժամից հետո բացում ենք փեթակը, միջնատախտակը հանում ու ընտանիքները միացնում։ Այդ ժամանակ նորից ուժեղ ծուխ ենք տալիս։ Ընդհանրապես միացումների ժամանակ կարելի յե ծխարարի մեջ ականամոմի կտորներ գցել՝ ծուխը հոտավետ դարձնելու համար։ Դա գործին շատ է օգնում։

Յերբ մեղուները միացված են, մի քիչ էլ վերևից շաքարաջուր ենք փչում ամբողջ բնի մեջը ու փեթակի յերեսը ծածկում։

Դատարկված փեթակը բերանն ի վար թափ ենք տալիս, վոր միջի մնացած մեղուները թափվեն, և հեռացնում մեղվանոցից։

Արկղնոցի առջևը պետք է դրված լինի մի միջնատախտակ իբրև կամուրջ, վորի վրա յով գետին թափված մեղուները կբարձրանան վերև ու կմտնեն փեթակ։

Յեթե փեթակի առաջը մաքուր չի, հողոտ է, խոտ կա և այլն, պետք է վորևէ բան փռել (մի շորի կտոր կամ մի ծածկոց), վորպեսզի մեղուները չփչանան գետնի վրա։ Թաների տախտակն ավելի լավ է։

Յեթե ուզում ենք թույլ ընտանիքի վրա միայն մի վորոշ քանակությամբ մեղու ավելացնել ուժեղացնելու համար այն, պետք է դա անել նույն ձևով, միայն ուրիշ փեթակից բերած շրջանակների վրայից պիտի մեղուն թափ տալ թույլ փեթակի մեջ ու շրջանակները նորից վերադարձնել իրենց նախկին տեղը։

Կարելի յե նաև մեղուներով շրջանակը ժամանակավորապես դնել թույլ փեթակի մեջ (միացնել նրա բնին) և մյուս օրը, յերբ մեղուները սովորած կլինեն իրար, կարելի յե թափ տալ այդ շրջանակները ու նորից վերադարձնել իրենց հին տեղը։

Մայր տալու ձևերը

Ինչպես ասել ենք, միացնելուց մի քանի ժամ առաջ մորը պիտի բանտարկել վանդակի մեջ։

Յերբ մայրը յերևվաց պիտի շրջանակի մի անկյունը պահել ձախ ձեռքում, իսկ մյուս անկյունը հենել փեթակի վրա՝ թեք

դրության մեջ։ Ապա աջ ձեռքի ցուցամատով և բութ մատով բռնել մոր կրծքից ու վերցնել։

Մայրը բռնելիս պետք ե աշխատել չճզմել նրան ու առանձնապես զգույշ լինել՝ պետք ե բոլորովին ձեռք չտալ նրա փորավայրին (փորին)։ Դրա համար մեղվապահը պետք ե առանձին վարպետություն ձեռք բերի։

Յերբ արդեն մայրը բռնված ե այդ ձևով պետք ե զգուշությամբ փակել վանդակի մեջ, վոր այդ ժամանակ ոգնականն արդեն բացել ու պատրաստ պահել ե։ Յեթե վանդակը հեռու ե, մայրը պետք ե պահել բռի մեջ ու հետո դնել վանդակը։

Մայր ունեցող վանդակը պետք ե գետեղել մեղվի կծիկի ներսում, այսինքն շրջանակների արանքը, այնպիսի տեղում, վորտեղ մեղուն շատ ե և ցուրտ ժամանակ ամենից ավելի տաք տեղն ե համարվում։ Պետք ե աշխատել նաև, վոր վանդակի ներքևի կողը մի քիչ մանի մեղրի մեջ և մեղրը մորը մոտիկ լինի։



Նկ. 16. Մայրավանդակը բանտարկված մայրով շրջանակների արանքում դրված

Միացված փեթակներում և ընդհանրապես յերբ մի ընտանիքի մայր ենք տալիս, մայրը բանտարկված պետք ե մնա մեկ որ, այսինքն յեթե այսոր մայրը բանտարկվեց, մյուս որը պետք ե արդեն բաց թողնվի։

Բացի այդ, կարելի յե նաև հետևյալ ձևով տալ մայրը. վանդակի մի ծայրը փայտե խցանով փակել՝ մայրը դնելով վանդակի մեջ, իսկ մյուս ծայրը փակել մոմաթերթի յերկտակ շերտով ու վանդակը դնել մոմաթերթով ծայրը դեպի ներքև մեղվի բնի մեջ։

Սովորաբար իրենք մեղուները կրծում, բաց են անում մոմաթերթի շերտը ու մորն ազատում։ Դա նշան ե, վոր նրանք ընդունում են մորը։ Յեթե մի ուրվա ընթացքում դեռ չեն ազատել մորը, մի որ ևս թողնում ենք։ Յեթե մեղուները չեն բաց թողնում և, ընդհակառակը, ավելի ամրացնում ու հաստացնում են վանդակի ծայրը փակող մոմը, ուրեմն կամ մայր կա ներսում կամ մայրապտուկ։

Այդ դեպքում նորից պետք ե ստուգել ու վերացնել այդ խանգարող պատճառները։ Յեթե այդ բոլորից հետո էլ ընտանիքը մորը չի ընդունում, նման ընտանիքի հետ պետք ե վարվել վորպես որբացածի։

Պատահում ե, վոր մայրը բաց թողնելուց հետո 2—3 որ էլ հանգիստ ման ե գալիս ու մեղուները կարծես լավ են վերաբերվում։ Յեվ հանկարծ նորից ստուգելիս փնտրում ենք ու չենք գտնում մորը։

Այդպիսի դեպքերում պետք ե նայել հատակի վրա, վորտեղ մի անկյունում, հավանաբար, կերևա մեղվի բավական խոշոր կծիկ (ընկույզից մեծ)։ Դա նշանակում ե, վոր մեղուները գազազել են, մորն առել են կծիկի մեջ ու աշխատում են խեղդել, սպանել։ Այդ մեղուներն այնքան կատաղած են լինում, վոր կարելի յե ուղղակի ձեռքով բռնել կծիկը, հանել փեթակի միջից, դնել ծածկոցի վրա և քանդել ու ազատել մորը։

Յերբեմն, յերբ մեղվապահը շուտ ե վրա հասնում, դեռ մայրը տուժած չի լինում և հնարավոր ե լինում այն ոգտագործել։

Այդպիսի ընտանիքին այդ բոլորից հետո, լավ կլինի մայրապտուկ տալ, վորովհետև չարժե մի նոր մոր կյանքը վտանգի յենթարկել և դրա վրա յերկար ժամանակ վատնել։

Նոր ստուգում

Այդ բոլոր աշխատանքները տևում են սովորաբար 10—15 որ։ Այդ ժամանակ բոլոր պակասավոր ընտանիքները կարգի յեն բերվել, վորը միացվել ե, վորին մեղրով պաշար ե դրվել, վորին էլ մայր ե տրվել կամ վորդ ու ձու։

Այդ ժամանակ յեղանակն արդեն բավականին տաք ե լինում։ Դաշտավայրերում՝ ապրիլի սկզբներից մինչև մայիս՝ ծառերի ծաղիկներից, իսկ սար տեղերում՝ դաշտային ծաղիկներից յերբեմն նաև ուժանդակ բերք ե ստացվում։

Գող մեղուներն էլ այնքան ուժեղ կերպով չեն կարողանում հարձակվել և կարելի յե հանգիստ կերպով ստուգել ընտանիքները։

Այս ժամանակ վորդ ու ձուն բավական շատացած են լինում ու կանոնավորված, պաշարն էլ բավական ապահոված, հետևաբար կարելի յե վորդ ու ձվի դրությունից վորոշել մոր վորակը։

Ահա այս ժամանակ պետք ե կատարել մի նոր ստուգում։

Միևնույն կարգով ստուգվում են բոլոր ընտանիքները ու գրանցվում հետևյալ կերպ.

8/IV 3 շրջանակ կիսով չափ վորդ ու ձու, կանոնավոր, պաշարը 6 կգ։

Դա նշանակում է, վոր մայրը լավ է և պաշարն էլ՝ բավարար։

9/IV 2 շրջանակ վորդ ու ձու, քիչ, վորդը ցրիվ, մայրը կասկածելի։ Պաշարը 3 կգ։ Մեղուն շատ։

Դա նշանակում է, վոր ընտանիքն ուժեղ է (մեղուն շատ), պաշարը պակաս է, իսկ վորդի քչությունը ու ցրիվ լինելը ցույց է տալիս, վոր մայրը լավը չի։

Այդպիսի ընտանիքը մի քանի որ հետո էլ պիտի ստուգել ու յեթե վորդ ու ձուն նույն դրության մեջ են, ուրեմն պիտի փոխել մորը։

Պաշարի քանակը ստուգելու համար պետք է նայել բոլոր բջանակները ու մոտավորապես հաշվել, թե ինչքան կնքած մեղր կա բոլոր շրջանակներում։

Մի ձեռքի չափ յերկու կողմից էլ կնքած մեղրը մոտ 400 գրամ է (մեկ ֆունտ)։ Յեթե մոտավորապես ամբողջ յեղած մեղրի տարածությունը աչքաչափով համեմատես քո ձեռքի թաթի հետ, ու հաշվես քանի թաթի չափ մեղր կա, ուրեմն և հեշտ է իմանալ, թե, մոտավոր հաշվով, ինչքան մեղրի պաշար կա։ Մի քանի անգամ այդ ձևով վարվելուց հետո (կարելի յե դրսում մեղրով շրջանակի վրա վարժվել)․ արդեն մեղվապանը կսովորի աչքաչափով վորոշել, թե շրջանակների մեջ ինչքան մեղր կա։

Այդ ընդհանուր ստուգումն անցկացնելուց հետո մեղվապանը միշտ պետք է տեղյակ լինի թե պաշարի քանակին և թե վորդ ու ձվի դրությանը։

Պաշարի մասնակի լրացում

Պաշարը կարելի յե ժամանակավորապես բավարար համարել, յեթե փեթակի մեջ առնվազն 2 կգ մեղր կա, իսկ յեթե 2 կգ-ից քիչ է, ուրեմն պիտի լրացնել։

Այդ ժամանակ պաշարի կարիք ունեցող շատ քիչ ընտանիքներ կլինեն։ Մինչև այդ մենք աշխատում եյինք պաշարի պակասը լրացնել մեղրով, վորովհետև վաղ գարնանը շաքարաջրով կերակրելիս մոր ձվարկությունը կարող է ուժեղանալ, վորից հետո ցուրտ յեղանակներին վորդ ու ձուն շատ լինելով ավելի շատ կտուժի ցրտից։

Հենց այդ ժամանակ էլ լավ կլինի, յեթե պաշարի լրացումը

կատարվի մեղվանոցում յեղած պաշարի համասարեցման կարգով, վորովհետև դեռ յեղանակները ցուրտ են և վտանգավոր է շաքարաջուր տալ։

Բայց յերբեմն ամբողջ մեղվանոցում մեղրի պաշարը սակավ է լինում և, վոր գլխավորն է, ստույգ տեղեկություններ չունենք հիվանդ ընտանիքների մասին կամ մեղվանոցը բավական վարակված է։

Ուրեմն լինում են դեպքեր, յերբ անհրաժեշտ է լինում վորոշ ընտանիքների կերակրել շաքարաջրով։

Պաշարի լրացման համար պիտի պատրաստել թանձր շաքարաջուր (2 շաքար, մեկ ջուր)։ Օջախի կամ թոնրի վրա դնում ենք բավական մեծ կաթսա, մեջն անհրաժեշտ քանակությամբ ջուր ենք լցնում դույլով ու հետո այդ ջրի մեջ լցնում ենք շաքարավազը։ Շաքարավազն ու ջուրն ըստ իրենց քաշի նույն ծավալն ունեն, այսինքն մի դույլ շաքարավազը կշռում է մոտավորապես այնքան, ինչքան մի դույլ ջուրը, դրա համար էլ ամեն անգամ կարիք չկա կշռելու։ Իսկ կոշտ շաքարը պիտի կշռել։

Կաթսայի տակը կրակ ենք վառում ու կաթսան միշտ փայտով խառնում։

Կաթսայի մոտ պիտի պատրաստ պահել լաթի կտոր, վոր, հարկ յեղած դեպքում, յեռացող կաթսան հեշտությամբ հնարավոր լինի վերցնել կրակի վրայից։

Յերբ շաքարը բոլորովին հալվել է ու սկսել յեռալ, նրա մեջ պիտի վորեվե թթու բան գցել, մի կգ շաքարաջրին մի գրամի չափով, վորպեսզի շաքարաջուրը սառելուց հետո շաքար չդառնա։ Ամենից լավն է գինեքարի թթվուտը, իսկ յեթե դա չի ճարվում պետք է գցել լիմոնի թթվուտ։ Յեթե դա էլ չկա, ամենից ավելի լավ է քացախի թթվուտը, վոր բոլոր դեղատներում հեշտությամբ ճարվում է։

Մի տաս րոպե այս դրությամբ յեռալուց հետո (կարիք չկա նաև քամելու) կաթսան կրակի վրայից վերցնում ենք ու դնում մի կողմ։

Լավ կլինի, վոր կաթսայի բերանը ցանցով ծածկվի, վորպեսզի թե շուտ սառի և թե մեղու չլցվի մեջը։

Շաքարաջուրը պետք է մի քիչ շուտ յեփել, վոր մինչև յերեկո այնքան սառի, վոր հնարավոր լինի կերակրամանի մեջ լցնել և դնել փեթակի մեջ։

Կերակրելու ժամանակ առանձնապես պետք ե զգուշանալ գողությունից։

Փեթակների արկանոցները պետք ե բոլորովին փոքրացնել, շաքարաջուրը չթափել ե, յեթե մի վորեվե փեթակի վրա հարձակում ե լինում, կտրուկ միջոցներ ձեռք առնել։

Կերակրելը պետք ե սկսել յերեկոյան արևը մայր մտնելուց հետո վորպեսզի գողություն չառաջանա և գիշերվա ընթացքում կերը կարողանան վերցնել ու տեղավորել։

Փեթակը բաց ենք անում ու կերակրամանը դնում, ապա վերևից ձագարի միջոցով կերը լցնում։ Յեթե չեչով ենք կերակրում, պետք ե ցերեկով բնի կողքերից վերցնել դատարկ չեչերից մեկը ու պահել ներսում։ Յերբ չեչերը մնում են փեթակի մեջ, յերեկոյան դժվար ե լինում հանել և շաքարաջուր լցնել վորովհետև վրան մեղուներ են նստած լինում։ Բայց ի հարկե, կարելի յե և փեթակից յերեկոյան հանել չեչը ու լցնել։

Յերեկոյան այդ չեչերի մեջ շաքարաջուր ենք լցնում ու տալիս, պահելով այդ չեչը թեք դրության մեջ՝ բաց փեթակի վրա։

Յեթե շաքարաջուրը մի քիչ համբերությամբ և բարակ կերպով ծորացնես մի չեչի մեջ կարելի յե լցնել մինչև մեկ կգ շաքարաջուր։

Այդ ձեը շատ ժամանակ ե խլում և, համենայն դեպս, չեչերից շատ ե կաթկթում գետին ու փեթակի մեջ։

Բայց դրա մի առավելությունն էլ այն ե, վոր մեղուները հեշտությամբ են տիրապետում շաքարաջրին ու մինչև առավոտ տեղավորում վերջացնում։

Յեթե կերակրամանի ներսի կողմից շորով հալված մոմի և ակնամոմի լուծույթ քսվի և, բացի այդ, շաքարաջուրը լցնելիս վորոշ չափով նկատի առնվի ընտանիքի ուժը, ուրեմն գրեթե միշտ էլ մեղուները շաքարաջուրը հաջողությամբ կվերցնեն ու բարդություն չի առաջանա։

Կերակրամանով կեր տալն ավելի լավ ե, քան չեչերով տալը, վորովհետև անհամեմատ ավելի արագ ե լինում և մաքուր։

Բացի այդ, յեթե մեղվանոցում հիվանդությունը շատ ե տարածված, կարելի յե ամեն մի փեթակին հատկացնել մի կերակրաման և չհանել միջից։

Չեչով կերակրելիս նույն փեթակի չեչը պետք ե դնել իր մեջ

Վորդ ու ձվի վորակը յեվ մայրերի փոփոխումը

Սկսած այդ ժամանակից և անընդհատ, մինչև սեզոնի վերջը, յեղած մայրերին պետք ե հետևել և փոխել պակասավոր մայրերին։

Հենց վոր վորդ ու ձվի մեջ նկատվեց վորևե թերություն, պետք ե հետևել մորը և ստուգել նրա վորակը։

Վորդը կարող ե լինել ցրիվ ու անկանոն հետևյալ դեպքերում՝

1. յերբ մայրը պառավել ե ու նրա դրած ձվերից միայն մի վորոշ մասն ե բեղմնավորված, այնպես վոր մի մասը փչանում ե, իսկ մի մասից ե միայն վորդ ստացվում։

2. յերբ ուժեղ ցրտերից վորդ ու ձվի մի մասը փչանում ե և մնում ե միայն մի մասը։

3. յերբ կերի և ծաղկափոշու պակասության պատճառով վորդի մի մասը փչանում ե։

4. յերբ, վերջապես, հիվանդության պատճառով վորդի մի մասը փչանում ե ու մեղուները մաքրում, դատարկում են բջիջները։

Ուրեմն, յերբ մեղվապահը վորդ ու ձվի մեջ նկատում ե մի թերություն, նա չպետք ե միանգամից մորն անպետք համարի, այլ պետք ե մի վորոշ ժամանակ այն ստուգման յենթարկի։

Դրա համար անհրաժեշտ ե այդպիսի ընտանիքը պաշտպանել ցրտից, ապահովել կերով, ստուգել՝ հիվանդ ե թե վոչ ու մի քանի որից հետո ստուգել արդյունքները։

Յեթե ընտանիքը հիվանդ չի և վորդ ու ձուն ելի թերություններ ունեն, ուրեմն մայրն անպետք ե—կամ պառավ ե, կամ մի վնաս ե պատահել իրեն։ Պետք ե, ի հարկե, մորն էլ տեսնել ու զննել նրա արտաքինը։

Յերբ մեղվապահը համոզվեց, վոր մայրն անպետք ե, պետք ե սպանել նրան ու նոր մայր կամ հասունացած մայրապտուղ տալ։

Յեթե մայրը դեռ շատ անպետք չի և դեռ բավական լավ ձվում ե, իսկ մյուս կողմից դեռ բեղմնավորված պատրաստի մայրեր չկան, չպետք ե սպանել մորը։

Պետք ե աշխատել նուկլեուսների միջոցով բեղմնավորված մայր ստանալ ու նոր միայն փոխել այդ մորը։

Մայր կամ մայրապտուղ տալուց մի քանի ժամ առաջ պետք ե հին մորը վերցնել ու ընտանիքը վորբացնել։

Այդ ընտանիքը մի քանի ժամ անմայր մնալով զգում ե

քը վորրությունն ու նրա մեջ արթնանում ե նոր մայր ունենալու բնազդը, վորի հետևանքով նոր տված մայրը հեշտությամբ ընդունում ե։ Իհարկե մայրը պետք տալ վանդակով։

Վորդ ու ձվի անընդհատ ստուգումը, ճիշտ վորակավորումն ու մայրերի ճիշտ ժամանակին փոփոխելը շատ խոշոր նշանակություն ունի։



Նկ. 17. Մայրապտուկը մեղրահացի միջից կտրված և անմայր փեթակի մեղրահացի մեջ պատվաստված

Բների կարգավորումը յեվ մաքրումը

Պաշարի մասնակի լրացման և մայրերի փոփոխման հետ միասին պետք ե տանել, իհարկե, ընտանիքների ընդհանուր խնամքը։ Այդ խնամքը պետք ե տանել այն դեպքում՝

1. յեթե բնում կան բորբոսնած և կեղտոտված չեչեր, վորոնք պետք ե վերցնել բնից և նրանց փոխարեն լավ չեչեր դնել։ Հետագայում յերբ յեղանակները կտաքանան ու մի քիչ ուժեղ բերք կսկսվի, այդ չեչերը կարելի յե տալ այն մեղուներին, վորոնք այդ պայմաններում կմաքրեն ու կդարձնեն կանոնավոր չեչեր.

2. յեթե բնի շրջանակները մեղրով շատ լիքն են, պետք ե հեռացնել կենտրոնից ու դասավորել բնի կողքերին, վորովհետև այդպիսի շրջանակների մեջ մայրը ձվելու տեղ քիչ ե ունենում ու ձվարկումը թույլ ե լինում։ Նրանց տեղ պետք ե դնել քիչ մեղրով շրջանակներ կամ հենց դատարկ չեչեր։

3. փեթակի պատերը, հատակը ու շրջանակի կողքերը պետք ե մաքրել մոմի և ակնամոմի կտորտանքից ու զանազան կեղտոտություններից։ Այդպիսով թե մեղվի բունը մաքուր կլինի և թե բավական մոմ կարելի յե հավաքել։ Յեթե ծածկոցի տակ մեղուներ են մնում ու կոտորվում, ուրեմն կարելի յե շրջանակների վրա փայտե ձողիկներ դնել ծածկոցի տակից։

Գողության վտանգը յեվ նախազգուշական միջոցները

Մեղվանոցում աշխատելիս գարնանը միշտ պետք ե զգույշ լինել գողությունից։

Պետք ե աշխատել գողություն չառաջանա, իսկ առաջանալուց հետո արդեն շատ դժվար ե առաջն առնել։

Յերբ գոնե թույլ բերք կա, վորոշ զգուշությամբ, կարելի յե միշտ ել մեղվանոցում աշխատել։

Ամենաառաջին նախազգուշական միջոցը դա արկանոցների փոքրացումն ե։ Հաճախ արկանոցը պետք ե այնքան փոքրացնել, վոր հազիվ մի մեղու կարողանա անցնել։ Փեթակի բերանը բացելիս ծածկոցն ամբողջովին չպետք ե վերցնել։ Պետք ե ունենալ մի ուրիշ ծածկոց, վորը մի կողմից կարելի յե գցել բաց շրջանակների վրա, իսկ մյուս կողմից՝ փեթակի ծածկոցը ծալված ե մնում, այնպես վոր միայն այն շրջանակներն են բաց մնում, վորոնց հետ գործ ունի մեղվապահը։

Յերբ հարկ ե լինում շրջանակները նայել ու ստուգել, ամեն անգամ շրջանակները հանելուց հետո, պետք ե փեթակի յերեսը ծածկոցով ծածկել։

Մեղվանոցում աշխատելիս թեկուզ կարճ ժամանակով, յերբեք չպետք դրսում թողնել մեղրով կամ նույնիսկ դատարկ չեչերը։

Յերբ շրջանակի հետ գործը վերջացնում ենք, ծածկոցը յետ ենք տանում, դնում այդ շրջանակն իր տեղը, մի նոր շրջանակ հանում ու նորից ծածկում։

Պետք ե ուշի-ուշով հետևել, վոր աշխատանքի ժամանակ մեղր և շաքարաջուր չծորա գետին, փեթակների վրա կամ նույնիսկ փեթակի մեջ։

Մեղվանոցում չպետք ե թողնել նաև մոմի և ակնամոմի կտորտանք, մոմոտ ծածկոցներ, նոր դատարկած մոմոտ ու ակնամոմոտ փեթակներ կամ ուրիշ ինվենտար։

Կերը, լինի դա մեղր կամ շաքարաջուր, պետք ե տալ միայն յերեկոյան՝ արևը մայր մտնելուց հետո։

Հաճախ մեղվապահը խաբվում ե ամպամած ու ցուրտ յեղանակից (որվա) ու կերը տալիս ե ցերեկով։ Դա վտանգավոր բան ե, վորովհետև կարող ե մինչև յերեկո յեղանակը բացվել ու նորից գողություն սկսվի։

Պետք ե շատ զգույշ լինել մեղվանոցային շենքերի հետ, վոր-

տեղ հաճախ լինում են մեղրով շրջանակներ, շաքարաջրով ամաններ, մեղր և այլն։ Իսկ այդ բոլորը դրսում թողնելը միանգամայն անթույլատրելի է։

Դռները և լուսամուտներն այնպես պետք է սարքել, որ մեղուն մուտք չունենա։

Երբ մեղվանոցից շրջանակներ են տարվում շենք և ընդհանրապես շենքի դռանը մեղուները շատ են հավաքվում, դռան առջև պիտի ծուխ դնել (ծխար)։

Եթե պատահաբար գետինը մեղր կամ շաքարաջուր է թափվել, հողով պիտի ծածկել կամ ջրով լվանալ։

Փեթակները և ընդհանրապես գործիքները մեղրոտվելիս պիտի ջրով լավ լվանալ ու քաղցրությունը բոլորովին վերացնել։

Գողության պատկերը

Գողության ժամանակ մեղուները խռնվում են արկղերի առաջ, երբեմն կռվում իրար վրա, իրար քաշքշում, անհանգիստ անցուդարձ են անում, փեթակի առաջ օդի մեջ խմբերով պտտվում են և իսկույն կարելի յե նկատել, որ մեղուները շատ ներս ու դուրս են անում և նրանցից շատերը սև, փայլուն տեսք են ընդունել։

Բայց երբեմն գողությունն այնքան հանդարտ է կատարվում, որ դժվար է մի անգամից գլխի ընկնել։ Արկղերի առաջ մեղուները թռչում են կարծես ձագախաղի ժամանակ միաժամանակ հանդարտ ներս ու դուրս են անում, կարծես ոչ մի գողություն չկա։

Բայց ուշադրությամբ դիտողն ի հարկե կնկատի որոշ անհանգստություն, քաշքշուք՝ արկղերի ներսում և, որը գլխավորն է, մտնող մեղուները բարակ ու լղարիկ փորով են, իսկ դուրս եկողները ուռած ու ծանրաշարժ։ Բայց այդ, ձագախաղը շուտ է վերջանում, իսկ դա երկար է տևում։

Սովորաբար գող մեղուները վրա յեն տալիս այն փեթակին, որի հետ գործ են ունենում։ Եթե այդ փեթակը ուժեղ է, սովորաբար մեղուն ձեռք է քաշում ու սկսում է հարձակվել թույլ, անմայր ու քայքայված ընտանիքի վրա։

Եթե առաջը չենք առնում, գողությունը սկսում է տարածվել ու հաճախ միջակ ընտանիքներն էլ ընկնում են վտանգի տակ։ Սովորաբար գողությունը դադարում է, երբ գող մեղուները թալանի յեն մատնում ու գրեթե ոչնչացնում մի քանի թույլ ընտանիք։

Բայց երբ գողությունը շատ է տարածվել, մեղվանոցն ամբողջովին բռնվում է գողության տենդով ու կարող են տասնյակ ընտանիքներ մատնվել թալանի և ավերածության։

Գողության առաջն առնելը

Եթե գողությունը թույլ է, պիտի գողության մատնված փեթակներին առջևից ու կողքերից մինչև երեկո մի քանի անգամ նավթ կամ կարբոլյան թթվուտ քսել, որոնց հոտից մեղուները փախչում են։

Եթե մեղուները ձեռք չեն քաշում, վտանգված փեթակների առաջ պետք է ուժեղ ծուխ դնել և այդ ծուխը պահել մինչև երեկո։ Օգտակար է նաև թարմ խոտով արկղերը այնպես ծածկել, որ ամբողջ փեթակի առջևի պատը ու արկղերտախտակը ծածկվի թարմ խոտի ցանցառ շերտով։ Պետք է նաև հաճախ սառը ջուր փչել հարձակվող մեղուների վրա։

Հաճախ արկղերի առջև ցեխից նեղ ու երկար «կարիդորներ» են սարքում, դրա համար կարելի յե մի բարակ ձողի ծայրը մտցնել արկղերի մեջ ու վրան ցեխով սարքելուց հետո, ձողը հանել։ Կստացվի նեղ ու երկար միջանցք, որով հազիվ մեկ երկու մեղու կարող են անց ու դարձ անել։

Այդ բոլոր միջոցները դժվարացնում են գողությունը ու հաճախ նաև կասեցնում։

Սակայն, երբեմն դրանք չեն օգնում և պետք է ավելի գործնական միջոցների դիմել։ Նման դեպքում անհրաժեշտ է գողության մատնված փեթակը հեռացնել և դնել մի մութ, հով տեղ, իսկ նրա տեղը դնել մի դատարկ փեթակ։ Գող մեղուները տեսնելով, որ տեղում ոչինչ չկա, կդադարեն գողություն անելուց։

Բայց հաճախ այդպիսի տեղափոխումներից հետո գող մեղուները ոչ թե դադարում են, այլ փնտրում, գտնում են կամ նույն հեռացված փեթակը կամ մի նոր թույլ ու անօգնական ընտանիք ու նորից վրա տալիս։

Ընդհանրապես գողության վտանգ չեղած դեպքում մեղվապահը պիտի մեղվանոցում միշտ հսկի և թույլ չտա, որ գողություն լինի և ուժեղ չափերի հասնի։

Կշռումներ

Գարնանը մեղվանոցը դուրս դնելուց հետո կշռում ենք կշռափեթակը ու դրանից հետո պարբերաբար կշռում։

Օրինակ՝ սկզբում կշռափեթակի քաշը 34 կգ է։ Նշում ենք

այդ քաշը։ Ամեն օր յերեկոյան կշռում ենք փեթակը և պարզում, թե ինչքան է ավելացել կամ պակասել և տետրում նշում այդ փոփոխությունները։

Կշռելուց անմիջապես հետո հավասարեցնում ենք կշեռքը ու թողնում այդպես մինչև մյուս յերեկո։

Ամեն անգամ, յերբ մենք փեթակին մի վորևե բան ենք ավելացնում—շրջանակ կամ կեր ենք տալիս, կամ ընդհակառակը կերը վերցնում ենք փեթակից, պիտի քաշը նորից վերցնենք, վորպեսզի կարողանանք ճիշտ հաշվի առնել բերքի հավելումները, իսկ բերք չեղած ժամանակ՝ նվազումները։

Այն միևնույն տետրում, վորտեղ ամեն օր նշում ենք կշռափեթակի ցուցումները, պետք որեցօր նշել նաև հետևյալ տեղեկությունները։

Օրվա ջերմաստիճանը—առավոտ, կեսօր, յերեկո, յեղանակները՝ պարզ, ամպ, անձրև, քամի. մեղվի թռիչքը—ուժեղ, միջակ, չկա. մեղրատուների ծաղկելը՝ սկիզբը, ուժեղ շրջանը, վերջը և վերջապես մեղվանոցում կատարվող ընդհանուր աշխատանքների և մեղուների դրության մասին։

Գ Ր Ա Ն Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

ՄԵՂՐԱԲԵՐՔԻ, ՄԵՂՐԱՏՈՒՆԵՐԻ, ՕԴԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ ՄԵՂՎԱՆՈՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Տնտեսություն.............................. Մեղվանոց ....

Ամիս Թիվ	Ջերմաստիճան			Եղանակը	Մեղվի թռիչքը	Ի՞նչ մեղրատուներ են ծաղկում	Ծաղկման ընթացքը			Կշռափեթակ		Ի՞նչ աշխատանք է կատարվել մեղվանոցում և այլ դիտողությունները
	առավ. ժ. 7	կեսօր. ժ. 1	երեկ. ժ. 7				Սկիզբը	Ծաղկման ուժեղ շրջանը	Վերջը	+ գր	– գր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԵՂՎԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԻ ՁԵՎԵՐԸ

Գարնան առաջին կիսին, դաշտային վայրերում մոտավորապես մինչև ապրիլի վերջերը, իսկ լեռնային վայրերում մինչև մայիսի 20-ը, մեղվի բունը սովորաբար չի ծավալվում, այսինքն նոր շրջանակներ չեն ավելանում։

Մայրը ձվելով անցնում է մի շրջանակից մյուսը և ընտանիքը խնամում է վորոշ քանակությամբ վորդ ու ձու։ Վորպեսզի



Նկ. 18 Վորդի, ծաղկափոշու և մեղրի դասավորությունը բնում։ Կտրվածքը՝ ներսի շրջանում՝ վորդը, մեծ շրջանում՝ ծաղկափոշին։

վորդն ու ձուն չփչանան և նորմալ կերպով զարգանան, մոր ձվարկությունն էլ իր բնական կարգով պիտի ընթանա. մեղվի բնի ներսում պիտի լինի 33—35 աստիճան տաքություն։

Յեթե վորդ ու ձվի քանակը շատ է լինում ու մեղվի կծիկը

տաքությունը չի կարողանում պահպանել, վորդ ու ձվի մի վորոշ մասը ցրտահար է լինում ու վոչնչանում։

Մեզ մոտ հաճախ վաղ գարնանը լինում են տաք օրեր։ Յեվ յեթե դրա հետ միասին կա նաև ուժանդակ բերք, ուրեմն մայրն ուժեղ ձվում է ու մի քանի օրվա ընթացքում չափազանց ավելանում է վորդ ու ձվի քանակը։

Տաք օրերին հանկարծ հաջորդում են ցուրտ օրեր, մեղվի ընտանիքը կծկվում է, սեղմվում, վորդ ու ձուն կողքերից բաց են մնում ու ցրտահար լինում։

Յերբեմն այնպիսի ցրտեր են լինում, մանավանդ պարզկա գիշերը, վոր կծիկն իր ներսում էլ չի կարողանում պահպանել անհրաժեշտ ջերմությունն, ու ամբողջ բաց վորդը վոչնչանում է, իսկ դրա հետ միասին վոչնչանում է նաև կնքած վորդի մեծ մասը։

Յերբ ցուրտ օրերն անցնում են ու յեղանակը տաքանում է, մայրը նորից սկսում է ձվել, վորդ ու ձուն նորից շատանում են։

Վրա յեն հասնում նոր ցրտեր, ինարկե՝ հետզհետե ավելի մեղմ, և այսպես շարունակ, մինչև վոր յեղանակները կանոնավորվում են։

Այդ տեսակետից վաղ գարնանը չպետք է նպաստել վորդ ու ձվի ավելանալուն, այլ թողնել իր բնական ընթացքին։

Ուրեմն՝ ա) վաղ գարնանը չպետք է տալ գրգռիչ կեր և բ) բնի կենտրոնը չեչ չպետք է դնել ձվելու համար։

Բնի ամբողջ խնամքն այդ ժամանակ հետևյալն է. 1. բնի ներսում մոր ձվելու համար վորդ ու ձվի կողքերից միշտ ունենալ լավորակ չեչեր. 2. յերբ մեղվի կծիկն իր վորդ ու ձվով կենտրոնանում է բնի մի կողմը, իսկ մյուս կողմում կան 2—3 մեղրով ազատ շրջանակ, այդ դեպքում այդ շրջանակներից մեկը պետք է դնել մյուս կողմը, այնպես վոր վորդ ու ձվի յերկու կողմից էլ լինեն մեղրով շրջանակներ, 3. նոր չեչեր տալ միայն բնի կողքերից, այն ժամանակ, յերբ ձվարկությունը հասել է միջնատախտակին։ Այդ դեպքում բունը պիտի լայնանա, դրա համար էլ փեթակի արևկող կողմի տաքացումը պետք է հանել, չեչր տալ ու նորից տաքացումը դնել (ի հարկե դարմանի մի մասը կավելանա)։

Այդպիսով բնի լայնացումն սկզբնական շրջանում կատարվել միշտ դեպի արևկող ուղղությամբ (արևելյան կողմը)։

Վերջում մի կողմից բոլորովին հանում են տաքացումն ու միջնատախտակը ու մնում է միայն մի կողմի տաքացումը։

Յերբ յեղանակները տաքանալու և ուժանդակ բերքի հետևանքով ընտանիքը նորից կարիք է զգում լայնանալու, այդ մի

կողմի տաքացումն էլ պիտի հանել ու նոր չեչեր տալ։ Դաշտային տեղերում դա լինում է մոտավորապես մայիսի 10—15-ին, իսկ սար տեղերում՝ մայիսի վերջերում։

Դրանից հետո, սովորաբար մի 10—15 օր հետո բերք բոլորովին չի լինում, իսկ փեթակների մեջ դեռ բավականին հին մեղր է լինում։

Ահա այդ ժամանակ հին պաշարով բավական ապահովված ընտանիքներին մանր բաժիններով կարելի յե տալ գրգռիչ կեր (մեկ շաքար, 2 ջուր) 2 օրը մեկ անգամ, իսկ պաշար չունեցող ընտանիքներին պետք է տալ ավելի թանձր շաքարաջուր՝ կերը լրացնելու համար։

Դա արվում է նրա համար, վորպեսզի մոր ձվածությունը չպակասի և վորդի խնամքը կանոնավոր ձևով ընթանա մինչև նոր բերքն սկսվելը։

Բայց պետք է ասել, վոր գրգռիչ կեր տալիս անհրաժեշտ է շատ զգույշ լինել, վորովհետև լինում են դեպքեր, յերբ բերքն ուշանում է, կերակրումն էլ հնարավոր չի լինում շարունակել և այդպիսով խոշոր չափերի հասած վորդ ու ձուն տուժում են։ Հաճախ մենք բոլորովին հրաժարվում ենք գրգռիչ կեր տալուց և միայն պաշարի պակասն ենք լրացնում։

Գարնան 2-րդ կեսին խնամքի մեջ պետք է վորոշ փոփոխություն մտցնել, այսինքն բնի վորդով շրջանակները միշտ այնպես դասավորել, վոր կնքած վորդով շրջանակներն ընկնեն բնի կողքերը, իսկ մատաղ վորդ ու ձվով շրջանակները միշտ լինեն բնի կենտրոնում։

Առանձնապես գարնան յերկրորդ կեսին՝ մինչև ամառնամուտ, բնի կողքերին անհրաժեշտ է ունենալ պահեստի չեչեր, վորպեսզի մայրը հարկ յեղած դեպքում բնի յերկու կողքից էլ միշտ ձվելու տեղ ունենա։

Գարնան վերջերին (ամառնամուտին), յերբ օժանդակ բերքն սկսվել է և յեղանակներն արդեն տաքացել են, ընտանիքը զարգանալու ուժեղ հակում է ցույց տալիս։

Այդ ժամանակ խնամքի և բնի չեչերի դասավորության մեջ վորոշ փոփոխություն պիտի մտցնել։ Անհրաժեշտ է մեղվի ընտանիքին դրանից հետո, մինչև գլխավոր մեղրաբերքի սկիզբը, տալ վորդ ու ձու խնամելու լրիվ բեռնվածություն։

Դրա համար էլ, յերբ տեսնում ենք մայրն անցել է կողքի չեչի վրա և ձվում է, պետք է այդ չեչը տեղափոխել բնի կենտ-

րոնը և նրա տեղը բնի կողքից տալ նոր չեչ։ Այս ձևով շարժվելու դեպքում մայրը միշտ կմնա բնի կենտրոնում, այսինքն ամենատաք մասում։ Միշտ հենց այդտեղ էլ կկենտրոնանա մատաղ վորդ ու ձվի մեծագույն մասը։ Դա շատ կարևոր է, վորովհետև կնքած վորդը լինելով բնի կողքերին՝ ցրտից չի տուժում, կամ այնքան շատ չի տուժում (ուժեղ ցրտերին), ինչքան յեթե այդտեղ մատաղ վորդ լիներ։

Այդպիսով մենք հասնում ենք յերկու նպատակի.

1. վորդի այն մասը, վորն ամենից ավելի կարոտ է տաքության (ավելի զգայուն է դեպի ամենաթեթև ցուրտը) միշտ լինում է բնի ամենատաք մասում՝ կենտրոնում.

2. մայրը, ունենալով իր տրամադրության տակ բնի ամենատաք մասը՝ իրեն շատ մոտիկ ձվելու տեղ՝ ամենայն յեռանդով ձվում է ու ինչքան հնարավոր է ապահովում է խնամող մեղուների աշխատանքը։

Յերբ ներսում ձվարկության տեղը վերջանում է, մայրը նորից անցնում է կողքի չեչի վրա և սկսում է ձվել։ Այդ չեչը նորից տալիս ենք բնի կենտրոնը, իսկ կնքած շրջանակները դասավորում մատաղ վորդի և ձվի կողքերը։

Այդ ձևով դասավորելով չեչերը, մենք ստեղծում ենք մի այնպիսի դրություն, յերբ մայրն ինչքան հնարավորություն ունի ձվում է և նրա օրական դրած ձվի քանակը զբաղեցնում է ամբողջ ընտանիքին։ Այդ դեպքում պարապ մեղուներ գրեթե չեն լինում փեթակում։

Այդ տեսակետից, յեթե ընտանիքը հասել է 10—12 շրջանակի և դեռ մինչև մեղրաբերքը բավական ժամանակ կա, ձեռնտու յե այդ ընտանիքը կիսել ու մյուս մասին բեղմնավորված մայր տալ։

Դա ունի իր խոշոր նպատակը, այն է. 1. շատ ուժեղացած ընտանիքի վորդ խնամելու կարողությունն այնքան մեծ է, վոր մի մայրը չի կարող բավականաչափ ձու հասցնել. 2. ուժեղ ընտանիքից ստացված յերկու միջակ ընտանիքն ամեն մեկն առանձին կխնամի վորդ ու ձվի այն առավելագույնը, վորից այն կողմ էլ ուժ չունի խնամելու։

Այդպիսով մինչև գլխավոր մեղրաբերքի սկիզբը կարելի յե աշխատավոր մեղվի ընդհանուր քանակը հասցնել այն խո-

շոր չափերին, վորը պիտի ապահովի մեղրաբերքի լրիվ ոգտագործումը։

Բնի այս ձևի խնամքն այն նորմալ աշխատանքն է, վոր կարող է տանել ամեն մի մեղվապահ՝ առանց վտանգելու ընտանիքի դրությունը, միևնույն ժամանակ նպաստելով ընտանիքի զարգացմանը։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՄԱՅՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Նշանակությունը յեվ կարիքը

Մայրը սովորաբար ապրում է 3 — 4 և յերբեմն 5 տարի։ Այդ ժամանակամիջոցում ամեն տարի նա ձվում է ու նոր սերունդ տալիս։

Ձվարկության առաջին 2 տարին շատ առատ և կանոնավոր է ձվում, 3-րդ տարին ձվարկությունն զգալիորեն թուլանում է, չնայած հաճախ լինում են մայրեր, վորոնք 3-րդ տարին էլ բավական առատ ձվում են։ Չորրորդ տարին արդեն ձվարկությունը բոլորովին պակասում է ու մայրերի մեծ մասը պառավում, անպետքանում է։

Ուրեմն պետք է որենք դարձնել, վոր յերկու տարեկանից վեր մայրեր չպահվեն։

Որինակ՝ 1931 թ. մայրը պետք է 33 թ. փոխվի, 2 տարի լրիվ աշխատելուց հետո։ Յերիտասարդ մայրերից էլ կլինեն այնպիսի վատորակ մայրեր վորոնց պետք է փոխել։

Մեծ քանակությամբ մայրեր են պետք նաև արհեստական ձագեր ստանալու համար։ Մայրերի այդ կարիքը հոգալու համար, անհրաժեշտ է զբաղվել մայրաբուծությամբ։

Նախկին անհատ մեղվանոցների սովորական դրությունն այն էր, վոր մայրերը 3—4 տարի աշխատելով՝ պառավում անպետքանում էին ու ամեն տարի ընտանիքների մոտ 50 տոկոսը յետ էր ընկնում ու հազիվ իրեն ապահովում պաշարով։

Բնական ձագատվությունն էլ մի կողմից իր բերքից զրկում ամբողջ մեղվանոցը։ Յեվ դա բնական է, վորովհետև, յերբ մեղվանոցում հասակավոր մայրերը շատ են լինում, դա շատ է նպաստում բնական ձագատվությանը։

Կազմակերպելով կանոնավոր մայրաբուծություն, հնարավոր է մեղվանոցի արդյունավետությունը կրկնապատիկ չափերով բարձրացնել։

Ձևերը

Մայրաբուծությունը կարող է լինել․

Մի մեղվանոցի սահմանում՝ մեղվանոցի ներքին կարիքները հոգալու համար։ Այս դեպքում ամեն մի մեղվապահ ունենում է որոշ քանակությամբ նուկլեուսներ՝ պահեստի մայրերով, որոնք օգտագործում է, յերբ կարիք է լինում։ Օգտագործելով յեղած մայրերը, նա հոգ է տանում, որպեսզի ամեն մի վերցրած մոր տեղը մի նոր մայր դուրս գա, այնպես որ պահեստի մայրերի հիմնական քանակը չպակասի։

Այդ նպատակով մեղվանոցում պիտի լինեն հիմնական նուկլեուսներ, որոնք աշնանը պետք է ապահովված լինեն բեղմնավորված մայրերով և հարմարեցված՝ ձմեռելու համար։

Այդ հիմնական նուկլեուսները պիտի կազմեն ընտանիքների թվի առնվազն 10 տոկոսը։

Բացի այդ, մեղվապահն ամառվա ընթացքում պիտի կազմակերպի նաև ժամանակավոր նուկլեուսներ, որոնց մայրերը կօգտագործվեն անմայր մնացած ընտանիքների համար ամառը և աշնանը, իսկ իրենք լուծարքի կենթարկվեն։

Արդյունաբերական մայրաբուծություն

Այս դեպքում մի տնտեսության կից կամ բոլորովին առանձին կազմակերպվում է մի մայրաբուծարան, որտեղ խոշոր քանակությամբ մայրեր են արտադրվում ու տրվում արտադրությանը, կամ վաճառվում ուրիշ հանրապետություններին իբրև տնտեսապես օգտակար հատկանիշներ ունեցող մայրեր։

Այդ յերկու դեպքումն էլ մայրաբուծության հիմնական խնդիրը հատուկ ընտրության խնդիրն է, ինչպես այս մասին ասված է ազնվացման գլխում։

Բնական մայրափոխություն

Յեթե մեղվի ընտանիքին թողնեն իր բնական վիճակում, ապա նա հարկ յեղած դեպքում պիտի կատարի բնական մայրափոխություն, այսինքն յերբ մայրը պառավ է կամ անպետք, մե-

ղուները դեռ նրա կենդանի ժամանակ չնչերի ներքևի յեզրերին շինում են հատուկ մայրապատուկներ (գդլեր, թասակներ), և մայրը նրանց մեջ է ձվում։

Մինչև նոր մայրեր դուրս գալը, հին մայրը կամ մեռնում է բնական մահով, կամ իրենք՝ մեղուներն սպանում են նրան։

Յերբ մայրը հանկարծակի փչանում է և մայրապատուկներ չկան, նրա մահից հետո, մեղուներն աշխատաբջիջներից մի քանիսը հարմարեցնում են, մեծացնում ու նրանց մեջ գտնված մեկ-յերկու օրական որդերից մայրեր են խնամում։

Այդ ձևի մայրափոխությունը կարող է լինել տարվա այն ժամանակ, յերբ փեթակի մեջ կան որդ ու ձու և բոներ։ Բայց հաճախ մայրը փչանում է աշնանը կամ ձմեռը՝ պառավելուց, հիվանդությունից, ցրտից, վոջիլներից։

Այդ դեպքում, ի հարկե, ընտանիքը մնում է անմայր։ Վորդ ու ձու յեղած ժամանակն էլ, ի հարկե, ընտանիքին կարող է չհաջողվել մայր ունենալ․ նոր դուրս յեկած մայրը կարող է և թռչել դաշտ՝ բեղմնավորվելու համար ու պատահաբար փչանալ, կամ հենց փեթակի մեջ կարող է նրան վորևե բան պատահել։ Վորովհետև այդ ժամանակ փեթակի մեջ, բացի կնքված որդից, վոչ ձու կա, վոչ էլ մատաղ որդ, ուստի նոր մայր հանել չեն կարող ու ընտանիքը պիտի փչանա։

Ընդհանրապես բնական մայրափոխությունը չափազանց վնաս է հասցնում, վորովհետև մինչև մայրապատուկ սարքելը, մոր դուրս գալը, բեղմնավորվելն ու ձվելը, բավական յերկար ժամանակ է անցնում ու ընտանիքի արտադրական աշխատանքը դանդաղում է։

Բացի այդ, բնական մայրափոխության դեպքում մայրերն ընտրովի չեն լինում և նրանց վորակն էլ կասկածի տակ է։

Արհեստական մայրափոխություն

Բոլոր թված դեպքերում մեղվապահը մեղուներին օգնության է գալիս ու ապահովում է ընտանիքը մայրով։

Յերբ պահեստի մայր չկա, մեղվապահը վորբ ընտանիքներին ուրիշ փեթակից որդ ու ձու յե տալիս, վոր նրանք մայրեր հանեն։ Բայց դա կարելի յե կատարել միայն գարնանն ու ամառանը։

Ընդհանրապես, յերբ էլ լինի, անհամեմատ ավելի ձեռնտու

յե պահեստի բեղմնավորված մայր տալ, վորը փեթակում անմիջապես սկսում է ձվել և ապահովում է ընտանիքի կյանքի և աշխատանքի նորմալ ընթացքը։

Նուկլեուսներ

Նուկլեուս կոչվում է մի փոքրիկ ընտանիք, վորը զետեղված է փոքր փեթակի մեջ և այդ ընտանիքի մեջ մայր կա։

Յերբ այդ մորն օգտագործում ենք, այդ ընտանիքին նորից տալիս ենք մայրապտուկ, նորից այդտեղ մայրը բեղմնավորվում է և այդպես շարունակվում է այդ պրոցեսը։

Վորոշ քանակով նուկլեուսներ իրենց մեջ ունեցած պահեստի մայրերով պահում ենք մինչև գարուն՝ պատահաբար փչացած մայրերին փոխարինելու համար և մյուս տարին նորից օգտագործում ենք այդ նուկլեուսները։



Նկ 19. Փեթակը բաժանված 2 մասի՝ բնի շրջանակներով նուկլեուսների համար

Փորձը ցույց է տվել, վոր փոքր նուկլեուսի համար ամենալավ չափսը կիսաշրջանակն է, այսինքն բնի շրջանակը վերևից ներքև ուղիղ կես արած։ Նրա բարձրությունը բնի շրջանակի բարձրությունն է, իսկ լայնությունը՝ կեսի չափ։

Դա այն միջին չափսն է, վոր բավարարում է յերկու գլխավոր պահանջ.

1. այդ շրջանակների վրա ընտանիքը հեշտությամբ է ձմեռում.

2. շատ մեծ չի, ու փոքրիկ ընտանիքը կարող է ապրել այդպիսի փեթակում և մայրեր պահել։

Դրա համար ֆաներով խաչաձև կտրում ենք փեթակի մեջ մի քանի բաժանմունքներ և յուրաքանչյուրի մեջ պահում ենք մեկ փոքրիկ ընտանիք իր մոր հետ միասին։ Այդ նուկլեուսներում անհրաժեշտ է 3—4 շրջանակ։

Բացի հիմնական նուկլեուսներից, մեղվանոցում հաճախ անհրաժեշտ է ունենալ ուրիշ ձևի նուկլեուսներ՝ սովորական բնի



Նկ. 20. Փեթակը բաժանված 6 մասի՝ կիսաշրջանակավոր նուկլեուսների համար

շրջանակների վրա։ Այդ դեպքում փեթակը մեջտեղից ֆաներով կիսում ենք, արկանոցներն առանձնացնում ու մի փեթակի մեջ յերկու ընտանիք պահում։

Յերբեմն կարիք է լինում մի փեթակի մեջ զետեղել 3—4 նուկլեուս։

Մեղվի ցեղերը յեվ ազնվացման աշխատանքը

Մեղրատու մեղուն բաժանվում է մի քանի յենթատեսակի, վորոնք կոչվում են ցեղեր կամ տոհմեր, ինչպիսին են՝ իտալական, կովկասյան, ուկրաինական, գերմանական (յեվրոպական) և այլն։

յե պահեստի բեղմնավորված մայր տալ, վորը փեթակում անմիջապես սկսում ե ձվել և ապահովում ե ընտանիքի կյանքի և աշխատանքի նորմալ ընթացքը։

Նուկլեուսներ

Նուկլեուս կոչվում ե մի փոքրիկ ընտանիք, վորը գտնըվում ե փոքր փեթակի մեջ և այդ ընտանիքի մեջ մայր կա։

Յերբ այդ մորն օգտագործում ենք, այդ ընտանիքին նորից տալիս ենք մայրապտուկ, նորից այդտեղ մայրը բեղմնավորվում ե և այդպես շարունակվում ե այդ պրոցեսը։

Վորոշ քանակով նուկլեուսներ իրենց մեջ ունեցած պահես-



Նկ 19. Փեթակը բաժանված 2 մասի՝ բնի շրջանակներով նուկլեուսների համար

տի մայրերով պահում ենք մինչև գարուն՝ պատահաբար փչացած մայրերին փոխարինելու համար և մյուս տարին նորից օգտագործում ենք այդ նուկլեուսները։

Փորձը ցույց ե տվել, վոր փոքր նուկլեուսի համար ամենալավ չափը կիսաշրջանակն ե, այսինքն բնի շրջանակը վերևից ներքև ուղիղ կես արած։ Նրա բարձրությունը բնի շրջանակի բարձրությունն ե, իսկ լայնությունը՝ կեսի չափ։

Դա այն միջին չափն ե, վոր բավարարում ե յերկու գլխավոր պահանջ.

1. այդ շրջանակների վրա ընտանիքը հեշտությամբ ե ձմեռում.

2. շատ մեծ չի, ու փոքրիկ ընտանիքը կարող ե ապրել այդպիսի փեթակում և մայրեր պահել։

Դրա համար ֆաներով խաչաձև կտրում ենք փեթակի մեջ մի քանի բաժանմունքներ և յուրաքանչյուրի մեջ պահում ենք մեկ փոքրիկ ընտանիք իր մոր հետ միասին։ Այդ նուկլեուսներում անհրաժեշտ ե 3—4 շրջանակ։

Բացի հիմնական նուկլեուսներից, մեղվանոցում հաճախ անհրաժեշտ ե ունենալ ուրիշ ձևի նուկլեուսներ՝ սովորական բնի



Նկ. 20. Փեթակը բաժանված 6 մասի՝ կիսաշրջանակավոր նուկլեուսների համար

շրջանակների վրա։ Այդ դեպքում փեթակը մեջտեղից ֆաներով կիսում ենք, արկղնոցներն առանձնացնում ու մի փեթակի մեջ յերկու ընտանիք պահում։

Յերբեմն կարիք ե լինում մի փեթակի մեջ դնել 3—4 նուկլեուս։

Մեղվի ցեղերը յեվ ազնվացման աշխատանքը

Մեղրատու մեղուն բաժանվում ե մի քանի յենթատեսակի, վորոնք կոչվում են ցեղեր կամ տոհմեր, ինչպիսին են՝ իտալական, կովկասյան, ուկրաինական, գերմանական (յեվրոպական) և այլն։

Ցեղերն իրարից տարբերվում են զանազան տնտեսական օգտակար հատկանիշներով և, ի միջի այլոց, իրենց գունավորումով։ Տնտեսական օգտակար հատկանիշներ կոչվում են այն հատկությունները, որոնց մի մասը հեշտացնում ե մեր աշխատանքը մեղվի հետ, իսկ մի ուրիշ մասն ուղղակի բարձրացնում և խոշոր չափերի յե հասցնում մեղվի տված արդյունքը։

Այդ հատկանիշները հետևյալներն են.

Խաղաղասիրություն, գողության նվազ հակում, ակնամոմ կուտակելու նվազ հակում, աշխատասիրություն՝ մեղր կուտակելու և կառուցելու խոշոր հակում, հիվանդությունների, ցրտերի և զանազան աննպաստ պայմաններին դիմանալու ընդունակություն, մայրերի արդյունավետություն, զարգանալու ուժեղ հակում, ձագատնդի նվազ հակում և այլ ավելի քիչ աչքի ընկնող հատկանիշներ։

Մեզ մոտ յեղած մեղուները կովկասյան ցեղին են պատկանում։

Ցեղի ներսում նույնպես կան այդ տարբերությունները, այսինքն նույն կովկասյան ցեղն իր ներսում ունի թե տարբեր տնտեսական հատկանիշներով օժտված ընտանիքներ և թե տարբեր գույն ունեցող մեղուներ, որոնց գլխավոր ներկայացուցիչները դեղին և մոխրագույն մեղուներն են. իսկ նրանց միջև ընկած են զանազան միջակա գունավորում ունեցող մեղուներ։

Դեղին մեղուն իր գույնով շատ նման ե իտալական մեղվին, որ արտասահմանում խոշոր համբավ ունի և որով փոխում են տեղական ցեղերը։ Այդ գույնն ունի նաև պարսկական մեղուն և, ինչպես յերևում ե, մեզ մոտ յեղած դեղին մեղուները պարսկական մեղվի ազգակիցներն են։

Իսկ մոխրագույն մեղուները շատ նման են այն մոխրագույն մեղվին, որ գտնվում ե Աբխազիայում, և որը թե իր գույնով և թե տնտեսական օգտակար հատկանիշներով ավելի լավ պահպանված ե իբրև տոհմական մեղու այդ յերկրում։

Մեզ մոտ յեղած մեղուներն, ըստ իրենց արտաքին տեսքի և տնտեսական հատկությունների, գրեթե ուսումնասիրված չեն իբրև մի առանձին աչքի ընկնող ցեղ։

Ամեն մի մեղվանոցում կարելի յե նկատել, որ տարբեր ընտանիքներ տարբեր որակի յեն, այսինքն յերբեմն պատահում են այնպիսի ընտանիքներ, որոնք ավելի շատ արդյունք են տալիս, քան մնացածները։

Այստեղ կարծես գույնը դեր չի խաղում. որովհետև այդպիսի ընտանիքներ կարող են կազմված լինել թե դեղին և թե մոխրագույն մեղուներից։

Ազնվացման աշխատանք

Ինչպես ընդհանրապես ընտանի կենդանիների մեջ (կովի, ձիու, ոչխարի և այլն) մենք տանում ենք ցեղի ազնվացման աշխատանք, այնպես ել այդ աշխատանքը պետք ե կազմակերպել մեղուների նկատմամբ։

Տարբեր վայրերի, տարբեր ցեղերի տարբեր հատկանիշներ ունեցող մեղուները բնական ճանապարհներով (գլխավորապես անտառների միջոցով) և մարդու ձեռքով այնպես են խառնվել իրար հետ, և այդ ազգակցությունները այնպես են խճճված, որ մեզ մոտ յեղած մեղուներին անհնար ե որևե որոշակի տոհմի դասել։

Դրա համար ել, յերբ որևե տեղ հայտաբերվում ե մեղվի զտարյուն տեսակ, այսինքն յերբ այդ մեղուն մաքուր գույն և որոշ չափ ու ձև ունի (արտաքին տեսքով բոլոր մեղուները նույնանման են) և միևնույն ժամանակ աչքի յե ընկնում տնտեսապես առավել օգտակար հատկանիշներով, այդ դեպքում մարդիկ աշխատում են այդ զտարյուն ցեղից սերունդ ստանալ և կամաց-կամաց իրենց մոտ յեղած մեղվի սերունդը բոլորովին փոխել։

Սակայն մեղվի ազնվացումն ավելի դժվար աշխատանք ե, քան ընտանի կենդանիների ազնվացումը։

Մայրը զուգավորվում ե բոռի հետ օդի մեջ և մեզ համար առայժմ անհնար ե մեր ուզած ժամանակ և մեր ցանկացած բոռերով բեղմնավորել մայրերին։

Ուրեմն, մենք ստիպված ենք հատուկ միջոցներ ձեռք առնել, այն ե՝ ընտրել այնպիսի մեկուսացած մի տեղ, որտեղ մեղուներ չկան։ Այդտեղ դնել մեր բուծած բոռեր պարունակող փեթակները, այդտեղ պահել նաև մայրերն իրենց ընտանիքներով, որոնք սովորական բնական պայմաններում կզուգավորվեն միայն մեր բերած բոռերի հետ, որովհետև այդտեղ ուրիշ բոռեր չկան։

Այդ ձևի աշխատանքը դժվար կլինի մեղվանոցներում արտադրական աշխատանքների հետ միասին կատարել։

Այս գործը վորևե գիտական կամ արդյունաբերական հատուկ ձեռնարկության գործն է, վորն անընդհատ պետք է զբաղվի ցեղական մայրեր բուծելով և տա արտադրությանը:

Այս դեպքում տեղում առաջ յեկած բոռերն էլ դեր չեն խաղա, յեթե տարեցտարի այդ ձևով միշտ լինեն անհրաժեշտ քանակությամբ բեղմնավորված մայրեր:

Իսկ ամեն մի մեղվանոցի արտադրական աշխատանքներին զուգընթաց, հնարավոր է կազմակերպել ազնվացման աշխատանքը:

Հետևյալ ձևով հաշվի յեն առնում իր ամենաընտիր, ամենաարդյունավետ ընտանիքները, մոր արդյունավետությունը, ընտանիքի զարգացման տեմպերը, բերքատվությունը և ուրիշ տընտեսապես օգտակար հատկանիշները:

Յեթե մեղվապահը մի մեղվանոցում աշխատում է տարիներ շարունակ, ապա նա տարեցտարի կարող է ունենալ հատուկ գրանցումների մատյան, վորտեղ գրում է թե այսինչ համար ընտանիքը ինչ կոնկրետ հատկություններ է հանդես բերել, ստացված մայրերն ինչ հատկություններ ունեն և նրանցից ամենաառաջնակարգ տեղը վորոնք են բռնում:

Ահա այս 2-րդ սերիայի ընտրովի մայրերից մեղվապահը նորից սերունդ է ստանում, նորից նրա տված մայրերի մեջ ընտրություն կատարում և ստանում է 3-րդ սերիայի մայրեր, ու այսպես շարունակաբար սերունդ վերցնում:

Այդ ձևի աշխատանքը տանելիս արդեն մենք հաշվում ենք այն մտքի հետ, վոր մայրերը զուգավորվում են պատահական բոռերի հետ: Բայց վորովհետև մենք բուծում և օգտագործում ենք միայն ընտրովի մայրեր, ուրեմն և մեղվանոցում հետզհետե կգոյանան միայն նրանցից առաջացած բոռեր: Այդպիսով, չնայած բավական ուշ, բայց բոռերի սերունդն էլ հետզհետե ազնվանում է:

Յերբ մայրեր բուծելու համար մենք ընտանիքների մեջ ընտրություն ենք կատարում, նույն ձևի ընտրության միջոցով նաև աշխատում ենք ընտրովի ընտանիքներից բոռեր բուծել և միաժամանակ բոլոր միջոցները ձեռք ենք առնում, վոր մնացած ընտանիքների մեջ պատահական բոռերի զարգացումն ինչքան կարելի յե կրճատվի:

Ի հարկե դրանով հարցը վերջնականապես չի լուծվում, վորովհետև միևնույն տեղում ուրիշ մեղվանոցներ էլ կան, վորտեղ

միշտ պատահական բոռեր կլինեն և այդ բոռերից մեր բուծած մայրերի սերնդի մեջ կլինեն անցանկալի խառնուրդներ:

Այդ չարիքի դեմ կարելի յե կռվել միայն համառ ընտրություն կատարելու միջոցով, հույս ունենալով, վոր մեր մեղվանոցի վորակյալ բոռերի քանակը միշտ անհամեմատ ավելի շատ է, քան շրջապատում գտնվող ուրիշ բոռերը, և մեր մայրերի խոշորագույն տոկոսը կօգտվի մեր բոռերից, իսկ միայն փոքր տոկոսը՝ ուրիշ բոռերից:

Անընդհատ ընտրության աշխատանք տանելով, մենք այդ չարիքը կհասցնենք շատ չնչին չափի և դրանից առանձին վնաս չենք տեսնի:

Ի հարկե այդ աշխատանքի ընթացքում կարող է պատահել, վոր մեր ստացած ընտրովի սերունդների մեջ կլինի գլխավորապես մի վորոշ գույնի մեղու՝ դեղին կամ մոխրագույն: Յեթե մենք համոզվենք, վոր բոլոր լավ մայրերի մեծագույն մասը, դիցուք, մոխրագույնն է, ուրեմն կարող ենք համոզվել, վոր այդ արտաքինն ունեցող մայրերն ընդհանրապես ավելի օգտակար են, քան ուրիշները:

Յեթե հետագա աշխատանքների ժամանակ գործնականում այդ բանն ապացուցվեց, դրանից հետո արդեն, ընտրություն կատարելիս, գունավորումը կլինի այն առաջին աչքի ընկնող հատկանիշը, վորով մենք հենց առաջուց կարող ենք վորոշել մոր վորակը և ապա կատարել հետագա դիտողությունները:

ՄԱՅՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Ժամանակը

Վաղ գարնանը, յեթե յեղանակները վորոշ չափով նպաստավոր են, մայրն սկսում է բավական ուժեղ կերպով ձվել:

Դա լինում է դաշտային վայրերում մոտավորապես ապրիլի սկզբներից, յերբ ծառերն սկսում են ծաղկել, իսկ լեռնային տեղերում՝ ապրիլի վերջերից, յերբ ձյունից ազատված դաշտում անմիջապես սկսում են յերևալ վաղ գարնանային ծաղիկներ, և մեղուն բավարար օժանդակ բերք ունի:

Ցածր ու բարձր տեղերի միջև, ինչպես տեսնում ենք, ժամկետները շատ տարբեր չեն: Խոշոր տարբերությունը յեղանակների մեջ է. դաշտերում ավելի տաք է լինում և մայրաբուծության գործն ավելի հաջող է ընթանում, իսկ սար տեղերում

ուժեղ ցրտերը, անձրևներն ու քամիները խոշոր չափով խանգարում են գործին։

Սկսելով վաղ գարնանը, մայրաբուծությունը պետք է անընդհատ շարունակել մինչև այն ժամանակ, յերբ արդեն բոռերը վոչնչանում են և նոր մայրերն այլևս հնարավորություն չունեն բեղմնավորվելու։

Ս կ ի զ բ ը

Դեռ վաղ գարնանը, մեղուները դուրս դնելուց գրեթե անմիջապես հետո, համապատասխան խնամքի միջոցով կարելի յե դուրս բերել նոր մայրեր։

Բայց այդ ժամանակ սովորաբար բոռեր չեն լինում։ Դրա համար ել մեղուները դուրս դնելուց հետո պիտի անմիջապես սկսել բոռեր բուծելու գործը։

Բուծման փեթակների հարմարեցումը վաղ գարնանը

Թե բոռեր և թե մայրեր բուծելու համար վաղ գարնանն անհրաժեշտ է ձեռք առնել հետևյալ միջոցներ՝ ընտրել ամեն մեկ մեղվանոցում մի քանի հատ ուժեղ ընտանիք։ Ամեն մեկ փեթակի համար սարքել տաքացնելու մի արկղ, վորը ներսի կողմից պիտի ունենա 70 սանտ. բարձրություն, 80 սանտ. լայնություն և 80 սանտ. յերկարություն։ Արկղը կարելի յե շինել զանազան անպետք տախտակներից։

Այդ արկղն այնքան մեծ պիտի լինի, վոր փեթակը տեղավորվի մեջը և տակից, կողքերից ու վրայից դարման լցվի՝ տաքացնելու համար։

Այս ձևով պատրաստված փեթակը լավ կդիմանա ամենախիստ ցրտերին ու միջի վորդը չի փչանա։

Այդ փեթակների մի մասը հատկացվում է բոռերի բուծման, իսկ մնացածը՝ մայրերին։

Բոռերի բուծումը

Պահեստի չեչերից պետք է ընտրել 6 հատ բոռաբջիջավոր չեչ ու ամեն մեկ փեթակի մեջ բնի կենտրոնում 2 չեչ դնել, վորից հետո ամեն որ այդ ընտանիքներին պետք է տալ մանր բաժիններով (100 գրամ) գրգռիչ կեր։

Դրա համար պետք է յեփել շաքարաջուր (մեկ շաքար, յեր

կու ջուր), կերակրամանը դնել փեթակի մեջ և ամեն անգամ ձագարով կերակրամանի մեջ կեր լցնել։

Կերը պետք է գաղջ (գոլ) լինի, վորովհետև սառը կերը չի գրգռում և մայրը լավ չի ձվում։

Յերբ տաքացումն ու կերակրումն այդ ձևով կազմակերպված է, ուրեմն մայրն անպայման կձվի բոռաբջիջների մեջ։ Յեթե մի քանի որ ուշացնի ձվելը, չպետք է հուսահատվել, այլ անընդհատ կեր տալ մինչև կձվի և այսպես շարունակել կեր տալը, նույնիսկ յերբ ոժանդակ բերքն սկսվել է։

Այդ ընտանիքները մեղրով պետք է հարուստ լինեն և ամեն մեկն սկզբից պետք է ունենա առնվազն 8 կգ մեղր։ Յեթե իրենք ել չունեն և շրջանակները դատարկել են, ուրեմն վերջիններս պիտի հանել ու տեղը դնել մեղրով լիքը շրջանակ։ Յեթե մեղրով լիք պահեստի շրջանակ չկա, ուրեմն պիտի վերցնել շատ մեղր ունեցող ընտանիքներից։

Յերբ մայրն սկսեց ձվել, պետք է հաշվել, թե բոռերը յերբ դուրս կգան ու կհասունանան։

Ձու դրած որից 24 որվա ընթացքում բոռն արդեն դուրս կգա, 10—12 որ պիտի մնա փեթակում ու հասունանա։ Ուրեմն, ընդամենը պետք է 36—38 որ, վոր դրած ձվերից գոյացած բոռերը կարողանան իրենց պարտականությունը կատարել։

Մայրերի բուծումը

Այդ հաշվով մայրաբուծությունը պետք է սկսել այն հաշվով, վոր մայրերը բեղմնավորվելու ժամանակ բոռերն ել պատրաստ լինեն։

Մայրը ձուն դրած որից դուրս է գալիս 16-րդ որը, հասունանում է 6—7 որվա ընթացքում, ուրեմն դա տևում է 23—24 որ։ Հետևաբար բոռաչեչերի մեջ, ձուն դնելուց ուղիղ 12 որ հետո, պիտի մայրը ձվի այն չեչի մեջ, վորից ուզում ենք մայրապտուկներ պատրաստել։

Մայրաբուծության համար մնացած ընտանիքներից պետք է ընտրել 2 ամենալավ ընտանիք և նրանց մեջ դնել չեչ՝ ձվելու համար, իսկ մյուսները պահել մայրապտուկներ պատրաստելու համար։

Յերբ բոռաչեչերի մեջ մայրն սկսում է ձվել, այդ որվանից պիտի սպասել 5 որ ու վորբացնել նշանակված ընտանիքները,

վորոնք պիտի մայրեր խնամեն։ Նրանց մայրերը պիտի վերցնել ու տալ ուրիշ անմայր ընտանիքներին։

Ընտանիքն այդպես շուտ վորբացնում ենք նրա համար, վոր 6—7 որվա ընթացքում արդեն չլինեն փոքրահասակ վորդեր և մեղուներն այլևս չկարողանան բնի ներսում նորից մայրապտուկներ շինել։ Կարելի յե և ավելի ուշ վորբացնել։ Միայն այդ դեպքում պիտի ամբողջ մատաղ վորդով ու ձվով շրջանակները հեռացնել բնից, վորպեսզի մեղուն հնարավորություն չունենա ուղղակի բնի ներսում մայր խնամելու և ստիպված լինի մի անգամից բարձրանալու վերև՝ մեր դրած չեչի վրա։

Վորբացնելուց յերեք որ հետո, սերունդ (ձու) տվող ընտանիքի բնի ներսում դնում ենք մեկ հատ չեչ, վոր մայրը ձվի նրա մեջ։

Սովորաբար գործ ենք ածում կանոնավոր և բոլորովին սպիտակ չեչեր։ Բայց փորձը ցույց է տվել, վոր ամենալավն այն չեչն է, վորի մեջ 1 կամ 2 անգամ արդեն վորդ է յեղել դրված և չեչը մի քիչ արդեն սկսել է գույնը փոխել։ Այդպիսի չեչերի վրա կառուցված պտուկներն ավելի դիմացկուն են լինում և շատ չեն փչանում, իսկ սպիտակ չեչը շատ նուրբ է լինում ու պտուկները շուտ են փչանում։

Միևնույն ժամանակ այդպիսի չեչը մեր ուզած ձևով հեշտությամբ տաք գործիքներով կարողանում ենք մշակել։

Դնելով այդ չեչը բնի ներսը՝ այդ ընտանիքին նույն ձևով կեր ենք տալիս, վոր մայրն ուժեղ կերպով ձվի։ Ինչքան էլ մորը կերակրես, վաղ գարնանը քիչ կձվի, համենայն դեպս 3—4 որվա ընթացքում չեչի մի քառորդի չափով կձվի, իսկ հետագայում՝ ավելի շատ։

Մոր ձվարկությունն սկսելուց 4 որ հետո չեչը պիտի հանել ու ոգտագործել մայրաբուծության համար։

Նախքան չեչ պատրաստելը և խնամվող ընտանիքին տալը, այդ ընտանիքի բունը մանրամասն կերպով պիտի ստուգել և փչացնել բոլոր այն պատահական մայրապտուկները, վորոնք բնի ներսում կարող են լինել։

Այս գործում շատ զգույշ պիտի լինել, վորովհետև յերբեմն պատահաբար մնացած պտուկից մայր է դուրս գալիս ու փչացնում է վերևի մայրապտուկները։

Պեխաչիկի յեղանակ

Մայրապտուկներն ստանալու ամենապարզ յեղանակը Պեխաչիկի յեղանակն է։

Նախքան բուծման աշխատանքն սկսելը վորբացած ընտանիքի բունը պետք է ամբողջովին ստուգել ու կտրտել բոլոր յեղած մայրապտուկները։ Այնուհետև ընտանիքն էլ չի կարող ներքևում նոր մայրապտուկներ կառուցել, վորովհետև մայրը վերցնելուց 6 որ է անցել։

Զրկվելով իր մայրապտուկներից, ընտանիքն այդ ժամանակ ուժեղ թափով կսկսի մայրապտուկներ շինել այն չեչի վրա, վորը մենք ենք տալիս։ Դրանից հետո պիտի կերակրամանը դնել բնի կողքին ու ամեն որ կերը տալ մանր բաժիններով։

Մեղվանոցի աշխատանոցում (յեթե չկա, մոտիկ գտնվող մի սենյակում) վառարան պիտի դնել ու սենյակը լավ տաքացնել, վորպեսզի վորդը չմրսի։ Սենյակի ջերմաստիճանը 24°-ից պակաս չպիտի լինի, իսկ ամենալավը 25—30 աստիճանն է։

Սենյակում հատակին պետք է շաղ տալ ջուր կամ մի ամանով ջուր յեռացնել վորպեսզի ոդը բավական խոնավանա, վորովհետև չոր ոդը վատ է ազդում նորածին վորդերի վրա։ Այնուհետև սենյակում պիտի դնել մի սեղան և ունենալ սուր ծայրերով յերկու գործիք՝ գրչահատի ծայրերի նման։ Կարելի յե գործածել և սովորական գրչահատներ։

Ձված շրջանակը պետք է հանել փեթակի միջից, շտապ բերել տաքացրած սենյակն ու դնել սեղանի վրա։ Գործիքների ծայրը պետք է դնել պրիմուսի բոցի մեջ, վոր տաքանա, բայց ավելի հարմար է յեռացած ջրի մեջ։ Այնուհետև վերցնում ենք նրանցից մեկն ու չեչի ձված տեղում տաքացած ծայրով հորիզոնական ուղղությամբ (շրջանակի յերկարությամբ) փչացնում ենք 3 շարք բջիջ ու թողնում ենք մի շարքը, ապա էլի փչացնում 3 շարք և այսպես շարունակ մինչև ներքև։

Այդպիսով անվնաս են մնում մի քանի շարք բջիջներ։

Հետո վերևից ներքև թեք ուղղությամբ ([illegible]թերթի բջիջների շարվածքով) էլի նույն ձևով մեկ շարք թողնում ենք, 3 շարք փչացնում, էլի մի շարք թողնում, 3-ը փչացնում մինչև ավարտումը։

Վերջում չեչի ձված տեղում մնում են իրարից բավական հեռու հատ-հատ բջիջներ՝ իրենց միջի ձվերով կամ վորդերով։

Բջիջները վոչնչացնելուց առաջ պիտի մի շարքը քանդել, պահելով դանակի բութ կողմը դեպի մնացող շարքը։ Դանակի ծայրն այնպես պիտի տանել, վոր միևնույն ժամանակ փչացնի



Նկ. 21 Պեխաչիկի յեղանակով պատրաստված չեչ։

նաև բջիջների հատակին յեղած ձվերն ու վորդերը։ Պիտի զգույշ լինել և չփչացնել չեչի միջնապատը (բջիջների հատակները)։

Այդ մի շարքը փչացնելուց հետո դանակն այնպես պետք է շուռ տալ, վոր բութ կողմն ընկնի մյուս մնացող շարքի կողմը ու նույն ձևով քանդել նաև 3-րդ շարքը։

Այդպիսով յերկու փչացած շարքի մեջտեղում դեռ կմնա մի կիսաքանդ շարք, վորը նույն կարգով պիտի փչացնել։

Բջիջների փչացման աշխատանքը պիտի կատարել ինչքան կարելի յե արագ, մանավանդ յերբ սենյակում հնարավոր չի պահպանել մինչև 25 աստիճան տաքություն։

Այդպես պատվաստելուց հետո պիտի չեչը տալ խնամող ընտանիքին։

Պատվաստված չեչը զգուշությամբ փաթաթում ենք մի փափուկ շորի մեջ, վորպեսզի շենքից դուրս տանելիս վորդը չմրսի, բերում ենք փեթակի մոտ ու պառկեցնում բնի վրա՝ պատվաստված յերեսը դեպի ներքև։ Նրա տակից դնում ենք սկզբում մի դատարկ շրջանակ, վորպեսզի պատվաստված չեչը բարձր լինի

բնից և կառուցվելիք մայրապտուկների ծայրերը չդիպչեն շրջանակներին։

Չեչն այս ձևով դնելուց հետո, վրայից պիտի դնել մի տախտակ (ֆաներ), վոր ծածկոցն ու բարձը չծանրանան չեչի վրա։ Հետո փռում ենք ծածկոցը, վերևից գցում ենք քեչաներ կամ դարմանով լցված տոպրակներ ու դնում կտուրը։ Տաքացումներն ուժեղացնելու համար կարելի յե դնել վերնահարկը և հետո կտուրը դնել։

ԽՆԱՄՔ

Մյուս որը պիտի զգուշությամբ բացել փեթակը, բարձրացնել բուծման չեչը մի կողքից ու դիտել, յեթե մեղուները խիտուխիտ պատում են չեչը, ուրեմն դրությունը լավ է։

Յերբ թեթև ծուխ տալով մեղուներին հեռացնում ենք չեչի մի վորևե մասից, տեսնում ենք, վոր մեղուներն արդեն թողնված բջիջները սարքել են թասակի ձևով, այսինքն դրել են մայրապտուկների հիմքը։

Փչացրած բջիջներից շատերը կարող են միայն կիսով չափ քանդված լինել ու ձվերը կամ վորդերը հատակին անվնաս մնացած լինեն։ Հենց այդ պատահաբար մնացած ձվերի վրա մեղուները նույնպես մայրապտուկ են պատվաստում, բայց դրանք կողմնակի մայրապտուկներ են ու ցանկալի չեն, յեթե մնան, պիտի մյուսներին խանգարեն, վորովհետև ինչքան մայրապտուկի տեղն ազատ է, այնքան մայրը լավ է սնվում ու մեծանում։

Բացի այդ, առանձին կանգնած մայրապտուկը հեշտ է կտրել ու գործածել։

Ուրեմն անհրաժեշտ է յերրորդ որն ստուգել և դանակի ծայրով քանդել բոլոր կողմնակի մայրապտուկներն ու փչացնել միջի վորդերը։

Դրանից հետո յերբեմն պիտի ստուգել ու հետևել, վոր չեչը չցածրանա ու մայրապտուկների ծայրերը չդիպչեն շրջանակներին։ Յեթե այդ բանը կնկատվի, պիտի բուծման չեչն ավելի բարձրացնել։

ԿՆՔՈՒՄԸ

Պետք է զգույշ լինել, ճիշտ իմանալ, թե յե՞րբ են կնքում պտուկներն ու կնքած որը նշել տետրում։

Ի հարկե բոլորը միանգամից չեն կարող կնքել. սովորաբար

մեղուներն սկսում են կնքել միջնեղից ու դնում դեպի կողքերը։

Մեր հաշվով մայրապատուկը, կնքելու օրից, հասունանում է 7-րդ օրը, իսկ մայրը դուրս է գալիս 8-րդ օրը։

Քանի որ չեչի մեջ ձվարկությունը տևել է 3—4 օր, ուրեմն պատուկների հասունանալն էլ կտևի 3—4 օր, այսինքն 3—4 օրվա ընթացքում ամեն օր մենք կունենանք որոշ քանակով հասունացած մայրապատուկներ։

Ավելի շուտ կտրելը վտանգավոր է, որովհետև չհասունացած մայրը պատուկի մեջ շարժումից, ցրտից, շատ տաքից, մի փոքր հուպ տալուց, գլխի վրա շուռ տալուց հեշտությամբ վնասվում է։

Երբ գալիս է հասունացման օրը, մեղվապահը պիտի առավոտյան կեսօրին ստուգի պատուկները, թե արդյոք պատահաբար մայր չի՞ դուրս յեկել ու չի՞ փչացնում մյուսներին։

Երբ ժամանակը գալիս է, մեղվապահն սկսում է միջնեղից գրչահատի ծայրով կտրել—հանել մայրապատուկները։ Դանակի ծայրը կարելի յե տաքացնել, որ չեչը հեշտությամբ կտրվի։

Պտուկների պատվաստում յիվ պատրոններ

Կտրելով պատուկները պետք է պատվաստել այն կարիք ունեցող ընտանիքներին կամ նուկլեուսներին։

Գեխաշիկի յեղանակով պատրաստված մայրապատուկների հիմքերը շատ թույլ են լինում և, յեթե որոշ միջոցներ ձեռք չառնենք, շուտ են փչանում պատվաստման ժամանակ։



Նկ. 22. Ինքնագործ պատրոնի կտրվածքը՝ յերկարությամբ

Դրա համար փայտից պիտի հատուկ պատրոններ շինել, մայրապատուկը տեղավորել մեջը և նոր տալ ընտանիքին։ Դրա համար էլ վերցնում ենք մի ձողիկ՝ լայնությունը 30 մմ, հաստությունը 22 մմ, որի լայն ճիբեի վրա գայլիկոնով 25 մմ լայնությամբ ծակեր ենք բաց անում, այնպես որ ներքևի կողմից գայլիկոնի սուր ծայրը միայն յերևա։ Հետո

գայլիկոնը հանում ենք և տեղը դնում ենք 15 միլիմետր լայնություն ունեցող գայլիկոն և ապա ծակում վերջացնում, այդպիսով ստացվում է վերևը լայն, ներքևը նեղ մի անցք։

Հետո սղոցով կտրատում ենք ձողիկը (քանոնն) ու առանձնացնում։ Դրանք կոչվում են պատրոններ, որոնց ամեն մեկի վրա ֆաներից մի խուփ ենք մեխում, այնպես որ խուփը հեշտությամբ բացվի ու խփվի (հորիզոնական ուղղությամբ)։

Մայրապատուկի հիմքը դանակով ինչքան կարող ենք փոքրացնում ենք, աշխատելով չվնասել ու մայրապատուկը դնում ենք



Նկ. 23. Ինքնագործ պատրոնի տեսքը

պատրոնի մեջ այնպես, որ ծայրը նեղ անցքից դուրս գա ու հիմքն էլ տեղավորվի լայն անցքի մեջ։ Երբ խուփը ծածկում ենք, մայրապատուկը յետևից ծածկվում, ապահովվում է։ Նրա ծայրն է միայն, որ բաց է մնում (պատրոնի նեղ անցքից դուրս ցցված)։

Այդ պատրոնն այդ ձևով դնում ենք բնի կենտրոնում ու հուպ տալիս յերկու չիչի արանքը՝ կծիկի շրջանում։

Երբ վաղ գարնան սուր ցրտերն անցել են, պատրոնը կարելի յե տեղավորել ուղղակի շրջանակների վրա, այնպես որ պատուկի ծայրն իջնի յերկու շրջանակի արանքը, իսկ պատրոնը կամուրջի նման նստի յերկու հարևան շրջանակների վրա։

Այդ ձևի պատրոն կարող է շինել ամեն մի մեղվապահ։ Բայց յեթե հնարավոր լինի պատրոններ չարխով պատրաստել, այդ դեպքում այդ պատրոնը շատ կթեթևանա, կփոքրանա, կլոր

ձև կընդունի և հեշտությամբ կարելի չի այն գործածել։ Նրանք
տարածությունը մնում է նույնը։

Մեղվապահն անպատճառ պետք է սովորի գործադրել այդ պատրոնները, հաշվի առնելով, որ առանց պատրոնների մայրապտուկների առնվազն 50—60 տոկոսը պատվաստման ժամանակ վոչնչացնում են մեղուները։

Ընտանիքի կարողությունը

Միևնույն ընտանիքը մայրաբուծության համար մի անգամ միայն կարելի չէ օգտագործել։

Վաղ գարնանը, երբ դեռ ցուրտ է, հազիվ հնարավոր է մի ընտանիքից ստանալ այդ ձևով 20—25 մայրապտուկ։

Քանի եղանակները տաքանում են, այնքան կարելի չէ շատ ստանալ, և վերջապես ամառն այդ թիվը կարող է հասնել 100-ի։

ՄԱՅՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒՐԻՇ ՁԵՎԵՐ

Ալլեյի եղանակ

Ջված չեչից ամբողջ երկարությամբ կտրում ենք մի շերտ։ Շերտն այնպես է կտրված, որ նրա մեջտեղով, ամբողջ երկա-

Նկ. 24. Ալլեյի եղանակով կտրված չեչի շերտը

րությամբ, անվնաս է մնացել ձված բջիջների մի շարքը։

Այդ շարքից մեջընդմեջ փչացնում ենք երեքական բջիջ՝ թողնելով մեկական բջիջ իրարից բավական հեռու։

Նկ. 25. Ալլեյի եղանակով պատրաստած մայրապտուկներ

Հետո վերցնում ենք մի անպետք չեչ, ներքևից կորաձև կտրում ենք, հարթնում ենք լամպի կամ մոմի վրա շերտի ցածից ու փակցնում կոր ձև կտրած չեչի բերնին (ցածրին)։

Մեղուներն այդ բջիջներից պատրաստում են մայրապտուկներ։

Դա հեշտ և լավ եղանակ է, սակայն այդ եղանակով մեծ քանակությամբ պտուկներ հնարավոր չի ստանալ։

Դուլիտլի եղանակ

Վերցնում ենք 8 միլիմետր հաստության մի կլոր փայտե կտոր ու ծայրը կլորացնում։

Փայտի այդ կլորացրած ծայրը դնում ենք սառը ջրի մեջ, հետո թաղում հալած մոմի մեջ (մոմը պիտի հազիվ հալած և

Նկ. 26. Մայրաթասակներ շինելու փայտիկ

շատ տաք չլինի) ու հանում։ Ստացվում է փայտի ծայրին մոմի մատնոց, որը նորից դնում ենք մոմի մեջ միայն ավելի քիչ չափով։ Հետո նորից ենք դնում և ամեն անգամ ավելի քիչ։ Երբ մոմի մատնոցը սառում է, զգուշությամբ հանում ենք փայտի ծայրից։ Այդ մատնոցը մենք կոչում ենք թասակ (մայրաթասակ)։

Այդ թասակները հալեցրած մոմի միջոցով կպցնում ենք (շարում) մի ձողիկի վրա, իրար կողքի, այնպես որ պտուկները կնքելուց հետո, նորից պոկենք այն ու գործադրենք։

Նախորոք (5—6 օր առաջ) հոգ ենք տանում, որ պատվաստման համար ունենանք չկնքած մայրապտուկներ իրենց միջին խյուսով (որդի կերը)։ Դրա համար կարելի չէ մի ընտանիք վորբացնել և մի քանի օրից հետո օգտագործել նրանց պատրաստած պտուկների միջի խյուսը։ Իսկ եթե մեղվանոցում կան պատրաստի մատաղ պտուկներ, ուր մն կարելի չէ օգտագործել նրանց միջի խյուսը։

Մի պտուկի խյուսը կարող է բավարարել 10—12 պատվաստմանը։ Տաքացրած սենյակում դնում ենք մի չեչ 1—2 օրական որդերով ու պտուկներով։ Հատուկ գործիքի միջոցով (շյուղանման գործիք է մի ծայրը փոքր չափով, մյուսն ավելի մեծ չափով գդալաձև տափակացրած) մեծ ծայրի վրա վերցնում ենք բավարար քանակով պտուկի միջի խյուսից ու մի քանի թասակների մեջ ենք լցնում քիչ-քիչ (գդալիկի վրայից դանակի

ծայրով մի փոքրիկ մասը պոկում գցում ենք թասակի հատակին)։

Հետո գդալիկի փոքր ծայրով զգուշությամբ վերցնում ենք որդը (այնպես որ չվնասենք) բջիջների միջից և մեկ-մեկ իջեցնում թասակների մեջ լցրած խյուսի վրա։

Ամեն մի ձողիկի վրա կարելի է շարել 15—20 թասակ և մի շրջանակի մեջ կարող ենք զետեղել յերեք այսպիսի շարք ու դնել ընի կենտրոնում։

Ժամանակին սովորական ձևով փորբացած ընտանիքն այդ պատվաստված որդերից մայրեր կսնամի։ Սա կոչվում է արհեստական մայրապատվաստում։

Ուրեմն մի ընտանիք կարող է այդ ձևով մեզ տալ 40—50 մայր։ Այդ ձևի մայրապտուկները շատ հեշտ է գործածել և չեն փչանում։

Պատվաստման օրը նշվում է տետրում և 11 12 օրից հետո արդեն պետք է գործադրել այդ մայրապտուկները, այսինքն յեթե ամսի մեկին պատվաստումը կատարել ենք, ուրեմն նույն ամսի 12-ին նուկլեուսները պետք է պատրաստ լինեն և ամեն մեկին այդ պտուկներից պիտի տրվի։

Պրասսի յեղանակը

Պրասսը նույն ձևով է անում, միայն մայրաթասակը տեղավորում է մի հատուկ փայտե պատրոնի մեջ (խցան)։

Ինչպես նկարից տեսնում ենք, այդ թասակներից առաջինը



Նկ. 27. Պրասսի յեղանակով ստացված մայրապտուկները կլոր պատրոնների մեջ, որոնք շարված են ձողերի մեջ բացված անցքերի մեջ

փոքրիկ սուր մեխով է ամրացվում ձողիկին, իսկ մյուսը խցանի պես հագցվում է նրա մեջ բաց արած անցքերի մեջ։ Այդ թասակները հաճախ հենց խցան էլ կոչվում են (Պրասսի խցանները)։

Այդպիսի փայտե խցանների վրա ամրացված մայրապտուկների գործադրումը շատ հեշտ է և անվտանգ։

Շիցկենի յեղանակը

Ձված չեչից կտրում ենք մի յերկար շերտ (ինչպես Ալլեյի յեղանակի գործադրման դեպքում), դանակի տաքացրած ծայրով այդ շերտի մի յերեսից բջիջները կիսով չափ կտրում վերցնում ենք (բջիջները կիսով չափ կարճանում են) հետո կտրտում ենք այդ շերտն ու վերածում այնպիսի կտորների, որ կենտրոնում կարճացրած բջիջներից մեկը որդն էլ մեջն անձեռնմխելի մնա։ Այդ առանձին կտորների ցածի կողմը քիչ տաքացնելով կպցնում ենք Պրասսի խցանների մեջ ու շարում ձողիկի վրա արդեն նկարագրած ձևով։ Կլորացրած փայտի ծայրով կարելի է մայրապտուկացու բջիջի բերանը պատռել, լայնացնել, որպեսզի մեղուները մայրապտուկը հեշտությամբ կառուցեն այդ հիմքի վրա։

Կիսաշրջանակավոր նուկլեուսներ

Այդ հաշվով ամսի 11-ին մի ուժեղ ընտանիքից պիտի վերցնենք հասունացած որդով մի շրջանակ, տաք շենքում կիսենք յերկու հավասար մասի ու ստանանք յերկու կիսաշրջանակ։

Դրա համար նախորոք Լանգստրոտի շրջանակի կողքի ձողիկներից (7,5 մմ հաստությամբ) մեխում ենք կիսաշրջանակներ, որոնց միջի չափսերը հետևյալն են՝ բարձրությունը 207 մմ, իսկ լայնությունը 196 մմ։ Շրջանակի վրայից մեխում ենք նաև մի բարակ ձողիկ 220 մմ յերկարությամբ այնպես, որ նրա ծայրերն յերկու կողմից յերկարեն իբրև շրջանակի ականջներ։

Սենյակը տաքացնում ենք մինչև 25 աստիճան Ց-ի ու փեթակի միջից հանած որդով շրջանակը բերում պառկեցնում սեղանի վրա։

Կիսաշրջանակը դնում ենք որդով չեչի վրա ու իր ներսի չափով կտրում ենք որդով չեչն այնպես, որ յերկու շրջանակի համար ստացվեն հավասար կտորներ։ Չեչի կողքերից որոշ չա-

փով ավելցուկներ կմնան, իսկ վորդը մեջտեղից դանակով մի անգամ է կտրվում։

Կտրված կտորները կիպ հագցնում ենք այդ շրջանակների մեջ։ Կողք-կողքի միացրած յերկու կիսաշրջանակը դնում ենք իր փեթակի մեջ՝ բնի մեջտեղը։ Այդպես մնում է մինչև մյուս օրը (ամսի 12-ը)։ Մեղուները կարկատում, սարքում են այդ չեչերը, կողերն ամրացնում ձողիկներին ու խիտ առ խիտ պատում են վորդը։

Ամսի 12-ին հանում ենք այդ շրջանակները մեղուն վրան նստած, անջատում իրարից ու ամեն մեկը դնում մի նուկլեուսի մեջ, մեջտեղի պատին մոտիկ։ Նույն ձևով դեռ մի օր առաջ (ամսի 11 ից) պատրաստում ենք յերկու մեղրով չեչ (ծածկող շրջանակներ) ու ամեն մեկ վորդով շրջանակի կողքին դնում այդպիսի մի ծածկող շրջանակ՝ իր մեղրով ու վրան նստած մեղուներով։



Նկ. 28. Կիսաշրջանակ

Այդ ձևով ստացվում է միջնապատի յերկու կողմում յերկու նուկլեուս յերկուական շրջանակով, վորոնց կողքերից դնում ենք միջնատախտակ ու տաքացում։ Այդ ձևով սարքած նուկլեուսներին տալիս ենք մայրապատուկներ։

Սովորաբար նոր վերցրած նուկլեուսից թռչող մեղուն վերադառնում է իր հին տեղը և վորդի վրա մնում են յերիտասարդ մեղուները։ Հաճախ դրանց թիվը քիչ է լինում և վորդը հենց առաջին գիշերը մրսում է ու փչանում։

Այդ չարիքի առաջն առնելու համար, կարելի յե կիրառել հետևյալ միջոցը՝ յերբ նուկլեուսն իր մեղուներով առանձնացնում ենք, անմիջապես արկանոցը բռնում ենք կանաչ խոտով (թույլ կերպով) ու այդպես թողնում։ Նուկլեուսի միջի մեղու-

ները մնում են ներսում, իսկ հաջորդ օրն արկանոցը բացում ենք։ Այդ ժամանակ արդեն հասունացած վորդի մի մասը դուրս է յեկել բջիջներից և յեթե թռչող մեղուն վերադառնա էլ իր հին տեղը, էլի վորդի վրա բավական մեղու կմնա ու վորդն վտանգն անցած կլինի։

Համենայն դեպս պետք է միշտ ստուգել և յեթե մեղուն քիչ է, նոր մեղուներ ավելացնել։ Դրա համար նուկլեուսի առջև արկանոցատախտակի վրա մի շոր ենք փռում ու շրջանակի վրայի մեղուներն ուժեղ ցնցումով թափ ենք տալիս շորի վրա՝ արկանոցի ուղիղ առաջը։ Թռչող մեղուն հենց այդտեղից վերադառնում է իր փեթակը, իսկ դեռահաս մեղուները քաշվում են նուկլեուսի ներսը և պաշտպանում վորդը։

Յեթե այդ ձևի նուկլեուսների չեչեր առաջուց շատ ունենանք, ուրեմն կարիք չկա նոր շրջանակներ կտրատել ու հարմարեցնել։

Այդ դեպքում պետք է, մայրապատուկները հասունանալուց 19—20 օր առաջ, այդ շրջանակները զույգ-զույգ ամրացնել իրար հետ ու դնել ուժեղ փեթակների մեջ բնի կենտրոնում։

Մայրը ձվում է շրջանակներում, վորդը խնամվում է ու 19—20 օրից հետո այդ յերկու կիսաշրջանակն էլ գրեթե լիքն են լինում հասունացած վորդով։

Յեթե առջևի կիսաշրջանակի մեջ մայրն ուժեղ կերպով է ձվում, իսկ յետինի մեջ քիչ է ձվել, պետք է շրջանակը շուռ տալ, վորպեսզի մայրը մյուս կիսաշրջանակի մեջ էլ ձվի։ Այդ դեպքում յերկուսն էլ ամբողջովին բռնված կլինեն վորդով։

Յերբ ժամանակը գալիս է, մեղուներով յեղած այդ շրջանակները հանում ենք, բաժանում իրարից ու նույն ձևով կազմում նուկլեուսներ։ Յեթե մայրապատուկները պետք կտրենք 10-ին, ուրեմն այդ չեչերը պետք դնենք փեթակի մեջ ձվելու նախորդ ամսի 20—21-ին։

Բնի շրջանակով նուկլեուսներ

Ամսի 9-ին մինչև ճաշ մեջտեղից ֆաներով կիսած փեթակի մեջ կազմում ենք բնի շրջանակներով նուկլեուսներ։

Ուժեղ ընտանիքից հանում ենք մեկ շրջանակ հասունացած վորդով և մեկ շրջանակ մեղրով. այսպիսի յերկու շրջանակ իրենց վրա նստած մեղուներով դնում ենք կիսած փեթակի մի աչքը— վորդով շրջանակը պատի կողմը, կողքից էլ մեղրով շրջանակը։

Փեթակի մյուս աչքում նույն ձևով դնում ենք ուրիշ փեթակից վերցրած յերկու շրջանակ։ Այդ յերկու նուկլեուսի կողքից դնում ենք միջնատախտակներ և տաքացում։ Այդպիսի նուկլեուսները նույնպես կարող են ձմեռել և օգտագործվել գարնանը։

Նուկլեուսների հաշվառումը

Նուկլեուսների հետ գործ ունենալիս անհրաժեշտ է միշտ տեղյակ լինել, թե քանի նուկլեուս կա ներկայումս (ամեն օր յերեկոյան հաշվել ու գրանցել)։

Նուկլեուսների մասին պետք է ունենալ հետևյալ նշումները, վորոնք ամենից լավ է ներկերով կատարել.

1. բեղմնավորված ու ձվարկությունն սկսած մայր—կարմիր գույն.
2. ջահել, դեռ չբեղմնավորված մայր—կանաչ.
3. մայրերն ուշացնում են բեղմնավորումը—կապույտ.
4. մայրը կորել է ու պետք է նոր մայրապտուկ տալ—սև.
5. մայրապտուկ—սպիտակ.
6. վանդակ՝ մայրը մեջը—դեղին։

Այդ բոլոր տեղեկությունների մասին, ի հարկե, անհնարին է հատուկ գրանցումներ ունենալ, ուստի անհրաժեշտ է վորևէ նշան անել նուկլեուսի ճակատին և անպայման ամեն մի տեղեկություն իր հատուկ նշանն ունենա։

Կան զանազան ձևեր, բայց ամեն մի մեղվաբույծ կարող է հնարել իր ձևը. Թիթեղի կտորների վրա յերկու կողմից էլ նշել ցույց տված գույները ու այնպես կախել նուկլեուսի ճակատից, վոր յերևացող գույնն արտահայտի նուկլեուսի ներկա դրությունը։

Կարելի յե նաև, ի հարկե, գրանցել նուկլեուսները, բայց վերը բերված հաշվառման ձևն ավելի գործնական է և հեշտ։ Մեղվապահը միայն իր մշտական նուկլեուսները պիտի գրանցած լինի իր տետրում՝ սովորական կարգով։

Մայրապտուկների յեվ նոր դուրս յեկած մայրերի պահպանումը

Յերբ խնամող փեթակի մեջ բոլոր մայրապտուկները կնքում վերջացնում են, արդեն այդ պտուկներին միայն տաքություն է հարկավոր (33—35 աստիճան), վորպեսզի մայրեր դուրս գան։ Այդ տաքությունն ամեն մի փեթակի մեջ էլ կա, ուրեմն յեթե

վանդակներով մենք ապահովենք պտուկները կրծելուց—փչացնելուց, կամ նոր դուրս յեկած մայրերը՝ սպանելուց, կարելի յե այդ պտուկները պահել նաև մայր ունեցող փեթակի մեջ մինչև պտուկների հասունանալը և օգտագործումը։

Դրանով մենք հետևյալ օգուտը կունենանք.

1. մայրապտուկները կարելի յե պահել մինչև լրիվ հասունանալը առանց վախենալու, թե վորևէ պատահական մայր շուտ դուրս կգա ու կփչացնի մյուս պտուկներին։ Այդ բանը հաճախ տեղի յե ունենում, յերբ տարբեր հասակի պտուկները բաց-բաց իրար կողքի մնում են մինչև հասունանալը.

2. խնամող փեթակը 6—7 օր շուտ է ազատվում պտուկներից (անմայր և աննորմալ վիճակից), խսկույն մայր ստանում ու շարունակում է իր կյանքի նորմալ ընթացքը։

Դրա համար մենք կատարում ենք հետևյալ աշխատանքը.

Կլոր վանդակի մի ծայրը փայտե խցանով փակում ենք, իսկ խցանի մեջ ներսի կողմից փորված մի փոսիկի մեջ դնում ենք մի քիչ կեր (գուլխ շաքարի փոշուց և մեղրից շինած շաղախ՝ պինդ խմորի պես), վորպեսզի մայրը դուրս գալուց հետո սնվի դրանով, իսկ յեթե կարիք կա, նրան մի վորոշ ժամանակ պիտի պահել բանտարկված դրությամբ։



Նկ. 29. Վանդակ-բուծարան

Մյուս ծայրից դնում ենք փայտե կլոր պատրոնի մեջ հարմարեցրած պտուկը, վորի ծայրը պատրոնի միջից դուրս է գալիս վանդակի մեջ։ Այդ վանդակները հարմարեցնում ենք մի ձողիկի վրա ու շրջանակի մեջ կախում վորևէ մեղվի բնի մեջ՝ կենտրոնին մոտիկ։

Վանդակները պաշտպանում են պտուկները, փեթակի մեջ անհրաժեշտ տաքությունը կա, իսկ ընտանիքի կյանքը չի խանգարվում, վորովհետև մայրն իր տեղումն ե և ընտանիքը նորմալ վիճակումն ե։

Հարկ յեղած դեպքում այդ վանդակներից հանում ենք պատրոնով պտուկներն ու գործածում, իսկ յեթե մայրը դուրս յեկած ե լինում, հենց նույն վանդակով տալիս ենք նուկլեուսին կամ ուրիշ փեթակի ու հետո բաց թողնում։

Նոր դուրս յեկած մորը վանդակի մեջ պիտի աշխատել քիչ պահել՝ 2—3 օրից վոչ ավելի, վորովհետև նրա սնունդը կարող ե տեղը չլինել ու լրիվ զարգացման չհասնել։

Մայրերի բեղմնավորումը

Սխալ ե այն կարծիքը, թե մայրերը բջիջից դուրս գալուց հետո 4—5 օրվա վրա թռչում են բեղմնավորվելու։ Դա շատ հազվագյուտ ե լինում։

Սովորական ժամկետը 7 օր ե։ Յեթե վոչ մի խանգարող յերևույթ չկա, 6—7 օրվա վրա մայրը բեղմնավորվում և 3 օրից հետո սկսում ե ձվել։

Խանգարող յերևույթները հետևյալն են.

1. վատ յեղանակները.
2. բերքի բացակայությունը.
3. ընտանիքի չափազանց թույլ լինելը.
4 մոր վատորակ լինելը.
5. բոռեր չլինելը։

Առաջին հանգամանքը մեզնից կախում չունի և վոչինչ չենք կարող անել, իսկ մյուսները կախում ունեն մեղվապահի խնամքից։

Բերքի բացակայության ժամանակ պետք ե անընդհատ ամեն օր կերակրել ջրալի շաքարաջրով, մանր բաժիններով (100 գրամ)։

Ընտանիքը թույլ լինելիս պետք ե մեղու ավելացնել։

Մայրը վատորակ լինելիս պետք ե փոխել։ Յեթե յեղանակները լավ են և 10 օրվա վրա մայրը չի բեղմնավորվում, ուրեմն նա պակասավոր ե։ Շատերը հենց տեսքից ճանաչում են, բայց ի հարկե տեսքը կարող ե խաբել։

Յեթե յեղանակները վատ են և միևնույն ժամանակ տես-

քից ել վոչ մի կասկածելի բան չկա, պետք ե դեռ սպասել ու մորը ձեռք չտալ։ Բայց 15 օր վոր անցավ, պետք ե փոխել։ Բոռերի մասին ել պետք ե նախօրոք հոգալ։

Կանոնավոր խնամքի դեպքում յեղած մայրապտուկներից, վերջին հաշվով, կգոյանան բեղմնավորված մայրեր 70 տոկոսի չափով։

Յեթե մեղվապահն այդ նորման լրացնի, ուրեմն նա լավ ե տանում գործը, չլրացնելու դեպքում ինքն ուշադրություն պիտի դարձնի և վերացնի թերությունները։ Ավելին տալու դեպքում, այդպիսի մեղվապահը հատուկ ուշադրության և խրախուսանքի յե արժանի։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԿԹՈՑՆԵՐԸ ՇՐՋԱՆԱԿԱՎՈՐ ՓԵԹԱԿՆԵՐԻ ՄԵՋ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Տնտեսական կողմը

Կթոցներով մեղու պահելն առանձին օգուտ չի տալիս, վորովհետև կթոցի հետ նույնպիսի ռացիոնալ խնամք չի կարելի տանել, ինչպես շրջանակավոր փեթակի հետ։

Կթոցի մեջ յեղած ընտանիքը լիարժեք ընտանիք է և յեթե այդ ընտանիքը տեղափոխենք շրջանակավոր փեթակի մեջ, նա անհամեմատ ավելի լավ արդյունք կտա. վորովհետև ինչքան ուզենք, կարող ենք ուժեղացնել. ձագատենդի դեմ կռվել, հիվանդությունների դեմն առնել և այնպիսի խնամք տանել, ինչպես մատնանշվում է այս գրքում։

Փոխադրման ժամանակը

Կթոցն արկղի մեջ կարելի յե փոխադրել գարնանը՝ գլխավոր մեղրաբերքից առաջ և աշնանը՝ մեղրաբերքից հետո։

Տնտեսապես ավելի օգտակար է փոխադրել գարնանը, վորովհետև այդ ժամանակ կարելի յե օգտագործել նաև չեչերը, իսկ աշնանը չեչերը չեն օգտագործվում և մեղրով միասին են գործածվում։ Բացի այդ աշնանն իբրև պաշար 4—5 շրջանակ մեղըր պիտի տանք փոխադրված ընտանիքին։

Գարնան յերկրորդ կեսին դաշտավայրերում ապրիլի վերջերից, իսկ լեռնային վայրերում մայիսի 10—15-ից պայմանները նպաստավոր են տեղափոխման համար։ Այդ այն ժամանակն է, յերբ.

1. չեչերի մեջ արդեն մեղր գրեթե չի լինում ու շատ թեթև են լինում, հեշտությամբ կարելի յե կտրել, հանել ու հարմարցնել շրջանակների մեջ.

2. վորդ ու ձուն, մանավանդ կնքած վորդը, բավական շատ են լինում և ջահել մեղուներն որեցոր ավելանում են.

3. վորոշ ոժանդակ բերք կա, կամ նոր է սկսվել և մեղուները հեշտությամբ կամրացնեն կարկատած ու իրար հարմարեցրած չեչերը.

4. ոժանդակ բերքի պայմաններում գողություն չի լինում ու վտանգ չի սպառնա փոխադրված ընտանիքին։

Այս ժամանակը տևում է 10—15 որ։ Դրանից թե շուտ և թե ուշ այդ գործը կատարելը վնաս է։ Շուտ լինելիս այդ նպաստավոր պայմանները չեն լինում, իսկ ուշ լինելու դեպքում նոր բերած և ջրի մեղրն այնքան շատ կլինի չեչերի մեջ, վոր վոչ մի հնարավորություն չի լինի վերցնել, դնել, հարմարեցնել շրջանակների մեջ ու կարկատել։ Այդ դեպքում ստիպված ենք լինում չեչերի ամբողջ մեղրոտ մասը կտրել—հանել և թողնել միայն դատարկ ու վորդով մասերը, իսկ դա ինարկե վորոշ վնաս կհասցնի գործին։

Յեթե վորևէ պատճառով գարնանը հնարավոր չի յեղել փոխել, ապա աշնանը հեշտությամբ կարելի յե այդ անել, այն ժամանակ, յերբ արդեն վորդ ու ձու չկա։

Ինչ գործիքներ յեվ պարագաներ են պետք

Կթոցի փոխադրումը պիտի կատարել շենքի մեջ։ Յեթե ոժանդակ բերք էլ կա, համենայն դեպս այդպիսի մի աշխատանք կգրգռի մեղուներին և, ինչպես էլ լինի, գողություն կառաջանա։ Բացի այդ, դրսում կարող է ցուրտ էլ լինել ու վորդը կտուժի դրանից։

Շենքի մեջ պիտի ունենալ վառարան և օդի ջերմությունը հասցնել 20 աստիճանի և ավելի։

Փոխադրման համար պիտի ունենալ.

1. սեղան, 2. լայն տախտակ (միջնատախտակից քիչ մեծ), 3. փափուկ մեծ շոր, 4. յերկու նոր ծածկոց 5. յերկար կոթով դանակ, 6. այգեպանի մկրատ, 7. ձեռքի սղոց, 8. ձեռքի սուր դանակ, 9. թասով կամ ափսեյով ջուր. 10. բամբակի փափուկ թել (գյուղական գուլպայի թելի հաստության), 11. մի քանի հատ չլարած շրջանակներ և 12. մի հատ փոքրիկ, փափուկ ավել։

Նախապատրաստումը

Յեթե մեղվապահը նախապես մտադիր է կթոցները փոխել արկղների, ուրեմն հենց ձմեռանոցից դուրս դնելու ժամանակ

չպիտի շարի իրար վրա, այլ առանձին-առանձին շարքով պառկեցնի գետնին նույն կարգով, ինչպես և արկղները։

Իսկ յեթե ձմեռանոցից հանելիս արդեն շարվել են իրար վրա, ամենից լավն այն կլինի, վոր վերցնի փոխադրի մի յերկու կիլոմետրի վրա (հարևան գյուղ), պահի այնտեղ մի քանի օր, հետո վերադարձնի ու այս անգամ առանձին-առանձին դնի։ Յեթե այդ էլ անելու վոչ մի հնարավորություն չկա, ուրեմն պիտի կթոցները կամաց-կամաց քանդել և իրարից հեռացնել։ Բայց դա պիտի շատ համբերությամբ անել, վոր թռչող մեղուն աստիճանաբար սովորի նոր տեղերին։

Բացի այդ, ամեն մի կթոցի տակը պիտի մի հատակ դրվի և վրան էլ մի կտուր, վորպեսզի մեղուն վորոշ չափով վարժվի սովորի արկղի տեսքին։

Փոխադրումը

Փոխադրումը չպետք է կատարել ամպամած օրերին, վորովհետև մեղուն դաշտ չի թռչում, վոր շատ կխանգարի գործին։ Բացի այդ մեղուն չար է լինում ու դժվար է լինում նրա հետ գործ ունենալ։ Յերբ արդեն օրը տաքացել է (ժամը 10 ից) և մեղվի մեծ մասը դաշտումն է, պետք է սկսել գործը։ Ծխարարը վառում ենք և ուժեղ ծուխ առաջացնում։

Կթոցի յետևի կափարիչը հանում ենք ու յերկու ծածկոցից մեկը գցում ենք բաց վորդի վրա ու կողքերից թելով կապում։

Կթոցը տեղից շարժում ենք ու հատակի վրա դնում արկղի բունը, մեջը դնում ենք շրջանակով չեչ, ծածկում ենք ծածկոցով ու բարձը դնում նրա վրա։

Արկանոցից ուժեղ ծուխ ենք տալիս ներս և ապա փեթակը գրկում տանում ենք ներս ու դնում սեղանի վրա՝ արկանոցը դեպի մեզ։

Յերբ վերևում թված բոլոր պարագաները սենյակում արդեն պատրաստ են, այսինքն տախտակը դրել ենք սեղանի վրա՝ կթոցի կողքին, փափուկ շորը չորս տակ արած գցել տախտակի վրա, թելերը չափով կտրատել, չորս հատ շարել այդ շորի վրա և պառկեցրել մի շրջանակ ներքևի ձողիկը դեպի մեզ, շրջանակը կազմելուց հետո, մենք այդ թելերի ծայրերն իրար վրա յենք բերում ու ձողիկի վերևի մասում կապում ենք իրար։ Դրանից հետո արկանոցից ուժեղ և յերկար ծուխ ենք տալիս։ Քանդում հանում ենք առջևի կափարիչը, իսկ յեթե դժվարությամբ է դուրս

գալիս, մկրատով պիտի կտրատել բերնի շուրջը գործված չիվերը, ազատել կափարիչն ու հանել, և յերբ յերևում է առջևի չեչը, նորից ուժեղ և յերկար ծուխ ենք տալիս, մինչև չեչն ազատվում է մեղուներից։

Դանակով կտրում, հանում ենք առաջին չեչը։ Յեթե հենց այդ առաջին չեչի մեջ վորդ կա, ուրեմն դնում ենք շրջանակի մեջ, թելերի վրա կպցնելով ներքևի ձողիկին։ Իսկ յեթե վորդ չկա, դատարկ չեչը մի ժամանակ դնում ենք մի կողմը։

Կթոցը փոխադրելիս անպատճառ պիտի հետևել, թե արդյոք վորդը հիվանդ չի՞, յեթե հիվանդ է, ավելի լավ է չօգտագործել չեչերը, կամ սարքած շրջանակները վորդով դնել մի ուրիշ հիվանդ փեթակի մեջ, վոր վորդերը դուրս գան։ Մեղուն թափ կտանք արդեն պատրաստի շրջանակների վրա և մի շրջանակ էլ վորդ կտանք յեղած արկղներից։ Յեթե արկղներ չկան, ծայրահեղ դեպքում, կարելի յե վորդը չդնել։

Կտրած չեչերի վրա մեղուներ քիչ են լինում, յեղածն էլ փոքրիկ ավելով թափ ենք տալիս լուսամուտի առաջ փռած թերթի վրա, վոր մեղուները հավաքվեն լուսամուտի վրա։ Յեթե յերդիկ է, ապա մեղուներն անմիջապես թռչում, դուրս են գալիս շենքից։ Այս դեպքում նորից ծուխ ենք տալիս ու կտրում, հանում յերկրորդ վորդով չեչն ու դնում առաջինի կողքին՝ շրջանակի մեջ։ Յեթե յերկուսն իրար կողքի չեն տեղավորվում շրջանակի մեջ, ձեռքի դանակով կողքերից պիտի կտրել ինչքան պետք է ու հարմարեցնել։

Առհասարակ չեչերը կտրատելիս ու իրար հարմարեցնելիս պետք է շատ սառնասիրտ ու զգույշ լինել, ճիշտ կտրատել, վոր չեչերը կիպ առնեն իրար ու ավելորդ տեղ չեչը և վորդը չփչանան։ Այդ յերկու վորդով չեչի տակի կլոր մասերից էլ մի քիչ պիտի կտրել ու յերկուսն էլ իրենց ներքևի յեզրերով հենել շրջանակի ներքևի ձողիկին։

Յերբ այդ ձևով հարմարեցրինք այդ յերկու վորդով չեչը, դատարկ չեչերից կտրտում ենք համապատասխան կտորներ ու լրացնում սկզբում վերևի դատարկ մասը, հետո լրացնում մնացած պակաս տեղերն այնպես, վոր ինչքան կարելի յե քիչ անցքեր մնան և կարկատանները կիպ կպչեն իրար։

Այդ ձևով սարքելուց հետո, թելերը պինդ ձգում ենք (իրարից հավասար հեռավորության վրա), ծայրերը կապում իրար

կենդանի հանգույցով, թելի ավելորդ ծայրերը կտրում, որից հետո շրջանակն արդեն պատրաստ է:

Տախտակն իր վրա պառկած շրջանակի հետ միասին բարձրացնում ենք սեղանի վրա այնպես, որ երբ շրջանակն ուղղահայաց դիրք է ընդունել, տախտակն իր վրայի շարով միասին կարողանանք շրջանակից անջատել:

Այդ շրջանակը տանում և դնում ենք դրսի փեթակի մեջ, որտեղ դաշտից եկած մեղուներն արդեն հավաքվել են:

Անընդհատ ծուխ տալով, չիչերը մեկը մյուսի ետևից կտրելով ու նոր շրջանակներ կազմելով, մեղվի ամբողջ բույնը փոխադրում ենք: Գոյանում է 2–4 շրջանակ:

Աշխատանքի ժամանակ մեղրոտված դանակներն ու ձեռքերը պետք է անընդհատ լվանալ ամանի ջրում, որ հեշտ լինի գործ անել:

Չիչերը շրջանակների մեջ համապատասխանեցնելիս, պետք է դնել իրենց բնական դիրքով, այսինքն շուռ չտալ, որովհետև բջիջներն իրենց բնական դիրքում արդեն մի քիչ թեքված են դեպի վերև:

Երբ արդեն բնի հետ գործը վերջացրել ենք, պետք է կթոցը տանենք ու թափ տանք նոր փեթակի մեջ:

Ծուխ տալու և չիչերը կտրել—հանելու հետևանքով ամբողջ փեթակի մեղուն քաշվում է փեթակի ետևի մասն ու կպած ծածկոցի մոտ կծիկ է կապում ու կախվում: Մայրն էլ այդտեղ կծիկի մեջ է լինում:

Կթոցն զգուշությամբ նույն դիրքով (հորիզոնական) տանում ենք դուրս, մոտեցնում նոր փեթակին, ետևի ծածկոցը հանում ենք, փեթակի բերանը բացում ու շորը պատրաստ պահում:

Մեղվապահը կթոցը տնկում է ուղիղ ձևով փեթակի բաց բերնի վրա և ուժեղ ցնցում է կթոցն այնպես, որ մի անգամից մեղվի ամբողջ կծիկը քանդվի ու թափվի փեթակի մեջ:

Մի երկու անգամ լավ ցնցելուց հետո, կթոցը մի անգամ էլ պինդ խփում ենք գետնին:

Մինչ այդ մեղվապահի օգնականը ծածկոցն արդեն դցել է փեթակի բերնին ու ծածկել:

Դա ամենապարզ միջոցն է կթոցն արկղի մեջ փոխադրելու: Բոլոր մյուս օժանդակ միջոցները՝ փեթակը գլխի վրա տնկելը, թխթխկացնելը և այլն առանձին կարևորություն չունին:

Փոխադրված փեթակի խնամքը

Փոխադրության նույն օրը, մինչև երեկո, նոր կազմված շրջանակները դասավորում ենք փեթակի կենտրոնում, ստուգում ենք մորը, կողքերից դնում ենք մեկական չիչ (ցանկալի է մեղրով), միջնատախտակներ, ապա տաքացման տոպրակները, վրայից բարձ ենք դնում ու փեթակը ծածկում:

Մյուս օրն ստուգում ենք մոր ձվարկությունը և ընդհանուր դրությունը:

Եթե բերքը շատ թույլ է, օրական քիչ-քիչ կերակրում ենք, որպեսզի մեղուն չիչերի կտորներն ու կարկատանները լավ կպցնի իրար, ամբողջացնի ու ամրացնի չիչը: Եթե չիչերը ծռմռվել են ու խախտվել, շրջանակը հանում ենք, ուղղումներ կատարում ու նորից դնում:

Երբ արդեն տեսնում ենք, որ չիչերն ամրացել են ու վտանգ չկա թափվելու կամ խախտվելու, թելերի կապն արձակում ենք ու քաշում հանում, որովհետև երկար մնալուց մեղուները ջղայնանում են, կրծոտում են թելերը և ժամանակ են կորցնում թելերի վրա:

Փոխադրված ընտանիքը նոր պայմաններում ուժեղ կերպով զարգանում ու առաջ է գնում, եթե մայրը լավն է, որոշ բերք կա և խնամքը կարգին է:

Ժամանակի ընթացքում հին, կարկատած չիչերը կամաց-կամաց հեռացվում են բնի կենտրոնից դեպի կողքերը, ու ամբողջ բույնը կազմված է լինում նոր կառուցված կանոնավոր չիչերից:

Կթոցի փոխադրումն աշնան ժամանակ

Աշնանը կթոցի փոխադրումն արկղի մեջ կատարվում է այլ ձևով: այս դեպքում արկղի մեջ դնում ենք մի քանի մեղրով շրջանակ, ծուխ ենք տալիս ու կտրում կթոցի միջի հացերը, որոնք չեն օգտագործվում նոր փեթակի մեջ դնելու համար: Երբ բոլոր հացերը հանված են, կթոցի ետևում հավաքված մեղուն թափ ենք տալիս մեղրով շրջանակի վրա՝ արկղի մեջ: Մյուս օրն ստուգում ենք մոր ներկայությունը, թե բույնն ինչպես պետք է լրացնել նոր շրջանակներով, կամ ավելը վերցնում, դնում ենք տաքացուցիչներն ու հարմարեցնում ձմեռելու համար:

Աշնան փոխադրումը կատարելիս պետք է զգույշ լինել գո-

ղությունից, իսկ դրա համար անհրաժեշտ է, վորպեսզի փոխադրումը կատարվի լավ պաշտպանված շենքի մեջ, վորի դռան առաջ ծուխ ենք դնում. դա կատարում ենք անպատճառ յերեկոյան դեմ, յերբ շուտով գիշերը պետք է վրա հասնի ու գողությունը դադարի։ Պետք զգույշ լինել, վոր հաջորդ որը նոր փեթակի վրա հարձակում չլինի։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՄԵՂՎԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

Գարնանը և ամառը մեղվի ընտանիքն ուժեղանալով, մինչև գլխավոր մեղրաբերքի սկսվելը, հաճախ ձգտում է ունենում նոր ընտանիք կազմելու, ձագ տալու։

Այդ դեպքում ընտանիքը մայրաթասակներ է շինում չեչերի ներքևի մասում և կողքերին։ Մայրը ձվում է մայրաթասակների մեջ, ու մեղուները նրանց մեջ մայրեր են խնամում։

Այս բանը մեղուներն անում են նաև այն ժամանակ, յերբ կարիք են զգում հին, ծերացած մորը փոխելու։

Այս դեպքում էլ մայրերը դուրս գալու ժամանակ հաճախ մեղուն ձագ է տալիս, յեթե դրա համար մեղրաբերքը և յեղանակները նպաստավոր են։

Դա, ի հարկե, պատահական ձագատվություն է, վորը ծերացած մորը փոխելու անհրաժեշտության հետևանք է։

Դրան հակառակ, լավ մայր ունեցող ընտանիքներն էլ հաճախ տրամադրվում են ձագ տալու, այն է բռնվում են ձագատենդով։

Պատվաստված մայրապտուկներից մայրերը դուրս գալուց դեռ 5—6 որ առաջ, այսինքն առաջին մայրապտուկները կնքելուց 2—3 որ հետո, որվա տաք ժամերին (սովորաբար 10—1-ը) հին մայրը դուրս է թռչում փեթակից և նրա հետ միասին՝ նաև մեղվի մի մասը։ Դա ձագն է, վոր պտտվելով ոդի մեջ նստում է ծառի, թփի, քարի, խոտի և ուրիշ առարկաների վրա։ Բնական ձագատվությունը, ինչպես բոլորն արդեն համոզվել են, անտեսապես բոլորովին նպատակահարմար չի հետևյալ պատճառներով.

1. ձագատենդով մեղուն բռնվում է այն ժամանակ, յերբ արդեն բավական ուժեղ է և կարող է խոշոր արտադրական աշխատանք կատարել.

2. այն որվանից, յերբ մայրը ձվում է թասակների մեջ, ընտանիքի մեջ աշխատանքը գրեթե կանգ է առնում, մեղուն հա-

գում է միայն վորդ ու ձվի տարրյա կարիքները, այսինքն վոչ նոր մոմաձերթ է գործում, վոչ էլ ծավալվում է.

3. շատ հաճախ առաջին ձագը դուրս գալուց հետո էլ մեղուն շարունակում է մնալ նույն վիճակում ու նոր ձագեր է տալիս.

4. այդ դրությունն սկսվում է գլխավոր բերքի սկզբին ու հաճախ տևում է 20—30 օր: Այդպիսով մեղրաբերքի ամենաուժեղ ժամանակ ընտանիքն զբաղված է ձագատենդով, գործ չի անում ու մեղրաբերքը զուր կորչում է: Մեղուն միայն այն դեպքում կարող է գլխավոր բերքից առաջ ձագ տալ, յեթե ամառը բավական յերկար է և ուժեղ ոժանդակ մեղրաբերք կա: Այս դեպքում մինչև գլխավոր բերքն սկսվելը ընտանիքը ձագը տալիս է ու յերբեմն թե ինքն ու թե ձագը բավական ուժեղանում են ու բերք տալիս: Բայց դա հաճախ չի լինում:

Այդ դրությունը վնասակար հետևանքներ է ունենում նրա համար, վոր.

1. հաճախ ընտանիքն այնքան ձագեր է բաց թողնում, վոր թե ինքը շատ է թուլանում և թե վերջին ձագերը շատ թույլ են լինում ու իրենց ապահովել չեն կարողանում.

2. հաճախ ձագ տվող ընտանիքում և յերկրորդ ձագերում մայրերին չի հաջողվում բեղմնավորվել ու մեղվապահն յերկար պիտի գլուխ ցավացնի ու ժամանակ կորցնի, վոր նրանց մայրերով ապահովի.

3. դուրս յեկած ձագերը հաճախ հազիվ են իրենց ապահովում պաշարով և բերք չեն տալիս: Միայն առաջին ձագը յերբեմն ավելի մեղր է տալիս, այն էլ յերբ մեղրաբերքը յերկար է տևում ու առատ է.

4. ընտանիքն զբաղված լինելով ձագատենդով՝ ինքն էլ բերք չի տալիս: Այն փեթակը, վոր ձագ չտալու դեպքում կարող է մինչև 30—35 կգ մեղր տալ, հաճախ վոչ մի կգ մեղր չի տալիս:

Այդպիսով, ճիշտ է, ընտանիքների թիվը բավական շատանում է, բայց մեղրի յեկամուտը քիչ է լինում ու մեղվանոցն արդյունք չի տալիս:

Ձագատվության պատճառները յեվ նրանց վերացումը

Ամեն տարի բոլոր ընտանիքները նույնանման չեն լինում և միևնույն չափով ձագ չեն տալիս:

Կան վորոշ բնական և արհեստական պատճառներ, վորոնք դրդում են մեղվին ձագ տալ: Դրանք հետևյալներն են.

1. յերկարատև ու բավական թույլ բերքը: Անձրևային ու տաք տարիները, յերբ սար տեղերում բերքն էլ այնքան ուժգին չի լինում, ձագատենդն ուժեղ է լինում: Չորային տարիները, յերբ մեղուն զարգանալու այնքան ժամանակ չունի, գլխավոր բերքը շուտ է վրա հասնում ու այնքան յերկարատև չի լինում:

Դաշտերում ընդհանրապես մեղուն քիչ ձագ է տալիս, վորովհետև գարնանն ընտանիքը հազիվ է ուժեղանում, գլխավոր մեղրաբերքը շուտ վրա յե հասնում ու մեղուն զբաղվում է մեղր կուտակելով:

Միայն հազվագյուտ տարիներ են լինում, յերբ այդ տեղերում շատ անձրևներ են գալիս, բերքը յերկար է տևում ու մեղուն ժամանակ է ունենում ձագ տալու:

Իսկ լեռնային և նախալեռնային տեղերում հաճախ ձագատենդն ուժեղ է լինում ու մեղուները 70—100%-ով ձագ են տալիս.

2. մեղվի ընտանիքը շուտ է բռնվում ձագատենդով, յերբ մայրը բավական հասակավոր է, նույն տարվա մայր ունեցող ընտանիքներն ամենից ավելի դժվար են ձագ տալիս, հետևաբար, պետք է աշխատել միշտ ունենալ ջահել մայրեր 1—2 տարեկանից վոչ ավելի.

3. յերբ մեղվի բունը նեղ է լինում ու շոգ, ոդափոխությունն էլ լավ չի կազմակերպված, ուրեմն պետք է մեղվին բավական տեղ տալ և լայնացնել բունը:

Հենց այդ տեսակետից, յեթե անհրաժեշտ է ձագեր ունենալ, ամենից ավելի ողտակարն այն է, վոր դեռ մեղրաբերքից առաջ ինքներս ձագեր վերցնենք ու ընտանիքը կիսենք:

Փոքր ընտանիքը սովորաբար ուժեղ հակում է ցույց տալիս զարգանալու և խոշոր ուժի հասնելու: Քիչ դեպքերում է լինում, յերբ դեռ ընտանիքը խոշոր ուժի չհասած բռնվում է ձագատենդով ու ապա ձագ տալիս.

4. յերբ բավականաչափ տեղ չի լինում մեղր լցնելու և մորը ձվելու: Ուրեմն ինչքան հնարավոր է պիտի նոր շրջանակներ տալ կամ չեչեր, իսկ բնի շրջանակները դասավորել ու բնի ներսում չեչ տալ մորը ձվելու.

5. կան ընտանիքներ, վորոնց մեջ ընդհանրապես ձագատենդի հակումը թույլ է ու յերբեմն մի քանի տարի ձագ չեն տալիս: Այդպիսով ձագ տալը կախված է վորոշ չափով նաև ընտանիքի բնական հակումներից:

Ուրեմն պիտի տարեցտարի նշել այդպիսի աչքի ընկնող ընտանիքներն ու աշխատել նրանցից մայրերի սերունդ վերցնել և փոխել ամբողջ մեղվանոցի մայրերը նրանցով, յեթե այդ ընտանիքն աչքի յե ընկնում նաև ուրիշ, տնտեսապես օգտակար հատկանիշներով.

6. յերբ ընտանիքը ձագատենդով բռնվում և մայրապտուկներ է շինում, դա նշանակում է, որ աշխատանքի գրգիռը նվազում և բոլորովին կորչում է, իսկ առաջ է գալիս բազմացման գրգիռը։

Այդպիսով, ձագատենդով բռնված ընտանիքն սովորաբար մատնված է անգործության, կառուցողական աշխատանքը բոլորովին կանգ է առնում, և հազվագյուտ դեպքերում միայն շատ թույլ կերպով տարվում, այն էլ շուտով դադարում է, իսկ զգալի չափով նվազում է նաև մեղրի կուտակման գործը։

Յեթե բարեխղճորեն և իր ժամանակին ձեռք առնվեն վերը նշված միջոցները, սովորաբար ձագատվությունը բավական նվազում է։

Բայց հաճախ որոշ ընտանիքների նկատմամբ այդ միջոցներն էլ չեն օգնում և նրանք բռնվում են ձագատենդով։

Ընտանիքը ձագատենդից ազատելու և նորից աշխատանքի զբաղելու միակ ձևն առայժմ թափ տալն է։

Ձագատենդով բռնված ընտանիքը թափ ենք տալիս իր արկղի մեջ ու բոլոր շրջանակները հանում միջից։ Մեղուն կծիկ է կապում և ձագի նման կախվում է ծածկոցից։ Կամուրջի պես մի քանի ձողիկ ենք դնում, որ ծածկոցը մեղվի ծանրությունից չընկնի ներքև։

Ամսի 20-ի թափ տված ընտանիքը մնում է այդ դրության մեջ մինչև ամսի 22-ը։ 22-ի առավոտյան, յերբ փեթակի յերեսը բաց ենք անում, տեսնում ենք, որ մեղուն արդեն սկսել է «դալար» քաշել, հաց գործել։ Անմիջապես ծուխ ենք տալիս, դալարները պոկում ու ամբողջ բույնը լցնում ենք մոմաթերթած շրջանակներով։

Մենք աշխատում ենք բնում դատարկ տեղ չթողնել, որովհետև հաճախ թափ տված մեղուն մոմաթերթի մի մասը թողնում է պարապ ու կախվելով դատարկ տեղում, սկսում է այդտեղ դալար քաշել։

Իսկ յերբ մեղվի կծիկն ամբողջովին դասավորվում է տրված մոմաթերթի վրա, ապա շրջանակների քիչ լինելու դեպքում, մեղվի ծանրությունից ու շոգից մոմաթերթը ձգվում է և փչանում, իսկ հաճախ փուլ գալիս։

Շրջանակները շատ լինելիս, մինչ իր աշխատանքն սկսելը՝ մեղուն ցրիվ է գալիս նրանց վրա։

Միայն հաջորդ օրն ենք մենք ստուգում մեղվի բույնը և յերբ տեսնում ենք, որ կան ավելորդ շրջանակներ, հանում ենք, թողնելով բնում այնքան շրջանակ, ինչքան մոտավորապես կարող է մեղուն յուրացնել և կառուցել։

Կառուցման ընթացքում պետք է հետևել ու յերբեմն որոշ դասավորում կատարել այդ շրջանակների մեջ, աշխատելով լավ չկառուցվող շրջանակները դնել լավ կառուցվողների արանքը և այդպիսով հարկադրել մեղվին հավասարապես կառուցել իր տրամադրության տակ յեղած շրջանակները։

Հաց գործելը նշանակում է, որ մեղուն արդեն մոռացել է իր ձագատենդը և անցել է աշխատանքի, այսինքն աշխատանքի բնազդն արթնացել է նրա մեջ ու մյուս բնազդը կորել է։

Յեվ իսկապես մի քանի օրից հետո, մենք տեսնում ենք, որ ընտանիքն արդեն կառուցել է մոմաթերթը, մայրը ձվել է չեչերի մեջ, մեղուներն էլ մեղր են լցրել։

Յեթե վաղորոք, 2-րդ կետի համաձայն, մայրն էլ փոխված է ու ջահել է, այսինքն ընտանիքը մայրափոխության կարիք չի զգում, ուրեմն այդ թափ տված ընտանիքը վերջնականապես բուժվում է ձագատենդից ու մեզ բավական արդյունք է տալիս։

Այդպիսի ընտանիքը միայն այն դեպքում կարող է նորից ձագատենդով բռնվել, յեթե թափ տալուց հետո յերկարատև ու թույլ բերք կա։ Այդ դեպքում նա բույնը կշինի, իրեն ամբողջովին կապահովի ու նոր ձագ տալու տրամադրություն կունենա։ Այդպիսի ընտանիքը պետք է նորից թափ տալ։

Ընտանիքից վերցրած շրջանակները (որդով ու մեղրով), տալիս ենք ուրիշ թույլ փեթակներին՝ նրանց ուժը լրացնելու համար։ Յեթե կիսատ բներ չկան, այդ շրջանակները հավաքում ենք կորպուսի մեջ ու դնում մի փեթակի վրա, այդ փեթակը յերկու հարկանի (24 շրջանակ) դարձնելով։

Այդ ուժեղացած ընտանիքները հաճախ նույնպես ձագատենդով են բռնվում ու աշխատանքը կանգ է առնում։ Բայց մինչև այդ թափ տված ընտանիքն արդեն իր բույնը կառուցել է և ապահովել իրեն որդով ու մեղրով։ Այդպիսի ընտանիքը միայն աշխատավոր մեղվի պակաս է զգում, որովհետև ամբողջ որդը ձեռքից առել ենք ու 7—10 օր է, որ աշխատավոր մեղուն դաշտում սպառվում է։

Երբ ուժեղացած յերկհարկանի փեթակները հագատենդով բռնվում են, նույն ձևով թափ ենք տալիս և բոլոր շրջանակները տեղավորում ուրիշ փեթակների վրա, միայն յերկու հատ հասունացած վորդով շրջանակ տալիս ենք առաջվա թափ տվածին, վոր աշխատավոր մեղվի պակասը լրացվի։ Այդպիսով այդ ընտանիքի բունը լրանում է ու ամբողջանում, վորից հետո կարելի յե դրա վրա կորպուս դնել ու լցնել ուրիշ թափ տված ընտանիքներից վերցրած շրջանակները։

Կան մի քանի հանգամանքներ, վորոնք թափ տալու ժամանակ պիտի հաշվի առնել։ Դրանք հետևյալներն են.

1. թափ տալ որվա տաք ժամերին, յերբ մեղվի զանգվածը քիչ է փեթակի մեջ (թռել են աշխատանքի) և իրենք մեղուներն էլ քիչ են չարանում.

2. իմանալ մայրը վոր շրջանակի վրա յե և այդ շրջանակը վերջում թափ տալ, վորովհետև վերջին շրջանակի վրա շատ մեղուներ են հավաքված լինում և մայրը սովորաբար չի վնասվում նրանց հետ միասին թափ տալուց։ Բացի այդ, յեթե այդպես չանենք կարող է պատահել, վոր մայրն ամեն անգամ անցնի շրջանակների վրա ու մի քանի անգամ թափահարվի.

3. սովորաբար հագատենդով բռնված ընտանիքը թափ տալուց հետո յերկու որ անցած՝ նոր գալաղ է քաշում, բայց իհարկե կարող են յերբեմն լինել շեղումներ, այսինքն ավելի շուտ կամ ավելի ուշ սկսի իր աշխատանքը, վորն իհարկե մեղվապահը պիտի հաշվի առնի.

4. յերբեմն մոմաթերթը փուլ է գալիս ու թափվում հատակին, ծռմռվում ու փչանում է, դրա համար էլ մեղվապահը պիտի հետևի և այդպիսի շրջանակները նորերով փոխարինի.

5. անհրաժեշտ է այդ ընտանիքին թափ տալուց 7—10 որ հետո ուրիշ փեթակից տալ յերկու, յերբեմն և ավելի հասունացած վորդով շրջանակներ՝ աշխատավոր մեղվի պակասը լրացնելու համար.

6. յերբեմն, յերբ թափ տալն ուշացրել ենք, մեզնից աննկատելի կերպով նոր մայր է դուրս յեկած լինում և թափ տալուց հետո ընտանիքը հագ է տալիս, ուստի պիտի շատ ուշադիր լինել, վոր թափ տալը չուշացվի և հետևել, վոր ավելորդ մայր չլինի ներսում.

7. թափ տված շրջանակների վրայից կտրում ենք բոլոր մայրապատուկները ու հետո ուրիշ փեթակների տալիս.

8. մինչև թափ տված ընտանիքը գալաղ չքաշի, վոչ մի դեպքում չտալ մոմաթերթ կամ չեչ և թափ տված ընտանիքից վոչ մի պատրաստի չեչ չթողնել ներսում։

Մայրապտուկներ կտրելը

Յերբեմն հագի առաջն առնելու համար կտրում են բոլոր մայրապատուկները, կամ յեթե հին մայրն արդեն չկա, թողնում են մեկ, յերկու հատ, վոր մայր դուրս գա։

Բայց այդ միջոցը չի ոգնում՝ մեղուները նորից մայրապատուկներ են կառուցում և յեթե նորից կտրես, նորից կկառուցեն ու այդպիսով գործը շատ կուշանա, բերքը կանգնի ու դրանից ավելի շատ վնաս կգա։

Յերբեմն միայն այդ ձևով ընտանիքն ազատվում է հագատենդից։

Յերբեմն պատահում է նաև, վոր առանց մեղվապահի միջամտության մեղուներն իրենք են փչացնում մայրապատուկները և հագ չեն տալիս։ Այդպիսի դեպքեր սովորաբար լինում են այն ժամանակ, յերբ հանկարծ վրա յե հասնում ուժգին բերքը, վորոշ ընտանիքներ բռնվում են աշխատանքի բնազդով և վերջ տալիս հագատենդին։

Իսկ առաջին հագը տալուց հետո ավելի շատ են պատահում այնպիսի ընտանիքներ, վորոնք թե առանց մեղվապահի ոգնության և թե մայրապատուկները կտրելուց հետո, հրաժարվում են հագատենդից։

Բայց յերկարատև և միջակ բերքի պայմաններում այդպիսի ընտանիքներ քիչ են լինում ու մեծ մասամբ ընտանիքների նման դրությունը շարունակվում է։

Տեղադրման ձևը

Առաջին հագը դուրս գալուց հետո գործադրում են հետևյալ ձևը. հագը դնում են հագ տվող ընտանիքի տեղը, իսկ վերջինին տանում են մեղվանոցի մի կողմը։ Այդ ընտանիքի միջից թռած մեղուները վերադառնում են ու լցվում հագի վրա, վորով նա թուլանում է և հագատենդից հրաժարվում։ Իհարկե, միևնույն ժամանակ պետք է մայրապատուկները կտրել և թողնել մեկ կամ յերկու հատ։

Իր ժամանակին հագատենդի առաջն առնելու համար, համենայն դեպս, տնտեսապես միակ նպատակահարմար ձևը դա թափ տալն է, յեթե, իհարկե, վերև նշված կանոնները լավ կիրառվեն։

Արհեստական ձագ

Յերբ մենք նպատակ ենք դնում ավելացնել մեղվի ընտանիքների թիվը, վերցնում ենք արհեստական ձագեր։

Ձագեր վերցնել կարելի յե յերկու նպատակով.

1. ընտանիքների թիվն ինչքան հնարավոր ե ավելացնել, ստեղծել բուծման մեղվանոցներ և 2. վորոշ չափով ընտանիքների թիվն ավելացնել, հիմնականում մեղր ստանալ, իսկ այնուհետև կազմակերպել արդյունաբերական մեղվանոցներ։

Առաջին դեպքում բուծումը պետք ե այնպես կազմակերպել, վորպեսզի բոլոր հին ու նոր ընտանիքները, մինչև գլխավոր մեղրաբերքի վերջը, դառնան կանոնավոր ընտանիքներ ու իրենց լրիվին ապահովեն մեղրի պաշարով։

Յերկրորդ դեպքում ձագերը պիտի վերցնենք այն հաշվով, վոր թե հին և թե նոր ընտանիքներն ուժեղանան և գլխավոր մեղրաբերքի սկզբին լինեն առնվազն 11—12 շրջանակի վրա, վորպեսզի այդ և ավելի մեծ ուժի հասած ընտանիքները կարողանան լրիվին ոգտագործել մեղրաբերքը։

Բուծման մեղվանոցներ

Այստեղ աշխատանքը կազմակերպվում ե հետևյալ կերպ. բացի կիսաշրջանակավոր նուկլեուսներից, անհրաժեշտ ե բնի շրջանակների վրա կազմակերպել նուկլեուսներ՝ մեղվանոցի ընտանիքների կիսի չափով։

Այսինքն յեթե մեղվանոցում կա 100 փեթակ, ուրեմն 50 հատ այդ ձևի նուկլեուսներ կազմակերպել 25 փեթակի մեջ։

Յերբ մայրերն սկսում են նուկլեուսներում բեղմնավորվել, արդեն առաջին ձագերը վերցնում ենք։

Մինչև յերբ կարելի յե ձագ վերցնել

Յեթե գլխավոր մեղրաբերքն սկսվում ե, յենթադրենք, հուլիսի 15-ին, ուրեմն կիսումը պետք ե դադարեցնել հուլիսի 1-ին, այսինքն գլխավոր մեղրաբերքից 15 որ առաջ։ Այդ ժամանակ 4—5 շրջանականոց ընտանիքը հեշտությամբ կդառնա 7—8 շրջանականոց և լրիվին կապահովի իրեն պաշարով (14–16 կգ), իսկ յեթե մեղրաբերքը բավական ուժեղ յեղավ ու յերկար տևեց, ուրեմն կարելի յե նրանից բավական ավելցուկ մեղր վերցնել։

Արդյունաբերական մեղվանոցներ

Այստեղ ձագ վերցնելու գործը դնում են նույն ձևով, միայն ձագ վերցնելը դադարեցնում ենք մեղրաբերքից 30 որ առաջ, վորպեսզի ձագերը հին ընտանիքների հետ միասին այնքան ուժեղանան, վոր ոգտագործեն բերքը և բավական արդյունք տան։

Տալով այդ մոտավոր ժամկետները, պիտի ասել, վոր հաճախ ավելի ուշ էլ ենք ձագ վերցնում, յերբեմն նույնիսկ գլխավոր բերքի ժամանակ, միայն այն նկատառումով, վոր անպատճառ ապահոված լինենք գործի հաջողությունը։

Դա արդեն կախված ե իրեն՝ մեղվապահից, վորն ամեն մի առանձին դեպքում պիտի կարողանա նախորոք աչքի առաջ ունենալ բոլոր պայմանները և հետևանքները։

Ձագ վերցնելու ձևերը։ Կիսելու յեղանակը

Այս աշխատանքը կատարելիս ստուգում ենք ամբողջ մեղվանոցը և նշում այն ընտանիքները, վորոնք հասել են 8 շրջանակի ու ամենապակասը 6 շրջանակ վորդ ունեն։ Այդ ընտանիքները կիսում ենք յերկու հավասար մասի։

Յեթե փեթակները բավական հեռու յեն իրարից և տեղ կա, ուրեմն նոր փեթակները ձագերով կարելի յե դնել հին փեթակի մոտ և հենց այդտեղ էլ թողնել։ Այդ դեպքում հին փեթակը մի փոքր տեղից շարժում—քաշում ենք մի կողմ ու նրա կողքին կից դնում նոր փեթակը, վորն իր գույնով և տեսքով պետք ե նման լինի հին փեթակին։

Հին փեթակի շրջանակների և վորդի ուղիղ կեսը դնում ենք նոր փեթակի մեջ, ստուգելով թե վորի մեջն ե ընկնում մայրը։ Ապա ամեն մի մասի կողքից տալիս ենք մի չեչ ու ընտանիքներից ամեն մեկը դառնում ե 5 շրջանականոց։

Մայր չունեցողներին, մի քանի ժամից հետո, տալիս ենք մայրավանդակով բեղմնավորված մայր։ Յերբ այդ յերկու փեթակը մեկ-յերկու որ մնում են իրար կողքի, թռչող մեղուները հավասարապես բաժանվում են յերկսի վրա ու յերկուսն էլ ապահովվում են աշխատավոր մեղվով։

Հետո այդ փեթակները կամաց-կամաց իրարից հեռացնում ենք մինչև կես մետր և ավելի տարածության վրա։

Յեթե փեթակները մոտիկ են դրված, ուրեմն նոր փեթակները պիտի դնել մեղվանոցի յետևը և առանձին շարքեր կազմել

Այս դեպքում վերցրած ձագերի թռչող մեղվի մեծ մասը կվերադառնա իր հին տեղը և որդը բաց կմնա, հետևաբար և կփչանա։

Դրա համար էլ նոր փեթակի մեջ պիտի վերցնել միայն կնքած որդով շրջանակները, իսկ ամբողջ մատաղ որդն ու մայրը թողնել հին փեթակի մեջ։ Մեղվի մեծ մասը պիտի թափ տալ նոր փեթակի մեջ։ Մինչև յերեկո թռչող մեղուն կվերադառնա իր հին տեղը և նոր փեթակի մեջ կմնան միայն ջահել մեղուները։

Յեթե մատաղ որդ էլ վերցրած լինեինք, այնուամենայնիվ այդ նոր փեթակում դաշտ գնացող մեղու չլինելու պատճառով մատաղ որդը չեր խնամվի ու կփչանար։ Իսկ յերբ միայն կնքած որդ ենք վերցնում, ջահել մեղուները միանգամայն բավարար են նրա տաքությունը պահպանելու համար։ Մինչև նոր մայրը կձվի ու նոր որդ խնամելու կարիք կլինի (4—5 օր), արդեն այդ ժամանակ այդ ջահել մեղուներից շատերն սովորված կթռչեն դաշտ, կսովորեն աշխատանքին և բերք կբերեն նոր առաջացած սերունդը խնամելու համար։

Ուրեմն մի քանի օրից հետո այդ նոր վերցրած ձագի կյանքը կկարգավորվի և նա ուժեղ կերպով կսկսի զարգանալ, որովհետև ամբողջ կնքած որդը շուտով դուրս կգա ու աշխատավոր մեղուն կշատանա։ Իսկ հին փեթակում որովհետև աշխատավոր մեղուն շատ է, մատաղ որդը լավ կխնամվի։ Մինչև աշխատող մեղուների պակասելը նոր մեղուներ կառաջանան ու ընտանիքն էլ ուժեղ կերպով կզարգանա։

Փոքրիկ ձագեր վերցնելու յեղանակը (ատվոդկա)

Կարելի յե նաև բնի շրջանակներով շատ նուկլեուսներ վերցնել և մայրերը բեղմնավորվելուց հետո նույն նուկլեուսն ուրիշ փեթակներից հասունացած որդով յերբեմն մեղվով ուժեղացնել ու դարձնել կանոնավոր ձագեր։

Դրա համար այնպես պիտի անել, որ մայրը բեղմնավորվելու ժամանակ այդ նուկլեուսը բավական ուժեղ լինի, այսինքն յերբ արդեն մայրը 4—5 օրական է, սկսում ենք նուկլեուսի ուժեղացման աշխատանքը։ Մի շրջանակ հասունացած որդ ենք տալիս և յերբ մայրը բեղմնավորվում է և ապա սկսում է ձվել, նորից տալիս ենք 1—2 շրջանակ հասունացած որդ։ Այդպիսով

մենք այնքան ենք ուժեղացնում այդ ընտանիքը, որ բեղմնավորված մայրը հենց սկզբից կարողանա ծավալել իր ձվարկությունը և այդ ընտանիքի արագ զարգացումը ապահոված լինի։ Իսկ յերբ ընտանիքը թույլ է մնում, մայրն էլ շատ ձվելու հնարավորությունից զուրկ է լինում, այսինքն մենք փոքրիշատե լրիվ չափով չենք օգտագործում այդ բեղմնավորված մորը՝ նոր սերունդ արտադրելու համար։

Այդ տեսակետից հաճախ ավելի ձեռնտու յե, յերբ հենց ուժեղ ընտանիքի կողքովը, նույն փեթակի մեջ առանձնացնում ենք յերկու-յերեք շրջանակ, մայրապատուկ ենք տալիս ու հետո սովորական ձևով ուժեղացնում հենց նույն փեթակից։

Դրա համար պետք է այդ փեթակի տեղը դնել միջնապատով կիսած փեթակ և մի կողմ դնել մայր ընտանիքը, իսկ մյուս կողմը դնել այդ ընտանիքից առանձնացրած ձագը (նուկլեուսը)։

Ընդհանրապես հնարավոր վարակումից զգուշանալու համար անհրաժեշտ է ուժ տալ ձագին այն փեթակից, որից վերցրել ենք այդ ձագը։

Նուկլեուսների հետ գործ ունենալիս պետք է ի նկատի ունենալ մի կարևոր հանգամանք. պատահում են դեպքեր, յերբ զանազան աննպաստ պայմանների պատճառով մայրերի որոշ տոկոսը չի բեղմնավորվում, կորչում է, կամ իրենք՝ մեղուներն են փչացնում։

Յերբ այդ դրությունը յերկար է տևում, հաճախ այդպիսի դեպքերում ընտանիքի մայր ունենալու բնազդը տարօրինակ կերպով խանգարվում է (բնազդի մոլորություն—заблуждение инстинкта—Павлов) և կրկին ու կրկին տրված մայրերը, նույնիսկ պտուկները փչացվում են մեղուների կողմից և մեր բոլոր ջանքերն իզուր են անցնում, չնայած արդեն թե բերքի և թե մյուս պայմանները միանգամայն նպաստավոր են։ Այդպիսի ընտանիքների մի մասն էլ, ինչպես գիտենք, յերբեմն բոռածու յե դառնում։

Կարելի յե ի հարկե այդպիսի ընտանիքներն ուղղել հասունացած որդ կամ ուրիշ տեղից մեղու տալով, այսինքն հիմնականում փոխելով ընտանիքի հին կազմը և այդպիսով թարմ աշխատավոր ուժ ավելացնելով։ Բայց դա շատ տևական և բարդ աշխատանք է։ Ամենից ավելի ձեռնտու յե այսպես անել—միացնել այդ ընտանիքներն ուրիշ՝ նորմալ ընտանիքների (ուժեղ կամ թույլ, միևնույն է), ուրիշ խոսքով, լուծարքի յեն-

թարկել, և նրանց տեղը վերցնել նորմալ ընտանիքներից նոր նուկլեուսներ և ապահովել նրանց յերիտասարդ մայրերով։

Այդ նուկլեուսներում կարճ ժամանակամիջոցում մայրերը կբեղմնավորվեն։

Վրա տալու յեղանակը (налет)

Փեթակից վերցնում ենք ամբողջ կնքած վորդով շրջանակներն իրենց վրա նստած մեղուներով ու մոր հետ միասին տեղափոխում ուրիշ տեղ, իսկ հին փեթակում թողնում բաց վորդով շրջանակներն ու մի քանի ժամ հետո տալիս ենք բեղմնավորված մայր։ Հեռացրած մասից թռչող մեղուն յերեկոյան վերադառնում և իր հին տեղը և ապահովում է աշխատանքը։ Դա նման է կիսելու յեղանակին։

Կարելի յե ամբողջ վորդը կամ բնի բոլոր շրջանակներն իրենց վրա նստած մեղուներով հեռացնել, իսկ տեղը դնել մոմաթերթած շրջանակներով նոր փեթակ ու վանդակով անմիջապես մայրը տեղավորել նրա մեջ։ Թռչող մեղուն վերադառնում է իր հին տեղը և սկսում է կառուցել իր նոր բույնը, իսկ հեռացրած ընտանիքում մեղուներն սկսում են հետզհետե թռչել դաշտ ու դրանով աշխատանքը կանոնավորվում է։ Սակայն հեռացրած փեթակի մեջ բաց վորդը և ձուն, թռչող մեղուների հեռանալու շնորհիվ, կարող են մնալ առանց խնամքի ու տուժել։ Դրա համար էլ այդ ձևը պետք է շատ զգուշությամբ գործածել և այդ հանգամանքը նկատի ունենալ։

Հավաքովի յեղանակ

Այս յեղանակի էությունն այն է, յերբ կարելի յե մի քանի ընտանիքից հավաքովի ձագ վերցնել. մի քանի փեթակից վերցնում ենք 1—2 շրջանակ վորդով և մեղրով ու նրանց վրա նստած մեղուներով և դնում միասին մի փեթակի մեջ։ Կազմվում է 6—7 շրջանականոց մի ընտանիք. վորին մի, քանի ժամից հետո, վանդակով տալիս ենք բեղմնավորված մայր։

Ընդհանուր կանոններ

Ինչ յեղանակով էլ ձագ վերցնելու լինենք, պետք պահենք հետևյալ կանոնները.

1. ուժեղ ձագերին անպայման ապահովել բեղմնավորված (ձվող) մայրերով և յեթե չկան այդպիսի մայրեր, նախորոք վերցնել թույլ ձագեր (նուկլեուսներ) ու նրանց միջոցով ստանալ բեղմնավորված մայրեր, վորից հետո կարելի յե այդ մայրերն օգտագործել նոր վերցրած ձագերի համար, կամ նույն նուկլեուսներն ուժեղացնել ու դարձնել կանոնավոր ձագեր։

2. ձագ վերցնելիս պետք նշել տետրում, թե վոր ընտանիքից է վերցրած և ուժեղացնելիս նոր շրջանակներ վերցնել միայն նույն ընտանիքից. դա արվում է այն նպատակով, վոր պատահաբար հիվանդություն չտարածվի.

3. յերբ ձագն իր հին տեղից հեռացնում ենք, ուրեմն պետք նրա մեջ բոլորովին չունենանք բաց վորդ և ձու, վորովհետև թռչող մեղուն կվերադառնա իր հին տեղը, թռչող մեղուներ չլինելու պատճառով այդ բաց վորդը կարող է մնալ անխնամ և փչանալ։ Հաճախ անհրաժեշտ է լինում նոր մեղու ավելացնել այդ ձագի վրա.

4. գարնան վերցրած ձագերին անհրաժեշտ է ապահովել տաքացումով և հարկ յեղած դեպքում՝ կերով։

5. ձագերը համարակալվում են սովորական կարգով։ Ամեն մի նոր ընտանիք ստանում է իր ընդհանուր կարգի համարը և այդ համարի տակ կատարվում են գրանցումները, այսինքն՝ փեթակի համարը, վոր ընտանիքից է վերցրած և ապա մյուս տեղեկությունները։

Աշնան նուկլեուսներ

Բոչվոր մեղվապահության պայմաններում, յերբ լեռնային շրջանների առատ բերքն օգտագործված է, մեղվանոցները նորից տեղափոխում են բամբակացան շրջանները։ Բամբակի բերքի շնորհիվ՝ այդ ժամանակ հնարավոր է օգոստոսի սկզբից մինչև հոկտեմբերի սկիզբը՝ բնի շրջանակներով նուկլեուսներ վերցնել, հետևաբար և կարելի յե նաև աշնանը բեղմնավորված մայրեր ունենալ ու պահել մինչև գարունը։ Գարնանն այդ նուկլեուսներր հեշտությամբ կարելի յե ուժեղացնել ու դարձնել վաղ գարնան ձագեր։

Յեթե մենք լեռնային շրջաններից տեղափոխելիս չկլատենք մեղվի ընտանիքի ուժը և ուժեղ դրությամբ բերենք բամբակացան շրջանը, օգոստոսի սկզբներին արդեն կարող ենք ամեն մեկ ընտանիքից առանձնացնել մեկ փոքրիկ ձագ (նուկլեուս) յերկու կամ յերեք շրջանակի վրա։

Յեթե այդ փոքրիկ ընտանիքները զույգ-զույգ տեղավորենք

մեջտեղից կիսած փեթակների մեջ ու տանը տաքացումներ, նրանք լավ կձմեռեն ու գարունը նրանց հեշտությամբ կարելի է օգտագործել։

Այսպիսով, դեռ աշնանը հնարավոր է բավական թվով նուկլեուսներ վերցնել, ապահովել բեղմնավորված ջահել մայրերով և ձմեռեցնել այդ ընտանիքները։

Փորձը ցույց է տվել, որ այդ ձևի զույգ յեղող մանր ընտանիքները շատ լավ են ձմեռում, յերբ ձմեռանոցում պահպանվում է 5—6 աստիճան ջերմություն։ Բայց այդ մասին արդեն խոսել ենք «Մեղուների ձմեռելը» գլխում։

Մա՞յր տալ, թե մայրապտուկ

Մինչև հիմա էլ մեզ մոտ շատ տեղերում ձագ են վերցնում առանց բեղմնավորված մայր ունենալու, կազմում են մի քանի ընտանիքներից վերցրած շրջանակներից մի խոշոր ընտանիք (6—7 շրջանակի վրա) և այդ դրությամբ թողնում, որպեսզի այդ ընտանիքը մայրապտուկներ դնի և մայր հանի։ Այս աշխատանքը կատարելիս ամենալավ դեպքում միայն ունենում են պատրաստի մայրապտուկներ և այդ նոր ընտանիքին տալիս են մայրապտուկ։ Այդ ձևը սխալ է և վնասակար, որովհետև մինչև մոր բեղմնավորվելը յերկար ժամանակ մեղվի ահագին ուժն անգործ է մնում։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սկզբում վերցնել նուկլեուսներ, սպասել մինչև մայրերը կբեղմնավորվեն և ապա նոր այդ փոքրիկ ընտանիքներն ուժեղացնել, կամ կիսման յեղանակով օգտագործել նրանց մայրերը։

Թռչկան ձագ

Ձագը, դուրս գալով փեթակից, սովորաբար շատ չի հեռանում մեղվանոցից։ Նա մի քանի րոպե պտտվում է մեղվանոցի սահմաններում ու ապա, յեթե ծառեր կամ թփեր կան, սկսում է հավաքվել նրանց վրա, իսկ յեթե չկան՝ կծիկ է կապում ու կախվում չարդախից, քարից, խոտից և յերբեմն որևէ փեթակի կտուրից։ Այդ ձևով նա յերկար մնում է նստած (հաճախ մինչև մյուս առավոտ)։

Յերբեմն միայն պատահում են դեպքեր, որ հենց նույն օրը մի քանի ժամից, կամ հենց փեթակից դուրս գալուց հետո անմիջապես թռչում, հեռանում է մեղվանոցից ու մեղվապահը չի կարողանում բռնել նրան։

Այդպես անում են հաճախ կրկնաձագերը։ Այդ բոլոր դեպքերում էլ ձագի հետ անպայմանորեն մայր է լինում (յերբեմն մի քանի մայրեր)։ Իսկ յեթե պատահաբար ձագը զրկվում է մորից (մայրը վայր է ընկնում ու կորչում) այդ դեպքում վորբացած ձագը նորից վերադառնում է ու իր հին փեթակն է լցվում։

Յերբեմն բերքի աննպաստ պայմաններում դուրս յեկած ձագը, մայր ունենալու դեպքում էլ, վերադառնում է իր հին տեղը, կամ աշխատում է մտնել մի ուրիշ փեթակի մեջ։ Այդպիսի դեպքերում բավական կոտորած է առաջանում։

Յերբեմն էլ զանազան փեթակներից միաժամանակ դուրս են գալիս ձագեր ու խառնվում են իրար (միասին են նստում)։ Ստացվում է մի շատ խոշոր ձագ, որը մի փեթակի մեջ հաճախ անհնար է հավաքել։

Յեթե տեսնում ենք, որ ձագերն ուզում են հավաքվել որևէ փեթակի վրա, մենք անմիջապես այդ փեթակը մի փոքր քարշում ենք իր տեղից, այդտեղ ենք դնում վաղօրոք պատրաստած փեթակն ու ձագին նրա մեջ ընդունում։ Այդ յերկու փեթակը մնում են իրար կողքի, մինչև մեղուն կհանգստանա, իսկ յերեկոյան ձագը տանում ենք իր տեղը։

Յերբ արդեն մեղվանոցում սկսել են բնական ձագեր դուրս գալ, մեղվապահը միշտ պիտի զգույշ լինի և մեղվանոցի մոտից չհեռանա։

Մեղվապահն աչքի առաջ ունենալով ձագերի դուրս գալը, նախորոք պիտի պատրաստություն տեսնի։ Նա պետք է ունենա՝

1. դատարկ փեթակներ՝ իրենց լրիվ սարքավորումով—միջնատախտակներ, ծածկոցներ, վրայի բարձ, բաժանարարներ, արկանոցացանց և հերթական համարը։

2. փակցրած մոմաթերթով բավական քանակի շրջանակներ։

3. յեթե ծառեր կան, մի ձեռքի սղոց, այգեգործի մկրատ, ձագակալ և մի սանդուխք։

Ձագ բռնելու ձևերը

Յեթե ձագն արդեն դուրս է յեկել, մեղվապահը մի դատարկ փեթակի մեջ զետեղում է 4—5—6 մոմաթերթով շրջանակ, ձագ տված ընտանիքից հանում է մի հասունացած որդով շրջանակ ու դնում մոմաթերթերի մեջտեղը։ Այդ ձևով պատրաստած և ծածկոցները վրան գցած փեթակը դնում է ձագի նստած տեղին։

Մեղվապահը միշտ հարմարվում է ձագի նստած տեղին, այ-

սինքն վորոշ միջոցներ և ձեռք առնում, վորպեսզի ձագն անվնաս հավաքվի փեթակի մեջ։

Ձագեր բռնելու համար, խոշոր դեր է խաղում հատուկ ձագակալը, վորը թեթև լինելու համար շինում են ֆաների տախտակից և վերցնում է 6 հատ բնի շրջանակ։

Բոլոր դեպքերում էլ այդ փեթակն իր միջի ձագով մնում է այնտեղ, վորտեղ ձագը բռնել ենք մինչև յերեկո։ Ապա յերեկոյան յերբ մեղուները բոլորը հավաքվել են նրա մեջ, վերցնում և տանում ենք իր վորոշված տեղը։

Ինչպես բաժանել խառը ձագերը

Յերբ մի քանի ձագ իջել են իրար վրա ու կազմել է մի շատ խոշոր կծիկ, այդպիսի խառը ձագերը պետք այնպես բաժանել, վոր կազմվի 8—10 շրջանակից վոչ ավելի ընտանիքներ։

Խոշոր ձագերը բաժանելու ժամանակ կարող է պատահել լինեն այնպիսի ձագեր, վորոնց մեջ մայր չլինի։ Այդպիսի ձագերն իսկույն աչքի յեն ընկնում, այսինքն մեղուներն անհանգիստ են, կծիկ չեն կապում, կամ ամբողջովին կամ մի մասը դուրս է թռչում ու միանում մյուս ձագերին, կամ վերադառնում մայր փեթակի վրա։

Այդպիսով պետք ուշի-ուշով հետևել, գտնել մայրերը և ամեն մի բաժանած մասը մայրով ապահովել։

Այնքան էլ դժվար չէ խառնված կծիկի մեջ մոր գտնելը։ Դեռ ձագը բռնելու ժամանակ, յերբ մեղուն թռչում է դեպի փեթակը, ուշադիր մեղվապահն իսկույն կնկատի, թե ինչպես մայրն էլ մեղուների հետ միասին փեթակ է մտնում։ Շարունակելով դիտել, նա կնկատի մյուս մորը, կբռնի ու կգցի մյուս փեթակի մեջ, վոր նույնպես այդտեղ դրվում է ու մեղուն մի կողմից էլ նրա մեջ է լցվում։

Յեթե մեղվապահը կարողանա մայրերի խնդիրն այդ ձևով լուծել, ուրեմն նա միանգամից կազատվի հետագա դժվարություններից

Ձագերի խնամքը

Ինչպես ասացինք, նախքան ձագ բռնելը, մեղվապահը դնում է փեթակի մեջ մի քանի մոմաթերթած շրջանակ և մեկ վորդով շրջանակ, վորը վերցնում է ձագ տվող փեթակից։

Յերբ արդեն նոր փեթակը դրվում է իր մշտական տեղում,

պետք մյուս օրն եվ ստուգել, թե արդյոք մեղուն հանգիստ է և սկսել է կառուցման աշխատանքը մոմաթերթերի վրա։

Յեթե մեղուն անհանգիստ է, կծկվում է այս ու այն կողմ, կառուցումներ չի անում, կասկած կա, վոր մայր չունի։

Ձագի մեջ հեշտ է մորը գտնել՝ նա գրեթե միշտ լինում է վորդով շրջանակի վրա։

Պատահում է, վոր ձագը դուրս գալիս կամ բռնելու ժամանակ մայրը կորչում է կամ վնասվում։ Ուրեմն յեթե այդպիսի բան է պատահել, նուկլեուսներից պետք մայր տալ։ Յեթե չկա պահեստի մայր, տալ հասունացած մայրապտուկ։

Կրկնաձագեր

Յերբ առաջին ձագը մոր հետ դուրս է թռչում, դրանից 6—8 օր հետո, յեթե յեղանակը նպաստավոր է, յերբեմն դուրս է գալիս յերկրորդ ձագը։ Յեթե յեղանակների վատության պատճառով առաջին ձագն ուշանում է և նոր մայրերն սկսում են դուրս գալ, այդ դեպքում նրանք հին մորն սպանում են, կամ մինչև այդ նա ինքը մեռնում է և առաջին ձագի հետ նոր մայրեր են դուրս թռչում։

Յերկրորդ ձագերի հետ միշտ լինում են նոր մայրեր (չբեղմնավորված մայրեր)։ 2—3 օր հետո, նորից մայրեր են դուրս գալիս և ընտանիքը կարող է նորից ձագ տալ։

Ինչքան տարին հաջող է և բերքը յերկարատև, այնքան կրկնաձագերի թիվը կարող է շատ լինել։ Յեղել են դեպքեր, յերբ մի փեթակ 10-ը ձագ է տվել, մանավանդ անտառոտ շրջաններում։ Բայց, ի հարկե, այդպիսի դեպքեր հազվագյուտ են։

Մեծ մասամբ կրկնաձագերը թույլ են լինում ու անկենսունակ։ Դրա համար էլ բոլորը կամ միքանիսը միացվում են իրար, կամ նուկլեուսներ են կազմվում, կամ միացվում են առաջուց բռնած թույլ ձագերի հետ։

Կրկնաձագերի հետ թռչում են նոր մայրեր, վորոնք նոր տեղում բեղմնավորվում են ու սկսում ձվել։ Նույն օրում միքանի փեթակներից դուրս յեկած ձագերը միացնելիս միայն կարելի յե ծուխ տալ

Մեղուներն իրար չեն կոտորի և յեղած մի քանի նոր մայրերից վերջում կմնա մեկը։ Իսկ յեթե հին և նոր ձագերն ենք միացնում, ուրեմն պետք վարվենք այնպես, ինչպես սովորական ընտանիքների միացման ժամանակ՝ մորը բանտարկել մի օրով, մեղուների վրա հոտավետ շաքարաջուր փչել ու միացնել։

Հաճախ պատահում ե, վոր առաջին կամ յերկրորդ ձագից հետո ընտանիքն արդեն հրաժարվում ե ձագատենդից։ Այդ դեպքում առաջին դուրս յեկած մայրը մեղուների մասնակցությամբ քանդում ե մյուս մայրապատուկներն ու սպանում դեռ դուրս չեկած մայրերին։ Հետագայում այդ մայրը բեղմնավորվում ե, և ընտանիքի կյանքը կանոնավորվում ե։

Ձագ տվող ընտանիքների խնամքը

Յերբ բերքը կարճատև ե և ուժեղ, սովորաբար ձագ տվող ընտանիքը հենց առաջին ձագից հետո մնացած մայրապատուկները պետք ե վոչնչացնել, վորով ընտանիքը ձագատենդից հրաժարվում ե։ Այդպիսի ընտանիքը շուտ ե կարգավորվում, նոր մայրը բեղմնավորվում, սկսում ե ձվել ու մեղուն վոչ միայն իր պաշարն ե լրացնում, այլև ավելցուկ մեղր ել ե տալիս։

Բայց լինում ե նաև, վոր ձագատենդը շարունակվում ե, դուրս են գալիս յերկրորդ և շատ ձագեր։ Մեղուն սաստիկ պակասում ե և ուժից բոլորովին ընկնում։ Հաճախ մայրը չի հաջողվում բեղմնավորվել, մեղրաբերքն ել վերջանում ե ու ընտանիքը գտնվում ե բռաւծու, մեղուն բոլորովին պակասում ե, պաշարը չի բավականացնում իրեն և շուտով վոչնչանում ե։

Կրկնաձագերը շատ խոշոր չարիք են ու պիտի բոլոր միջոցները ձեռք առնել, վոր առաջին ձագից հետո նոր ձագեր դուրս չգան։

Դրա համար վարվում են այսպես՝ ձագը դնում են հին փեթակի տեղ, իսկ հին փեթակը տանում, դնում են մեղվանոցի յետևի կողմը։ Ամբողջ թռչող մեղուն հավաքվում ե ձագի վրա, իսկ հին ընտանիքի մեջ միայն մնում ե մատաղ մեղուն վորդով շրջանակների վրա նստած։ Ապա մեղվապահը կտրտում ե դրա բոլոր մայրապատուկները, ընտրելով յերկու հատ ամենախոշորը ու թողնում, վոր մայրը դուրս գա։

Արհեստականորեն թուլանալով ու կորցնելով իր ամբողջ թռչող մեղուն, կորցնելով իր մայրապատուկները, այդ ընտանիքը բնականաբար հրաժարվում ե ձագատենդից ու շուտով կարգավորվում։

Յեթե այդպիսի ընտանիքը շատ ե թուլացել և վտանգ կա, վոր մինչև մեղրաբերքի վերջը չի դառնա կարգին ընտանիք բավարար քանակի մեղվով և իր պաշարով, ուրեմն պիտի մեղվապահն իր ժամանակին նրան ոգնության գա և ուրիշ ընտա-

նիքներից ապահովի հասունացած վորդով և մեղրով, թեկուզ հենց նույն ձագից, վորն այդ ընտանիքի հաշվին շատ ե ուժեղացել և ունի ավելորդ ուժ։

Յերբեմն մայրապատուկները կտրտելուց հետո յել ձագ տված ընտանիքը չի հրաժարվում կրկին ձագ տալուց։

Ուժեղ ընտանիքները կարելի յե նաև թափ տալ սովորական կարգով, միայն զգույշ լինել, վոր թափ տված ընտանիքի մեջ մի մորից ավելի չլինի, այլապես նորից կարող ե ձագ տալ։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՄԵՂՎԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ ՑԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Կան վորդի և հասակավոր մեղվի հիվանդություններ։ Մեզ մոտ հատկապես վորդի հիվանդությունը (վոր կոչվում է փտախտ) բավական խոշոր վնաս է հասցնում։

Հայաստանում դեռ հատուկ ուսումնասիրություններ չկան, թե ինչ հիվանդություն ինչ չափով է տարածված և պայքարի վոր ձևերն են, վոր ամենալավ հետևանքներն են տալիս։

Ամեն մի յերկրում այդ բոլոր խնդիրները կապված են տեղական պայմանների և խնամքի ձևերի հետ։ Թե հիվանդությունների ճանաչման, և թե պայքարի ձևերի մշակման խնդրում մենք չենք կարող ամբողջովին հենվել զանազան ձեռնարկների տված նյութերի վրա։ Ոգտագործելով նրանց տված հիմնական դրույթները, մենք ուշի-ուշով պիտի հետևենք մեր պայմաններին, հիվանդության դեմ պայքարելու ձևերին և ապա ինքներս հատուկ մոտեցում ունենանք դեպի այդ գործը։

Տարեցտարի ուսումնասիրելով մեր աշխատանքի և նրա արդյունքների ընթացքը և վեր հանելով նրա թերությունները, պիտի մտցնենք համապատասխան շտկումներ և ուղղումներ մեր գործողությունների մեջ։

Դրա հետ միասին պիտի լինել չափազանց հետևողական և բծախնդիր։ Մի փոքրիկ անզգուշություն կամ անփութություն, մի թեթև շեղում գործի ընդհանուր ուղղությունից և արդեն հետագայի համար ստեղծվում է չափազանց դժվարին ու խճճված դրություն, վորը թե խոշոր նյութական վնաս է հասցնում մեղվանոցներին և թե ահագին աշխատանք է պահանջում։

Հիվանդությունների պատճառները

Հիվանդություններն առաջանում են զանազան տեսակի մանրէներից, վորոնք կոչվում են բացիլներ։

Այդ մանրէները շատ փոքրիկ են և մանրադիտակով 300—500 անգամ մեծացնելիս նոր են միայն յերևում մեր աչքին։

Նրանցից ամեն մեկը մի առանձին կենդանի արարած է և բազմանում է կիսվելով յերկու մասի։ Ամեն մի նոր մասը մեծանում, դառնում է սովորական մեծության ու նորից կիսվում (բաժանվում) և այդպես շարունակ։

Այդ բացիլներն սովորաբար պահպանվում են զանազան միջավայրերում և քանի սնվելու համար բան չկա, կարող են միևնույն վիճակում յերկար ժամանակ մնալ և պահպանել իրենց կենսունակությունը։ Բայց հենց վոր ընկնում են իրենց համար նպաստավոր պայմանների մեջ, ներկա դեպքում վորդի ստամոքսը, սկսում են զարգանալ ու աճել, հիվանդացնելով վորդին ու սպանելով նրան։

Յերևալու ժամանակը

Վորդի հիվանդությունն յերևում է գարնանը, յերբ արդեն փեթակում 2—4 շրջանակի վրա կնքած վորդ կա։

Յեթե ընտանիքն անցյալ տարվանից է հիվանդ, ուրեմն կարող է յերևալ հենց վաղ գարնանից, նույնիսկ քիչ կնքած վորդի մեջ։

Յերբ դեռ հիվանդ վորդերն այնքան շատ չեն, մեղուն աշխատում է մաքրել բջիջները։ Դրա համար էլ գարնան սկզբներին հաճախ հիվանդությունը մենք չենք նկատում, չնայած հիվանդությունը գուցե գոյություն ունի արդեն։

Յերբ վորդը շատանում է ու ծավալվում մի քանի շրջանակների վրա և փչացող վորդերի քանակն էլ շատ է, մեղուներն էլ չեն կարողանում ժամանակին մաքրել բոլոր հիվանդոտ բջիջները, մեղվապահը հեշտությամբ նկատում է ընտանիքի հիվանդ լինելը։

Դա լինում է սովորաբար ապրիլի վերջերից, վորից հետո միշտ կարելի յե նկատել, քանի վոր փեթակի մեջ դեռ բավական վորդ կա։

Վորդ չեղած դեպքում, աշնանը և գարնանը դատարկ բջիջների մեջ կարելի յե հիվանդության հետքեր նկատել միայն

այն դեպքում, յերբ ընտանիքը 1—2 տարվա հիվանդ է, փտած վորդերը չորացել, կպած մնացել են բջիջների ներքևի պատին ու պարզ յերևում են, յերբ նայում են բջիջների ներսը։

Բայց ահա մենք շրջանակը հանում ենք, նայում ենք վորդին և նկատում, վոր մի շարք բաց բջիջների մեջ փչացած վորդեր կան։



Նկ. 30. Կանոնավոր վորդ ու ձու։ Ներսում արդեն վորդի 2-րդ սերունդ դուրս է յեկել, վորի կողքերին այդ սերնդի կնքած վորդն է։ Դրա կողքերին առաջին սերնդի դուրս յեկած վորդն է, իսկ նրա յեզրերից՝ այդ սերնդի կնքած վորդը։

Բացի այդ, նկատում ենք նաև, վոր մի շարք բջիջների սերեկները փոս են ընկել ու կարծես դիտմամբ պատռած են և այդ պատռած սերեկները պարզ նկատվում են ընդհանուր սերեկների մեջ։



Նկ. 31. Հիվանդ կնքած վորդի պատկերը

Յերբ շյուղով այդ սերեկները վերցնում ենք ու բջիջի բերանը բոլորովին բացում, տեսնում ենք, վոր վորդը նեխել, փչացել է ու կպել բջիջի ներքևի պատին։

Շյուղով այդ վորդը կարող ենք տնտղել ու տեսնել, թե ինչ ձև ունի, ինչ դրության մեջ է։

Այդ պատկերն այնքան բնորոշ է և աչքի ընկնող, վոր մեղվապահը մի քիչ ուշադիր նայելով կնքած վորդին, հեշտությամբ կնկատի վորդի հիվանդ լինելը։

Ինչ պետք է ունենա մեղվապահը

Ամենից առաջ անհրաժեշտ է ունենալ սուլեմայի լուծույթ 1 : 1000 հարաբերությամբ (1000 ջուր, 1 սուլեմա)։

Այդ լուծույթով մեղվապահը ձեռքերն է լվանում և ախտահանում։ Բորժոմի շիշն ուղիղ մի լիտր ջուր է տանում, ուրեմն հարկավոր է մեկ գրամ մաքուր սուլեմա գցել մեջը ու լավ թափահարել։ Սկզբում ջուրը միքիչ պիտի գոլ անել, վոր սուլեման լավ լուծվի մեջը։ Մի ամուր խցանով բերանը պիտի բռնել ու պահել մի ապահով տեղ։

Պետք է ունենալ նաև մի հատուկ գոգնոց, վորը հիվանդ փեթակների ստուգման ժամանակ հագնում է մեղվապահը և հաճախ յեռացնում ջրի մեջ։

Բացի սուլեմայի լուծույթը, պիտի ունենալ նաև ֆորմալինի լուծույթ։ Դեղատներում ֆորմալինը ծախում են սովորաբար 40 տոկոսանոց լուծույթով, վորին հարկավոր է մեկին չորս ջուր խառնել ու այդ ձևով գործածել։ Ֆորմալինի լուծույթով ձեռք չպիտի լվանալ, վորովհետև կաշին այրում է ու չորացնում։ Ֆորմալինի լուծույթով պիտի լվանալ միայն գործիքները ու վարակված ինվենտարը։

Բացի այդ լուծույթներից, մեղվանոցում անպատճառ պիտի ունենալ ձեռքի սապոն և ամեն մի կասկածելի դեպքում թե ձեռները և թե մանր գործիքները (քերիչը) սապոնով լվանալ։

Հաճախ սապոնով լվանալն ավելի օգտակար է, քան վորևէ լուծույթով, վորովհետև սապոնը մաքրում է ակնամոմի և մոմի մնացորդները ձեռքի և գործիքների վրայից։ Այդ մնացորդների մեջ լինում են բացիլներ ու անցնում են փեթակից-փեթակ։

Քանի անգամ պիտի ստուգել

Դեռ ապրիլի մեջ, յերբ մենք ընդհանուր ստուգումներ ենք կատարում և խնամում ենք ընտանիքները, մեղվապահը միշտ վորդը պիտի ստուգի և աչքը վրա պահի, այսինքն վոր փեթակի հետ վոր գործ է ունենում, նա պիտի ստուգի, իմանա, թե չի վարակված արդյոք։

Իսկ հենց վոր ոժանդակ բերքն սկսվում է և գողության վտանգն այնքան ուժեղ չէ, դեռ ապրիլին պետք է մի հատուկ ստուգում կատարել, մանավանդ դաշտ տեղերում (պտղածառերի ծաղկման ժամանակ) և պարզել մեղվանոցի առողջական դրությունը։ Այնուհետև մայիսին պիտի կատարել հատուկ ստուգում յերկու անգամ՝ մեկը մինչև 10-ը, մյուսը՝ մինչև 25-ը։

Հատուկ ստուգումն այն է, վոր բոլոր ընտանիքները շարքով նայվում են և վորդը մանրակրկիտ կերպով ստուգվում։ Այդ ձևի ստուգում պետք է կատարել նաև մեկ անգամ հունիսի ընթացքում մինչև 15-ը և մեկ անգամ էլ հուլիսին (մինչև 10-ը)։

Ուրեմն պաշտոնական ու մանրամասն ստուգումներ պետք է կատարել ընդամենը 5 անգամ—ապրիլի վերջերին, մայիս ամսում յերկու անգամ, մեկ անգամ հունիսին և մեկ անգամ հուլիսին։

Իսկ մնացած ժամանակներում ամեն անգամ, յերբ ընտանիքի հետ վորևե աշխատանք ենք կատարում պիտի միշտ զգույշ լինենք և հետևենք վորդի դրությանը։ Որինակ, յերբ ձագ ենք վերցնում կամ մեկից մի շրջանակ վորդ ենք տալիս ուրիշին, ուրեմն ամբողջ վորդը պիտի ստուգվի։

Ստուգման ձևը

Ստուգելիս ուղղակի սովորական կարգով մեկ փեթակից անցնում ենք մյուսը։ Մեղվապանը միայն անհրաժեշտ գործիքն է բռնում ձեռքը (Ռուտի քերիչը), իսկ ծխարարին և ուրիշ պարագաներին ձեռք չի տալիս։ Իսկ ոգնականը, ընդհակառակը, ծխարարն է բռնում, փեթակի կտուրը վերցնում է ու հետո դնում, այնպես վոր ամեն անգամ կարիք չլինի ձեռքերն ու գործիքներն ախտահանել։

Յեթե կասկած կա, վոր հիվանդությունը մեղվանոցում շատ է, լավ կլինի ամեն անգամ փեթակից-փեթակ անցնելիս մեղվապանը սուլեմայով ախտահանի իր ձեռքերը։ Յեթե հնարավոր է, մեղվապանը թող քերիչն էլ չգործածի, վորովհետև քերիչի ախտահանելը դժվար է։

Յերբ մեղվապանն ստուգման ժամանակ նկատում է վորևե հիվանդություն կամ կասկածելի բան, հայտնում է ոգնականին իսկ վերջինս գրում է տետրի մեջ։ Իսկ յերբ սուլեմայով լվանում է ձեռքերը, քերիչը հողով լավ մաքրում է, վոր մոմե ու

ակնամոմի հետքերը վրայից մաքրվեն, ապա ֆորմալինի լուծույթով թրջում է ու նորից անցնում աշխատանքի։

Յեվ ամեն անգամ, յերբ վորևե վտանգավոր բան է նկատում, անպատճառ ձեռքերն ու քերիչն ախտահանում է։

Վորդի ստուգման կարգը

Մեղվապանը վորդով շրջանակը հանում է, արագ նայում է սկզբում մի յերեսը, հետո մյուսը։ Նա այնքան պիտի վարպետանա, վոր շատ ժամանակ չկորցնի քննելու վրա, նայի կնքած վորդին, աչք գցի բջիջներին և աշխատի տեսնել ամեն մի անկանոն, կասկածելի վորդը։ Առաջին շրջանակը դնում է, հետո հանում է մյուսը, տնտղում և այդպես մինչև վերջը։

Թեթև գողության դեպքում, ամեն անգամ շրջանակը հանելիս, ծածկոցը ծածկում ենք ու նայում շրջանակը, իսկ գողությունն ուժեղանալիս դադարեցնում ենք։

Անպատճառ պիտի ամբողջ վորդն ստուգել ու աչքի անցկացնել։ Չի կարելի յերկու-յերեք շրջանակ ստուգել ու դրանով բավարարվել, վորովհետև հիվանդությունը կարող է մյուսների վրա յերևալ։

Լինում են դեպքեր, մանավանդ մայիսի 15-ից սկսած, յերբ մեղուն խիտ առ խիտ նստած է շրջանակների վրա ու հնարավոր չի լինում վորդի ամբողջ տեսքը մի անգամից դիտել։ Այդ դեպքում անհրաժեշտ է շրջանակը թեթևակի կերպով թափ տալ փեթակի մեջ, վոր ավելորդ մեղուն թափվի վրայից, վորդի վրա կուտակված մեղուն պակասի (ցանցառանա, նոսրանա) ու վորդը լավ յերևա։

ՎՈՐԴԻ ՓՏԱԽՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր տեղեկություններ

Կերի հետ միասին հիվանդության մանրեն (բացիլը) անցնում է կերակրվող վորդի ստամոքսն ու վարակում նրան։

Վարակումը փեթակից-փեթակ տարածվում է.

1. յերբ հիվանդ փեթակի մեղուներն առողջ փեթակից մեղր են վերցնում և, ընդհակառակը, յերբ առողջ փեթակի մեղուները հիվանդ փեթակից են մեղր տանում։ Մեղուների վոտքի թաթերի վրա և մեղրի մեջ բացիլներ են լինում և անցնում են

փեթակից-փեթակ։ Ուրեմն, պետք է զգույշ լինել և գողություն չառաջացնել։ Հիվանդության տարածման ամենագլխավոր պատճառներից մեկը գողությունն է.

2. յերբ մեղվապահն զգույշ չի ու հիվանդ փեթակը նայելուց հետո անմիջապես անցնում է ու սկսում է ստուգել առողջ փեթակը, առանց ախտահանելու գործիքներն ու ձեռները, կամ հիվանդ փեթակից մի շրջանակ վորդ կամ մեղր է տալիս առողջին, կամ առհասարակ վորևէ իր հիվանդից տալիս է առողջին.

3. յերբ հիվանդ ընտանիքներն յերկար ժամանակ մնում են մեղվանոցում և չեն բուժվում։ Ինչքան էլ վոր մեղվապահը զգույշ լինի, այդ փեթակներից մյուսներն էլ կվարակվեն։ Ուրեմն, անպատճառ պիտի հենց նույն սեզոնում բուժել հիվանդ ընտանիքները և այդ գործը չթողնել մյուս տարվանը.

4. յերբ հիվանդոտ փեթակները, կամ մեղրով շրջանակները բաց են մնում և մեղուն հավաքվում է նրանց վրա։ Ուրեմն պետք է հիվանդ ընտանիքի փեթակը, շրջանակները, չեչերը և այլն մինչև ախտահանումն այնպես պահել, վոր ուրիշ մեղու չնստի վրան ու վարակը չտանի իր փեթակը.

5. յերբ վարակված իրերն յերկար մնում են առանց ախտահանվելու ու հաճախ խառնվում են առողջ ինվենտարին, այսինքն յերբ հիվանդ փեթակի մեջ մեղու յեն բնակեցնում, հիվանդոտ չեչերը նորից գործածում են կամ մյուս իրեր՝ նորից գործի մեջ են դնում։ Ուրեմն, ինչքան կարելի յե իրերը շուտ պիտի ախտահանել.

6. յերբ վարակված մոմից առանց ախտահանելու մոմաթերթ է պատրաստվում, այդ մոմաթերթի միջոցով վարակումն անցնում է փեթակի մեջ։ Ուրեմն մոմաթերթ պիտի ձեռք բերել այնպիսի արհեստանոցներից, վորտեղ ամբողջ մշակվող մոմն յեռացնում են առնվազն յերկու ժամ.

7. յերբ վարակված մեղրից, առանց յեռացնելու, կերակրում են առողջ փեթակներին։ Ուրեմն առհասարակ նախքան կերակրելը, յեթե մեղրով ենք կերակրում, պիտի յեռացնել այդ մեղրը և հետո տալ ընտանիքին։

Այդ բոլորը կախված է մեղվապահից և յեթե նա բարեխիղճ է ու լավ գիտակցում է վարակման վտանգավոր լինելը, կարող է այնպես անել, վոր այդ վտանգը մեղվանոցից բոլորովին վերացվի։

Յեթե մեղվապահն ամեն տարի կանոնավոր կերպով բուժում է հիվանդ ընտանիքները և վարակված իրերն ախտահանում, ուրեմն տարեց-տարի նրա մեղվանոցում հիվանդ ընտանիքների թիվը շատ քիչ կլինի, վորն առաջանում է հարևան չբուժվող մեղվանոցներից։

Ամերիկական փտախտ

Առաջացնող մանրեն Բացիլլուս Լարվե։ Բաց բջիջներում գրեթե յերբեք չի նկատվում։ Ուրեմն կնքվելուց հետո յե, վոր վորդը փչանում է, սերեկը թաղվում է (փոսանում) ու պատռվում։

Նեխած վորդը տափակած վիճակում կպած է բջիջի ներքևի պատին ամբողջ յերկարությամբ։ Գույնը մուգ-դարչնագույն է, և ինչքան այդ վորդը հնանում և չորանում է, այնքան գույնը մթնում է և սուրճի գույն է ստանում։

Յերբ վորդի մարմինը շյուղով քանդում ես, նրա մաշկը (կաշին) բավական թույլ է, իսկ ինքը մածուցիկ է (թանձր) ու շյուղի ծայրին ձգվում ու ծոր է տալիս։

Յերբ փեթակը շատ հիվանդ է և ամբողջովին վարակված, հաճախ այդ փեթակից և չեչերից ծանր հոտ է գալիս։ Լինում են դեպքեր, յերբ այդ նշաններն այնքան աչքի չեն ընկնում, բայց համենայն դեպս դրանք ամերիկական փտախտի համար բնորոշ են։ Նեխած վորդերը բավական ամուր կպած են լինում բջիջի պատին։ Բացի այդ, բջիջի բերանն այն ժամանակ է բացվում, յերբ արդեն վորդը լրիվ չափով նեխել է, դրա համար էլ մեղուները դժվարությամբ են մաքրում ու դուրս գցում այդ նեխած վորդերին։ Այդ աշխատանքը նրանց համար անախորժ է։ Յերբ հիվանդությունը շատ է տարածվել փեթակում, հաճախ այդ նեխած վորդերն էլ այնպես մնում են, բոլորովին չորանում ու կպած մնում բջիջի ներքևի պատին։

Պատահում են դեպքեր, յերբ հենց նույն բջիջի մեջ մեղուները մեղր են լցնում ու կնքում։ Իսկ աշնանն այդպես ծանր, հիվանդ փեթակի բջիջների մեջ յերևում են բազմաթիվ չորացած վորդեր, վորոնք արդեն սուրճի գույն են ստացել։ Սա համառ և ուժեղ հիվանդություն է, վոր յերբեք ինքն իրեն չի անցնում և 1—2 տարվա ընթացքում քայքայում, վոչնչացնում է հիվանդ ընտանիքը։

Եվրոպական փտախտ

Այդ հիվանդությունն անվանում են բաց որդի փտախտ, որովհետև սովորաբար բաց որդն է փչանում։

Բայց փաստն այն է, որ հաճախ այդ հիվանդությունն էլ հենց կնքած բջիջների մեջ է յերևում։ Հավանաբար մեղուները արագ նկատում են ու հեշտությամբ դուրս գցում հիվանդ որդերը բաց բջիջների միջից։ Այդ պատճառով էլ առհասարակ բաց բջիջների մեջ հիվանդ որդեր քիչ են նկատվում։

Յեվրոպական փտախտն առաջացնում է Բացիլլուս Պլուտոն կոչված մանրէն։

Բայց յերբ այդ բացիլը բնակվում է որդի մարմնում և բազմանում, նա մենակ չի մնում։ Վարակված որդի մարմնի մեջ բուն է դնում կամ գարշահոտ փտախտի բացիլը (Ալվեյի) կամ թթու փտախտի բացիլը (ստրեպտոկոկկուս), դրա համար էլ յեվրոպական փտախտն ունի յերկու ձև։

Յերբ Ալվեյի բացիլն է առաջ գալիս, որդն ստանում է բաց դարչնի գույն, հետո կամաց-կամաց մթնում է ու դառնում մուգ-դարչնագույն, պղտոր յերանգով։

Նեխած որդից սովորաբար վատ հոտ է գալիս (նեխի հոտ), մաշկը բավական ամուր է, ներսը ջրալի չէ, չի ձգվում, մեծ մասամբ նկատվում է կնքած բջիջներում, նույն դիրքով, ինչվոր ամերիկականինը։ Յերբեմն միայն բաց բջիջներում ընկած է լինում պատահական դիրքով։

Մեր պայմաններում դա խոշոր վնաս է հասցնում մեղվանոցներին և յերբեք ինքն իրեն չի անցնում։ Առանձնապես ուժեղ կերպով արտահայտվում է ամռանը՝ ամեն ձևի ընտանիքների մեջ, որդի շատ յեղած ժամանակ։

Յերբ ստրեպտոկոկկուսն է առաջանում, այդ դեպքում որդի գույնն սկսում է սևանալ, հետո հողի գույն է ստանում, պատահական ձևով ընկած է բջիջի մեջ, մաշկը ամուր է, ներսը բավական փխրուն է, չի ձգվում, նեխած որդից որոշակի թթու հոտ է գալիս, որ հաճախ քացախի հոտի յե նմանում։ Յերբեմն շատ ուժեղ տարածված լինելու դեպքում աչքի յե ընկնում նաև կնքած բջիջներում։

Չնայած մեծ մասամբ յերևում է գարնանը ու յերբեմն ինքնիրեն անցնում է, բայց շատ հաճախ ուժեղ կերպով յերևում է նաև ամառը՝ որդի շատ ժամանակը և խոշոր վնաս է հասցը-

նում արագ վոչնչացնելով որդը ու հյուծելով ընտանիքի ուժը։ Այդ իսկ պատճառով դեպի այդ հիվանդությունն էլ չպետք է ներողամիտ լինել և նույն վերաբերմունքը հանդես բերել, ինչվոր դեպի մյուս հիվանդությունները։

Տոպրակաձև որդ

Այս հիվանդությունը լավ հետազոտված չի մեզ մոտ։ Մեղվանոցում նույն ձևն ունի, ինչ վոր թթուն, միայն հոտ չունի բոլորովին։ Յերբեմն ինքն իրեն անցնում է, բայց վորովհետև դժվար է տարբերել յեվրոպականից, դրա համար էլ ավելի լավ է այնպես վարվել նրա հետ, ինչպես մյուս հիվանդությունների հետ ենք վարվում։

Մրսած որդը

Յերբեմն որդը մրսում, ցրտահար է լինում, յերբ արդեն անբեկվելու ժամանակն է կամ սերեկված է։

Այդ դեպքում որդերը մեռնում են և նման են դառնում տոպրակաձև որդի, միայն մաշկը շատ թույլ է ու նրա նման ամուր չի, իսկ գույնը սև է։

Մեղվապահը պիտի սովորի ճանաչել մրսած որդը, որպեսզի զուր տեղը չչարչարվի դրա վրա և ընտանիքին էլ վնաս չհասցնի։

Այդ բանն ստուգելը հեշտ է ցրտերից հետո, յերբ մի քանի օր տաք է անում. պիտի ստուգել և յեթե էլ սառած որդեր չեն նկատվում, որդն էլ այնքան ցրիվ չի, ուրեմն մեղուները մաքրել-թափել են և սառած որդեր չկան։

Յեթե մի յերկու անգամ այդ ձևով ստուգվի, կարելի յե համոզվել՝ հիվանդ է թե վոչ։ Միայն թույլ ընտանիքներն են դժվարությամբ կարգավորվում, նրանց անհրաժեշտ է ապահովել նաև լավ տաքացումներով։

Կասկածելի որդ

Հաճախ մեղուներն այնպես են մաքրում հիվանդ բջիջները, որ նայելիս նեխած որդեր չենք գտնում, միայն կնքած որդը սաստիկ ցրիվ է և մեղուն քիչ (թույլ) է։

Բայց այդ տեսքը կարող է ունենալ նաև այն ժամանակ, յերբ մայրը պառավ է ու ձվերից շատերը բեղմնավորված չեն, կամ որդը մրսել է։

Հետագայում մեկ յերկու անգամ ստուգելով հեշտությամբ կարելի յե պարզել վորդի ցրիվ լինելու պատճառը և հիվանդ վորդն անմիջապես աչքի կընկնի:

Հիվանդությունների բուժումը

Հիվանդ ընտանիքները հայտաբերելուց հետո, նրանց չպետք է ձեռք տալ մինչև բավական ուժեղ առանդակ բերքը ակսվելը: Միայն պետք է հետևել, վորպեսզի մոմաթերթով ապահովված լինեն ու նրանց աշխատանքը չկասեցվի:

Յերբ արդեն բերքն ակսվում է և գողություն չկա, պետք է ակսել բուժման գործը:

Պետք է պատրաստել նոր կամ լավ ախտահանված հին փեթակներ, նոր կամ լավ յեռացրած հին ծածկոցներ, մոմաթերթը փակցրած նոր շրջանակներ և ունենալ բեղմնավորված մայրեր:

Հիվանդ ընտանիքներն, ինչքան հնարավոր է, տարբերում ենք ըստ հիվանդությունների ու առանձին ցուցակ կազմում (համարներն առանձին):

Հիվանդ ընտանիքները թափ տալիս, նրանց մայրերը պիտի փոխարինել նորերով, վորովհետև յենթադրվում է, որ այդ մայրերի սերունդն ավելի յենթակա յե հիվանդությունների:

Հիվանդ ընտանիքը տեղից վերցնում ենք և այդ տեղը համեմատ հողով կամ մոխրով ու վարակումից խուսափելու համար նոր փեթակը դնում տեղը: Առջևը մի լայն տախտակ ենք դնում, իսկ մեջը շարում մոմաթերթով նոր շրջանակներ ու ծածկում փեթակը:

Նույն ձևի մի ուրիշ հիվանդ ընտանիքի մորը սպանում ենք ու վրան դնում կորպուս: Հիվանդ ընտանիքի շրջանակները մեկմեկ հանում ենք և մեղուն թափ տալիս նոր փեթակի առջևի տախտակի վրա: Այդ թափ տված շրջանակներից, որի մեջ վորդ կա, դնում ենք մյուս հիվանդի վրա դրած կորպուսի մեջ ու այդպիսով բոլոր վորդով շրջանակները հավաքում այդտեղ:

Մի փեթակի վրա ստիճանաբար կարելի յե 2, նույնիսկ 3 կորպուս դնել ու թափ տված ընտանիքների վորդերը հավաքել նրանց մեջ:

Ավելորդ շրջանակները տանում ենք իսկույն թաղցնում չենքի մեջ մի առանձին տեղ: Հիվանդ ընտանիքն այդ ձևով թափ տալուց-վերջացնելուց հետո, փեթակը բերանն ի վայր թափ ենք

տալիս նույն տախտակի վրա՝ փեթակի առաջ, վորի միջից մեղուները թափվում են: Հետո այդ փեթակն իր ամբողջ պարագաներով տանում ենք ու շենքի մեջ առանձին տեղ դնում:

Թափ տված ընտանիքը մինչև մյուս առավոտ մնում է վորբ, մոմաթերթերի վրա նստած; իսկ առավոտը վանդակով նրան բեղմնավորված մայր ենք տալիս:

Զգուշության համար, կարելի յե թափ տալ ու թողնել մի ամբողջ օր (կամ յերկու օր) առանց մոմաթերթի իր հին փեթակի մեջ, վորից հետո միայն փոխել նոր փեթակի մեջ և տալ մոմաթերթած շրջանակներ և մայր:

Յեթե հիվանդ ընտանիքը թույլ է և կասկած կա, վոր թափ տալուց հետո կդժվարանա կառուցել իր բունը ու նորմալ ընտանիք դառնալ, այդ դեպքում կարելի յե 2—3-ը միացնել իրար հետ և հետո թափ տալ:

Իսկ յեթե թափ տալուց հետո վորևե ընտանիք, վորևե պատճառով չի կարգավորվում, կարելի յե առողջ ընտանիքներից տալ նրան հասունացած վորդով շրջանակներ, իսկ հարկ յեղած դեպքում՝ մեղրով շրջանակներ:

Այն ընտանիքը, վորի վրա հավաքել ենք վորդը, մնում է այդպես, մինչև վորդերը դուրս կգան ու այլևս վորդով շրջանակ չի լինի մեջը: Հետո նույն ձևով թափ են տալիս: Նոր դուրս յեկած մորը նույնպես սպանում ենք ու բեղմնավորված մայր տալիս:

Այդպիսի հավաքովի ընտանիքներ կարող են լինել մեղվանոցում մի քանի հատ:

Յեթե բերքը դեռ շարունակվում է, թափ տալուց հետո նրանք էլ իրենց նոր բունը կկառուցեն ու կապահովեն իրենց պաշարով, իսկ յեթե չկարողացան, պիտի նրանց պաշարի պակասը լրացնել ու մեղրով շրջանակներ տալ:

Յեթե ստիպված ենք հիվանդ ընտանիքը թափ տալ բերքից հետո, ուրեմն մոմաթերթով շրջանակների տեղ իբրև պաշար պետք է դնել մեղրով շրջանակներ:

Հաճախ, յերբ մեղվապահը չունի պահեստի բեղմնավորված մայրեր, ստիպված է լինում օգտագործել հիվանդ ընտանիքի մորը, կամ թողնել բեղմնավորվելու այն մորը, վորը ծնվել է հիվանդ փեթակի մեջ:

Այսպիսի դեպքերում մեղվապահը պիտի շատ զգույշ լինի այդ ձևի փեթակների հետ և հաջորդ տարին ուժեղ ստուգման յենթարկի: Բուժված ընտանիքներն էլ մինչև մյուս տարին պի-

տի պահել կասկածի տակ, և մի քանի անգամ ստուգելուց հետո վերջնականապես դասել նրանց առողջների շարքին:

Կա նաև բուժման մի ուրիշ ձև՝ ընդհանրապես մեղվանոցներում հիվանդ բնտանիք երբ թե գարնանը դուրս դնելիս և թե հեռավայրում տեղափոխումների ժամանակ, պետք է մեղվանոցի մի կողմում տեղավորել իրար մոտ:

Փոքրիշատե ուժեղ բերք սկսվելուն պես, յերբ կառուցողական աշխատանքն արդեն սկսվել է, հիվանդ բնտանիքը վերցնում ենք իր տեղից և իր փեթակով տեղափոխում մեղվանոցի մի ուրիշ ծայրը, իսկ նրա տեղը դնում ենք մի նոր արկղ մոմաթերթով, կամ, յեթե կան՝ նաև առողջ չեչերով:

Այդպիսով հիվանդ բնտանիքի դաշտ թռչող մեղուն կհավաքվի իր հին տեղը նոր փեթակի մեջ, վորին անմիջապես վանդակով տալիս ենք բեղմնավորված մայր:

Յերբ բոլոր հիվանդ բնտանիքներն այդ ձևով փոխադրում ենք, ամեն մի 7—8 օրը մեկ անգամ տեղափոխված բնտանիքների վորդով շրջանակներն առանձնացնում ենք ու կամաց-կամաց միացնում մեկ յերկու փեթակի մեջ, նորից տեղից-տեղ տեղափոխելով:

Թափ տված մեղուներին նոր փեթակի մեջ տալիս ենք նույնպես մոմաթերթ: Վերջում մնացած բնտանիքը կամ բնտանիքներն արդեն թափ ենք տալիս սովորական ձևով. կամ յեթե բերք չկա և բնտանիքն էլ շատ է հյուծվել, կարելի յե ուղղակի լուծարքի յենթարկել:

Թեև այս ձևով բուժման աշխատանքն ու ժամանակն յերկարում է, բայց դրա առավելությունն այն է, վոր բնտանիքների առողջացումն ավելի ապահովված է:

Ընդհանրապես պետք է օրենք դարձնել նախօրոք հիվանդ բնտանիքների համար մայրեր բուծել և նոր մայրերով կատարել բուժումը: Իսկ յեթե այս կամ այն պատճառով դա չի հաջողվում, ուրեմն պետք յեղած մայրերի մեջ խիստ ընտրություն կատարել, պետք ընտրել ամենալավերը և յերիտասարդները, թափ տալու ժամանակ բանտարկել և առնվազը 2 օր պահել բանտարկված, ապա նոր բաց թողնել:

Իսկ յերիտասարդ մայր հանելու դեպքում փեթակը թափ տալ այն հաշվով, վորպեսզի յերիտասարդ մայրը բեղմնավորվի նոր փեթակում թափ տալուց մի քանի օր հետո:

Հիվանդ բնտանիքների բուժման գործը կազմակերպվում է

նաև հետևյալ ձևով՝ մեղվանոցներից հիվանդ բնտանիքները վերցնում են ու տեղափոխում մի առանձին տեղ, վորտեղ գոյանում է մեղվանոց-հիվանդանոց ու այդտեղ կատարում բուժումը հատուկ մեղվապահների միջոցով:

Բայց առայժմ այդ ձևն ունի մեզ համար մի շարք անհարմարություններ և աննպաստ պայմաններ կան, դրա համար էլ մեղվապահներից պահանջվում է ծայրահեղ զգուշություն և հմտություն՝ հիվանդությունները հենց տեղում վերացնելու և ազատելու մեղվանոցն այդ ախտից:

Վարակված իրեղենների ախտահանումը

Վարակված առարկաները չպետք է յերկար պահել: Չեչերը պետք է անմիջապես կտրատել ու հալել, շրջանակները վառել, մեղրն ապահով ամանի մեջ պահել: Մեղրով չեչերը կարելի յե մեղրահանով քամել, լցնել հատուկ ամանների մեջ, իսկ դատարկ չեչերը նոր հալել մյուս մոմի կտորտանքի հետ:

Մանր պարագաները—միջնապատակները, ծածկոցները, տոպրակները և վրայի բարձերը—յեթե դեռ բավական նոր են, պետք է պահել առնվազն մեկ ժամ յեռացող ջրի գոլորշու մեջ: Իսկ հարկի վրայի բարձի միջից դարմանը պետք հանել ու այրել, իսկ յեթե արդեն բավական փչացած են, կարելի յե ուղղակի վոչնչացնել:

Փեթակն անհրաժեշտ է անպայման ախտահանել: Դրա ամենալավ միջոցը ախտահանման կամերն է, վորի մեջ կարելի յե 3—4 հատ մի անգամից տեղավորել ու 2 ժամ շարունակ պահել գոլորշու մեջ:

Բայց մեր պայմաններում դա անհնար է առայժմ, ուստի պետք է փեթակի մեջ նավթ ցանել ու վառել այդ նավթը, այնպես վոր ներսի կողմից փեթակի պատերը խանձվեն (շատ չսևանան-կարմրեն):

Այդպես այրելիս սովորաբար անկյունները լավ չեն ախտահանվում, դրա համար էլ լավ կլինի զոդալամպով (паяльная лампа) վառել սպիտակ մնացած տեղերը:

Յերբ վարակված իրերն յեռացնում կամ ուրիշ կերպ ախտահանում ենք, պետք նկատի ունենանք, թե ինչքան ժամանակ կտևի ախտահանման գործողությունը:

Տարբեր հիվանդությունների բացիլները տարբեր դիմաց-

կունություն ունեն։ Օրինակ, ամերիկյան փտախտի բացիլը (լարվե) ավելի յերկար է դիմանում թե ցրտի, թե տաքի և թե ավելի դժվարությամբ է յենթարկվում թույների ներգործությանը, քան յեվրոպական փտախտինը։

Բայց դա գործնական նշանակություն չունի մեզ համար, վորովհետև մենք չենք կարողանում բոլոր դեպքերում էլ ճիշտ կերպով տարբերել իրարից հիվանդությունները։

Անհրաժեշտ է բոլոր դեպքերում էլ ընդունել հետևյալ ժամկետները՝ իրերը յեռացնել մեկ ժամ, մոմը ջրով յեռացնել 2 ժամ (հալված և կաղապարված մոմերը)։ Փեթակները ներսից այրել այնքան, վոր բոլոր տեղերը լավ կարմրեն։ Ձեռքերը և գործիքները թրջել լուծույթով յերկու անգամ։ Սապոնով լավ լվանալ 2 անգամ ու ջուրը լցնել մի փոսի մեջ և թաղել։

Հասակավոր մեղվի հիվանդությունները

Միայն մեղվի վորդը չի, վոր հիվանդանում է։ Հասակավոր մեղուն ունի նաև հիվանդություններ, վորոնցից հաճախ շատ ընտանիքներ են կոտորվում, իսկ յերբեմն ամբողջ մեղվանոցները վոչնչանում են։

Այդ հիվանդությունները մեզ մոտ յերևում են, բայց մինչև այժմ խոշոր վնասներ չեն հասցրել։ Բավական քանակությամբ կոտորվել են թռչող մեղուներ, բայց ընտանիքը չի կորցրել իր կենսունակությունը։

Միայն վատ խնամված և շատ վատ ձմեռած մեղվանոցներն են յեղել, վորոնք կիսով չափ վոչնչացել են այդ հիվանդությունների հետևանքով։

Գլխավոր հիվանդությունը Նոզեմատոզ հիվանդությունն է։ Նոզեմա-ապիս կոչված միկրոբը բուն է դնում մեղվի ստամոքսի պատերի մեջ ու բազմանալով սպանում է մեղվին։ Հիվանդ մեղուն թուլանում է, փորը ուռչում, թևերը չալվում են ու նա սկսում է ծանր սողալ փեթակի արկանոցատախտակի վրա, փեթակի շուրջը՝ գետնի վրա, խոտերի մեջ, փորձում է թռչել, վերջը սկսում է ջղաձգվել ու սատկում է։

Ի հարկե արտաքին նշաններից դժվար է հասկանալ, թե դա ինչ հիվանդություն է։ Դուցե և պառաված մեղուներն են, վոր այդ ձևով սատկում են։ Բայց յերբ հիվանդությունը ուժեղ է, նկարագրված ձևով սատկող մեղուները շատ են լինում ու իսկույն աչքի յեն ընկնում։

Մանավանդ առավոտները փեթակի առջևը և առհասարակ մեղվանոցի սահմաններում այնքան են կոտորվում, վոր հաճախ ամբողջ գետինը խիտ շերտով ծածկված է լինում սատկած մեղուներով։

Այդ նշաններից, ի հարկե, կարելի յե ասել, վոր մեղուն նոզեմատոզով հիվանդ է, բայց միայն միկրոսկոպի հետազոտությունը կարող է ճիշտ կերպով վորոշել այդ հիվանդությունը։

Ակարոզ

Սա արդեն փոքրիկ տիզ է, վորը բուն է դնում մեղվի շնչափողի մեջ ու բազմանալով սպանում է մեղվին։ Ամբողջ տարին նա մնում է մեղուների որգանիզմի մեջ ու սպանում նրանց։ Բայց մեզ համար անհայտ է նրա տարածման և ավերածությունների չափը ու չգիտենք արդյոք սատկող մեղուներն այդ հիվանդությունից են փչանում, թե ինչ վոր մի ուրիշ հիվանդությունից։ Այդ խնդիրը կարող է պարզվել միայն միկրոսկոպի միջոցով։

Փոր-լուծ

Սա պատահում է վատ կերից, խոնավությունից, ձմեռելու վատ պայմաններից։ Այդ բոլոր հիվանդությունների առաջն առնելու միջոցն է՝ լավ ձմեռանոց, ուժեղ ընտանիքներ, լավորակ կերով ապահովված լինելը, մաքրությունը և ընդհանրապես կանոնավոր խնամքը։

ՄԵՂՎԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Ցեց

Ցեցն ամենից ավելի շատ վնաս է հասցնում մեղվին, վոչնչացնելով չեչերը, յեթե նրանք պաշտպանված չեն։

Ցեցի թիթեռն իր ձվերը դնում է չեչի բջիջների մեջ։ Մինչև 20 աստիճան ջերմություն լինելիս, այդ ձվերից դուրս են գալիս սպիտակ վորդեր, վորոնք սկսում են ուտել չեչը և զարգանալ։ Վորոշ ժամանակից հետո այդ վորդերն իրենց համար կոկոն են հյուսում (բոժոժ) ու ձևակերպվում, դառնում են թիթեռ, վորը ծակում դուրս է գալիս կոկոնի միջից։

Եգերը, բեղմնավորվելով, նորից սկսում են ձվել ու շուտով ամբողջ չեչերը բռնված են լինում ցեցի հյուսած վոստայններով։

Լեռնային վայրերում շվաքի մեջ և փակ ու արևկող լա-

տաքացումներ չունեցող շենքի մեջ ցեցը քիչ է սնվում, բայց տաք տեղում, մանավանդ դ․ շտավալյարերում ցեցը, կարճ ժամանակում կարող է հարյուրներով չիչեր փչացնել։

Ցեցի յերկու տեսակ կա — մեծը և փոքրը։ Մեծ տեսակն ավելի շատ է փչացնում և ավելի ավերիչ է։

Պահեստի չիչերը ցեցից ազատելու միակ միջոցը նաֆթալինն է։

Սովորաբար, յերբ աշնանը մեղրը քամում են ու չիչերը դնում պահեստ, հենց այդ ժամանակ պետք չիչերի մի յերեսին նաֆթալին ցանել ու իրար կից շարել կոլպուսների կամ հատուկ արկղների մեջ։

Ինչի մեջ էլ վոր դարսելու լինենք, պետք անպատճառ փակ լինի, վորպեսզի նաֆթալինի հոտը չհեռանա չիչերի միջից։

Յեթե ամանը բաց է լինում, հոտը հեշտությամբ վերանում է ու ցեցը բույն է դնում այդտեղ։

Հազար շրջանակին սովորաբար բավական է մեկ ու կես կգ նաֆթալին։ Յեթե աշնանը այդ ձևով կանոնավոր կերպով պափակենք չիչերը, ապա գարնանը արդեն վտանգ չի կարող լինել, մինչև վոր արդեն չիչերը կգործածվեն փեթակների մեջ։

Բայց յեթե գարնանը չիչերը նորից շարժեցինք ու տեղափոխեցինք, կամ դեռ տաքերն ընկնելուց էլ յերկար ժամանակ չենք գործածում, ուրեմն պետք նորից նաֆթալին ցանել ու դարսել նույն ձևով փակ ամանների մեջ։

Յեթե պատահմամբ ցեցն արդեն ընկել է, պետք շրջանակները կոլպուսների մեջ դարսել իրար վրա, վերևից լավ ծածկել ու ներքևից ծծումբի ծուխ տալ։ Այդպիսով վոչնչացնում ենք վորդերն ու կոկոններն։ 10—15 որից հետո նորից պետք ծուխ տալ, վորպեսզի մնացած ձվերից դուրս յեկած վորդն էլ վոչնչանա, վորից հետո պետք նաֆթալին ցանել ու դարսել։

Նաֆթալինի գործածությունը չպետք է վախեցնի մեղվապահներին։ Յերբ շրջանակը պահեստից հանում ենք, մի քանի ժամվա ընթացքում արդեն նրա միջից նաֆթալինի հոտը վերանում է և վոչ մի անախորժ հետևանք չի ստացվի։

Հավաքած կտորտանքները պետք շուտ հալել, վոր ցեց չընկնի մեջը, այլապես տաք յեղանակներին ցեցը կարող է սաստիկ արագությամբ վոչնչացնել այդ մոմը, իսկ յեթե ստիպված ենք պահել, ապա պետք արանք-արանք նաֆթալին ցանել ու լավ ծածկել շորով կողքից, վոր հոտը չկորչի։

Ցեցը վորոշ վնասներ է հասցնում նաև ներսում։ Նա ձու յե դնում շրջանակների վրա, մոմի արանքներում, հատակի վրա թափված մոմի մասր թեփիկների մեջ ու վորդերը դուրս գալով սկսում են փչացնել շրջապատի մոմերն ու չիչերը։ Փեթակի ներսում մեղուն, իհարկե, վոչնչացնում է ցեցի վորդերին ու չի թողնում, վոր զարգանան։

Բայց ցեցը կարողանում է թաքնվել մեղվի աչքից. նա

1. հատակի վրա թափած մոմերի տակ իր համար անցքեր է սարքում ու չի յերևում.

2. շրջանակների վերևի պլանկայի վրա յեղած մոմերի ծածկոցի տակ բույն է դնում այնպիսի տեղերում, վորտեղ մեղուն մուտք չունի.

3. վերջապես կնքված վորդով չիչերի մեջ է բույն դնում, սերբիկների տակով իրեն անցքեր է սարքում և սնվում ու մեծանում է։

Հաճախ կնքած վորդի մեջ կարելի յե նկատել բարձր, ուռած սերբիկներ, վորոնք թելի նման ձգվում են զանազան ուղղություններով։ Յեթե չոփով վերցնենք այդ սերբիկները ու առաջանանք ամբողջ ուռած սերբիկների յերկարությամբ, մենք վոր-ևե տեղում կգտնենք վորդին։

Հաճախ շատ բջիջների բերանը բաց է լինում ու մեղվի հարսնյակների գլուխները սպիտակին են տալիս բջիջների մեջ։ Նման դեպքերում շրջանակը հանում ենք, մեղուները վրայից թափ տալիս, և շրջանակի վերևի պլանկային դանակով կամ մի ուրիշ ծանր բանով կես կամ մի րոպե թեթև թխկացնում ու տեսնում ենք, վոր բջիջների միջից մեկ-մեկ դուրս են գալիս անհանգստացած ցեցի վորդերը ու թափում ներքև։

Իհարկե՝ կարող է լինել, վոր թխկոցից բոլորը չթափվեն միջից, նույնիսկ լինում են դեպքեր, վոր յերկար թխկոցներից հետո էլ վոչ մեկը չի ընկնում, բայց դա չի նշանակում, վոր ցեց չկա։

Առողջ, բաց գլուխ ունեցող հարսնյակների ներկայությունը մի փաստ է, վոր ցեց կա։ Պետք է այդպիսի բաց բջիջներում յերևացող հարսնյակներին չյուղով ծակել, փչացնել, վորից հետո մեղուներն անմիջապես հանում դուրս են գցում նրանց մարմինները և դրա հետ միասին, իհարկե, վոչնչացնում են նաև ձեռն ընկած ցեցի վորդերին։

Փոքր ի շատե ուշադիր և բարեխիղճ մեղվապահը կարճ ժա-

ժամանակում կարող է բոլորովին վերացնել ցեցը փեթակների միջից, եթե հատակները մաքուր պահի, ծածկոցի տակ փայտեր դնի, որ մեղուները ելումուտ ունենան ու ճշտված չափով բջջերին վերև նշված ձևով օգնություն ցույց տրվի։

Վոշիլ

Փոքրիկ, կարմրավուն միջատ է։ Նստում է մեղվի մեջքի վրա, գլխավորապես մոր մեջքին։ Ինչպես ցենթագրում են, ընտրվում է այն կերով, որ ինքը մեղուն է ուտում։ Մոր վրա շատ լինելը բացատրվում է հետևյալ կերպ՝ մայրը ավելի հանգիստ է և միշտ ներսում է, իսկ մեղուները թռչում են դաշտ և ավելի անհանգիստ են, և երկրորդ՝ որ վոշիլը հնարավորություն ունի կերակրվելու այն կերով, որը մեղուները տալիս են մորը։

Հաճախ մայրերի վրա այնքան շատ են լինում (մինչև 10—30), որ մայրը դժվարությամբ է շարժվում, լավ չի ձվում և երբեմն նաև փչանում է։

Համենայն դեպս փաստն այն է, որ մայրերի առանձին կորուստ չենք նկատում և վոշիլներն այնքան խոշոր վնաս չեն հասցնում, չնայած ի հարկե անախորժ են։ Վոշիլի դեմ կռվելու ամենալավ միջոցը փեթակը, գլխավորապես հատակը, մաքուր պահելն է։ Մոր վրայից վոշիլը հեռացնելու միջոցը հետևյալն է՝ մայրը բռնում ենք բախ մեջ, այնքան ազատ, որ չխեղդվի ու մայրը բռնում ենք մի քանի անգամ։ Վոշիլներն ուժեղ ծխախոտի ծուխ տալիս մի քանի անգամ, վոշիլներն ուժեղ ծխից ուշաթափվում են ու թափվում բախ մեջ։

Մայրը նորից բաց ենք թողնում փեթակի մեջ ու վոշիլները ոչնչացնում։ Բայց պետք է ասել, որ այդ ձևով կարող ենք վնասել մորը՝ երբ ծուխ տված մորը նորից դնում ենք փեթակի մեջ, լինում են դեպքեր, երբ մեղուները նրան ընդունում են օտարի տեղ ու սպանում են։

Ամբողջ փեթակին տալիս են նաև ծխախոտի ծուխ արկղի ներքևից դեպի ներս, բայց դրա համար չափազանց ուժեղ ծուխ պիտի տալ և երկար ժամանակ, որը դուցե մեղվի և որդերի վրա ավելի վատ ազդի, քան վոշիլների վրա։

Համենայն դեպս ամենից լավ միջոցը ելի ծայրահեղ մաքրությունն է, որի միջոցով կարելի է վոշիլների թիվը բոլորովին պակասեցնել ու ընդունելի այնքան չանհանգստանալ։

Մայկա (մայիսյան բզեզ)

Սև, բարակ, շարժուն միջատ է (մայիսյան բզեզի թրթուրը) 3—4 միլիմետր երկարությամբ։ Նա գլխավորապես լինում է յոնջենիներում, բազմածաղիկների մեջ՝ խատուտիկների, խաշխաշի, երեքնուկների և բարդածաղիկների մեջ։ տերևածաղկի և ուրիշ նման ծաղիկների մեջ։

Երբ մեղուն նստում է ծաղկի վրա, նա արագ բարձրանում ու տեղավորվում է նրա մեջքին։ Մեղվի հետ միասին գնում է փեթակ, բայց փեթակի մեջ իր համար համապատասխան պայմաններ չի գտնում զարգանալու։

Մի որոշ ժամանակ մնալով մեղվի մարմնին կպած, շատ անհանգստություն է պատճառում նրան ու երբեմն բավական մեղուներ կոտորվում են այդ անհանգստությունից։

Հաճախ արկղերի առաջ կարելի է նկատել, թե ինչպես մեղուն իրեն թափահարում է, պտտվածի նման դես ու դեն է վազում ու աշխատում է ազատվել ինչ որ բանից։ Եթե կանգնեցնենք ու դիտենք այդ մեղվին, կտեսնենք, որ նրա բարակ մեջքին կպած է այդ սև բարակ միջատը։

Մեղվի վրա մայկաները սխալմամբ են նստում, նմանեցնելով նրան ուրիշ վայրի մեղուների։ Դրա համար էլ փեթակ գալուց հետո, նրանք որոշ ժամանակից հետո կոտորվում-թափվում են ու շուտով անհայտանում։

Զարդային տարիները նրանք առանձնապես շատ են լինում։ Առանձին վնաս չեն հասցնում և նրանց դեմ պայքարելու միջոց մենք չունենք։ Լինում են մայիսի վերջերին, հունիսին և երբեմն դեռ հուլիսի սկզբներին։

Կրետներ

Կան զանազան տեսակի կրետներ, որոնք տարբեր չափով են վնասում մեղվին։ Ամենից ուժեղ վնասատուն արջակրետն է։ Սա կարմիր, շատ խոշոր, ուժեղ միջատ է։ Նա փեթակի առաջ հանկարծ բռնելով մի մեղվի՝ հեշտությամբ հաղթում է, նստում է որևէ տեղ, պոկում է թևերը, փորը, ոտները, թողնելով միայն մեղվի գլուխը, թևերը ու ոտները, թողնելով միայն կուրծքը։

Այդ կուրծքը նա տանում է իր բունը և մեղվի մսով կերակրում է իր որդերին։ Այս վնասատուն լինում է դաշտային վայրերում, բնակվում է հողի պատերի, գետնի մեջ, շինում է մի

քանի հարկ չէր՝ վահանների ձևով, բջիջները գետնի ներքև։ Բնի մեջ աշխատավոր կրետների թիվը յերբեմն հասնում է մինչև հազարի։

Նրանց դեմ կարելի յե պայքարել բները գտնելով ու քանդելով. ծխաշարի մեջ ծծումբ ենք լցնում ու նրանց արկնոցից ուժեղ ծուխ տալիս այնքան, վոր բնի տզյոցը կտրվում է և կրետները լռում են։ Դա նշանակում է արդեն, վոր բոլորն ուշաթափվել են ընկել։

Բլունգով կամ նիգով քանդում ենք հողը, բունը բացում, քանդում թափում ենք գետնին ու վառում տրորում։ Յեթե չայրենք, ուշաթափված կրետները նորից կկենդանանան ու կթռչեն, իսկ կնքած վորդերից դուրս են գալիս կրետներ։

Գարնանը պետք հետևել և վոչնչացնել նրանց մայրերին հենց ձմեռանոցի մեջ։ Ձմեռն ապրում են ու ընկնում գարուն միայն նրանց մայրերը, վորոնք գալիս են ձմեռանոց մեղու վորսալու. Շատ հեշտ է նրանց ֆանուլի կտորով կամ գլխարկով վայր գցել ու վոտքով տրորել։

Պետք է ի նկատի ունենալ վոր գարնան սպանած ամեն մեկ մայրը հավասարազոր է աշնան մեկ յերկու բնին, այսինքն հազարավոր կրետների, ուրեմն գարնանն առանձնապես պետք է պայքարել նրանց դեմ։

Բիզին, մանր ու մեծ կրետներն էլ բավական վնասում են մեղվին։ Բայց նրանցից մի տեսակն է, վոր մեղու յե վորսում. դա մեղվագայլն է, բարակ, մեղվից էլ դեռ փոքր, բավական մեծ գլխով։

Մյուսները մեղր են գողանում փեթակից։

Ճիշտ է, մեղուն ներսում նրանց հալածում է ու հաճախ սպանում, դուրս է գցում, բայց համենայն դեպս, նրանց հաջողվում է՝ մեղր գողանալ ու փախչելու։

Նրանց դեմ պետք է պայքարել նույնպես բները գտնելով ու քանդելով, վորը բավական դժվար է։ Աշնանն արկանոցների փոքրացումը խոշորապես օգնում է այդ գործին։

Գիշերային թիթեռ կամ մեռյալ գլուխ

Մեծ թիթեռ է, վոր մտնում է արկանոց ու մեղր ուտում։ Հաճախ մեղուները հարձակվում են վրան, խայթում, սատկացնում են, ու մենք գտնում ենք նրա դիակը հատակի վրա։ Առան-

ձին վնաս չի հասցնում։ Համենայն դեպս արկանոցները ցածր լինելիս այնքան մուտք չի կարող ունենալ նրա։

Մեղվակուլ

Թռչուններից կան շատ վնասատուներ, բայց նրանցից միայն մեղվակուլն է, վոր բավական վնասում է մեղվին։ Դա նախշուն և կոկտան ձայնով, կտուցը սուր մի թռչուն է, վորը գարնանը և աշնան ամպամած օրերին, առավոտ-յերեկո, յերբ մեղվի թռիչքը շատ թույլ է ու հատ ու կենտ մեղուներ են յերեվում օդում, անհագին քանակությամբ հավաքվում է մեղվանոցի գլխին ու մեղուներ վորսում։

Յեթե վորսորդական հրացան ունենանք և մի քանիսին սպանենք, մյուսները ցրիվ կգան։ Միշտ պետք է հսկել ու յերբեմն միայն կրակել, վոր մոտ չգան։ Այնքան խոշոր վնաս չեն հասցնում, վորքան վոր կարծում են վորոշ մեղվապահները։

Մկներ

Մուկը շատ վնաս է հասցնում. նա կրծում, փչացնում է պահեստի չիչերը. ձմեռանոցում բույն է դնում փեթակների մեջ և հաճախ կրծում է (սպանում) մեղուներին, ուտում է մեղրը ու փչացնում բնի չիչերը. մկներն ընդհանրապես շատ են անհանգստացնում ընտանիքին։

Մկներից ազատվելու միակ միջոցն այն է, վոր չեչերը լավ պարփակել կողպուսների ու փակ արկղների մեջ, վոր նա մուտք չունենա։

Նույնը և ձմեռանոցում փեթակի նկատմամբ. փեթակը պետք է լավ սարքված լինի, վոր վոչ մի տեղից մուկ չմտնի, իսկ արկանոցի ցանցը կարելի յե այնքան իջեցնել, վոր մուկը չկարողանա անցնել։ Ուշադիր և բարեխիղճ մեղվապահը մկներից յերբեք վնաս չի տեսնի։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՔՈՉՎՈՐ ՄԵՂՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական յեվ կազմակերպչական կողմը

Մեր յերկրի պայմաններում քոչվորական մեղվապահությունը, այսինքն մեղվանոցները բերքից-բերք տեղափոխելը շատ ձեռնտու յե, վորովհետև ցածր, դաշտային տեղերում գարունը շուտ ե գալիս, յեղանակները մեղմ են լինում, մեղուն լավ ե զարգանում և հետևաբար բերքն էլ շուտ ե սկսվում։

Յերբ մի տեղ բերքը վերջանում ե, սկսվում ե նրանից քիչ վերև, նախալեռնային մասերում։ Այդ ժամանակ լեռնային վայրերում արդեն ցրտերը ու քամիներն անցած են լինում և յերբ ներքևում զարգացած ընտանիքները տանում ենք նախալեռնային մասերը, նրանք ահագին բերք են տալիս։

Նրանից հետո ամառվա վերջին (հուլիսի վերջերին, օգոստոսի սկզբներին), յերբ արդեն նախալեռնային մասում բերքը վերջացել ե, փոխադրում ենք բամբակացան շրջանները, վորտեղ կան բանջարանոցներ, բոստաններ և վորտեղ ծաղկում են ուրիշ բույսեր։ Բավական յերկար ծաղկում ե նաև բամբակը ու զգալի բերք ե տալիս մեղվին։

Մեղուները տեղափոխելու արդյունքն այն ե լինում, վոր՝

1. մեղուն աշնանը գալով պաշար նորից բերք ե ունենում.

2. մայրն սկսում ե ձվել բավական ուժեղ թափով և ընտանիքն ունենում ե մինչև 3-4 շրջանակ վորդ ու ձու։ Այդպիսով ընտանիքի գրեթե ամբողջ կազմը փոխվում ե, նոր յերիտասարդ սերունդ ե առաջանում և ձմեռն էլ լավ ե ձմեռում.

3. աշնանը հնարավոր ե մայրաբուծությունը շարունակել ու բավականաչափ նոր մայրեր ունենալ.

4. կարելի յե բավարար քանակությամբ օժանդակ նուկլեուսներ (բնի շրջանակների վրա, մեկ փեթակի մեջ մի զույգ ընտանիք) կազմակերպել ու գարնանը դարձնել կանոնավոր ընտանիքներ կամ մայրերն օգտագործել.

5. ձմեռը բավական կարճ լինելով՝ ամենաթույլ ընտանիքը (նուկլեուս) պաշարով ապահովված լինելու դեպքում շատ լավ ե ձմեռում ու դիմանում ե մինչև գարուն։ Պաշարն էլ ձմեռվա ընթացքում շատ քիչ ե սպառվում.

6. գարնանը բավական վաղ կարելի յե սկսել մայրաբուծությունը և ընտանիքների բազմացումը։ Ընտանիքների զարգացումը նույնպես ընթանում ե ավելի հաջող և մինչև սար փոխադրելն ընտանիքները խոշոր ուժի յեն հասած լինում։

Ինչքան էլ վոր բերք ստանա նստակյաց մեղվանոցը, քոչվոր մեղվանոցի լավ կազմակերպման դեպքում, վերջինս կրկնակի բերք կարող ե տալ, յեթե լինեն հետևյալ հարմարությունները.

1. լավ ճանապարհներ՝ յերկաթուղի, խճուղի, կամ գոնե միջգյուղային սայլի սովորական ճանապարհ.

2. տեղափոխման միջոցներ՝ ավտոմոբիլ, հարմար ձևով շինված ձիասայլեր կամ յեզասայլեր և վերջապես ուղտեր.

3. փեթակները հարմարեցված լինեն հատկապես քոչվորության համար, այսինքն շինված լինեն վոչ հաստ նյութից, հատուկ ձևով, առանց ավելորդ և դուրս ցցված մասերի, տափակ կտուրով, ամուր, ունենան հատուկ միջնապատեր, արկանոցացանցեր, օդանցքներ և մեխվելու կամ փակվելու հատուկ հարմարություններ.

4. տեղափոխությունները կատարվեն յուր ժամանակին և առանց կորուստների, վորով հնարավոր ե լինում հաջորդական բերքերն օգտագործել հնարավորին չափ լրիվ կերպով.

5. աշխատակիցները պետք ե ունենան քոչվորության համար անհրաժեշտ բոլոր հարմարությունները։

Հատուկ ուշադրություն պետք ե դարձնել կարևոր պարագաների՝ փեթակների, շրջանակների, ցենտրոֆուգայի (թափամեղքենայի), մոմաթերթի և զանազան ուրիշ պարագաների հայթայթման վրա։

Յեթե վերև բերված այդ բոլոր հարմարությունները չկան, քոչվոր մեղվապահության գործը շատ ե դժվարանում ու հաճախ թե շատ ծախսեր ե պահանջում և թե շատ չարչարանք։ Այնպես վոր այդպիսի դեպքերում պետք ե լավ հաշվի առնել, թե արդյոք ավելի

ար չէ՞ մեղվանոցները պահել իրենց տեղում, չտեղափոխել, թեկուզ մի քիչ էլ բերքը պակաս լինի։

Այդ տեսակետից մեղվաբուծական տնտեսությունները պիտի լավ ուսումնասիրեն գործը և պարզ կերպով պատկերացնեն այդ գործի տնտեսական նպատակահարմարությունը։

Զանազան բերքերի օգտագործումը

Մեղվանոցների տեղափոխությունը կատարվում է հետևյալ նպատակներով.

1. տարբեր, իրար հաջորդող բերքերն օգտագործելու համար.
2. տեղում բերքը թույլ լինելու կամ չլինելու դեպքում, մի ուրիշ տեղի ավելի հաջող բերքը օգտագործելու համար։

Որովհետև մեզ մոտ առայժմ մեղրաբերքը գլխավորապես հիմնվում է բնական բուսականության վրա, դրա համար էլ մեր լեռնոտ երկրի համար խոշոր նշանակություն ունի, երբ մենք օգտագործում ենք տարբեր բարձրության վրա գտնվող վայրերի մեղրաբերքը։

Այդպիսով մեզ մոտ զանազան բերքերի հաջորդականությունը պայմանավորվում է տեղի բարձրություններով։

Լինում են նաև դեպքեր, երբ իրար հավասար բարձրությունների վրա գտնվող վայրերը կարկտի կամ տեղական երաշտի պատճառով անհրաժեշտ է լինում մի ուրիշ վայր տեղափոխել մեղվանոցը։

Հենց այդ տեսակետից էլ պետք է ընդհանրապես ամեն մի մեղվանոց տեղափոխությանը հարմարեցված լինի, եթե նույնիսկ նա նստակյաց է։

Վայրի ընտրությունը

Ամեն մի քոչվոր մեղվանոց, ի հարկե, ունի իր մշտական վայրերը, ինչպես մենք ասում ենք՝ իր արտադրական գիծը, որի վրա նա գնում-գալիս է։

Ի հարկե՝ բոլոր այն վայրերը, որտեղ մեղվանոց է տարվում, պիտի լավ ծանոթ լինեն մեղվապահին և նա տեղաշարժելու մոտավոր ժամկետները պիտի իմանա։

Չնայած դրան, ի հարկե, ամեն տարի երբ քոչելու ժամանակը մոտենում է անհրաժեշտ է նախորոք գնալ, ստուգել այն վայրը, որտեղ պիտի փոխադրվեն մեղվանոցները։

Երբ հին վայրում մեղրաբերքն սկսում է նվազել, մեղվապահն անմիջապես գնում է տեղափոխման վայրը ու դիտում է, թե այնտեղ բերքն ինչ դրության մեջ է և ինչ է սպասվում։

Մեղվանոցի տեղի ընտրությունը

Մանր մեղվանոցները գյուղի մեջ հեշտությամբ կարող են տեղ գտնել, իսկ արդյունաբերական խոշոր մեղվանոցները պետք ունենան իրենց հատուկ հարմարությունները, և ամենից ավելի հարմարն այն է, որ նրանք գյուղերից հեռու լինեն։ Բայց հաճախ այդ հարմարությունները չեն լինում և մեղվանոցն ստիպված են դնել գյուղի մեջտեղ կամ եզրերին։

Մեղվանոցի տեղն ընտրելիս պիտի պահպանել այն բոլոր կանոնները, որոնք մատնանշված են գարնանը տարվելիք խնամքի մասում։

Մեղվանոցի տեղափոխումը

Գարնանը և աշնանը, երբ մեղվի բույնը համեմատաբար փոքր է ու թեթև, մեղվի տեղափոխությունն անհամեմատ հեշտ է, քան ամառը, երբ ընտանիքը զորեղացել է, բույնը լիքն է և բնում նոր մեղրահացեր շատ կան։

Երբ փոխադրման տարածությունը շատ հեռու է և մեկ գիշերվա ընթացքում մեղուն տեղ չի հասնում, պիտի հատուկ միջոցներ ձեռք առնել, որպեսզի տեղափոխման ժամանակ փեթակի մեջ մեղուն չխեղդվի։

Նույնիսկ ամառվա շոգ ամիսներին բերքի ժամանակ ուժեղ ընտանիքները կարելի է ցերեկով փակված պահել, եթե փեթակը ցանցով է պատած և օդն ազատ խաղում է փեթակի ներսում։

Չնայած դրան, եթե հնարավոր է, պիտի խուսափել ցերեկվա տեղափոխությունից, որովհետև եթե մեղուն չի էլ խեղդվում, ապա չափազանց ջղայնանում է, իրեն չարչարում ու մի օրվա ընթացքում ավելի շատ է զառամում, աշխատունակությունից ընկնում, քան սովորական աշխատանքի ժամանակ՝ մի քանի օրվա ընթացքում։

Չնայած ցանցին, հաճախ ծանր շրջանակները փուլ են գալիս ու թե մեղրն է փչանում և թե մեղուն է կոտորվում։

Ցերեկ ժամանակ տեղափոխելիս հաճախ անհրաժեշտ է լի-
նում յերկաթուղով կատարել այն. բայց պատահում է, յերբ ճա-
նապարհը հեռու յե ու գնացքը մինչև առավոտ տեղ չի հասնում:
Պատահում է նաև, որ բարձած վագոնները շուտ տեղ չեն հաս-
նում, չնայած ճանապարհը հեռու էլ չի:
Ցերեկն սայլով տեղափոխելիս նույնպես ստիպված ենք
լինում փակված պահել արկղների բերանները: Դա այն դեպքում,
յերբ հնարավորություն չունենք սայլերից իջեցնելու ու ցերեկ
ժամանակ բացելու արկղները: Այս դեպքում կամ պետք է ճա-
նապարհը շարունակենք կամ պետք հենց ենպես բարձած պա-
հենք ու յերեկոյան կողմը ճանապարհը շարունակենք:
Հաճախ փոքր տարածությունների վրա էլ, հենց մի գի-
շերվա ընթացքում, ուժեղ ընտանիքները չափազանց տուժում են,
իսկ յերբեմն բոլորովին խեղդվում, մանավանդ յերբ մենք ստիպ-
ված ենք յերեկոյան արկղները շուտ փակել և առավոտն էլ բեռ-
ներն ուշ ենք իջեցնում ու արկղներն ուշ ենք բաց անում:
Ուրեմն՝ իբրև կանոն պետք է ընդունել, որ ընդհանրապես
քոչվոր մեղվանոցները պետք է ապահովված լինեն վրայի ցանցե-
րով ու արկղացանցերով:
Դա այն միջոցն է, որով քոչվոր մեղվանոցը մի անգամ
ընդմիշտ ապահովվում է զանազան պատահարներից և յերբեմն
կարող է նույնիսկ ցերեկները ճանապարհ գնալ:

Տեղափոխման սարքը

Ամենից առաջ թվենք այն բոլոր անհրաժեշտ գործիքները,
վորոնք մեղվապահը միշտ ձեռքի տակ պետք է ունենա տեղափո-
խությունը կատարելիս: Դրանք են՝ գլխի ցանցը, ծխարարն իր
պարագաներով, քերիչը, մուրճը, աքցանը, դանակը, լարերը և
բավականաչափ մանր ու մեծ մեխեր: Լավ կլինի ունենալ նաև
մեկ հատ բավական յերկար պահեստի պարան, բեռների պարա-
նը պակսելու դեպքում գործածելու համար:
Ամենագլխավոր հարմարությունը, որ պետք է ունենա քոչ-
վոր փեթակը, դա բաժանարարներն են: Վերևի բաժանարները
շինվում են սովորական թիթեղից: Թիթեղից կտրում են մի
գույգ շերտ յերկու սանտիմետր լայնությամբ և 45 սմ յերկա-
րությամբ (փեթակի ներսի լայնքը): Թիթեղը մկրատով կտրում,
դրանց կողքերից համապատասխան չափսերի ատամներ ենք

թողնում, վորպեսզի շրջանակն ընկնի նրանց արանքներն ու ա-
մուր մնա:
Ներքևի բաժանարարները շինվում են յերկու—յերեք մմ
հաստություն ունեցող մետաղալարից. պետք է ընտրել նրա բավա-



Նկ. 32. Վերևի բաժանարար

կան փափուկ տեսակը, վոր հեշտությամբ ծալվի: Ներքևի բա-
ժանարարն իր ծայրով ամրանում է պատերին և հատակի հետ
վոչ մի կապ չունի, այնպես վոր հատակը կարելի յե ազատ դնել
ու հանել: Բաժանարարի ներքևի կողմը շատ քիչ բարձր պետք է
լինի հատակից, վորպեսզի չլինի թե շրջանակը բարձր մնա:



Նկ. 33, Ներքևի բաժանարար

Արկղացանցը շինվում է 6 սմ լայնություն, 30 սմ յերկարու-
թյուն և մեկ ու կես սմ հաստություն ունեցող յերկաթից: Ծայրերին
յերկար անցքեր են շինում փեթակին մեխելու համար. Ներքևի կող-
մից նույն ձևի նեղ անցքեր են բաց անում սանրի ատամների
նման, միայն ատամների ծայրերը միացված են, իսկ վերևի կող-
մից մեկ սմ լայնությամբ կեռում դեպի առաջ, թողնելով ծայրե-
րից առանց կեռելու 4-5 սմ տարածություն:

Արկանոցացանցը միշտ մեխած է արկանոցի վրա։ Փեթակը տեղում դրված ժամանակ բաց, ձրացնում են ու մեխերն ամրացնում, իսկ տեղափոխման ժամանակ իջեցնում են և արկանոցը փակում։



Նկ. 34. Արկանոցացանց

Այդ ձևի արկանոցացանց չլինելու դեպքում գործ են ածում ծակծկված թիթեղից կամ հենց մետաղե ցանցից շինած փակեր։

Քոչվոր մեղվանոցների համար այդ սարքն անհրաժեշտ է, առանց դրա տեղափոխության ժամանակ թե շատ չարչարանք է լինում և թե շատ վնաս է հասնում մեղուներին, վորովհետև շրջանակներն առանց վերևի ու ներքևի բաժանարարների լցվում են իրար վրա, դիպչում են իրար, մեղուն կոտորվում է և նրանց հետ հաճախ նաև մայրը։

Նշված սարքի հետ միասին պետք է ունենալ նաև փեթակի վրայի ցանց՝ յուրաքանչյուրի համար առանձին։

Փայտե շրջանակների վրա մեխվում է մետաղե ցանցը, վորը տեղափոխման ժամանակ ծածկոցը վերցնելով հարմարեցնում ենք փեթակի բերնին։

Կարելի է նաև ցանցի չորս կողքերին կարել կտորներ ու ծածկոցի նման գցել փեթակի վրա, վորից հետո դնել կտուրը։

Յեթե կտուրն ունի կողքերից բավական լայն անցքեր, նման կտորով պատած ծածկոցն ավելի լավ է, վորովհետև լույսը պակաս կլինի և այնքան չի ազդի մեղվի տրամադրության վրա։

Բացի այդ, հաճախ փեթակի կողքին հատուկ բռնիչներ են

մեխում ու տեղափոխման ժամանակ նրանցով ամրացնում հատակն ու կտուրը։ Այդպիսի բռնիչներ այժմ դժվար է ունենալ, մանավանդ, վոր ավելի հեշտ և ապահով է ուղղակի մեխելը։ Հատակն ամրացնում ենք կորպուսին 4 թեթև մեխով՝ ամեն մեկ կողմից յերկու հատ իրարից բավական հեռու, իսկ կտուրը տեղափոխման ժամանակ մեկ-մեկ բավական խոշոր մեխերով մեխվում է կորպուսին։

Փեթակն այդ ձևով տասնյակ տարիներ փոխադրվել է և վոչ մի անհարմարություն չի զգացվել։ Կարևորն այն է, վոր մեխերը խփելիս ու հանելիս մի քիչ զգույշ լինեն, չվնասեն փայտը, չճեղքեն, չջարդեն այն։ Դրա համար պետք է գործածել համապատասխան մեծության մեխեր (մինչև 6 սմ), և խփելիս օգտագործել հին անցքերը, աշխատելով ամեն անգամ նոր անցքեր չբանալ։

Բառնալը

Փեթակներն ավտոներում և վագոններում բառնալիս յերկու հոգի վերև են բարձրանում, իսկ մնացածները ներքևից փեթակներն են տալիս։

Բառնալիս պետք է փեթակները շարել իրար վրա ուղիղ շարքերով, այնպես վոր ամեն մեկ փեթակ լավ հարմարվի իր տեղում և շատ հենված չլինի իր հարևան փեթակի վրա։ Թոկերով կապելիս պետք է ամեն մի շարքի վրայից թե առջևից և թե կողքերից մեկական փաթեթ անցկացնել ու ապա պարանն ամբողջ բեռի շուրջը պատել, ձգելով ամեն մեկ պարանից առանձին, վորպեսզի ամրանա։

Տեղափոխելու ժամանակ մեղվապահը և աշխատակիցները պետք է ունենան բավականաչափ յերեսի ցանցեր։ Այն դեպքերում, յերբ կողմնակի բանվորներ էլ են աշխատում, նրանց համար էլ պետք է ունենալ պահեստի ցանցեր։

Ճանապարհին մի ամանի մեջ պետք է ունենալ ցեխ, վորպեսզի հարկ յեղած դեպքում այդ ցեխով հնարավոր լինի բանել այն անցքերը, վորտեղից մեղուն հանկարծ կարող է դուրս գալ։

Յերկաթուղով յերբեմն և սայլով կամ ավտոյով տեղափոխելիս անհրաժեշտ է մի փակ ամանով ջուր վերցնել։ Յերբ մեղուն ցերեկն ստիպված ենք տեղափոխել և փեթակի յերեսը ցանցով ապահովված չէ, մեղուն խռնվում է արկանոցացանցի յետևում ու արկանոցն ամբողջ բռնվում այնպես, վոր այլևս օդ չի անցնում ներս ու մեղուն խեղդվում է։

Ահա այդ ժամանակ պետք է ջուր ցրիվ տալ արկանոցից դեպի ներս։ Ուժեղ հարվածներով ջուրը մի քանի անգամ պետք է խփել արկանոցացանցին։ Այդպիսով մեղուները վախեցած յետ են քաշվում և արկանոցից թարմ օդ է անցնում ներս։

Բացի այդ, մեղուն ջրի կարիք էլ է զգում և կարող է օգտվել հատակին շաղ տված ջրից։ Շատ հաճախ բոլոր փեթակները պետք է այդ ձևով ապահովել։ Դրա համար պիտի աշխատել փեթակները այնպես բառնալ, որ արկանոցները մեղվապահի համար մատչելի լինեն։

Ի հարկե, գարնանը և աշնանը հաճախ դա կարող է ավելորդ լինել։

Վագոնները բառնալու ժամանակ պիտի աշխատել փեթակներն իրենց յերկարությամբ դնել վագոնի յերկարությամբ, որովհետև ցնցման ժամանակ շրջանակի մեջ մեղրահացն ավելի ուշ է ջարդվում։

Բեռը ցած տանելու ժամանակ, յերբ մեղու յե՛ դուրս գալիս, պիտի ցեխով բռնել անցքը և կոտորել դուրս յեկած մեղուն, իսկ յեթե մեղուն շատ է դուրս թափվել և անցքն էլ այնպիսի տեղից է, որ հնարավոր չի բռնել, ուրեմն պիտի անմիջապես մյուս բեռներն իրենց անասուններով հեռացնել, վտանգված բեռն իջեցնել ու անասունին հեռացնել այդ փեթակների մոտից։

Յերբեմն, յերբ մեղուն արդեն խայթում է անասունին և ժամանակ չկա պարանի կապերն արձակելու, պետք է դանակով շտապ կտրտել կապերը և անասունին բեռի տակից փախցնել։

Յեթե իջեցրած փեթակներից մեղու քիչ է դուրս յեկել, հնարավոր է ծխով ներս քշել, անցքերը բռնել, դուրսը մնացած մեղուներին կոտորել ու անմիջապես բառնալ ու շարունակել ճանապարհը։

Ճանապարհին լապտերը պիտի միշտ վառ լինի, որ լույսի տակ հնարավոր լինի թե բոլոր բեռները և թե առանձնապես վտանգված փեթակները դիտել ու օգնության գալ նրանց։

Յերբեմն բեռը վայր է թափվում, ընկած փեթակը ջարդվում է, մեղուները դուրս են խուժում։ Պատահում է նաև, որ շրջանակներն իրենց վրա նստած մեղուներով ցրիվ են գալիս փեթակից դուրս։

Այդպիսի դեպքերում արդեն բեռնելն անհնար է պահել։ Այդ փեթակները հենց այդպես էլ պետք է պահել տեղում ու մնացած բեռները ճամբու դնել։

Մեղվապահը թե իր գլուխը և թե ամբողջ մարմինն ապահովում է մեղվից ու կարգի բերում փեթակները։

Գիշերը մեղուն աննկատելի կերպով քաշվում է մարդկանց շորերի տակ, ուրեմն գիշերն առանձնապես կարելի յե կապել թեվերի ու շալվարի բերանները, որ մեղու չանցնի։

Իրարից անջատված փեթակի մասերը, կորպուսը, հատակն ու կտուրը միացնում ենք, նորից հարմարեցնում իրար հետ, ապա ցրիվ յեկած շրջանակները հավաքում ենք և կարգի բերում փեթակը։

Յեթե փեթակի որևէ մասը ջարդված է, կարելի յե ժամանակավորապես ամրացնել մեխերով ու տեղ հասցնելուց հետո նորոգել կամ փոխել անպետք մասը։

Առավոտը կամ հենց գիշեր ժամանակ այդ փեթակների արկանոցները բացում ենք, ցրիվ յեկած մեղուները կամաց-կամաց քաշվում են ներս, ընտանիքը մինչև յերեկո խաղաղվում է, որից հետո կարելի յե բառնալ ու տանել։

Յերբեմն լինում է, որ վայր ընկած փեթակներում ընտանիքը բոլորովին ոչնչանում է և այլևս հնարավոր չի վերականգնել թեկուզ նրա մի որոշ մասը։

Տեղափոխումը

Դեռ ցերեկով պիտի հոգ տանել.

1. որպեսզի տեղափոխման ժամանակ վագոնները, ավտոները, ուղտերը, ձիերը, էշերը և այլն պատրաստ լինեն.

2. արկանոցները մաքրել ամեն ձևի ավելորդ բաներից—հին ցեխի մնացորդներից, թղթերից և այլն, որպեսզի արկանոցացանցը հեշտությամբ փակվի, նրան ոչինչ չխանգարի ու միաժամանակ օդն անարգել անցնի վանդակի միջով.

3. պիտի լավ ստուգել ծածկոցները, փոխել հները, փեթակի ճեղքերը սվաղել ցեխով կամ կավով, մեխել կտուրները, այնպես որ բաց մնան միայն արկանոցները.

4. պատրաստ պահել բոլոր անհրաժեշտ պարագաները, որոնք մեղվապահը պիտի վերցնի իր հետ։

Մութն ընկնելու ժամանակ, յերբ արդեն մեղուն քաշվել է ներս և միայն հատ ու կենտ մեղուներ են դեռ թռչում, մեղվանոցում, ծխարարում ծուխ պիտի անել, վառել լապտերն ու սկսել արկանոցները մեխել։

Ոգնականը լապտերով լույս է անում, մեղվապահը մուրճով

թեթև խփում է արկանոցացանցի վրա գտնվող կնճի յեզրին ու մի հարվածով իջեցնում մինչև հատակը։

Յեթե մեղուները խմբված են արկանոցի առաջ ու ներս չեն քաշվում, պիտի քիչ-քիչ ծուխ տալ, վոր քաշվեն ներս ու հետո արկանոցը փակել։ Մեղվապանը լույսով ստուգում է, թե արդյոք արկանոցը լավ է բանվել և ապա մի մեխ խփում արկանոցի վրայից՝ մեջտեղից ու մեխի գլուխը կեռում ներքև, վոր արկանոցացանցը չշարժվի։

Ընդհանրապես ինչով էլ վոր բանելու լինենք արկանոցը, պիտի այնպես մեխել, վոր. 1, արկանոցափակը հանկարծ վորևէ պատճառից չբացվի, այսինքն բավականաչափ ամուր լինի, 2 վորպեսզի նոր տեղում, համենայն դեպս, բավական հեշտությամբ բացվի։

Այդ նպատակով, իբրև կանոն, խփված մեխերի գլուխները պիտի միշտ ազատ լինեն, վորպեսզի աքցանով հնարավոր լինի հեշտությամբ հանել այդ մեխերը։

Թե բառնալու ժամանակ և թե-բառնալուց հետո մեղվապանը պիտի ստուգի բեռները։

Յեթե արկանոցները մեխելու կամ բեռները բառնալու ժամանակ վորևէ փեթակից մեղուն դուրս է թափվում, այդ փեթակը պիտի հանգիստ թողնել մինչև բեռները բառնալ—վերջացնելը, վորով և մեղուն կհանգստանա ու կքաշվի ներս։ Յեթե դուրս յեկած մեղուն շատ չի, պիտի կոտորել ու առանց հետաձգելու անցքը բանել։

Ճանապարհին, ինչպես արդեն ասել ենք, մեղվապանը միշտ պիտի զգույշ լինի ու հետևի բեռներին։

Տեղ հասնելուն պես պիտի բեռներն իջեցնել, անասուններին և շրջապատի մարդկանց հեռացնել, փեթակները դասավորել սովորական կարգով, առանց հետևելու համարներին և ապա արկանոցները բացել։

Մեղվապանը գլուխը, ձեռներն ու վոտներն պաշտպանում է մեղուներից և մեղվանոցի աջնի ծայրից սկսելով բացում է արկանոցները։ Առաջ աքցանով քաշում հանում են մեղվանոցի ամբողջ մեխերը և հետո արկանոցացանցերը բարձրացնում ու ամրացնում են, վոր չիջնի։

Այդ բանը պիտի շտապ կատարել ու ավարտել, վորովհետև հաճախ ընտանիքը խեղդվում է վերջին մի քանի րոպեյում բեռներն իջեցնելուց հետո։

Նույն օրը մի քանի ժամից հետո, յերբ մեղուն թաչում հանգստանում է. պիտի կտուրների մեխերը հանել ու բներն ստուգել։ Յեթե վորևէ փեթակի շրջանակները խախտվել են տեղից, պիտի անմիջապես ուղղել և բունը կարգի բերել։

Յեթե ճանապարհին շրջանակ է փուլ յեկել ու մեղրը ծորում է, պիտի այդ փեթակը դնել առանձին ու բեռներն իջեցնելուց հետո, մաքրել, կարգի բերել։ Յեթե բերք չկա ու գողության վտանգ կա, ուրեմն այդ փեթակը պիտի տանել փակ շենքի մեջ ու այնտեղ կարգի բերել։

Հաճախ այդպիսի փեթակների մեջ մնացած են լինում յերկու յերեք անմնաս շրջանակ և քիչ մեղու։ Պիտի ստուգել, յեթե մայրն անմնաս է, կարելի յե հոգ տանել, վոր դառնա կենսունակ ընտանիք, իսկ յեթե շատ թույլ է և մայրն էլ կորցրել է, ուրեմն պիտի միացնել կամ դարձնել նուկլեուս։

Ինվենտարի տեղափոխությունը կատարվում է սովորաբար մեղվանոցից առանձին։ Առաջ տեղափոխում են մեղվանոցը, հետո նոր ինվենտարը, վորը տեղափոխման ժամանակ մեղվանոցումն է լինում։

Միայն գնացքով տեղափոխելիս հնարավոր է ամբողջ ինվենտարը տանել մեղվանոցի հետ միասին։

Ինչով էլ վոր տեղափոխելու լինենք մեղվանոցը, ամենից առաջ պիտի հոգ տանել, վոր.

1. մեղվանոցի կարիքների համար միշտ ձեռքի տակ պատրաստ պիտի ունենալ բավականաչափ չեչեր կամ ժամաթերթած շրջանակներ, վորովհետև բերքի ժամանակ մեկ-յերկու օր կորցնելը խոշոր նշանակություն ունի, այնինչ հաճախ կենտրոնից շատ են ուշացնում անհրաժեշտ պարագաները.

2. չեչերը պիտի այնպես պարփակված լինեն, վոր թե փոշուց ու կեղտոտություններից և թե մեղուների հարձակումից ազատ լինի։

ԳԼԽԱՎՈՐ ԲԵՐՔԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Ամեն մեկ վայրում, նայած իր ցածր ու բարձր դիրքին ամառվա մեջ մի որոշ ժամանակ լինում է գլխավոր բերք, որովհետև հենց այդ ժամանակ զուգադիպում են մի քանի նպաստավոր պայմաններ, այսինքն.

1. Ծաղկում են ամենալավ ու առաջնակարգ մեղրատու բույսերը.

2. Օդի ու յեղանակի բարեխառնությունը լավ է լինում և նպաստում է նեկտարի առատ արտադրությանը։

Այդ բերքի տևողությունը և ուժեղությունն ուղղակի կախում ունեն անձրևներից, նայած թե ինչքան անձրև է յեկել և գալիս է ու բուսականությունն ինչքան թարմ է։

Հայաստանի մի քանի շրջաններում (Ստեփանավան, Կիրովական, Դիլիջան), նաև շատ բարձր վայրերում (մինչև 2000 մետր և ավելի) անձրևաշատ տարիները մեղվի աշխատանքը խանգարվում ու հաճախ բուսականության բերքատվությունն էլ պակասում է։

Չորային տարիները բերքը կարճատև է լինում և յերբեմն շատ աղքատ, տևողությունը 10—15 օր, իսկ խոնավ տարիները տևում է 20—30 օր։

Մինչև այդ թե գարնան և թե ամառվա բոլոր բերքերը համարվում են օժանդակ և նպաստում են մեղվի ընտանիքի զարգացմանն ու ծավալմանը։

Այդ նախապատրաստական շրջանում, ինչքան շատ բանվոր ուժ կուտակվի փեթակի մեջ, այնքան ուժեղ և լրիվ կերպով կօգտագործվի մեղրաբերքը։

Դաշտային վայրերում գլխավոր բերքն սկսվում է մոտավորապես հունիսի սկզբներից, խոնավ տարիները տևում է մինչև հունիսի վերջը և միշտ համեմատաբար ավելի թույլ է լինում, քան սար տեղերում։

Սար տեղերում գլխավոր բերքի շրջանը հունիս ամիսն է, ի հարկե նայած տարիներին. այնպիսի տարիներ են լինում, որ ուշ կամ շուտ է սկսվում ու ուշ կամ շուտ վերջանում։

Գլխավոր բերքի նշանները շատ որոշ են՝ ամենից առաջ կշռափեթակն սկսում է ուժեղ հավելում ցույց տալ, յեթե մինչև այդ բերքը 100—150 գրամ էր, ապա բավական ավելանում է ու օրեցօր բարձրանում է։ Յերբեմն միայն վատ յեղանակներին պակաս է ցույց տալիս, բայց ընդհանրապես վորոշակի կերպով բարձրանում է։

Մինչ այդ մեղրի կուտակում չի նկատվում ու ընտանիքն ուժեղ կառուցողական աշխատանքներ է տանում, մայրը դեռ ուժեղ կերպով ձվում է, նկատվում է ուժեղ սպիտակացում շրջանակների վերևի կողմը։

Յեթե կշռափեթակն ավելի բարձր բերք է ցույց տալիս, դա արդեն բուն մեղրաբերքն է, մեղրի կուտակման շրջանը։

Սա այն ժամանակն է, յերբ արդեն մեղրի ուժեղ կուտակում է նկատվում. մեղրն սկսում են կնքել շրջանակների վերևում, մոր ձվարկությունն էլ սկսում է պակասել։

Յերբ բերքն հասնում է որոշ կետի, դիցուք օրական 3 կգ-ի (կամ 4 և ավելի, նայած տեղին) և հետևյալ օրը կարծես առանց մի պատճառի նվազում է, և ապա օրեցօր ավելի պակաս ու պակաս է ցույց տալիս, ապա դա յերրորդ շրջանն է, մեղրաբերքի վերջը։

Այդ ժամանակ կառուցողական աշխատանքը բոլորովին վերջանում է, մեղրն ուժեղ կերպով կնքում են, կողքի շրջանակների վրայից մեղուն վորոշ չափով քաշվում է, բնի ներսը տված մոմաթերթը կամ կիսատ չեչը թողնում են անձեռնմխելի, մեղուն սկսում է գալ մեղրի վրա (վրա յէ տալիս) գողությունն է սկսվում և մայրը ձվարկությունը բոլորովին պակասեցնում է։

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳԼԽԱՎՈՐ ՄԵՂՐԱԲԵՐՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Գլխավոր բերքի ժամկետները և նրա սկիզբը

Մինչև գլխավոր մեղրաբերքի սկսվելը սովորաբար ձագերն արդեն վերցված են լինում և նրանց մեծամասնությունը բեղմնավորված մայրերով ապահովված է լինում։

Ուրեմն այդ ժամանակ մեղվանոցում ունենում ենք մայր ընտանիքներ և ձագեր, սակայն նրանց մեջ պիտի ուժի տարբերությունը այնքան մեծ չլինի։ Այսինքն, ինչպես արդեն գիտենք, աշխատանքները պիտի տարվեն այնպես, որ ձագն այնքան թույլ չլինի և զարգանալու ու բերք տալու կարողություն ունենա։

Դրա համար ձագը պիտի լինի վոչ պակաս, քան 6 շրջանակի վրա, իսկ մայր ընտանիքներն՝ առնվազը 8—10 շրջանակի վրա։ Ի հարկե հաջող գործողությունների և օժանդակ բերքերի

շնորհիվ կարող են և ավելի ուժեղ լինել։ Դա կախված է նրանից, թե ինչ քանակով ենք ձագ վերցնում։

Մեղրաբերքի առաջին շրջանում մենք պիտի աշխատենք մեղվին լծել ուժեղ կառուցողական աշխատանքի և այնպես անել, վոր մինչև այդ շրջանի վերջը գոնե բոլոր բները թե հիմնական ընտանիքներինը և թե ձագերինը լիքը լինեն, այսինքն միջին թվով 12 շրջանակն էլ լրիվ կառուցված լինեն ու զբաղեցված մեղրով, վորդով ու ծաղկափոշով։ Դրա համար մենք պիտի ունենանք անհրաժեշտ քանակությամբ մոմաթերթած պատրաստի շրջանակներ։

Բնի յերկու կողքերից էլ դնում ենք մեկական մոմաթերթ։ Հենց վոր մեղուն դրանց վրա սկսում է աշխատել, իսկույն մեկը կամ հենց յերկուսը մի անգամից տալիս ենք բնի ներսը ու կողքերից նորից մոմաթերթ տալիս։

Մեղուն ներս դրած մոմաթերթերը կառուցում է ու յուղացնում (2 կամ 3 օրվա ընթացքում), նայած բերքի ուժեղությանը, իսկ կողքի դրածների վրա սկսում է աշխատանքը։ Դրանից հետո նորից նույն բանն ենք անում — կողքի շրջանակները տալիս ենք ներսը, իսկ կողքերից նոր շրջանակներ դնում։

Մեղվապանը պիտի չափազանց զգույշ լինի և անընդհատ հետևի, վոր վոչ մի ընտանիք յետ չմնա ու նրա աշխատանքի տեմպը չդանդաղի։

Յերբ մի քանի ընտանիքներ ավելի շուտ են լցնում իրենց բները ու էլ տեղ չունեն, իսկ շատերի բունը դեռ կիսատ է, չպետք է ուժեղ փեթակների վրա վերնահարկ դնել։ Ավելի ձեռնտու յե հանել նրանցից մեկ-յերկու շրջանակ ու տալ կիսատ ընտանիքներին, իսկ վերցրած շրջանակների տեղ մոմաթերթ տալ։

Այդ բանն անելիս պիտի ուշի-ուշով հետևել և հիվանդ ընտանիքից շրջանակ չվերցնել։ Առհասարակ յերբ մեղվանոցում մի փեթակից մյուսը շրջանակներ ենք փոխադրում, պիտի մտցնել հետևյալ կանոնը ու յերբեք այս կանոնը չխախտել, ամբողջ մեղվանոցը բաժանել յերեքական փեթակների և ինչ վոր անելու յենք (տալ և առնելը) կատարել այդ յերեք փեթակների սահմաններում, այսինքն այդ փեթակներից դատ ուրիշ փեթակների վոչ շրջանակ տալ և վոչ էլ նրանցից առնել։

Այդպիսով հիվանդությունները այլևս ուժեղ չեն տարածվի ու ինչ վոր լինի այդ յերեք փեթակի սահմաններում կլինի։

Այս ձևով համասարեցնելով բոլոր ընտանիքները, մենք հասնում ենք մի նպատակի՝ թույլ ընտանիքները հնարավորություն են ստանում ուժեղանալու և լրիվ չափով օգտագործելու մոր ձվոտունակությունը, իսկ ուժեղ ընտանիքներից վերցնում ենք այն կուտակված ուժը, վորն արդեն ավելորդ է ընտանիքի ընթացիկ զարգացման և վորդ ու ձու խնամելու համար։

Այդ համասարեցումից հետո միայն անհրաժեշտ է դնել յերկրորդ հարկը՝ վերնահարկը կամ կորպուսը։

Կորպուսը դնելիս անհրաժեշտ է ներքևի լիք բնից մի քանի լիքը շրջանակներ բարձրացնել վերևի հարկը և դատարկ տեղերը մոմաթերթ դնել։ Յեթե չեչ կա, ավելի լավ է կորպուսը չեչով լցնել։

Յեթե դեռ յեղանակը լրիվ չի տաքացել և բերքն էլ բավական ուժեղ չի, ուրեմն կորպուս դնելիս պիտի բնի շրջանակների մեծ մասը, կամ հենց ամբողջ բունը բարձրացնել վերև, իսկ ներքևում տալ չեչեր, իսկ դրանք չլինելու դեպքում՝ մոմաթերթ։

Այդ ժամանակ կարելի յե նաև բնի շրջանակներից յերկուսը դնել ներքևում (կենտրոնում) և ներքևից յերկու դատարկ չեչ (կամ մոմաթերթ) բարձրացնել վերև և դնել բնի կողքերից։

Մի վորոշ ժամանակից հետո, յերբ նկատվից, վոր մեղուն սկսում է իջնել ներքև և վորոշ աշխատանք տանել. արդեն կարելի յե յերբեմն վերևից իջեցնել ներքև վորդով շրջանակներ ու ներքևից դատարկ շրջանակներ բարձրացնել վերև։ Այդպիսով կարելի յե հետզհետե հարկադրել մեղվին յուրացնել ամբողջ յերկու հարկը (մինչև 24 շրջանակ)։

Իսկ յեթե բերքն ուժեղ է և յեղանակները նպաստավոր են, հենց մի անգամից կարելի յե բունը կիսել, շրջանակների մի մասը բարձրացնել վերև, և յերկու հարկի պակասորդը լրացնել չեչով կամ մոմաթերթով։

Այդպիսով այդ բոլոր փեթակները բավականաչափ ուժ կունենան և տեղ կպատրաստեն մեղր լցնելու։

Բուն մեղրաբերքի շրջանը

Յերբ ուժեղ մեղրաբերքն սկսվում է, օրեցօր մեղրն սկսվում է կուտակվել փեթակի մեջ։ Այդ ժամանակ պիտի պատրաստություն տեսնել մեղր քամելու. ցենտրաֆուգան լվանալ, մաքրել մեղրի ամանները, պատրաստ պահել, սարքի գցել, դանակները սրել, պատրաստել մերեկների ամանները լվանալ, սարքել, հատուկ կորպուսներ պատրաստել՝ հանված շրջանակները դարսելու համար, շենքն համարեցնել՝ անցքերը բռնել, լուսամուտները ցանցով պատել, հարմար խոտերից փափուկ ավելներ պատրաստել՝ մեղուներին շրջանակների վրայից ավլելու համար։

Հենց այդ ժամանակվանից պետք ե ամեն կերպ աշխատել մեղվին կառուցման նոր աշխատանք չտալ։ Միայն այն դեպքում պետք ե նոր մոմաթերթ տալ, յերբ բոլորովին քամելու շրջանակ չկա և միևնույն ժամանակ մեղուն ուժեղ ե ու աշխատանք ե պահանջում։

Յերբ տեսնում ենք փեթակի մեջ արդեն մեղրն սկսել են կնքել (բավական թանձրացել ե) կարելի յե քամել։ Պետք ե սկսել մեղվանոցի մի ծայրից ու հերթով բոլոր փեթակներից հանել այն բոլոր շրջանակները, վորոնք բաց վորդ ու ձու չունեն, կամ վորդ բոլորովին չկա և կամ վորդն այնքան շատ չի ու ամբողջովին կնքված ե։

Բոլոր հանվող շրջանակների վրա գրվում ե փեթակի համարը, վոր մի փեթակի շրջանակը չընկնի մի ուրիշ փեթակի մեջ։

Բնում մնացող շրջանակները դասավորվում են և արանքներում տեղ ե թողնվում քամած շրջանակները դնելու։ Այսպես՝ աստիճանաբար քամվում են շրջանակները և անմիջապես դրվում իրենց համար թողնված տեղերում։

Այդպիսով վերջանում ե առաջին մեղրաքամը։

Առաջին մեղրաքամին, միջին հաշվով, ամեն մի փեթակից ի հարկե քիչ շրջանակ կհանվի (1—3), մեղրն ել պակաս ե լինում այդ շրջանակներում։

Պետք ե աշխատել, ինչքան կարելի յե, արագ կերպով քամել— վերջացնել ամբողջ մեղվանոցը։

Հաճախ բերքն այնքան ուժեղ ե, վոր մինչև մեղրաքամը վերջացնելը, արդեն առաջուց քամվածները նորից լցրած են լինում։ Մյուս շրջանակներում ել մեղրն ավելացած ե լինում, իսկ վորդի քանակն որեցոր պակասում ե։

Սկսում ենք յերկրորդ մեղրաքամը։ Նույն կարգով պետք ե ստուգել բոլոր բները ու քամել այն շրջանակները (առաջուց քամված կամ չքամված), վորոնց մեջ բավական մեղր կա և վորդի դրությունը չի խանգարում։

Ընդհանրապես մեղրաքամերի ժամանակ ամեն անգամ մեղվապահն անձեռնմխելի յե թողնում 6—7 շրջանակ և մնացածն ե միայն քամում, վորպեսզի, յեթե հանկարծ բերքը պակասելու լինի, այդ շրջանակները մնան իբրև բնի շրջանակներ՝ ձմեռվա համար։

Սկզբի մեղրաքամերին, յերբ բերքն ուժեղ ե և շարունակվում ե, քամված շրջանակները պետք ե դնել արանք-արանք, իսկ

յերբ արդեն կասկած կա, վոր բերքը կարող ե պակասել, այդ դեպքում պետք ե դնել բնի կողքերն ու բունն ամբողջացնել։

Յեթե մեղրաբերքը բավական յերկարատև ե, կարելի յե անցկացնել մի քանի մեղրաքամներ։ Այդ բոլորից հետո մնում ե վերջին մեղրաքամը՝ մեղրաբերքի վերջում։

Ընդհանուր առմամբ մեղվապահը պիտի լավ գիտակցի ու հասկանա բերքի դրությունը և բերքին ուղեկցող բնական պայմանները։

Խոնավ տարիները կարելի յե ավելի շատ քամել և մեղրաքամերի թիվը ավելի շատ կլինի (բացի վերև նշված շրջաններից)։

Իսկ այնպես տարի կլինի, վոր հազիվ յերկու մեղրաքամ կազմակերպվի, և հետևաբար քամվող շրջանակների թիվն ու մեղրի քանակը քիչ կլինի։

Իսկ յեթե տարին հաջող ե և կորպուսներ կամ վերնահարկեր շատ կան, ուրեմն և համապատասխան չափով մեղրը շատ կլինի։

Վերնահարկեր յեվ կորպուսներ

Յեթե մեղրաբերքի դեռ առաջին շրջանում ընտանիքներն ուժեղ են և մենք ունենք բավական քանակով վերնահարկեր ու կորպուսներ, ապա մեղրաքամն իր ձևերով վորոշ տարբերություն կունենա։

Յերբ մեղրի կուտակման շրջանում մենք սկսում ենք մեղրը քամել, յերկհարկանի փեթակների ներքևի հարկին ձեռք չենք տալիս, ու ինչ վոր քամում ենք, վերևի հարկից ենք քամում։ Ընդհանրապես չպետք ե սպասել, վոր շրջանակները լրիվ կերպով կնքեն։

Նկատված ե, վոր յերբ մեղվի աշխատանքը թողնում ես իր բնական ընթացքին, ապա մի վորոշ քանակությամբ մեղր հավաքելուց հետո նա այլևս այնքան մեղր չի տալիս, ինչքան կարող ե։ Դա բացատրվում ե նրանով, վոր դատարկ բջիջների քանակը պակասում ե, և մեղուն բավական ազատ տեղ չունի մեղրն առատորեն լցնելու։ Միևնույն ժամանակ նոր չեն կառուցելու հակումն արդեն թուլացել ե և նոր մոմաթերթ տալն ավելի կարող ե վնասել գործին։

Ի հարկե, յեթե մեղվանոցում պահեստի չեչեր շատ կան (վերնահարկի կամ կորպուսի), ուրեմն ավելի ձեռնտու յե դնել նոր վերնահարկեր, քան թե յեղածը քամել։

Սովորաբար առաջին (լիքը) վերնահարկը վերցնում ենք, բնի վրա դնում ենք նոր վերնահարկ ու սրա վրա էլ դնում լիքը վերնահարկը։

Նոր կորպուսներն էլ կարելի յե նույն ձևով դնել. այնպես, վոր կորպուսներով աշխատելու դեպքում ավելի ձեռնտու յե. շրջանակների մի մասը հանել, քամել ու ետ արանք-արանք դնել, միևնույն ձևով ինչ վոր մի հարկանի փեթակներինը։

Յերբ մեղրաբերքի 2 րդ շրջանը մոտենում է իր ավարտմանը, արդեն պիտի կորպուսների և բների շրջանակների դասավորությունը հիմնովին փոփոխել հետևյալ ձևով՝

Վերցնում ենք կորպուսն ու դնում մի կողմ՝ հատակի կամ վորևէ տախտակի վրա։ Ստուգում ենք ամբողջ բույնն ու հանում այն բոլոր շրջանակները, վորոնք վորդ չունեն։ Հետո ստուգում ենք մի կողմ դրած կորպուսը և վորդով շրջանակները դնում ենք մի քիչ առաջ հանվածների տեղը բնի մեջ։

Ի հարկե կարող է կորպուսում ել վորդով շրջանակ մնալ, դրա համար առաջին հերթին ընտրում ենք մատաղ վորդով շրջանակներն ու դնում բնի մեջ, ուրեմն կորպուսում մնում են միայն կնքած վորդով շրջանակները։

Այդպիսով կորպուսը զատում ենք ու նրա մեջ թողնում բոլոր այն շրջանակները, վորոնք յենթակա յեն քամելու։ Հենց այդ ժամանակ, ինչքան հնարավոր է, քամում ենք այդ շրջանակներն ու դնում կորպուսի մեջ։

Ուրեմն գլխավոր մեղրաբերքի առաջին շրջանում, յերբ կորպուս ենք դնում, աշխատում ենք ներքևի հարկում թողնել կնքած վորդով շրջանակները, իսկ վերևում մատաղ վորդն ու ձուն։ Իսկ հետագայում, ընդհակառակը, աշխատում ենք ամբողջ վորդը զետեղել ներքևում և, յեթե վորդով շրջանակներ ավելանում են, կնքածներից մի քանիսը թողնում ենք վերևում, վորպեսզի վորդը անմիջապես հետո այդ շրջանակները մեղրով լցնի ու հետո հանենք և քամենք։

Յեթե մեղրաբերքը դեռ շարունակվում է նույն թափով, կորպուսի շրջանակները նորից քամում ենք ու ապա կորպուսը բոլորովին վերցնում փեթակի վրայից։ Յեթե կորպուսի մեջ դեռ ես վորդով շրջանակներ կան, ներքևի հարկից հանում ենք վորդից ազատ շրջանակներն ու նրանց տեղը դնում կորպուսի վորդով լիք շրջանակները։

Կորպուսը վերցնում ենք փեթակի վրայից, վորպեսզի քանի դեռ մեղրաբերք կա, մեղուն զբաղվի իր բնի շրջանակները

լցնելով ու լրացնելով։ Մեղրաբերքը վերջանալիս մեղվի բույնը պիտի ապահովված լինի լիքը շրջանակներով, այսինքն հնարավոր լինի բնի շրջանակներից ընտրել պաշարով հարուստ շրջանակներն ու թողնել ձմռանը։

Այդ ժամանակ հենց նույն նպատակով պետք է վերցնել նաև վերնահարկը։

Մեղվապահը կարող է, ի հարկե, դժվարանալ ճիշտ ժամանակը վորոշելու, թե յերբ է հարկավոր վերևի հարկերը վերցնել։ Բայց դա այնքան էլ դժվար չէ, յեթե նա փոքրիշատե ծանոթ է տեղի բերքին և ծաղկող գլխավոր մեղրատու բույսերին։

Այդ ժամանակ կշռափեթակը ցույց է տալիս 2—4 կգ և յեթե մեղվապահը 1—2 անգամ դաշտ դուրս գա, ինքն էլ կնկատի, վոր գլխավոր մեղրատու բույսերը շուտով կսկսեն վերջանալ։

Բացի այդ, մեղրի ուժեղ կուտակումն ու արագ կնքումը փեթակների ներսում, նաև կառուցողական աշխատանքների դանդաղումը—այդ բոլորը հաստատ ապացույց են մեղրաբերքի շուտ վերջանալուն։

Վերնահարկ ունեցող կորպուսավոր բնատնիքների նկատմամբ չափազանց կարևոր է այդ, վորպեսզի ճիշտ ժամանակին այդ դրությունը պարզվի ու գործողությունը կատարվի։

Բանի վոր այդ ժամանակ մեղրաբերք կա, ուրեմն վերցրած կորպուսներն ու վերնահարկերը կարելի յե պարապ չթողնել, դնելով այն ուրիշ փեթակների վրա, վորոնք մինչև այդ վերևի հարկ չեն ունեցել։

Դա կարևոր աշխատանք է, վորովհետև այդ փեթակներն, արդեն ինչքան հարկն է, լցրել են բնի շրջանակները ու մեղուներն իրենց վերջին բերածները կդասավորեն վերևում դրված չեչերի մեջ։ Իսկ յեթե չկան այդպիսի լիք բներ, ուրեմն այլևս հարկ չպետք է դնել։

ՄԵՂՐ ՔԱՄԵԼԸ

Մեղր քամելու ժամանակը

Յերբ հավաքած մեղրը հասունանում է, մեղուներն սկսում են կնքել, այսինքն մեղրով լիքը բջիջների բերանը ծածկում են մոմի բարակ շերտով։ Սերեկած մեղրը յերկար տարիներ կարող է մնալ առանց փոփոխության, յեթե տեղը չոր լինի։

Յերբ բերած մեղրը դեռ չի թանձրացել ու ջրային մասը

տա է, չի կարելի քամել, վորովհետև այդպիսի մեղրը թթվում է ու յերեսը փրփուրով ծածկվում։

Բայց յերբ շրջանակների վերևի կողմը մեղրը բավական սերեկված է, արդեն կարելի յե քամել և այդ մեղրը գրեթե չի տարբերվում սովորական մեղրից։

Միանգամայն սխալ ու տնտեսապես վնասակար բան է թողնել ամբողջ մեղրը մինչև մեղրաբերքի վերջը ու նոր քամել։

Գլխավոր մեղրաբերքի ժամանակ, մեղրի կուտակման շրջանում, պետք է աստիճանաբար մեղրը քամել և փույթ չի, յեթե առաջին մեղրաբերքից ստացված մեղրը, վոր այնքան էլ շատ չի լինում, մի քիչ ջրի յե լինում։ Այդ մեղրը յերբեք չի թթվում և լավ հատկություն ունի։ Այդ ժամանակ ազատելով մեղվին կառուցողական աշխատանքից, մենք տեղ ենք տալիս մեղվին արագ մեղր լցնելու։ Այդպիսով մեղրի վերջնական քանակը գրեթե կրկնակի չափերի յե հասնում։

Բացի այդ բոլորը, յերբ մենք ամբողջ մեղրը թողնում ենք քամելու բերքի վերջում, այսինքն այն ժամանակ, յերբ արդեն մեղուն վրա յե տալիս, դրանով մեր աշխատանքը չափազանց դժվարանում է ու հաճախ շատ վտանգավոր դառնում։

Սկիզբը

Յերբ մեղվանոցում մեղրաքամն սկսվում է, բացի մեղվապահից ու նրա ոգնականից, անհրաժեշտ է նաև յերկու բանվոր։

Մեղվապահը շրջանակներն է հանում ու դնում մի դատարկ կորպուսի մեջ և քամված շրջանակները դասավորում, ոգնականը ներսում սերեկներն է վերցնում ու շրջանակները դնում մեղրահանի մեջ։

Յերկու բանվոր կորպուսով շրջանակները պատգարակով տանում են ներս ու այնտեղից բերում քամվածները։ Միևնույն ժամանակ նրանք պտտեցնում են մեղրահանի թևը (բռնակը)։

Մեղրահան մեքենան պիտի այնպես ամրացնել, վոր չշարժվի. կարելի յե հատուկ փայտե պատվանդան ունենալ կամ մի կորպուսի վրա ամրացնել ու քամել։ Այդ դեպքում մեղրի ամանը կտեղավորվի ծորակի տակ, վորովհետև մեղրահանը բարձր է կանգնած։

Կարելի յե նաև հենց գետնի վրա ամրացնել, ծորակի տակը մի փոս փորել ու ամանը դնել այդ փոսի մեջ։

Մեղրահանը պիտի այնպես դնել, վոր յերբ աջ ձեռքով թեվը պտտեցնում ես, ծորակը առջևդ լինի, այսինքն թևը պտտացնողը հնարավորություն ունենա միշտ դիտելու լցվող ամանը, վոր չթափվի։

Սերեկների ամանը պիտի դնել մեղրահանից ջվոչ հեռու՝ թեվը պտտացնողի հակառակ կողմն այնպես, վոր թե լույսն ընկնի քերվող շրջանակի (դանակի) վրա և թե մոտը բավական ազատ տարածություն լինի շրջանակով լիքը կորպուսը դնելու, վորպեսզի լիքը շրջանակները սերեկ վերցնողի ձեռքի տակ լինեն ու առանց տեղից վերկենալու կարողանա վերցնել։

Ոգնողներից մեկը բերված շրջանակների վրայից քերում է դանակով ավելորդ մոմերը մի անկյունում դրված հատուկ արկղի մեջ։

Սերեկ վերցնողն իրեն նստելու համար տեղ է սարքում։ Շրջանակի մի ականջը ձախ ձեռքին, մյուս ականջը հենում է սերեկների ամանի վրա դրած փայտե վանդակին ու, պահելով շրջանակը քիչ թեքված վիճակում, լույսի դեմ դանակով ներքևից սկսում է վերցնել սերեկը ու շարժվել դեպի վեր։

Հաստացրած հացերը պիտի բարակեցնել ու նորմալ չափի հասցնել, իսկ նորմալ շրջանակներինը զգուշորեն վերցնել, վոր սեդանակը շատ խորը չգնա ու հաճախ չվնասի մեղրահացին։ Սերեկը պիտի վերցնել մաքուր ու չջարդել բջիջները։ Սովորաբար մոտիկ դնում ենք պրիմուսի վրա մի ամանով տաք ջուր ու դանակները անընդհատ թաթախում մեջը։

Նկ. 35. Մեղրի դանակ

Բայց շատ մեղվապահներ ջուր բոլորովին չեն գործածում և գործը նույնպես հաջող է գնում։ Դրա համար պիտի դանակները միշտ սուր պահել (չարխով բերանները հանել ու հեսանով սրել) և մեղրը տաք-տաք քամել, այսինքն՝ յեթե շրջանակները սառն են, շենքը տաքացնել մինչև 25 աստիճան (Ց), մի քանի ժամ այդ մթնոլորտում պահելուց հետո նոր միայն քամել շրջանակները։

Յեթե մեղրը ժամանակին հանվի փեթակի միջից և մինչև մեղրաբերքը բոլորովին վերջանալն արդեն ամբողջ մեղրը քամվի, ապա, յեթե հանելուց անմիջապես հետո շրջանակները քամ-

վեն ու չմիս պահեստում է սառեն, ուրեմն շենքն էլ տաքացնելու վոչ մի կարիք չի լինում, պետք չի լինի նաև տաք ջուրը.

Սերեկները դանակի բերանից թափվում են սերեկի ամանի ցանցի վրա ու մեղրը քամվում է ներքև։ Յերբ յերեկոյան գործը վերջանում է, յեղած սերեկը պետք է ձեռներով լավ տրորել, ջարդել ու թողնել վոր մնա ցանցի վրա։

Մինչև առավոտ նա լավ կքամվի, իսկ չջարդվածը լավ չի քամվում։ Առավոտը հին սերեկները գունդ-գունդ վերցնում ենք, լցնում ենք մի առանձին ամանի մեջ, իսկ նրանց տեղը նոր սերեկներ են լցնում։ Յերբ ցանցի տակի ամանը լցված է, դատարկում ենք ու նորից դնում։

Շրջանակը մեղրահանի մեջ այնպես ենք դնում, վոր լուծը (վերևի ձողիկը) լինի աջ կողմը, բջիջները միշտ թեքված դեպի վեր, ուրեմն յերբ այդ ձևով ենք դնում շրջանակը, պտտվելիս մեղրը հեշտությամբ է դուրս գցում բջիջներից։

Յերբ մեղրը քամելու գործը շատ չենք ուշացնում և փեթակից հանելուց հետո անմիջապես քամում ենք, մեղրը սովորաբար դեռ տաք է լինում ու բավական ջրալի, այնպես վոր թեթև կերպով պտտեցնելիս էլ մեղրը հեշտությամբ դուրս է գալիս բջիջներից։ Այդ դեպքում չեչն էլ չի ջարդվում ու չի փչանում մեղրահանի մեջ։

Յերբ շրջանակի մի յերեսը քամվում է, շուռ ենք տալիս ու մյուս յերեսը քամում։ Յերբ մենք հանում ենք փեթակից այնպիսի շրջանակներ, վորոնք վորոշ չափով կնքած վորդ ունեն, չպետք յերբեք ուշացնել նրանց քամելը և արագ չպտտացնել մեղրահանի թևը, իսկ քամելուց հետո, անմիջապես դնել փեթակի մեջ, վորպեսզի վորդը չփչանա։

Մեղրով լիք ամանների յերեսից վերցնում ենք կեղտոտ մեղրը ու լցնում ցանցի մեջ՝ քամելու համար, ապա բերանները փակում ենք ու դնում մի կողմը։

Յերբ մեղրաբերքը դեռ չի վերջացել և գողություն չի լինում, կարելի յե լուսամուտները բաց էլ թողնել։ Բայց ընդհանրապես պետք է անպատճառ հոգ տանել մի կանոնավոր պաշտպանված շենք ունենալու։

Յերբ բերքի ուժգին թափն սկսում է թուլանալ, որեցոր կշռափեթակը պակաս է ցույց տալիս, մի վորոշ ժամանակից հետո հավասար է ցույց տալիս և ապա, վերջապես, սկսում է նվազում ցույց տալ։ Դա տևում է մի քանի օր (6—10 օր).

Յերբեմն միայն չորային տարիները կամ կարկտի, ցրտի և ընդհանրապես տարերային պատահարների շնորհիվ բերքը հանկարծակի (2—3 որվա) իջնում է, բայց դա հաճախակի չի պատահում և սովորաբար այդ ժամանակը բավական յերկար է տևում։

Հենց վոր բերքն սկսում է պակասել, պետք է յերկու որվա ընթացքում արագորեն կատարել հետևյալ աշխատանքները.

1. Վերցնել բոլոր վերնահարկերը։ Այդ ժամանակ արդեն գողությունը սկսվել է և պետք է նախազգուշական միջոցներ ձեռք առնել։ Իսկ դրա համար մեղրաքամի շենքի առաջ ծուխ ենք դնում, վոր մեղուները դռնից շատ չխուժեն ներս։ Մի յերկու կտոր մխացող աթար կարող են ծուխ տալ մինչև յերեկո։ Վերնահարկերին ու կորպուսներին լավ ծուխ ենք տալիս, շրջանակներն արագ հանում, մեղուն թափ տալիս ու դնում ժամիկ դրած կորպուսի մեջ։ Դատարկ հարկն ամուր խփում ենք գետնին, փեթակի առաջ, վոր պատերի վրայից մեղուն թափվի ու տանում ենք պահեստը, վորտեղ հանված շրջանակները նորից շարում ենք նույն հարկերի մեջ ու քիչ հետո քամում։

Քամված շրջանակները նույն որը յերեկոյան իրենց հարկերով դնում ենք նույն փեթակների վրա և յերկու որ պահում ենք, վոր մեղուները ծծեն, չորացնեն ու ապա վերջնականապես վերցնում տանում ենք պահեստ։ Այսպիսով մենք վերջ ենք տալիս բոլոր վերնահարկերին ու կորպուսներին։

2. Բները դասավորել, ավելորդ շրջանակները հանել և քամել։

Այդ ժամանակ մենք դեռ չենք կարող հանել ավելորդ շրջանակները ու թողնել միայն ձմեռվա բույնը, վորովհետև դեռ շրջանակները վերջնականապես ձևակերպած չեն, այսինքն մեկը շատ կնքած վորդ ունի, քիչ մեղր, մյուսը լիք մեղր է, յերրորդն անկանոն կամ անորակ չեչ է, չորրորդը մատաղ վորդով լիքն է և այլն։ Դասավորումը կատարում ենք այսպես՝ փեթակի մեջտեղում իրար կողքի դասավորում ենք մատաղ վորդով շրջանակները։ Նրանց կողքերից դասավորում ենք կնքած մեղրով այնպիսի շրջանակներ, վորոնք առնվազը յերկու կգ մեղր ունեն։

Դրանց կողքերից դնում ենք կնքած վորդով և սակավ մեղր ունեցող շրջանակները։ Այդ ժամանակամիջոցում մեղուները ներսի շրջանակներում բաց վորդի շուրջը մեղր են լցնում, վորդը կնքում են բնի ներսում, դուրս յեկած վորդի տեղը մեղր են լցնում. լրացնում շրջանակները, իսկ կողքի կնքած վորդով շրջա-

նակները վիրջնականապես ազատվում են վորդից, իսկ վորովհետև նրանց ժամանակին ընից հեռացրել ենք, ուրեմն միայն մեղրի ավելցուկն են լցնում նրանց մեջ, վորոնք սովորաբար կիսատ են լինում։

Այդպիսով մեղրաբերքի վերջում մենք կազմակերպում ենք վերջին մեղրաքամը, այսինքն՝ կողքերից հանում ենք բոլոր ավելորդ շրջանակները և քամում։ Կենտրոնում մնում են միայն ձմեռվա բնի շրջանակները, այն էլ սար տեղերի համար 8-9 շրջանակ՝ ամեն մեկ շրջանակը, միջին հաշվով, յերկու կգ մեղրով, ընդամենը 16—20 կգ իսկ ցածր տեղերի համար 6—7 շրջանակ 11—16 կգ մեղրապաշարով։

Ի հարկե այդ ժամանակ էլ կարող են լինել ավելորդ շրջանակներ, վորոնք դեռ պիտի մնան բնում, այս դեպքում այդպիսի ընտանիքները կմնան և կարգի կբերվեն ավելի ուշ, յերբ արդեն շրջանակները գրեթե բոլորովին ազատ կլինեն վորդից ու հնարավոր կլինի ազատ ընտրություն կատարել նրանց մեջ։

Ուրեմն մեղրաբերքի միջին շրջանում քամվում են մեղրի մնացորդները ու կազմում են բները։

Հենց այդ ժամանակ ստուգվում են զանազան թերությունները և անմայր ընտանիքներին մայր են տալիս, բռածուներին լուծարքի յենթարկում, կամ, յեթե հնարավոր է, մայր տալիս, թույլ ընտանիքները պահում վորպես նուկլեուսներ, վատորակ և պակասավոր չեչերը հեռացնում բնից ու լավ ձվելու շրջանակներ դնում. յեթե կա վատորակ (մանանայի) մեղր, փոխարինում են լավորակ մեղրով և այլն։

Պետք է նշել սակայն, վոր Հայաստանի պայմաններում քիչ է նկատվում այնպիսի մեղր, վորը ձմեռվա ընթացքում վնաս տա մեղուներին։

Դա կարող է միայն տեղի ունենալ Լոռու և Դիլիջանի անտառոտ շրջաններում, վորտեղ առանձնապես չորային տարիներն այդ մեղրը շատ է լինում։

Հաց մեղրի արտադրությունը

Այդ արտադրության հիմնական կանոնները հետևյալն են՝

1. մեղրահաց արտադրող ընտանիքն անպայման պիտի շատ ուժեղ լինի.

2. պետք է ունենալ հատուկ նուրբ մոմաթերթ, մի կգ-ում 15-16 (իսկ լանգստրոթինը մինչև 20) մաքուր ու թափանցիկ թերթ.

3. ունենալ հատուկ արկղ մեղրահացը տեղափոխելու և պահելու կամ տեղ ուղարկելու համար։ Մեղրահացը կարելի յե ստանալ և՛ վերնահարկերում, և՛ կորպուսներում։

Ամենից լավ մեղրը համարվում է այն, յերբ բավական փոքր կտորներով է պատրաստված։ Այդպիսով ամենաառաջին տեղը բռնում է սեկցիոն մեղրը, վորի շրջանակներից մեկ վերնահարկի մեջ զետեղվում է 40 հատ (լանգստրոթի կիսակորպուսի մեջ)։ Դրանք լիքը վիճակում, յերբ լավ հաստացրած և կնքված են, կշռում են 400—500 գրամ, վորոնց առանց բաժանելու կարելի յե դասավորել վերնահարկի կամ կորպուսի մեջ և հարմարեցնել տեղափոխության համար։

Դադանբլատի կամ լանգստրոթի վերնահարկերում զետեղվում է 10—11 ցածր շրջանակ, լիքը վիճակում դադանբլատը կշռում է մինչև 2 կգ, յերբեմն յերկուս ու կես, իսկ լանգստրոթը մեկ ու կես կգ։ Դրանք տեղավորելու համար, պետք է դնել հատուկ բաժանող տախտակներ թե վերևից և թե ներքևից։

Բնի շրջանակներով կորպուսավոր մեղվապահության դեպքում վերևի հարկերում մեղվին կարելի յե հարկադրել մոմաթերթ գործել ու ստանալ խոշոր շրջանակներ մինչև $3^1/_2$—4 կգ։ Մեղրահացի արտադրության մեջ այս ձևի շրջանակներով մեղր ստանալը թե դժվար է և թե ձեռնտու չի, վորովհետև.

1. Նույնիսկ ուժեղ մեղուն դժվարանում է այդ բարձր շրջանակը (թեկուզ լանգստրոթինը) վերևից ներքև կառուցել, մեղրով լցնել ու սերեկել. և շրջանակների մեծ մասը միայն կիսով չափ է սերեկվում։

2. Այդքան մեծ կտորներն անհարմար են թե պարփակման ու տեղափոխման համար և թե վաճառքի։ Մանր կտորները՝ վերնահարկի շրջանակը, ես առավել սեկցիան մեղրն իրենց փոքրության և գեղեցկության շնորհիվ բաշխման և գործածության համար ավելի հարմար են։

Տ ե խ ն ի կ ա ն

Գլխավոր մեղրաբերքի առաջին շրջանում, յերբ մեղվի կառուցողական բնազդը շատ ուժեղ է, պետք է ընտրել ամենաուժեղ ընտանիքներից այնքան, ինչքան մեզ պետք է, դիցուք 10 հատ։

Յեթե դադանբլատի 12 շրջանակից ուժեղ ընտանիքներ չկան, ուրեմն այդպիսի համեմատաբար ուժեղ ու լցված բների վրա դնում ենք վերնահարկ ժամաթերթով 10—12 շրջանակ։

Բերքն ուժեղ լինելիս մեղվաշատ ընտանիքն անմիջապես բարձրանում է վերև ու սկսում է կառուցել։ Վերնահարկեր դնելու այդ ձևը մեզ արդեն հայտնի յե, միայն տարբերությունն այն է, վոր ծոր մեղր ստանալու համար ավելի լավ է դատարկ պահեստի չեչեր դնել, վորոնք մեկ-յերկու անգամ կարող են լցվել ու դատարկվել։ Իսկ մեղրահաց ստանալու համար փակցնում ու դնում ենք հատուկ ժամաթերթ և հաճախ 12 շրջանակի տեղ դնում ենք 10 շրջանակ, վոր տաուղ ու հյութալի հացեր ստացվեն։

Սակայն այդ ձևը. յերբ գործը իր բնական ընթացքով է գնում, հաճախ միջակ (վոչ ուժեղ) բերքի պայմաններում այնքան հաջողություն չի ունենում, իսկ կարճատև բերքի պայմաններում նույնիսկ բոլորովին անհաջող է լինում։ Դրա համար մեղվապահը պետք դիմի արտակարգ միջոցների, վորոնցից ամենից ավելի գործածականը հետևյալներն են՝

1. Շատ չեչեր ունենալու դեպքում ուժեղացած փեթակի վրա կամ տակը դնում են չեչերով լիք կորպուս և մի վորոշ ժամանակից հետո ընտանիքը ամբողջովին յուրացնում է 24 շրջանակ ու հասնում խոշոր ուժի։ (Տես «Գլխ. բերքի նախորյակները և սկիզբը»)։

Կարելի յե յերկու կորպուսի արանքը դնել ժամաթերթով մի վերնահարկ լիքը, վորը կարճ ժամանակում կառուցում ու մեղր են լցնում։

Ավելի հաջող է լինում գործը, յերբ վերևի կորպուսի բոլոր շրջանակների վրայից մեղուն թափ ենք տալիս ու շրջանակները հեռացնում, իսկ նրա տեղը դնում ժամաթերթով լիքը մի վերնահարկ։

Այդ բանն անելիս կարելի յե թե վերևի և թե ներքևի բնի շրջանակներից ընտրություն կատարել, ներքևում բոլոր շրջանակները թողնել վորդով, նոր միայն մնացածը հեռացնել։

Մեղուների խոշոր զանգվածները զրկվելով իրենց 12 շրջանակից և չտեղավորվելով ներքևի հարկում, ուժգնորեն սկսում են կառուցել վերնահարկը ու մեղրով լցնել։ Բերքն ուժեղ լինելու դեպքում, յերբ մի վերնահարկը լցրել են, կարելի յե նրա տակը բնի վրա մի նոր վերնահարկ դնել, վորից հետո մեղուները նույն յեռանդով գործի կանցնեն։

2. Յերբ չեչն այնքան շատ չի և չենք կարող այդ ժամանակ չեչով կորպուսներ դնել, նախ ընտրում ենք, դիցուք, 20 հատ լիքը բներով ուժեղ ընտանիքներ, տաս հատը թափ ենք տալիս ու նրանց շրջանակները կորպուսներով դնում մյուս 10-ի վրա։ Թափ տված ընտանիքների բները լցնում ենք ժամաթերթած շրջանակներով, իսկ 10 փեթակը դառնում են յերկհարկանի՝ 24 բնի շրջանակով։ Յերբ անցնում է 7—10 օր և այդ արհեստականորեն ուժեղացած ընտանիքներում մեղուն խոշոր չափերի յե հասնում, վերևի կորպուսը թափ ենք տալիս ու անում նույնը, ինչվոր առաջին կետում ենք խորհուրդ տվել։

Վերցրած լիք շրջանակները կարելի յե տալ թե մյուս փեթակներին և թե այն փեթակներին, վորոնք թափ եյինք տվել։ Այդ վերջիններն արդեն այդ ժամանակ իրենց բույնը կառուցած են լինում և նրանց վրա դրած կորպուսը լրացնում ու ուժեղացնում է նրանց. վերջիններս էլ իրենց հերթին բավական չափով ծոր մեղր են տալիս։

Ահա այն պարզ ձևը, վոր մեզ ձեռնտու յե։ Կան նաև բազմաթիվ ուրիշ ձևեր, վորոնք հիմնականում, համենայն դեպս, հենց այդ յեղանակի ձևափոխումներն են և մեզ վոչ մի կարիք չկա դիմելու այդ ձևերին։

Պետք է, ի հարկե, շեշտել, վոր նույն ձևերը մեծ հաջողությամբ գործադրվում են նաև ծոր մեղր ստանալու համար։ Պարզ է, վոր անպայման պարտադիր չի ստացված շրջանակները գործածել իբրև մեղրահաց։ Կարելի յե փակցնել սովորական այն հաստ ու ամուր ժամաթերթը, վորը գործ է ածվում բներում։ Տարբերությունը միայն այն է, վոր մեղրահաց ստանալու դեպքում պետք սպասել, վոր լավ կնքեն և նոր միայն վերցնել, իսկ քամելու դեպքում ձեռնտու յե 2-3 անգամ քամել և վերջում չեչերը պահել իբրև պահեստի չեչեր։

Յերբեմն պատահում է, վոր կորպուսի նոր շինված չեչերի մեջ մայրը ձվում է։ Դրա դեմն առնելու հնարք չկա։ Յեթե գործողությունները այնպես վարպետորեն տարվեն, վոր ժամաթերթերի կառուցումը վերջանա հենց այն ժամանակ, յերբ մոր ձվարկությունն արդեն սահմանափակված է և ուժեղ մեղրի կուտակում կա, ուրեմն այդ վտանգը չի լինի և գրեթե բոլոր շրջանակները միայն մեղրով կլցվեն։ Այդ ժամանակ ծաղկափոշի էլ չեն լցնի ու այդպիսով մեղրահացի վորակը չի պակասի։

Մեղրահացն ավելի վորակով ու նուրբ է ստացվում, յերբ ժամա-

թերթը բոլորովին չի գործածվում։ Շրջանակների վերևի կողմից մի նեղ շերտ մոմաթերթ է փակցվում միայն մեղուներին չենքի ուղղությունը ցույց տալու համար, իսկ գրեթե ամբողջ չենքը կառուցում են իրենք՝ մեղուները և մեղր լցնում։

Վերջում պետք առանձին շեշտենք, որ այդ բոլոր գործողությունների վրա, որոնց ժամանակ մի փեթակից մյուս փեթակը միշտ շրջանակներ ենք տալիս ու փոխանակում, անհրաժեշտ է առանձին ուշադրություն դարձնել, որ հիվանդ ընտանիքները բոլորովին առանձին խնամվեն ու չխառնվեն առողջներին։

Պետք է ասել, սակայն, որ առայժմ մեր մեղվաբուծական արտադրության համար ձեռնտու չի զբաղվել մեղրահացի արտադրությամբ, որովհետև մեղրահացի հետ կորչում է բավական շատ մոմ, իսկ մոմը շատ կարևոր նյութ է մեզ համար։

Բացի այդ, յերբ մենք արհեստականորեն ուժեղ ընտանիքներ ենք ստեղծում և նրանց զբաղեցնում ենք այդ ուղղությամբ, նրանցից շատերը բռնվում են ձագատենդով, որ նույնպես հարված է հասցնում գործին։

Կշռափեթակ

Ինչպես արդեն «Գարնան խնամք»-ի գլխում ասված է, կշռափեթակը պետք միշտ ստուգվի և ցուցումները գրանցվեն։ Առանձնապես ամառվա օժանդակ բերքերը, ընդմիջումները և գլխավոր մեղրաբերքը պետք հոգատարությամբ գրանցել և ամեն անգամ նշել այն օրը, յերբ որևէ ուժգին փոփոխություն է կատարվում, ինչպիսին են՝ օժանդակ բերքի սկիզբը, վերջը, գլխավոր բերքի սկիզբը, վերջը և այլն։ Գրանցումները շարունակվում են գլխավոր բերքից հետո էլ, մինչև ձմեռանոց դնելը։

Գրանցումներ՝ մեղվանոցի մասին

Բացի գրանցումների այդ տեսակից, մեղվանոցում պետք լինի նաև մի ուրիշ տետր, որտեղ գարնանը և աշնանը գրվում են ընտանիքների վերցրած ձագերի, փեթակների, չեչերի, նուկլեուսների և զանազան ինվենտարի քանակն ու բնույթը։ Նույն տետրում առանձնապես նշվում են հետևյալ տեղեկությունները՝ գարնանից սկսած մինչև աշուն քանի ընտանիք է դուրս գրվել ձմեռոցից, քանիսն է մասնակցել արտադրությանը, քանիսն են հիվանդ յեղել, քանի ձագ է յեղել, ինչքան շաքարավազ և մոմաթերթ է սպառվել և ուրիշ կարևոր տեղեկություններ։

ՁՄԵՌԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Պաշարի քանակը յեվ լրացումը

Իր ժամանակին լավ կերպով տարած խնամքի դեպքում գրեթե ոչ մի տարի չի պատահի, որ բնի հիմնական շրջանակներում մեղրը պակաս լինի և կարիք լինի փոխելու կամ լրացնելու։

Բայց փաստորեն յերբեմն այդպիսի դեպքեր լինում են և կարիք է լինում մի քանի ընտանիքների պաշարը լրացնել։

Ինչպես գիտենք, բնի շրջանակները պետք ունենան, միջինը հաշվով, 2 կգ մեղր՝ կամարաձև դասավորված վերևի կողմը։ Այդքան կնքած մեղրը (ներքևի մասում նաև որոշ չափով առանց կնքելու) բռնում է դադանբլատի շրջանակի կեսը և դեռ մի քիչ ավելի, իսկ լանգստրոտի շրջանակի $^{2}/_{3}$-ը։ Ավելի ցածր լինելը բնի շրջանակի համար ավելորդ է և նույնիսկ վնասակար, որովհետև, թե յերբ մեղրն ամբողջ շրջանակը վերևից ներքև բռնում է, դրա հետևանքով վաղ գարնանը և նրանից հետո էլ յերկար ժամանակ մոր ձվարկությունը քիչ է լինում՝ ձվելու տեղ չլինելու պատճառով։

Ընդհանրապես, նայած ընտանիքի ուժին, այնքան պաշար պետք թողնել, որ ընտանիքը ձմեռն ապահով անցկացնի և, բացի այդ, պաշարն այնքան առատ լինի, որ մինչև մյուս տարվա կայուն օժանդակ բերքը բավականանա ընտանիքի անխափան զարգացման համար։

Յերբ մենք արդեն ընտրում ենք և թողնում անհրաժեշտ քանակությամբ բնի շրջանակներ, ապա դրանց դասավորությունը պետք կատարել այսպես. բնի կողքերին դնում ենք մեկական թեթև շրջանակ, հետո՝ ամենածանրերը, իսկ կենտրոնում՝ միջակ շրջանակները։

Յերբ բնի շրջանակները սահմանված միջինի քանակից ավելի քիչ մեղր ունեն, անհրաժեշտ է դրությունը լավացնել։

Բնի շրջանակների փոփոխումը

Սովորաբար այնպիսի դեպքերում, երբ մեղվանոցի մի մասն ունի թերի շրջանակներ, ապա մյուսը, ընդհակառակը, ունենում է լրիվ շրջանակներ, դեռևս բնի նախնական կազմակերպման ժամանակ (գլխավոր բերքի վերջերին կամ վերջանալուց անմիջապես հետո) մեղվապահը պահեստում դրած պետք է ունենա որոշ քանակությամբ մեղրով հարմար շրջանակներ, որպեսզի այդ ժամանակ թերի լցված շրջանակները բներից հանի ու նրանց տեղը դնի լավ շրջանակներ։

Այդպիսի լիք շրջանակներ անհրաժեշտ է դնել բնի կենտրոնում, իսկ կողքերից դնել փեթակի շրջանակներից ու լրացնել բնի շրջանակների թիվը։

Այդ ժամանակ հաճախ լինում են այնպիսի շրջանակներ, որոնց մեկ կամ երկու երեսի վրա քիչ մեղր կա։ Հիմնական պաշարը պակաս լինելու դեպքում կարելի է այդ շրջանակները դնել բնի կողքերից քիչ հեռու) և այնպես անել, որ այդ մեղրը մեղուները ներս տանեն ու լրացնեն բնի շրջանակների մեղրը։

Դրա համար կնքած մեղրի սերեկը դանակով վերցնում, մեղրը բաց ենք անում, իսկ եթե կնքած չէ, դանակի ծայրով բջիջների մակերեսը վիրավորում ենք (երես-երես քանդում ենք), որից հետո մեղուները վերցնում են այդ բջիջներից մեղրը ու տանում դեպի ներսը։

Պաշարի լրացում շաքարաջրով կամ ծոր մեղրով

Եթե նկարագրած ձևի շրջանակներ չկան, ուրեմն անհրաժեշտ կլինի արհեստական ձևով պաշարը լրացնել, որը նախ պատրաստվում է թանձր շաքարաջրով (2 շաքար 1 ջուր)։

Պաշարը լրացնելու համար պետք է աշխատել մեծ բաժիններով տալ, մի անգամից գոնե 1—2 կգ, այնպես որ ջահադխտական կերակրման բնույթ չկրի և մայրը ձվարկությունը չուժեղացնի։ Դրա համար էլ երեկոյան կերակրամանները լիք շաքարաջուր են լցնում ու դնում բնի կողքը։ Վրայի լաստը ուշադրությամբ պետք է հարմարեցնել, որպեսզի հեշտությամբ իջնի շաքարաջրի հետ միասին և մեղուներն էլ հեշտությամբ վերցնեն շաքարաջուրը։ Առավոտյան պետք է զգույշ լինել և հետևել կեր տված ընտանիքներին. եթե հարձակում կա, ուրեմն պետք է փեթակը վերցնել տանել շենքի մեջ ու հանել կերակրամանը, որի մեջ դեռ

կարող է շաքարաջուր մնացած լինել։ Հետո կարգի բերելով փեթակը, պետք է բերել ու դնել տեղը։ Եթե գողությունը կշարունակվի, ավելի լավ է այդ փեթակը պահել շենքում և երեկոյան նոր դնել իր տեղը։

Մի անգամից, ի հարկե, պաշարը չի լրանա, ուրեմն պետք է 2—3 անգամ կրկնել։ Կերակրամանը չի հանվում փեթակից և երեկոյան փեթակի բերանը բանալով պետք է շաքարաջուր լցնել նրա մեջ ու ծածկել. շաքարաջուրը կարելի է լցնել կեռ ձագարով։ Մեղուներն արագ վերցնում են շաքարաջուրը ու դասավորում բջիջների մեջ և կնքում։

Միևնույն ձևով կարելի է տալ մեղուներին նաև ծոր մեղրը։ Միայն մեղրի հետ ջուր պետք է խառնել (2 մեղր 1 ջուր) ու եռացնել, որ թանձր չլինի և մեղուն հեշտությամբ վերցնի։

Սովորաբար այդ ջրախառն մեղրը մոտ կես ժամ եռացնում են, հիվանդության նկատմամբ չկասկածելու համար։

Բների դասավորումը (աշնանը)

Անթույլատրելի է, որ բների դասավորումը ժամանակին չկատարվի ու այդ գործը մնա աշնանը (սեպտեմբերին, առավել ևս հոկտեմբերին)։ Բայց կարող է այնպիսի դեպք պատահել, երբ անհրաժեշտ է թե բույնը կարգի բերել և թե ավելորդ շրջանակները հանել։

Այդ ժամանակ մեղուն ի հարկե սաստիկ վրա է տալիս և այդ գործը առանձին ձևով պետք է անել։ Այս դեպքում կարելի է գործածել շարժական ցանցավոր վրան։ Մեղվապահը նրա մեջ մտած՝ փեթակը վերցնում է գետնից, ծածկում ցանցով (մեկուսացնում է) ու սկսում է կարգի բերել բույնը. նա մեկ-մեկ նայում է բնի շրջանակներին և ընտրություն կատարում։ Նա պիտանի շրջանակները դասավորում է բնի կենտրոնում, իսկ մյուսները՝ որը մեղրով, որն էլ չէ, հանում և դարսում է կողքին դրած ու ծածկոցով ծածկած կորպուսի մեջ. Եթե որևէ փեթակում մի քանի շրջանակներ պետք է փոխարինվեն, ապա հենց այդ նույն կորպուսից ընտրում է ծանր և լավորակ շրջանակներ և դնում բնի մեջ, իսկ եթե այդտեղ չկա, պահեստից է բերում։

Համենայն դեպս մեղրով շրջանակը տալիս պետք է նկատի ունենալ, որ կարող է հարձակում լինել, երբ վրանը հեռացնում ենք փեթակի վրայից. Ամենից լավն այն է, որ հանված շրջանակները բոլորը տարվեն ներս, փեթակի բնի մեջ թողնվեն

շրջանակների տեղերը և սպասեն մինչև յերեկո: Յերեկոյան նոր կարելի յե լրացնել շրջանակների թիվը պահեստում յեղած շրջանակներով:

Ավելորդ շրջանակները միջից հեռացնելով ու թողնելով միայն բնի 6—9 շրջանակը, բնի կողքերից դնում է միջատախտակներ, ծածկում փեթակը, իսկ այդ ժամանակ օգնականը չեչերով լիք կորպուսը փոխադրում է պահեստը: Վերջացնելուց հետո վրանը փոխադրվում է մի ուրիշ փեթակի վրա: Ցանկալի յե այդ գործը շարունակել ավելի հեռու գտնված փեթակի վրա, վորովհետև մոտիկ տեղում մեղուներն ավելի յեն գրգռվում: Իսկ յերբ մեղվանոցի զանազան մասերում գտնված փեթակներն ենք նայում, գողությունն այնքան ուժեղ չի լինում և շուտ չի սկսվում:

Վրանի գործածությունը լավ է, յերբ գործը համեմատաբար թեթև է և հարկ չկա շրջանակները շատ խառնել իրար: Բայց յերբեմն անհրաժեշտ է բները հիմնովին ստուգել, բնի շրջանակները փոփոխել, անպետք կամ պակաս մեղր ունեցողները հեռացնել, նրանց տեղը մի ուրիշ փեթակից լավ շրջանակներ դնել, մայրը փնտրել, գտնել և ընդհանրապես լրիվ ստուգում կատարել: Ահա այդպիսի դեպքերում շարժական ցանցավոր վրանը կարող է վտանգավոր դառնալ, վորովհետև բացած փեթակի շրջանակների մեղրի սուր հոտը չափազանց կգրգռի մեղուներին ու գողությունը մեղվանոցում համատարած կդառնա:

Այդպիսով մի օրվա մեջ հազիվ 3—4 փեթակ ստուգվի ու կարգի բերվի, այնինչ հաճախ մի քանի օրվա ընթացքում, նույնիսկ ավելի շուտ, պիտի գործն անել ու վերջացնել:

Մեղուների հարձակումից ապահով լինելու և գործը համեմատաբար արագ կատարելու համար ամենից հարմարը այն է, վոր այդ գործը մի շենքի մեջ կատարվի:

Ընդհանրապես ամեն մի մեղվանոց պիտի ունենա աշխատանոց, վորը հատկապես այդ նպատակի համար շինվում է մեղվանոցի կողքին և վորի մեջ դարսվում է թե մեղվանոցի ինվենտարը և թե վորտեղ մեղվապահը կատարում է զանազան աշխատանքներ: Դա խոշոր անհրաժեշտություն է և առանց այդ աշխատանոցի աշխատանքը խոշոր թերություններ է ունենում: Սակայն առայժմ շատ տեղերում այդ հարմարությունները չկան և մենք ստիպված ենք լինում մի կերպ կատարել այդ գործը:

Սովորաբար մեղվանոցը դրվում է գյուղի մեջ կամ գյուղին մոտիկ, դրա համար էլ շենքերից մեկը հեշտությամբ կարելի յե հարմարեցնել այդ նպատակի համար:

Յեթե այդպիսի հարմար շենք չկա կամ մեղվանոցը բաց դաշտում է դրված, ուրեմն անհրաժեշտ է փայտից մի տնակ շինել մեղվանոցից մի 20 քայլ հեռու: Իսկ յեթե փայտ չկա, ապա վոչ մի դժվարություն չկա գետնի մեջ, յերկու բանվորի միջոցով, մի մետրաչափ փոս փորելու և հյուղ կառուցելու: Յերբ շենքը կա, ուրեմն գլխավոր խնդիրը լուծված է:

Շենքը չորս կողմից պիտի լավ սվաղված լինի, միայն թե մի անկյունից կամ կտուրից մոտ 900 քառ. սանտիմետր մի անցք պիտի ունենա: Մի քիչ ավելի, մի քիչ պակաս վնաս չունի, բայց շատ մեծ չպետք է լինի: Բացի այդ լուսամուտից, ուրիշը չպիտի լինի, իսկ յեթե ուրիշ անցքեր կան կամ լույս կա, պիտի ծածկել ու մթնացնել: Այդ միակ անցքը թե լույսի և թե փեթակից թռած մեղուներին բաց թողնելու համար է: Անցքի չափսով մի շրջանակ ենք շինում ու մեջը մի փեղկ ենք ամրացնում այնպես, վոր այդ փեղկը հեշտությամբ և կիպ հագնի շրջանակի դրսի յեզրերին հանած ֆալցերի (քաների) մեջ: Փեղկի մեջ անց ենք կացնում ապակի կամ ցանց: Ավելի լավ է ապակի դնել, վորը թույլ չի տալիս բաց փեթակի հոտը մեղուներին հասնի ու նրանք գրգռվեն: Ցանցն էլ ունի ի հարկե իր առավելությունը, վորովհետև յերբ շենքի ներսում փեթակին ծուխ ենք տալիս, ծուխը ցանցապատ անցքով (կամ յերդիկով) դուրս է գալիս, և մեղվապահը չի նեղվում ծխից: Բայց և այնպես հաճախ նա հաշտվում է ծխի հետ ու հրաժարվում է ցանցից: Յերբ փեթակի հետ գործը վերջացնում ենք, տանում դնում ենք իր տեղը ու լուսամուտը բացում, այսինքն փեղկն իր վրա ներսից կուտակված մեղուներով վերցնում ենք, ուղղակի շուռ տալիս ու հենց այդպես շուռ տված հագցնում իր տեղը: Կուտակված մեղուն կամաց-կամաց թռչում, գնում է իր տեղը, իսկ մինչ այդ մեղվապահը մի ուրիշ փեթակ է բերում ու շարունակում իր գործը: Ի հարկե այդ աշխատանքը կարելի յե կատարել առնվազն յերկու հոգով:

Շենքի մեջ մանր-մունր, ցաք ու ցրիվ գույք, ջրով լիք ամաններ և ուրիշ իրեր չպիտի լինեն, այլապես մեղուներից շատերը կլցվեն գույքի արանքները, ջրի մեջ և այլն և չկարողանալով թռչել իրենց տեղը, կկոտորվեն:

Յեթե դրսում շենքի դռանը գող մեղուներ են հավաքվում, պիտի աթարի ծուխ դնել մինչև յերեկո: Մութ շենքի մեջ աշխատելիս, ծուխը հանդարտ պիտի տալ և աշխատել շատ մեղու

չթողնել փեթակից։ Մեղվապահի շարժ ու ձևն առանձնապես զգույշ ու ճարպիկ պիտի լինի, վորովհետև մեղուն ներսում ավելի յե չարանում, քան դրսում։

Մեղվապահն իր գլուխն անպատճառ պետք ե ցանցապատի, շալվարի ու թևերի բերանը կապի, վորովհետև շենքի մեջ գետնի վրա հաճախ մեղուները սողում են ու քաշվում են շորերի տակ։

Այդպիսի շենքի մեջ աշխատելու համար մեղվապահը փորձ պիտի ձեռք բերի և չհուսահատվի առաջին անհաջողություններից։

Այսպիսով, աշնան կարճ որերին կարելի յե որական 20—30 փեթակ ստուգել և կարգի բերել։

Թերությունները յեվ նրանց վերացումը

Ընտանիքներում նկատված մնացած բոլոր թերությունները (անմայր, բոռածու և թույլ), առաջուց պիտի վերացված լինեն։

Համենայն դեպս ուշացած ստուգումների ժամանակ հայտաբերված այդ թերությունները նույնպես կարելի յե վերացնել. այսինքն, յեթե անմայր ընտանիքը բավական ուժեղ ե ու կենսունակ, պիտի նրան նուկլեուսներից մայր տալ, իսկ այդ նուկլեուսները միացնել։ Յեթե թույլ ե և անկենսունակ, պիտի միացնել վորևե թույլ կամ միջակ ընտանիքի։ Բոռածու ընտանիքն էլ միևնույն ձևով միացնում ենք մի ուրիշ կանոնավոր ընտանիքի հետ, միայն անհրաժեշտ ե վոր ինքը բոռածուն անհամեմատ ավելի թույլ լինի, քան մյուս ընտանիքը, վորպեսզի մորը վտանգ չսպառնա։ Մորն ապահովելու համար կարելի յե նաև մի որ պահել բանտարկված դրությամբ։

Գողության վտանգն աշնան ժամանակ

Աշնանը մեղուների գողությունն ավելի վտանգավոր բնույթ ե կրում, քան ուրիշ ժամանակ։ Հենց այդ պատճառով ե, վոր մեղվապահը պիտի աշխատի, ինչքան կարելի յե, քիչ աշխատանք կատարել մեղվի հետ, մանավանդ, վոր աշնանը չափազանց դժվարանում ե ամեն մի գործ։ Որինակ, յերբ իր ժամանակին ստուգում ենք մոր լինել թե չլինելը, ապա բավական ե, վոր տեսնենք ընտանիքի վորդ ու ձուն և այլևս մորը տեսնելու կարիք չի լինում։ Իսկ աշնանը սովորաբար վորդ չի լինում, ուրեմն անպատճառ պիտի փնտրել և գտնել մորը։ Յեվ այդպես ամեն

ինչ դժվարանում ե, գողության վտանգն էլ ավելի ուժեղ ե լինում։

Ի հարկե աշնանը բոլոր արկանոցները մինչև 3—4 սանտիմետր փոքրացված պիտի լինեն։

Տաքացումները

Յերբ բոլոր բները կարգի յեն բերված, ուշ աշնանը տաք որերից մեկում շատ կերպով հանում ենք բների կողքերից բոլոր այն ավելորդ շրջանակները (չեչերը), վորոնք դեռ թողել եյինք բնի կողքերին։ Մնում ե միայն բունը։ Կողքի միջնատախտակները մոտեցնում ենք բնին — միջնատախտակների հարթ կողմը դեպի դուրս — ու այդ դրությամբ թողնում ենք մեկ-յերկու որ։

Յերբ մեղուն հանգստանում ե ու գիշերները արդեն սկսում ե կամաց-կամաց կծկվել, պիտի դնել տաքացումները։ Կողքե տաքացման տոպրակը կարում ենք սովորական պարկի կտորից, կտավից կամ ուրիշ կտորից։ Տոպրակն այնքան լայն ու արձակ պիտի լինի, վոր հեշտությամբ լցնի փեթակի ամբողջ դատարկ մասը։ Առաջուց տոպրակն իջեցնում ենք փեթակի դատարկ տեղը, հետո դարման լցնում միջը ու ձեռքով լավ տեղավորում։ Յեթե տեղը նեղ ե ու ձեռք չի մտնում, դարմանը պիտի տեղավորել պլանկայով կամ փայտի կտորով։ Տոպրակը բերնեբերան լցնելուց հետո ավելորդ մնացած յեզրերը ծալում ենք իրար վրա, վոր դարմանը չիրևա և նոր միայն ծածկոցը դցում։

Տաքացումները պետք ե դնել որվա հով ժամերին, վոր մեղուները չչարանան ու չխանգարեն աշխատանքը։

Ձմեռվա համար հին ծածկոցը լավ չի. վորովհետև նա ամբողջովին պատած ե մոմով և ակնամոմով։ Անհրաժեշտ ե ձմեռվա համար ցանցառ կտորից ունենալ հատուկ ծածկոցներ, հները վերցնել պահել և նորերը դցել։ Այս բանը կատարվում ե նրա համար, վոր ձմռանը փեթակի ներսում ողափոխությունը լավ լինի։

Փեթակի վրա պիտի բարձ դնել. դրա համար էլ 6 սանտիմետր լայնություն ունեցող տախտակներից փեթակի բերնի չափով շրջանակ ենք դնում, յերկու յերեսից մանր մեխերով կտոր ենք մեխում (լավ ե պարկի կտորը) ու միջը դարման լցնում։ Դարմանը պետք ե լավ տեղավորել, վոր ցանցառ չլինի ու տաքությունը պահի։

Դարմանով լցված բարձը վողջ տարին լինելու յե բնի վրա, վորը պաշտպանում ե թե ցրտից և թե շոգից։ Ձմեռը յեթե ծած-

կոշը ցանցառ է, դարմանի միջով օդի շրջանառությունը լավ է կատարվում ու ներսի օդը դանդաղ, բայց անընդհատ փոխվում է։

Այդ տեսակետից քեչան կամ ուրիշ նյութով լցված բարձն անհարմար է. վորովհետև օդափոխությունը լավ չի կատարվում։ Քեչան առանձնապես պահում է իր մեջ խոնավությունը, իսկ շոգ ժամանակ տաքացնում է մեղվին։

Ծղոտի փնջերը թելով կապում միացնում են իրար ու մառուլի տալով ստանում են հաստ խսիրներ (մոտ 5 սանտիմետր հաստությամբ), վորը փեթակի չափով կտրում ենք ու գործածում իբրև բարձեր։

Բայց դրանք տաքությունը լավ չեն պահում և դարմանով լցրած բարձը նրանցից անհամեմատ լավ է։

Աշնանից բոլոր տաքացումները պետք է դնել լրիվ կերպով, վորը ձմեռն էլ լավ կպահի բունը, իսկ գարնանը մի անգամից ապահովվում է բունը ցրտից։

8 և ավելի շրջանակ ունեցող ընտանիքների բները պիտի քաշել մի կողմի վրա և տաքացումները դնել մի կողքից։ Միայն բունը ավելի փոքր լինելու դեպքում տաքացումը պիտի դնել երկու կողմից։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՄԵՂՎԻ ՁՄԵՌԵԼԸ

Մեղվի ընտանիքի ձմեռային ֆիզիկական դրությունը

Յերբ դրսի ջերմաստիճանը սկսում է 10-ից իջնել և գիշերները բավական ցուրտ է անում, մեղվի ջերմաստիճանն էլ սկսում է ընկնել ու կամաց-կամաց մեղուները կծիկ են կապում, այսինքն սեղմվում են շրջանակի վրա ու կլոր ձև ընդունում (գնդի ձև)։ Այդ ժամանակ նրանք ընկնում են ընդարմացած դրության մեջ և այլևս աշխույժ կյանքի նշաններ ցույց չեն տալիս։

Այդ դրության մեջ նրանց կենսական պահանջներն էլ զգալիորեն նվազում են ու մեղուն իր կյանքը պահպանելու համար քիչ սննդի կարիք է զգում, համեմատած գարնան և ամռան հետ։ Լավ ձմեռելու դեպքում ամբողջ ձմեռվա ընթացքում միջակ ընտանիքը (6—7 շրջանակի վրա) հազիվ է կարողանում $3^{1}/_{2}$—4 կգ մեղր սպառել, դրա համար էլ մեղուն մինչև գարուն հեշտությամբ դիմանում է ու դուրս չի գնում, չի կեղտոտում չիչերը։

Կղկղանքը կամաց-կամաց կուտակվում է նրա հաստ աղիքում ու գարնանը դուրս գնելուց հետո մեղուն թռչում է ու օդի մեջ մաքրվում։

Ձմեռը մեղվի կծիկի մեջ լինում է 14—24 աստիճան տաքություն։ Յերբ մեղվի կծիկը բոլորովին հանգիստ է, նրա տաքությունը սկզբում լինում է 24 աստիճան, հետո կամաց-կամաց այդ տաքությունը սկսում է պակասել ու իջնում է մինչև 14 աստիճանի։

Կծիկի կենտրոնում ի հարկե միշտ տաքությունն ավելի բարձր է, քան կողքերում։ Մեղուներն ամբողջ ժամանակ կծիկի մեջ են՝ վրայի մրսած մեղուները կամաց-

կամաց անցնում են կծիկի ներսը ու նրանց տեղը ներսից դալիս են տաքացած մեղուները։ Եվ այդպես միշտ մեղուները յեռում, շարժվում են ու կծիկը կարողանում է ամբողջությամբ պահպանել իր տաքությունը։

Երբ կծիկի ներսի տաքությունը հասնում է 14 աստիճանի, սկսում է ավելի յեռալ ու ավելի շարժվել, տաքությունը միանգամից բարձրանում է։ Երբ հասնում է 24 աստիճանի, կծիկը նորից հանդստանում է։

Դրանից հետո կծիկի ջերմաստիճանը նորից սկսում է իջնել։ Այդպես շարունակ մեկ իջնում է մինչև 14 աստիճանի, մեկ բարձրանում է մինչև 24-ը։ Այդ դրությունը մեղվի կծիկի համար բնական է և լավ *)։

Այդպիսի դրություն լինում է ձմեռանոցում այն ժամանակ, երբ շենքի ջերմաստիճանը 6—8 է։ 6-ից ցածր լինելիս կծիկի տաքությունն ավելի շուտ է ընկնում և մեղուն ավելի շատ է անհանգստանում, իսկ յերբ 0-ից ցածր է լինում, այսինքն յերբ ջուրը սկսում է սառել, ձմեռանոցում արդեն կծիկը միշտ անհանգիստ է։

Ցուրտ տեղում ուժեղ ընտանիքներն ավելի լավ են դիմանում, վորովհետև նրանց կծիկն ավելի մեծ է և տաքությունն ավելի լավ է պահում, իսկ թույլ ընտանիքները (3—5 շրջանակների վրա) շատ են տուժում ու հաճախ նույնիսկ բոլորովին ցրտահար լինում։

Երբ մեղվի կծիկը չի կարողանում իր տաքությունը պահպանել, բացվում է, մեղուներն զգաստանում են ու, վորպեսզի տաքանան, սկսում են շատ մեղր ուտել, շարժվել, թափահարել իրենց։ Հաճախ շատ մեղուներ չեն դիմանում ու սառած թափվում են հատակին։

Անհանգիստ և շատ մեղր ուտող մեղուն ուժեղ շնչում է ու տաք գոլորշի առաջացնում։ Այդ գոլորշին նստում է չեչերի վրա, փեթակի պատերի վրա ու սառում, յեղյամ բռնում։ Օդի սառնությունից մեղուն ավելի ուժեղ կերպով է շարժվում ու ավելի շատ տաքություն առաջացնում։ Ձմեռանոցի ջերմաստիճանի տատանումներից (գիշերվա ցուրտը և ցերեկվա տաքը) և մեղվի առաջացրած տաքությունից յեղյամը սկսում է հալվել ու ջուրը փեթակի տակից հոսում է ներքև։ Խոնավությունից փեթակի մեջ բորբոս է առաջանում և չեչերի մեծ մասը բորբոսնում, փչանում է։

*) Ամերիկական մեղվապահների հետազոտությունները այդպիսի տատանումներ չեն հայտաբերել, բայց այստեղ բերված տվյալները (ըստ գերմանական մեղվապահների) մենք գտնում ենք հավանական։

Երբ մեղուն ամբողջ մեղրն ուտում, վերջացնում է և գարունն էլ դեռ հեռու յե, մեղուները սկսում են թուլանալ, մտնում են բջիջների մեջ, հավաքվում իրար վրա ու չդիմանալով ցրտին ու սովածությանը, բոլորը կոտորվում են։

Երբեմն մի մասն է կոտորվում ու մյուս մասը մնում է մինչև գարուն։ 7—9 և ավելի շրջանականոց ընտանիքները դիմանում են մինչև 10 և ավելի աստիճան ցրտերի, բայց շատ մեղր են ուտում, մեղվի բավական խոշոր տոկոսը սառում, ուժասպառ է լինում ու թափվում հատակին, վորտեղ և կոտորվում է, իսկ մնացած մեղուն էլ բավական զառամում է։

Ուժեղ տաքությունից էլ մեղվի կծիկն անհանգստանում ու քայքայվում է։ Երբ ձմեռանոցի ջերմաստիճանը 8-ից բարձր է լինում, փեթակի ներսում կծիկի տաքությունն էլ բարձրանում է և մեղուներն սկսում են արթնանալ, շատ մեղր ուտել ու նույն դրությունն է սկսվում, ինչ վոր ցրտահարվելիս։ Մեղուները չեն կոտորվում, յեթե մեղրը բավարարում է մինչև գարունը։

Շատ մեղր ուտելով մեղվի հաստ աղիքում մեծ չափով կղկղանք է հավաքվում և մինչև գարնան բացվելը հաճախ նա չի դիմանում, այլևս կղկղանքը չի կարողանում պահել ու ծրտում է, հետևաբար և ապականում է չեչը։

Առանձնապես տաքությունը նեղում է մեղուներին գարնան մոտերքը, յերբ յեղանակները հաճախ շատ են տաքանում։ Այդ ժամանակ մեղուն զգաստանում է և սկսում է կերակրել մորը. վերջինս սկսում է ուժեղ ձվել։ Այդ դրության մեջ մեղրի պաշարը շատ է սպառվում և, յեթե դուրս գնալը ուշանում է, մեղվի ընտանիքն էլ շատ է տուժում։ Այդպիսի դեպքերում ավելի լավ է մեղուները ձմեռանոցից դուրս հանել։

Հանգիստ դրության մեջ կծիկն իր շարժումները կատարում է միշտ դեպի վեր և ապա դեպի շրջանակի յետևի կողմը և վոչ թե դեպի կողքերը, այնպես վոր հաճախ կողքի շրջանակները մեղրով լիք մնում են անձեռնամխելի, իսկ մեղուն քաղցից կոտորվում է այն շրջանակների վրա, վորտեղ աշնանից կծիկ է կապել։

Մյուս աննպաստ պայմաններից պետք է նշել ձմեռանոցի խոնավությունը, վորը շատ է վնասում մեղվին։ Փեթակի ներսում

չեչերը բորբոսնում են, ոդը փչանում է և մեղուն ուղղակի կիսախեղդ է լինում փեթակում, բավական մեղու յե կոտորվում և չեչերի մեծ մասը փչանում է ու անպետքանում։ Հաճախ արհեստական խոնավություն է ստեղծվում, յերբ կտուրից ջուր է կաթում։ Ձմեռանոցի կտուրը պիտի լավ սարքված լինի, վոր չկաթի։

Մուկը հաճախ վնաս է հասցնում մեղվին, նա բույն է դնում կտուրի տակ, ներքևից՝ շրջանակների արանքը, կրծոտում (աղում), փչացնում է չեչերը, իսկ յերբեմն — յերբ մեղուն թույլ է — մեղուներին ատամներով աղում է ու ամբողջ ընտանիքը փչացնում։ Նա բավական էլ մեղր է ուտում։ Մեղուն անհանգստանում է նաև աղմուկից և վատ հոտերից։

Եվ այդպես մեղուն վերև հիշված պատճառներով ձմեռը հաճախ անհանգիստ է լինում և՝

1. մեծ քանակությամբ մեղր է սպառում, յերբեմն ամբողջ պաշարը.

2. մեղուները պառավում են, բավական քանակությամբ կոտորվում-թափվում են հատակի վրա ու բորբոսնում և ոդը փչացնում.

3. ծրտում են հաճախ ու չեչերն ապականում.

4. չեչերը խոնավանում են, բորբոսնում ու յերբեմն անպետքանում.

5. յերբեմն ամբողջ ընտանիքն ուտում է իր պաշարը և վերջացնում, իսկ ինքն էլ բոլորովին կոտորվում է սովածությունից.

6. շատ թույլ ընտանիքները հաճախ կոտորվում են ցրտից և պաշարը մնում է։

Երբ ձմեռանոցը հարմար է ու վերև հիշված բոլոր թերությունները չկան, մեղուն լավ է ձմեռում ու լիովին պահպանում է իր ֆիզիկական ուժերը։

Լավ ձմեռանոցում ամենաթույլ ընտանիքը կարող է շատ հաջող ձմեռել ու գարնանն ուժեղանալ, դառնալ կանոնավոր ընտանիք և մյուս ընտանիքներին հավասար բերք տալ։

Ձմեռանոց դնելու ժամանակը

Աշնան վերջերին յեղանակներն սկսում են ցրտել։ Քանի դեռ գիշերները բավական տաք է լինում, այսինքն՝ ջերմաստիճանը 5-ից ցածր չէ, մեղուն չի սեղմվում և ազատ շարժվում է շրջանակների վրա։

Բայց ահա վրա յեն հասնում ուշ աշնան յերբեմն ձնախառն անձրևները և ցուրտ քամիները, վորից հետո պարզ գիշերներին ջուրն սկսում է սառել, դրսի ջերմաստիճանն իջնում է մինչև —2,—5, իսկ ցերեկները ջերմաստիճանը բավական բարձրանում է։ Եթե այդ նույն թե ցուրտ և թե տաք ժամանակներում մեղուները ձմեռանոցում լինեն, վորտեղ ջերմաստիճանը միատեսակ է (6—8), ուրեմն, ինչպես գիտենք, մեղուն հանգիստ և կանոնավոր վիճակում կլինի։ Դրա համար էլ ավելի լավ է մի քիչ նեղություն և ծախք անել հարմար ձմեռանոց սարքել ու մեղուները շուտ ներս դնել։

Երբեմն հանկարծ ձյուն է գալիս ու փեթակները ծածկում, այդ դեպքում պետք է ձյունն ավլելով մաքրել ու փեթակներն անմիջապես վերցնել։ Եթե ձյունից կամ անձրևից փեթակները թրջված լինեն, կարելի յե դնել ներս, վորովհետև յեթե ձմեռանոցը չոր է, փեթակները կչորանան, միայն օդափոխությունը պետք է լավ լինի։

Այդպիսի դեպքերում պիտի հոգ տանել, վոր ծածկոցն ու բարձը չոր լինեն, և յեթե թաց են, անպատճառ չորացնել դրսում յեղած ժամանակ։

Գետնափոր յեվ կիսագետնափոր ձմեռանոցները

Այս ձևի ձմեռանոցներն աշխատում են կառուցել գետնի տակ այնպես, վոր նրա առաստաղը հողի սառեցման շերտից ցածր լինի, այսինքն վրան այնքան հող լինի, վոր այդ հողի ներքևի մասերն ամենախիստ ցրտերին անգամ դիմանան ու չսառեն։ Ձմեռանոցը կարելի յե պատրաստել հետևյալ կերպ։

Գետնի մեջ մի խորը փոս են փորում, պատերը շինում են այնպես, վոր նրանց ու դրսի հողի միջև կես մետրի չափ դատարկ տարածություն մնա։ Այդտեղ լցնում են խոշոր խիճ (կոպիճ), մանր քարեր, այդ նույն ձևով սարքում են նաև հատակն ու վրայից ցեմենտ քաշում։ Կոպիճի այդ կես մետրանոց շերտը պահում է շենքը թե ներքևից և թե տակից շրջապատող հողի խոնավությունից։

Ձմեռանոցը վրայից ամուր ծածկում են և ամբողջ հողը լցնում վրան, յերբեմն մի մետրից ավելի հաստ շերտով։ Հաճախ հող չեն լցնում, այլ թեփով են ծածկում կտուրը ու վերևից ցեմենտով կամ թիթեղով ծածկում։

Շինում են նաև կիսագետնափոր ձմեռանոցներ միևնույն սկզբունքներով. միայն պատերը վերևի կողմից և կտուրը գետնից բարձր պետք լինի։ Այդ ձմեռանոցների դռները բացվում են հատուկ նախասենյակի մեջ, իսկ նախասենյակից աստիճանները տանում են դուրս։ Ձմեռանոցներին հատուկ օդանցքներ են շինում ձմեռանոցի կողքից. ցեմենտից (կամ փայտից) շինած խողովակն իջեցնում ներքև և պատի տակով անցկացնում ներս ու բացում հատակի վրա։ Դրսից այդ խողովակի վրա դրված է



Նկ. 36. Գետնափոր ձմեռանոցի կտրվածքը։ Աջ կողմի խողովակով օդը ներս է գալիս, ձախ կողմի խողովակով օդը դուրս է գնում։

մի յերկար փայտե խողովակ, վորը ներսի օդը ձգում է դեպի դուրս (մի քանի մետր յերկարության)։ Դրսի օդը ներս գալու համար շենքի մյուս ծայրից մի ուրիշ խողովակ առաստաղի տակից միանում է դրսի օդի հետ։ Ձմեռանոցներում ամեն մի փեթակին հատկացնում են մի քառորդ խորանարդ մետր տարածություն, այսինքն յեթե ձմեռանոցի ներսի ծավալը 96 խ մետր է, ուրեմն այդտեղ կարելի յե դնել 380 փեթակ։

Մեր ձմեռանոցների հարմարեցումը

Մեզ մոտ առայժմ մեղուները ձմեռում են սովորական շենքերում՝ լուսամուտ ունեցող սենյակներում, յերդիկ ունեցող տներում, մարագներում, քողտիկներում և այլն։

Փոքրիկ մեղվանոցները դրվում են բնակելի տներում, շարվում են վերևի պատի տակ իրար վրա։ Ցերեկվա տաքը, գիշերվա ցուրտը, տան աղմուկը, ի հարկե, մեղուների վրա վատ են ազդում։

Մեծ լուսամուտները ամբողջ պատի հաստությամբ թե դրսից և թե ներսից դարմանով պետք լցնել և մեխել տախտակներով (հարմարը ֆաներն է), կարելի յե նաև ուղղակի քարով ու ցեխով շարել և սվաղել։

Ձմեռանոցի շենքը պետք միջակ բարձրության լինի (վոչ շատ բարձր, վոչ շատ ցածր)։ Շենքը պետք է լինի չոր և հնարավոր լինի լավ մթնացնել։ Լավ մթնացնելուց հետո պետք է ներսից նայել ու ստուգել ամբողջ ձմեռանոցը, թե վորտեղից է լույս թափանցում ներսը։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել պատերի առաստաղի միացման տեղին և բոլոր ծակ ու ծուկերը ցեխով լավ սվաղել։ Դուռը պետք լավ սարքված լինի, անցքերը բռնված և ներսի կողմից դռան վրա քեչա մեխվի, այնպես վոր դուռը հնարավոր լինի կիպ ծածկել։

Հաճախ ցրտերից պաշտպանվելու համար, անհրաժեշտ է լինում դրսի կամ ներսի կողմից դռան վրա կախ տալ դարմանով լցված հաստ ու տաք մատրաց, բայց այնպես պետք անել, վոր այդ մատրացը պատից-պատ և վերևից ներքև ամբողջ դուռը բռնի։

Յեթե շենքը լավ հարմարեցված է և փեթակներն էլ լցնում են ամբողջ շենքը, ուրեմն ներսի ջերմաստիճանը հեշտությամբ կարելի յե պահպանել 5—6-ի վրա, նույնիսկ շատ ուժեղ ցրտերին էլ (20—30 աստիճան)։

Օդափոխություն սարքելու համար դռան շեմքի տակից գետինը պետք է փորել ու բավական լայն անցք բացել։ Կտուրից էլ նույն չափի անցք բացել (ամեն մի 100 փեթակի համար անհրաժեշտ է 4 վերշոկ լայնություն ունեցող անցք. ինչքան փեթակները շատ լինեն, այնքան այդ անցքը պետք լայնացնել)։ Անցքերը բաց անելուց հետո, պետք աշխատել այնպես սարքել, վոր լույսը չանցնի ներս։ Դրա համար պետք է շինել տալ ծնկավոր խողովակներ ու դնել անցքերի առաջ։ Ամենից լավն այն է, վոր

Յեթե այդ խողովակները սարքվեն քարով ու հողով, վորովհետև թիթեղե կամ փայտե խողովակները ներսի տաքությունը չեն պահում, իսկ քարից ու ցեխից սարքած խողովակները տաքությունը չեն բաց թողնում, յերբ ցուրտ ժամանակ ոդանցքները պինդ բռնվում են։

Ուրեմն ձմեռանոցը պիտի ապահովված լինի լավ ոդանցքներով։ Գարնան մոտերքը, յերբ տաքությունն ուժեղանում է, կտուրի վրայի ոդանցքի վրա պիտի հարմարեցնել փայտե յերկար խողովակ (3—4 մետր), վորը ներսի ապականված ոդն ուժեղ կերպով կձգի դուրս (ինչպես հեշտայերի խողովակը)։

Աշխատավորական անհատ, մեղվանոցները հաճախ շատ փոքր են լինում (5—10 հատ)։ Այդ դեպքում մի քանի մեղվապահներ պիտի հարմարվեն իրար հետ, ընտրեն մի հարմար շենք ու իրենց մեղվանոցները հավաքեն դնեն այդ շենքի մեջ։ Դրանով նրանք շատ շահած կլինեն։

Յեթե հնարավոր չի այդպես անել և փեթակների տեղը ցուրտ է, այդ դեպքում, յերբ փեթակները շարվել են իրար վրա մի անկյունում, պետք է 4 կողմից և վրայից խոտի խրձերով լավ ծածկել, վոր փեթակները վոչ մի տեղ բաց չունենան։ Հաճախ անհրաժեշտ կլինի յերկտակ խրձերով ծածկել։

Խոտով ծածկելիս առանձնապես պիտի զգույշ լինել, վորովհետև խոտի մեջ մկներն ավելի յեն սիրում բույն դնել։

Ձմեռանոց դնելը

Ներս դնելու նախորյակին փեթակների արկանոցացանցերը պիտի իջեցնել, իսկ յեթե չկան, պիտի մեխել փայտե ձողիկներ, միայն թույլ կերպով, վորպեսզի ձմեռանոցում հեշտությամբ պոկվի։ Պատգարակով ավելի հեշտ է կրել փեթակները, իսկ հաճախ կրում են նաև շալակով՝ հատակը մեջքի վրա դրած և ձեռներով արկանոցատախտակից բռնած։

Պետք է աշխատել շենքը լցնել մեղվի փեթակներով, այսինքն այնպես, վոր թե դեպի կողքերը և թե դեպի վերև շենքը բավական լիք լինի փեթակներով, վորպեսզի մեղուն հեշտությամբ պաշտպանի ներսի ջերմաստիճանը։

Շարքերի միջից թողնում ենք բավական ազատ տեղ՝ մեղվապահի անց ու դարձի համար։ Այն ընտանիքները, վորոնք ձմեռվա ընթացքում ոգնության կարիք կարող են ունենալ (թույլ և սոված), առաջուց պետք է նշված լինեն ու դարսվեն վերևի

շարքերում, վոր հնարավոր լինի ձմեռը ստուգել նրանց դրությունը և ոգնության գալ։

Վերևի շարքերում ավելի տաք է, քան ներքևում, ուրեմն թույլ ընտանիքները այդտեղ ավելի լավ կձմեռեն։

Սովորաբար իրար վրա շարում ենք 4—5 փեթակ, բայց լինում են դեպքեր, վոր մինչև 7 հատ էլ ենք դնում իրար վրա։ Համենայն դեպս ցանկալի յե, վոր դադանբլատը 5-ից, իսկ լանգստրոտը 6-ից ավելի չդրվի իրար վրա։

Գարնան մոտերքն այսպես խիտ շարված ձմեռանոցում, ի հարկե, ոդը կարող է ծանրանալ, բայց յեթե ոդափոխությունը լավ է կազմակերպված ջերմաստիճանն առանձին տարբերություն չի ունենում։ Ներսում վերևի պատի յերկարությամբ շարում են փեթակների առաջին շարքը՝ յետևը դեպի պատը (կարելի յե կից կպցնել պատին, յեթե պատը խոնավ չի)։ Յերկրորդ շարքը շարվում է առաջինի դիմաց, այնպես վոր յերկու շարքերի արկանոցները իրար նայեն։ Արանքում թողնվում է կես մետրի չափ տեղ՝ անց ու դարձ անելու համար։ Յերրորդ շարքը դրվում է յերկրորդին կպած, յետև-յետևի, չորրորդը նույն ձևի, ինչպես յերկրորդը։ Յեթե շենքը լայն է, ուրեմն շարքերն այդ ձևով շարունակվում են մինչև շենքի առջևի պատը։ Դռան յետևում միայն թողնում են վորոշ ազատ տարածություն։

Փեթակները ներս դնելուց հետո պետք է կարգավորել ձմեռանոցի դրությունը, ջերմաստիճանը և արկանոցները բացել։ Արկանոցները պետք է բացել զգուշությամբ, առանց աղմուկի՝ սկսել շենքի խորքից. բացել սկզբում վերևի փեթակներինն ու կամաց-կամաց իջնել ներքև։ Յեվ այսպես շարքից-շարք անցնելով, դռան մոտ մեղվապահն արդեն իր աշխատանքը վերջացնում է։ Այդ աշխատանքը կատարելիս, ի հարկե, ձմեռանոցը լավ մթնացրած պիտի լինի և մեղվապահը պիտի աշխատի մթի մեջ, լամպի կամ լապտերի լույսով։ Ծխացող ճրագը վոչ մի դեպքում չպետք է ներս տանել ձմեռանոց։

Ձմեռանոցի ստուգումը

Մեղվապահը ձմեռվա ընթացքում միշտ պիտի տեղյակ լինի մեղուների դրությանը։ Ամենից առաջ նա ճիշտ ստուգման տակ պիտի անի դրսի և ներսի ջերմաստիճանը։

Դրա համար նա պիտի ունենա մեկ հատ ջերմաչափ ներսում, մեկն էլ դրսում։ Ամեն առավոտ կանուխ նա դրսի ջերմաս-

տիճանը պիտի գրանցի հատուկ տետրում, իսկ ներսի ջերմաստիճանը կարող է ստուգել յերբեմն միայն։

Յերբ դրսի ջերմաստիճանը մի քանի օր շարունակ քիչ է փոփոխվում, ուրեմն կարելի յե հաճախ չմտնել ձմեռանոց, չանհանգստացնել մեղուներին կամ ցրտեցնել շենքը։ Բայց հենց վոր դրսի ջերմաստիճանը զգալի կերպով փոխվում է — մի քանի աստիճան բարձրանում կամ իջնում է — ուրեմն պիտի մտնել ներս ու ստուգել, թե արդյոք դրսի ջերմաստիճանի փոփոխությունը ինչպես է ազդել ներսի օդի վրա։

Գրանցումները կատարվում են այսպես.

ամսաթիվ	դրսի ջերմաստիճանը առավոտը ուշ	ներսի ջերմաստիճանը ձմեռ. № 1	Ձ. № 2	Ձ. № 3
25/I	—15	+3	+4	+6

և այլն։

Բացի այս թվական տվյալները, միևնույն տետրում նշում են նաև մեղուների դրությունը «օրինակ՝ մեղուները աղմկում են», «այսինչ մեղուն անհանգիստ է» և այլն։

Մեղուների ընդհանուր դրությունը ստուգելու համար մեղվապահը զգուշությամբ, առանց աղմուկի մտնում է ներս ու անմիջապես դուռը ծածկում։ Ներսում մթության մեջ մի քանի վայրկյան հանգիստ կանգնում ու ականջ է դնում։ Յեթե մեղուների ձայնը միատեսակ, խուլ, հազիվ լսելի գվվոցի յե նմանում, ուրեմն դրությունը լավ է։

Այսպես մի պահ ականջ դնելուց հետո, նա վառում է ձմեռանոցում դրած փոքրիկ լամպը կամ մոմը ու նայում ջերմաչափին։

Սովորաբար յերբ վորոշ փեթակների դրությունը վատ է, նրանց ձայնը բարձր է ու խառը, և խելույն մեղվապահը նկատում է այդ դրությունը։ Յեթե ջերմաստիճանը բարձր լինի (9—10 և ավելի), կամ ցածր լինի (3—2 և ավելի պակաս), ընտանիքները գրեթե ամբողջովին աղմուկ կհանեն ու ընդհանուր ձայնը բարձր կլինի։ Իսկ յեթե ամբողջ ձմեռանոցում միայն մի քանի փեթակներ են այդ դրության մեջ, ուրեմն այդտեղ մի ուրիշ պատճառ կա՝ կամ պաշարն է պակաս, կամ թույլ է, կամ մուկ կա և այլն։

Մեղուների խնամքը ձմեռանոցում

Յեթե ներսում ջերմաչափը ցույց է տալիս 6 աստիճանից ցածր, ուրեմն օդանցքներն անհրաժեշտ է փակել, իսկ յերբ 8-ից

բարձր է, օդանցքները պետք է լայն բացել։ Յեթե օդանցքները փակելուց հետո էլ ջերմաստիճանը չի բարձրանում, ուրեմն պետք է դուռն ապահովել, այն է, ինչպես ասել ենք վերևում, մատրացը կախել։

Յեթե մեղվանոցում կան թույլ և կարիքավոր ընտանիքներ, ուրեմն մեղվապահը դրանց մասին դեռ աշնանից պիտի տեղյակ լինի։ Սովորաբար այդպիսի ընտանիքները դրվում են վերևի շարքերում այնպես, վորպեսզի ձմեռը մեղվապահը կարողանա օգնություն տալ նրանց։ Ի հարկե ձմեռանոցում միակ օգնությունը կերակրելն է։

Կերակրելու համար չի կարելի բունը քանդել ու մեղրով շրջանակ դնել։ Միայն կարելի յե շաքարասալեր պատրաստել ու ծածկոցի տակից դնել շրջանակների վրա, այնտեղ, վորտեղ մեղուն ավելի շատ է հավաքված. այսինքն շաքարասալերը դրվում են ուղիղ կծիկի վրա։ Ամենից լավը կանդին է։ Յերբեմն, 5—10 օրը մեկ անգամ, զգուշությամբ ստուգվում են այդ ընտանիքները, և յեթե կարիք կա, նոր կեր են ավելացնում, մինչև յեղանակները կտաքանան ու հնարավոր կլինի մեղուները դուրս դնել։

Ուրեմն ձմեռանոցում մեղվապահն ընդհանրապես կարող է վերացնել հետևյալ թերությունները.

ա) բարձրացնել կամ իջեցնել ձմեռանոցի ջերմաստիճանը (օդափոխություն, շենքի հարմարեցում, անցքերի վերացում, փեթակները խոտով ծածկել).

բ) վերացնել մեղուներին անհանգստացնող պատճառները (աղմուկը. լույսը, վատ հոտերը, մկները).

գ) կերակրել կարիքավոր ընտանիքներին։

Կան և այնպիսի թերություններ, վորոնք ձմեռվա ընթացքում վոչ մի հնար չկա վերացնելու, ինչպիսին են՝ շենքի խոնավությունը, ընտանիքների անմայր լինելը, թուլությունը։ Ընդհանրապես դեռ աշնանից բոլոր թերությունները մեղվապահը պարտավոր է նախատեսել ու վերացնել։

Ձմեռանոցից դուրս դնելու նախօրյակը

Ձմեռող մեղուների համար ամենավտանգավոր ժամանակը դա դուրս դնելու նախօրյակն է, այսինքն՝ յերբ գարունն արդեն մոտ է։

Այդ վտանգավոր ժամանակն սկսվում է սովորաբար փե-

տըրվարի վերջերից դաշտային վայրերի համար և մարտի սկզբներից՝ լեռնային վայրերի համար։ Այդ ժամանակ գիշերներն այնքան ցուրտ չեն, իսկ ցերեկները բավական տաք են, ձյունն սկսում է արդեն հալվել և քանի գնում շոգն ընկնում է, մեղուներն սկսում են անհանգստության նշաններ ցույց տալ։

Ամենից առաջ դեռ կծիկի ներսում մայրը սկսում է ձվել։ Ձվում է քիչ, նայած կծիկի մեծությանը, մեկ-յեր ու շրջանակի վրա, կես կամ մի ամբողջ ձեռքի թաթի չափ։ Քանի դեռ ձմեռանոցում ջերմաստիճանը 8-ից բարձր չի, ձվարկությունը քիչ է (ամենաշատը յերկու-յերեք շրջանակի վրա) և մեղուն հանգիստ է ու կծիկը դեռ չի ցրվել. իսկ յերբ 8-ից վեր է բարձրանում, հասնում է 9—10-ի, արդեն կծիկն սկսվում է բացվել։ Այդ ժամանակ մայրը ձվարկությունն ուժեղացնում է, մեղուների ձայնը բարձրանում է ու նույնիսկ հատ ու կենտ մեղուներ դուրս են թռչում փեթակից դեպի ոդանցքից յերևացող լույսը։ Բայց այդտեղ ոդի սառնությունից մեղուները սառում, թմրվում են հատակին։

Այսպիսի վտանգավոր որեր լինում են սովորաբար 5—10 որից վոչ ավելի, բայց հենց այդ մի քանի որվա ընթացքում մեղուն չափազանց տուժում է և 2—3 անգամ ավելի շատ մեղր է սպառում, քան ամբողջ ձմեռվա ընթացքում։

Յեթե ժամանակին ոդափոխությունը լավ է կազմակերպվում, ձմեռանոցը բոլորովին մութ է լինում և ընդհանրապես ջերմաստիճանը 8-ից չի բարձրանում մինչև դուրս գնելը—դա լավ է, այսինքն վորդ ու ձուն դեռ այնքան շատ չեն, մեղուն համեմատաբար ավելի հանգիստ է, պաշարը շատ չի սպառված։

Այդ տեսակետից գետնափոր ձմեռանոցներն ամենից հարմարն են, վորովհետև դրսի ոդը դժվարությամբ է ազդում ներսի ոդի վրա և ջերմաստիճանի տատանումներ գրեթե բոլորովին չեն լինում։

Գետնափոր շենքերում ոդի դրությունը բոլորովին չի փոխվում, նույնիսկ յերբ որերն արդեն տաք են։ Ոդը սառն է, կարծես դեռ ձմեռ լինի, դրա համար էլ մեղվի կծիկի ներսում դեռ մինչև դուրս գնելու որերն էլ, առանձին փոփոխություն չի կատարվում, մայրն էլ չի սկսում իր ձվարկությունը։

Շատ քիչ ընտանիքներ են լինում, վոր դուրս գնելու ժամանակ ունենում են վորդ ու ձու։ Ուրեմն, յերբ այսպիսի ձմեռանոցից մեղուն դուրս է դրվում, մեղվի կծիկը դեռ բացված չի

լինում և զգաստացման նշան չկա ներսում։ Դրա հետևանքն այն է լինում, վոր մեղուն իբրև աշխատավոր ուժ շատ թարմ է մնում, չի զառամում, մեղր էլ շատ չի սպառում։

Գարնան սկզբից այդ ընտանիքները մեղրի ահագին պաշարով և թարմ ուժերով սկսում են իրենց զարգացումը ու դիմանում շատ աննպաստ պայմաններին՝ բերքի յերկար բացակայությանը, ցրտերին, քամիներին։

Յերբ ձմեռանոցի ջերմաստիճանը ցածր է լինում, հաճախ ուժեղ ընտանիքներն ավելի շատ են տուժում. դա արտահայտվում է նրանով, վոր գարնան մոտերքը, արթուն լինելով՝ ավելի շատ վորդ ու ձու յեն խնամում և ի հարկե ավելի շատ են տուժում։

Մեր մեղվապահները սովորաբար ուրախանում են, վոր դուրս գնելու ժամանակ շատ վորդ ու ձու յե լինում։ Բայց դա, շատ դեպքերում բոլորովին ոգտավետ չէ։

Մեղուների դուրս դնելու ժամանակը

Պետք է աշխատել, ինչքան կարելի յե, ուշ դուրս դնել մեղուները, նրա համար, վոր այդ ժամանակները դեռ տաքերը լավ չեն ընկել ու գիշերները, յերբեմն և ցերեկները ուժեղ ցրտեր են տնում, մանավանդ պարզկա գիշերները։

Բայց, ինչպես ասացինք, մեր ներկա ձմեռանոցներում հաճախ մենք չենք կարող յերկար պահել մեղուները, ուստի անհրաժեշտ է լինում մեղուն դնել դուրս, վորովհետև դուրս դրած մեղուն, համենայն դեպս, այնքան չի տուժում, ինչքան ներսում մնացողը։

Յեթե ներսում մեղուն շատ է աղմկում և դրությունը վտանգավոր է, պետք է որվա տաք ժամերին հանել դուրս այն հաշվով, վոր մեղուն կարողանա թռիչք կատարել ու մաքրվել։

Ձմեռվա վերջերին՝ արաններում մարտի 5—15-ը և սար տեղերում մարտի 20-ից մինչև վերջը, յեղանակներն արդեն բավական տաքանում են, ձյունը գրեթե բոլորովին հալվում է, դաշտերը բացվում, նույնիսկ արևկող տեղերում սկսում է կանաչ խոտ յերևալ, գիշերները ջուրը չի սառում (2—5 աստիճան Ցելսիուսի), ցերեկները բավական տաք է լինում (ամպ որերին 6—8 աստիճան, արև որերին 10—11)։ Ահա այդ ժամանակ պետք է ընտրել մի պարզ որ ու մեղուները դուրս դնել։ Դուրս դնելու ամե-

նայավ ժամանակը առավոտն է։ Այնպես պետք է վարվել, վոր մինչև յեղանակը տաքանալը արկղնոցները սրբեն բացվեն ու մեղուն սկսի թռչել։ Մինչև յերեկոյան ցուրտն ընկնելն արդեն մեղուն իր թռիչքը կկատարի, կմաքրվի ու գլխավոր վտանգը անցած կլինի։

Յերեկոները կամ շատ ցուրտ օրերը վտանգավոր է մեղուն փնել դուրսը, վորովհետև մեղուն ստիպված կլինի յերկար ժամանակ ներսում փակված մնալ, թռիչք չի կարող անել ու կարող է ներսում չեչիրի վրա ծրտել։

Հանգիստ թռիչքի ժամանակ, ի հարկե, մեղուն նկատում է իր փեթակի տեղը, դիրքը և թյուրիմացության մեջ չի ընկնում։ Չնայած դրան, հաճախ անհրաժեշտ է լինում օգտվել օրվա պարզ և տաք ժամերից ու շտապ դուրս հանել մեղուները։

Այդպիսի տաք ժամեր տարվա այդ ժամանակ այնքան հաճախ չեն լինում, և յեթե մեղվապահը չօգտվի հանգամանքից, կարող է յեղանակը նորից վատանալ և ամբողջ օրերով մեղուները պիտի մնան ներսում անհանգիստ վիճակում։

Ուրեմն գարնան սկզբներին մեղվապահն ամբողջ ժամանակ պիտի ուշի-ուշով հետևի յեղանակին և մեղուների դրությանն ու օգտվի հարմար րոպեյից՝ մեղուները դուրս դնելու համար։

Մեղուների դրսում ձմեռելը

Մեր կլիմայական պայմաններում ընդհանրապես ձեռնտու չի մեղուները թողնել դուրսը ձմեռելու, վորովհետև ձմեռը բավական շատ ցուրտ է լինում և ջերմաստիճանի տատանումները շատ ուժեղ են լինում։

Մեղվի ընտանիքը դրսում ձմեռելու համար, ընտանիքը պիտի շատ ուժեղ լինի և անհամեմատ ավելի շատ պաշար ունենա։ Այդպիսի ընտանիքը դրսում թե իր կենսական ուժերն է շատ վատնում և թե պաշարը շատ է սպառում։

Հայաստանի մի քանի շրջաններում միայն առայժմ կարելի յե դրսում ձմեռեցնել մեղվին (Դիլիջանի, Կիրովականի, Ալլահվերդու, Իջևանի և Շամշադինի ցածրադիր վայրերում), վորովհետև այդ վայրերում կլիման բավական մեղմ է։ Սակայն յեթե այդ վայրերում հարմար ձմեռանոցներ լինեն, ինչ խոսք, վոր ավելի նպատակահարմար է ներսում ձմեռեցնել, քան դրսում, քանի վոր լավ ձմեռանոցում մեղուն ավելի հանգիստ է լինում և պաշար

քիչ է սպառում, քան դրսում։ Համենայն դեպս, յերբ ստիպված ենք մեղուները ձմեռեցնել դրսում, պետք է համապատասխան միջոցներ ձեռք առնել, վորոնք բավական կպաշտպանեն, վոր մեղվի ընտանիքը չտուժի։

Ամենից առաջ փեթակների տեղը պատվարներով պիտի պաշտպանված լինի ցուրտ քամիներից, ինչպես այդ մասին ասված է «Գարնան խնամքը» գլխում։ Այս փեթակները պիտի ունենան հատուկ տաքացումներ։

Ամենապարզ տաքացումը, առաջին հերթին, հենց այն տաքացումն է, վորի մասին ասել ենք «Աշնան աշխատանքներ» գլ-



Նկ. 37. Պարփակման արկղ՝ դրսում ձմեռելու համար:

խում։ Բայց ի հարկե այդ ձևի տաքացումները բոլորովին բավարար չեն դրսում ձմեռելու համար։

Ամենից ավելի մատչելի և նպատակահարմար ձևը հետևյալն է, չորսական փեթակ տեղավորում ենք խոշոր արկղների մեջ՝ իրար կողքի, տակից, կողքերից և վերայից բավական հաստ շերտով գարման լցնում (մինչև 20—30 սմ), արկանոցները հատուկ անցքերով միացնում ենք դրսի օդի հետ, իսկ արկղի վերայից դնում մի մեծ յերկաթե կտուր։

Տաքացումների ուրիշ ձևեր էլ կան, բայց նրանք մեզ համար էական չեն։ Հաճախ փեթակները թողնում են ձյան տակ։

Յերբ ձյունը հաստ շերտով ծածկում է ամբողջ փեթակը, ընտանիքի դրությունը բավարար է լինում։ Բայց, համենայն դեպս ձյունի տակ էլ պահելիս, պետք ունենալ պարփակման արկղներ, կամ արկղը (փեթակը) պետք է կրկնապատ լինի և լավ տաքացրած։

Պարզ է, ի հարկե, վոր դրսում ձմեռելը կապված է խոշոր դժվարությունների, ծախքերի և վնասների հետ, ուրեմն անպատճառ մի շենք պետք է ճարել ու դնել ներսը, իսկ ամենից անհրաժեշտը՝ պետք է շինել հատուկ ձմեռանոցներ։

Ձմեռանոցի կշռումները

Յերբ մեղվանոցը դնում ենք ձմեռանոց, մեզ համար կարևոր է իմանալ, թե ձմեռվա ընթացքում՝ մինչև դուրս դնելը, ինչքան մեղր է ուտում մեղվի ընտանիքը։

Միջակ ուժի տեր մի ընտանիք դնում ենք կշեռքի վրա, քաշը վերցնում ու դրանից հետո շաբաթը մի անգամ կշռում ու գրանցում ենք քաշը։ Դուրս դնելու ժամանակ վերջին անգամ կշռում ենք և այդպիսով իմանում, թե ձմեռվա տարբեր ժամանակներում ինչքան է պակասում ընտանիքի քաշը և վերջապես հաշվում ենք, թե ամբողջ ձմեռվա ընթացքում ինչքան է պակասել, այսինքն ընդամենը ինչքան մեղր է ուտել տվյալ ընտանիքը։ Այդ մի ընտանիքի օրինակով մոտավորապես կարելի է հաշվել, թե մյուս ընտանիքներն ինչքան են ուտել։

Ավելի ճիշտ հաշիվ անելու համար, յերբ արդեն մեղուն թռիչք կատարել վերջացրել է, պետք է դուրս դնելուց հետո, կշռափեթակն ստուգել, վորպեսզի մեղվի ստամոքսի մեջ հավաքված կղկղանքը չկշռենք մեղուների հետ միասին։ Այդպիսով կիմանանք ձմեռանոցում սպառված մեղրի մաքուր քաշը։

Դրա գործնական նշանակությունն այն է, վոր մենք մոտավորապես հաշվում ենք ամբողջ մեղվանոցում սպառված մեղրի քանակը. մենք պարզում ենք, թե ինչքան հաջող է ձմեռել մեղուն, ապա ստուգում ենք ջերմաստիճանների գրանցումները և համեմատում այդ տվյալներն իրար հետ։ Յեթե տեսնում ենք, վոր վատ են ձմեռել և պարզում ենք պատճառները, ուրեմն մեզ համար պարզ է դառնում, վոր ահա այսինչ պայմաններում սպառվում է այսքան մեղր։ Հաջորդ ձմեռվա ստուգումը կտա մեզ նոր տվյալներ, վորով տարեցտարի մենք կարող ենք պայմանները լավացնել ու ձմեռոցը դնել լավ հիմքերի վրա։

ՄԵՂՎԻ ԱՐՏԱԴՐԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ, ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐԱԿԸ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Մեղր

Մեղվի արտադրած գլխավոր նյութը մեղրն է։ Մեղրը մեղուն պատրաստում է այն քաղցր հյութից, վորը կոչվում է նեկտար։ Բույսերի մեծամասնությունն իրենց ծաղիկների միջոցով արտադրում են այդ նեկտարը, վորը մեղուները ծաղիկների միջից վերցնում լցնում են իրենց մեղրափուչիկը և բերում փեթակը։ Այն րոպեյից, յերբ նեկտարը մտնում է մեղվի բերանը և մինչև այն րոպեն, յերբ նրանից դուրս է գալիս, յենթարկվում է վորոշ փոփոխությունների։ Նեկտարի մեջ յեղած շաքարանյութը կոչվում է յեղեգնաշաքար։

Յեղեգնաշաքարը մաքուր շաքարն է, վոր մենք գործ ենք ածում և վորը լինում է թանձր (կոշտացած վիճակում), իսկ յերբ դարձնում ենք շաքարաջուր, շուտով շաքարում է։

Յերբ այդ շաքարին խառնում ենք քիչ քանակությամբ թթվուտներ (գինեքարի, լիմոնի, քացախի, ծծմբի և այլն՝ մի կգ-ին մեկ գրամ) նրանց ազդեցության տակ յեղեգնաշաքարը կամաց-կամաց սկսում է քիմիապես փոփոխվել ու մի մասը վերածվում է խաղողաշաքարի, մյուս մասը պտղաշաքարի, իսկ մի մասն էլ մնում է նույն վիճակում (չի վերածվում)։ Այդ շաքարը մնում է հեղուկ դրության մեջ, շուտ չի շաքարակալում (թանձրանում) և հարմար է մեղուների գործածության համար։ Մեղվի օրգանիզմը հատուկ գեղձերի միջոցով արտադրում է այնպիսի նյութեր, վորոնք փոքրիկ քանակներով խառնվում են նեկտարին, վորից հետո նրա մեջ կատարվում է վերև հիշված փոփոխությունը։ Ինչքան լրիվ կերպով կատարվի այդ փոփոխությունը, այնքան մեղրը լավորակ է, այնքան լավ է դիմանում

ենպաստ պայմանների և հարմար է մեղվի գործածության համար: Բայց միայն դա չէ մեղվի և սովորական շաքարի տարբերությունը: Մեղրի մեջ ծաղիկներից անցնում են զանազան անուշահոտ նյութեր (եթերային յուղեր), որոնք մեղրին հոտավետություն են տալիս:

Մեղվի օրգանիզմը տալիս է մեղրին նաև այնպիսի նյութեր, որոնք մեղրը դարձնում են դյուրամարս: Այն մեղրը, որի հիմնական բաղադրիչ մասը վերածված է խաղողաշաքարի և նրա եղեգնաշաքարի քանակը շատ քիչ է (2—7 տոկոս), համարվում է լավորակ մեղր. Նրա շաքարային նյութերը շատ են, իսկ կողմնակի (մոխրային և այլն) նյութերը շատ քիչ են: Բայց կա նաև մեղր, որի շաքարային նյութերը 40 տոկոս էլ չեն կազմում, որի մեծագույն մասը եղեգնաշաքար է, շուտ է շաքարում ու մեղվի համար անմատչելի դառնում: Այդ մեղրը պարունակում է մեծ չափով զանազան կողմնակի, անմարսելի նյութեր, գույնը կարմիր է, ջրալի և հոտավետ չէ: Այդ տեսակ մեղրը կոչվում է մանանայի մեղր, որը հավաքվում է որոշ ծառերի տերևների վրա արտադրվող քաղցր հյութից, իսկ երբեմն էլ այն հյութից, որն արտադրվում է ծառոջիլների կողմից:

Մեր մոտ, անտառային շրջաններում երբեմն մանանայի մեղրը շատ է լինում, մեղուն ձմեռը լավ չի ձմեռում նրա վրա, կողմնակի նյութերը կուտակվում են մեղվի հաստ աղիքում ու հաճախ նա չի դիմանում մինչև գարունը, փորլուծ է ստանում ու ապականում է չեչերը:

Շաքարակալում

Ընդհանրապես մեղրի համար շաքարակալելը բնական երևույթ է, միայն շուտ կամ ուշ շաքարելը կախված է նրա որակից:

Շաքարած մեղրը կարելի է տաքացնել, լուծել ու դարձնել ծոր մեղր: Դրա համար մի մեծ կաթսայի մեջ ջուր են տաքացնում ու մեղրն ամանով դնում մեջը: Եթե սառած մեղրը հալվի աստիճանաբար՝ 40-ից ցածր ջերմաստիճանի տակ, որ շատ երկար կտևի, երբեմն օրեր, ուրեմն ստացված ծոր մեղրը գրեթե ոչնչով չի տարբերվի թարմ մեղրից: Այդ տեսակետից ավելի ձեռնտու է գործածել շաքարակալած մեղրն առանց հալելու:

Մեղրի հասունանալը

Երբ մեղուները բջիջները մեղրով լցնում են, այնուհետև այդ մեղրը մի քանի անգամ տեղափոխում են բջիջից-բջիջ ու վերջնականապես դարսում շրջանակների վերևի կողմը ու հետո կնքում:

Դեռ մեղվի մեղրափուշիկի մեջ եղած ժամանակ թե դաշտից տուն բերելիս, և թե փեթակի մեջ կատարած տեղափոխությունների ժամանակ, մեղրը կորցնում է իր ջրային մասը և հետզհետե թանձրանում:

Բացի այդ, մեղուներն արհեստական օդափոխություն են կատարում ու գոլորշիացնում մեղրի մեջ գտնված ջրային մասը: Երեկոյան կողմը, երբ աշխատանքը կամաց-կամաց դադարում է, շատ մեղուներ կանգնած արկանոցի առաջ, գլուխները դարձած դեպի արկանոցն ու փորիկները տնկած՝ թևերն ուժեղ կերպով թափահարում են ու դրսի չոր ու զով օդը քշում ներս: Այդ ժամանակ եթե ձեռքդ պահես արկանոցի զանազան մասերում, կտեսնես, որ արկանոցի մի մասից օդն ուժեղ կերպով ներս է գնում, իսկ մյուս մասից դուրս գալիս:

Այդպիսով մեղրը կորցնում է իր ջրային մասը և նրա մեջ մնում է շատ քիչ ջուր, այսինքն մեղրը հասունանում է:

Ժամանակից շուտ բերված մեղրը շատ ջուր է պարունակում իր մեջ. մայիսին և հունիսին բերած նեկտարը գրեթե 80 տոկոսով ջուր է պարունակում, որովհետև հողի միջի և օդի խոնավությունը շատ է լինում: Հուլիսին և օգոստոսին քանի գնում նեկտարը թանձրանում է և ջրային մասը հազիվ նեկտարի 20-30 տոկոսն է կազմում, քանի որ հողը և օդն արդեն կորցրել են իրենց խոնավության խոշոր մասը:

Մեղրի որակը և պահպանումը

Հայաստանի մեղրերն իրենց որակով ամբողջ ԽՍՀՄ-ում համարվում են առաջիններից մեկը: Բայց մեղրի հատկությունը և բաղադրությունը բավական չեն, որպեսզի նա լավ լինի: Դրա հետ միասին անհրաժեշտ է որպեսզի ինքը՝ մեղվապահն արհեստականորեն չփչացնի մեղրի որակը. մի փոքր անխնամ և վատ վերաբերվելուց մեղրը կորցնում է իր ամենակարևոր հատկությունները՝ պարզությունը, հոտավետությունն ու որոշ չափով նաև համը:

Այդ իսկ պատճառով այն րոպեյից, յերբ շրջանակը փեթակից դուրս է գալիս և մինչև այն րոպեն, յերբ հասնում է տարողքին, մեղրի հետ գործ ունեցողները պետք է շատ զգույշ և հոգատար վերաբերմունք ցույց տան մեղրի նկատմամբ:

Շրջանակը փեթակից հանելուց հետո գետին չպետք է դնել, այլ դնել հատուկ կորպուսի մեջ: Շենքը, վորտեղ քամում են մեղրը, պետք է լավ մաքրած, ավլված լինի և ջուր շաղ տված: Ներսում շրջանակները չպետք է գետնի վրա հենել իրար ու միջկորպուսների մեջ պետք է դնել: Մեղրահանը, սերեկների ամանը, դանակները բոլոր գործիքներն ու մեղրի ամանները լավ լվացված ու չորացված պետք է լինեն:

Շենքը պետք է ունենա 20—25 ջերմաստիճան. յեթե ջուր ենք տաքացնում, մաքուր ջուր պետք է գործածել:

Սերեկների ամանի մոտ մի թեթև արկղիկ պետք է դնել և ծամած մոմերը չգցել հատակին կամ սերեկների ամանի մեջ, այլ գցել այդ արկղիկի մեջ:

Յերբ մեղրն սկսում է ծորալ մեղրամանում, ամանը լցվելուն պես, պետք է բերանը ծածկել ու դնել մի կողմ: Քամվող մեղրը դեռ բավական կողմնակի բաներ է պարունակում իր միջ՝ մոմի և ակնամոմի կտորտանք, յերբեմն չոփի կտորներ, սատկած մեղուներ, իսկ առաջին մեղրաքամիներին՝ նաև մեղվի պատահական վորդեր: Վորովհետև առաջին քամված մեղրերը քամվելու ժամանակ բավական ջրի յեն լինում, ուրեմն հեշտ է ամանի բերանին ծորակի տակ մի քամիչ պահել ու բոլոր այդ պատահական բաները ղտել քամիչով: Բայց ինչքան էլ վոր քամես, մեղրը լրիվ կերպով չի մաքրվի:

Յերբ ամանը մեղրով յերկու-յերեք օր հանգիստ մնում է, բոլոր կողմնակի բաները բարձրանում են մեղրի յերեսը, վորտեղից և վերցնում ու լցնում ենք քամիչի մեջ: Այդպիսով մեղրը զտվում է ու մաքրվում:

Յեթե ամանի բերանը լավ, ամուր բռնես, այդ մեղրը շատ լավ կպահպանվի:

Մեղրի ամանները

Վոչ մի ուրիշ պրոդուկտ այնպես լավ չի պահպանվում զանազան ձևի ամաններում, ինչպես մեղրը: Բայց, ի հարկե, մեղրն էլ պահանջկոտ է դեպի ամանը և հաճախ ամանի վատ լինելու պատճառով նրա վորակն ընկնում է:

Ամենից լավ ամանը մեղրի համար եմալե ամանն է: Լավ են նաև ալյումինե և անագած (կլայեկած) ամանները, ինչպես և սպիտակ թիթեղից շինած ամանները: Այդ ամանների մեջ մեղրն ինչքան էլ յերկար մնա, վոչ մի փոփոխության չի յենթարկվում:

Մեղրը պահում են նաև փայտե և հողե ամանների մեջ: Ամեն տեսակի փայտից ի հարկե չի կարելի մեղրի աման պատրաստել, վորովհետև մեղրը ծծում է իր մեջ փայտի խոնավությունը, փայտը չորանալով ճեղքեր է առաջացնում ու մեղրը հոսում է:

Միայն լորենու չոր տախտակներից շինած ամաններն են, վոր կարող են մեզ բավարարել, այն էլ լավ կլինի, յեթե, համենայն դեպս, այդ ամաններն ակնամոմի և մոմի հալած խառնուրդով լավ քսվեն ներսից այնպես, վոր փայտը ծծի իր մեջ այդ հալվածքը:

Կավե ամաններն (լավ թրծած կարասները և ավելի մանր ամաններ) էլ, նույն ձևով, մեղրը լցնելուց առաջ պետք է այդ հալվածքով ապահովել: Դրա համար պետք է ամանը շուռ տալ տաք թոնրի վրա, վոր լավ տաքանա և ապա լցնել հալվածքը: Ամանն այնքան պետք է պտտեցնել, վոր բոլոր տեղերը լավ բռնի: Կավե ամանի թերի կողմն այն է, վոր փոխադրության համար անհարմար են: Այդ տեսակետից ամենից հարմար ամանները 50 կիլոգրամանոց (անագած) թիթեղե բիդոններն են, վորոնք փոխադրության համար չափազանց հարմար են:

Պահեստների համար ամեն ձևի մեծ և փոքր ամաններ պիտանի յեն, միայն այդտեղ պետք է հաշվի առնել մեղրի շաքարելը: Խոշոր և բերանը նեղ ամանի միջից շաքարած մեղրը չափազանց դժվար է հանել. իսկ ամուր և բերանը լայն ամանների մեջ ամբացած մեղրը հեշտ է փորել, հանել այդ նպատակի համար հատկապես շինված փոքր բահով: 50 կիլոգրամանոց փոքր ամանների մեջ մեղրը հեշտ է տաքացնել ու դարձնել ծոր մեղր:

Մեղրահացի պահպանումը

Մեղրահացն ավելի հոգատարությամբ պետք է պահպանել: Մեղրահացը զանազան աննպաստ պայմաններից՝ գլխավորապես խոնավությունից՝ հեշտությամբ չի փոխում իր հատկությունը և չի փչանում: Գլխավոր հոգսը պետք է լինի՝ պահպանել այդ մեղ-

Մոմի հալելը

Յեթե առաջուց մոմը մաքուր և հավաքված է պահված, ապա այդ մոմը հալելիս կստացվի ամենալավ մոմը և նրա հալելն էլ մի պարզ գործ է դառնում։ Մոմը հալում են հետևյալ կերպ. մի կաթսայի մեջ լցնում են ջուր ու տակը կրակ վառում և այդ ջրի մեջ լցնում են հավաքած մոմը։ Մինչև տաքանալը և հալվելը փայտի մի կտորով միշտ խառնում են, վոր հավասար հալվի և չհալված կտորներ չմնան մեջը։ Յերբ լավ հալվում է, վերցնում ենք մի տնադած պղնձե տաշտ, կամ ուրիշ բաց՝ ամանի, փայտե տաշտ, ցինկապատ թիթեղի աման և այլն։ Այդ ամանի մեջ մի մաքուր և նոր (առանց ծակուծուկի) պարկի կտոր ենք դնում և յեռացրած մոմը լցնում այդ կտորի մեջ ու ծոթերը հավաքելով, թելով ամուր կապում ենք։ Մոմի կապոցը բարձրացնում ենք տաշտի միջից ու միջի ջուրն ու մոմը քամվում են տաշտի մեջ։ Կապոցը պետք է տանել յերկու նեղ տախտակի արանք ու ճզմել։ Մեկը կապոցը բռնում է, իսկ յերկու հոգի, մեկը մի կողմից, մյուսն էլ մյուս կողմից, տախտակների ծայրերը հուպ են տալիս։ Յերբ ինչքան հնարավոր է կապոցը քամվում է, նրա մեջ յեղածը նորից պետք է լցնել կաթսան, նոր ջուր լցնել ու յեռացնել։ Ցանկալի յե լցնել տաք ջուր, վոր շուտ լինի։ Այդ զանգվածն արդեն յեռացած վիճակում քամում ենք մամուլով։



Նկ. 38. Հատչ-Բուտի մոմ ճզմելու մամուլը՝ թեքված վիճակում

Սև չեչերը հալելիս հաճախ անհրաժեշտ է լինում հենց մի անգամից լցնել մամուլն ու ճզմել, վորովհետև այդպիսի հալվածքից առանց մամուլի նախապես դժվար է մաքուր մոմ հանել։

Հատչ-Բուտի մամուլն ամենից հարմարն է դրա համար։ Նույն պարկի կտորը գցում ենք մամուլի կաթսայի մեջ, յեռացած ամբողջ զանգվածը լցնում այդ կտորի մեջ ու նույն ձևով կապում ծայրերը (ծոթերը)։

Կապոցի վերևից դնելով մամուլի սալիկը, ճզմիչն իջեցնում ենք վրան ու ճզմում։ Ճզմելիս քիչ-քիչ պիտի պտտեցնել բռնակը, վոր աստիճանաբար քամվի և վոչ կապոցը պատռվի, վոչ էլ կաթսան ճաքվի հանկարծակի ճնշումից։ Մի անգամից շատ չենք լցնում, վոր լավ քամվի ու կաթսան էլ չճաքվի։ Ճզմելու գործը սովորաբար տևում է կես ժամ, յերբեմն և ավելի։ Յերբեմն մամուլը պիտի թեքել, հավաքած մոմը յերես-յերես թափել տաշտի մեջ, նորից յեռացրած ջուր լցնել ու շարունակել ճզմելու գործը։ Այդպիսով մոմն այնքան կքամվի, վոր մնացորդների միջից այլևս մամուլով հնարավոր չի լինում մոմ հանել։ Լավ կլինի, վոր այս աշխատանքը կատարվի տաք շենքի մեջ։ Այդ մնացորդները պահվում են և ուղարկվում մոմի գործարան, վորտեղ քիմիապես զատում են մոմը մնացորդներից։ Այդ մնացորդները պիտի չորացնել, վոր չբորբոսնեն։ Տաշտերի միջի մոմը ջրի յերեսին սառում և կաղապար է դառնում։

Չեչեր, նրանց վորակը յեվ պահպանումը

Նոր կառուցած չեչերը սպիտակ և նուրբ են լինում. տարեցտարի նրանք մթնում են, իրենց մաքուր գույնը կորցնում, վերջապես բոլորովին սևանում, հաստանում ու ծանրանում են։

Փոշին ու այլ կեղտոտություններ, ականամոմի մանրիկ կտորներ, վորոնք նստում են չեչերի վրա—այդ բոլորը մի կողմից, մյուս կողմից վորդի թողած շապիկները և կղկղանքը փչացնում են չեչերն ու մի քանի տարուց հետո (7—10 տարի) գեն անպետք դառնում այն։

Մեր մեղվանոցում պիտի աշխատել հին բնի չեչերը փոխարինել նորերով։ Ամենից լավն այն է, յերբ յերեք տարուց ավելի հին չեչ չի պահվում։

Չեչի կառուցվածքը

Սովորաբար մեղվի ընտանիքը բնակվելով վորևէ տեղ կառուցում է այնքան բանվորաչեչեր, ինչքան կարող է կազմել նրա մշտական բունը, վորի վրա նա ձմեռում և գարնանը սերունդ է արտադրում։

Այդ բնից դուրս, յերբ մեղուն շարունակում է իր գործը, նա կառուցում է միայն բռաչեչեր, վորոնց մեջ ակցրում խնա-

մում ե մեծ քանակությամբ բոռեր, վորոնց դուրս գալուց հետո լցնում են մեղր ու կնքում։

Լինում են նաև դեպքեր, յերբ յերկու տեսակի բջիջներն ել լինում են միևնույն շերտի վրա, բայց այդ դեպքերը հաճախակի չեն։ Յերբ մոմաթերթը տալիս ենք, այդ դրությունը բոլորովին վերանում ե և մեղուներն ստիպված են կառուցել միայն բանվորաբջիջներ։ Միայն այն դեպքում, յերբ մոմաթերթերը զոդ լինելու կամ վատորակ լինելու պատճառով ձգվում են, բջիջները ծամածռվում, յերկարում են, ալիքներ և տոպրակներ են գոյանում ու կառուցված շերտն անկանոն ե լինում։

Մոմաթերթը լավորակ լինելու և չփչացնելու դեպքում կառուցված շերտը գրեթե բոռաբջիջներ չի ունենում. օրինակ, խորը բջիջով կանոնավոր մոմաթերթը կարող ե վոչ մի հատ բոռաբջիջ չունենալ։ Միայն պատահաբար, յեթե շրջանակի մի փոքրիկ մասում ազատ տարածություն ե մնում և իրենք՝ մեղուներն ստիպված են լրացնել, ահա այդտեղ կառուցվում են բոռաբջիջներ։ Այդպիսի շերտերը պետք ե մեջտեղից վերացնել բոլորովին, իսկ յեթե ափսոսում ենք առայժմ վերացնել, ապա սեզոնի ընթացքում մեղվապահը միշտ պետք ե զգույշ լինի ու բնից հեռացնի, վոր մայրը չձվի մեջը։ Այդպիսի շերտերն օգտագործվում են մեղրի կուտակման ժամանակ՝ մեղր լցնելու համար։

Շատ սխալ և վնասակար ե այն բանը, յերբ շատ մեղվապահներ բնի ներսում գործ են ածում այդպիսի անկանոն շերտեր և անընդհատ զբաղված են կնքած բոռավորդերի սերեկները կտրտելով։ Մեղուներն ահագին մեղր են ծախսել և ջանք են վատնել այդ վորդերը խնամելու համար, ուրեմն, յերբ կտրտում են սերեկները, ժամանակից շուտ մայրը նորից ե ձվում ու նորից նույն խնամքն ե պահանջվում։ Լավագույն միջոցն ե մի անգամից վոչնչացնել այդպիսի շերտերը, կամ թույլ չտալ, վոր մայրը ձվի նրանց մեջ։

Շերտի պահպանումը

Պահեստում շերտերը կարող են փչացնել ցեցը և մուկը։ Մկներից ազատվելու համար փակ արկղների մեջ պետք ե պահել։ Ամենից լավը կորպուսներն են. պետք ե շարել կորպուսների մեջ ու մի քանի հատը սյունաձև դնել իրար վրա։ Կորպուսներում պարփակելու ձևը տրված ե «ցեց» գլխում։

Ծաղկափոշի

Մեղուն ծաղկափոշին հավաքում ե ծաղիկներից։ Մեղրը պարունակում ե միայն ածխաջրատային նյութեր և միայն այրվում ե օրգանիզմի մեջ, իսկ ծաղկափոշին լրացնում ե սպիտակուցային նյութերն ու ծառայում օրգանիզմի կառուցման գործին։

Ծաղկափոշին մեղուն բերում ե իր յետևի վոտքերի վրա մանր գնդիկներով, լցնում ե բջիջների մեջ, գլխով հուպ ե տալիս, ամրացնում ու հետզհետե գործածում։ Հաճախ, յերբ ծաղկափոշով հարուստ հարմար ծաղիկներ չկան, մեղուն նրա բացակայության ժամանակ շատ ե նեղվում և վորդը տուժում ե։ Յերբեմն մեղուներն ստիպված են հավաքել բարդիների կեղևների վրայի սպիտակ փոշին, զանազան բույսերի տերևների ու ցողունների վրա գոյացած սնկային հիվանդություններից առաջացած սև նյութը, ալյուր և այլ հարմար նյութեր։ Այս դեպքում մեղվապահը կարող ե օգնության գա մեղվին. նա մի տաշտի մեջ մանր ալյուր ե լցնում ու մեղուները տանում են այդ ալյուրը ծաղկափոշու փոխարեն։ Ալյուրով լցված տաշտը պետք ե դնել արեկող տեղ։

Մեղուները հետևյալ գարնան համար նաև ծաղկափոշու պաշար են հավաքում։ Դրա համար ել մեղրը հանելիս ծաղկափոշով հարուստ շրջանակներից 2—3 պետք ե թողնել բնի մեջ՝ հաջորդ գարնան համար։

Ակնամոմ

Ծառերի բողբոջների վրա լինում ե մածուցիկ նյութ, վորը մեղուն հավաքում ե իր յետևի վոտքերի վրա ու բերում ե փեթակը։ Դա կոչվում ե ակնամոմ։ Յենթադրում են նաև, վոր մեղուն ինքն ել ե պատրաստում այն, ուտելով ծաղկափոշին և մշակելով այն իր ստամոքսում։

Ակնամոմը շաղախի դեր ե խաղում, վորով մեղուն սվաղում ե իր բնի բոլոր ավելորդ անցքերը և խորդուբորդ տեղերը, փոքրացնում արկանոցը, իսկ հաճախ, յերբ հարկ ե լինում, սվաղում ե իր ամբողջ բնի ներսը (ծառի փչակը, ծառի խոռոչը)։

Մեղուն ակնամոմը գործ ե ածում նաև իր շրջանակներն ամրացնելու համար։ Հաճախ ակնամոմով ծածկում ե փեթակի ներսում գտնվող այնպիսի կողմնակի իր, վորն ինքը քաշել, դուրս

դցել չի կարողանում, ինչպես օրինակ քարի կտոր, մեծ թիթեռի մարմին, մուկ և այլն։

Մեղուն հաճախ իբրև ակնամոմ գործածում է նաև անիվների մազութը և դրանով սևացնում շրջանակները։ Յերբեմն վերցնում է նաև չամ փայտի խեժ, վորն արևի տակ չոր տախտակների միջից դուրս է տալիս։

Ակնամոմի արտադրության մեջ անհրաժեշտ է զանազան ներկեր պատրաստելու համար։

Ջուր

Մեղուն բերում է նաև ջուր։ Վորդի կերակրախյուսը պատրաստելու համար մեղվին բավական ջուր է հարկավոր։ Առվի յեզերքներից, կանգնած ջրերից, ընդհանրապես բաց տեղերից մեղուն ջուր է վերցնում ու բերում փեթակ։ Դրա համար էլ մեղվապահը հատուկ ուշադրություն պիտի դարձնի, վորպեսզի մեղվանոցին մոտիկ ջուր լինի, և, յեթե ջուրը հեռու յե, ինքը հոգ տանի ջրի մասին։ Անջուր տեղերում պետք է աշխատել հատուկ ամաններով բավականաչափ ջուր հասցնել մեղվին և ջրամանները միշտ ջուր ունենան իրենց մեջ, հակառակ դեպքում մեղուն շատ է նեղվում և վորդը տուժում է։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԵՂՐԱԲԵՐՔԸ ՅԵՎ ՄԵՂՐԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐԸ

Մեղուների յեվ բուսականության կապը

Մեղուներն և բույսերն իրար հետ կապված են շատ սերտ կենսական կապերով։

Կան հատուկ բույսեր, վորոնք կամ ամբողջովին և կամ մի վորոշ չափով կարիք ունեն միջատների միջամտությանը՝ իրենց փոշեվորումը և հետևապես բեղմնավորումն ապահովելու համար։ Մեղուներն իրենց թաթիկներով և մարմնի վրա յեղած մազիկներով ծաղկից-ծաղիկ տեղափոխում են ծաղկափոշի, վորը և ապահովվում է ծաղիկների բեղմնավորումը։

Միևնույն ժամանակ մեղուն իր կենսական պահանջներով կախում ունի այդ բույսերից, վորովհետև նրանցից վերցնում է նեկտար և ծաղկափոշի։

Նեկտարի արտադրությունը

Բույսերի նեկտարի արտադրությունը յենթարկվում է հետևյալ կանոններին.

1. կան բույսեր, վորոնք ընդհանուր առմամբ շատ նեկտար են արտադրում, գրեթե օրվա բոլոր ժամերին։ Իսկ կան այնպիսի բույսեր, վորոնք քիչ են արտադրում և այն էլ օրվա վորոշ ժամերին.

2. տաք և խոնավ օրերին բույսերը շատ նեկտար են արտադրում, մանավանդ յեթե գետնում նույնպես բավական խոնավություն կա։ Անձրևոտ և տաք տարիները մեղրաբերքը սովորաբար չափազանց առատ է լինում.

3. բարձր վայրերի բույսերն ավելի շատ նեկտար են արտադրում, քան դաշտային վայրերինը, վորովհետև լեռնային վայրերում օդն ավելի խոնավ է, քան ցածր վայրերում, արևի լույսն ավելի ուժեղ է, քան ներքևում, իսկ լույսը նպաստում է նեկտարի առատ արտադրությանը։

Գլխավոր յեվ օժանդակ մեղրատուներ

Գլխավոր մեղրատու բույսերը նրանք են, վորոնք առատ նեկտար են արտադրում և տվյալ վայրում բավական խիտ աճում են ու խոշոր տարածություններ բռնում։

Մի մեղրատու բույս, վորն առատ նեկտար է արտադրում, բայց այդ վայրում քիչ է տարածված, չի կարող համարվել գլխավոր մեղրատու բույս այդ վայրի համար։

Կան բույսեր, վորոնք մի վորոշ տեղում, կլիմայական և աշխարհագրական զանազան պայմաններում տարբեր չափով են նեկտար արտադրում։

Գլխավոր մեղրատուները սովորաբար ծաղկում և բերք են տալիս ամռանը և գլխավորապես ամառվա վերջերին, իսկ այն բոլոր մեղրատու բույսերը, վորոնք ծաղկում են գարնանը, ամառվա սկզբներին և աշնանը՝ նպաստում են մեղվի ընտանիքի զարգացմանը, յերբեմն միայն շատ քիչ ավելցուկ մեղր տալիս. այդ բոլոր բույսերը կոչվում են օժանդակ մեղրատու բույսեր։ Այդ թվի մեջ մտնում են պտղատու ծառերը և նրանց հետ միասին մի շարք կուլտուրական բույսեր։

Բայց յեթե այդ բույսերից կան այնպիսինները, վորոնք տվյալ վայրերում բավական տարածություններ են բռնում և ուժեղ ծաղկում են ամառվա ընթացքում, այդպիսի բույսերը կարող են համարվել գլխավոր մեղրատուներ (կորնգան և այլն)։

Մեղուների թռիչքը յեվ բերքի օգտագործումը

Մեղուն մեղրաբերքի ժամանակ օգտագործում է մի շրջանաձև տարածություն, վորի կենտրոնում գտնվում է մեղվանոցը, իսկ շառավիղը հավասար է 3 կիլոմետրի։

Աշխատանքի արտադրողականությունը կախված է հետևյալ հանգամանքներից.

1. բերքի վայրը ինչքան մոտիկ լինի մեղվանոցին, արդյունքն այնքան խոշոր կլինի։ Այդպիսով, յերբ բերքը մեկ ու կես կիլոմետրից ավելի հեռու յե գտնվում, մեղվանոցի արդյունավետությունը զգալի չափով պակաս է լինում.

2. քամիները խոշոր չափով խանգարում են մեղվի աշխատանքին։ Հաճախ յերկարատև քամիները կասեցնում են մեղվի ազատ թռիչքը, իսկ հանկարծակի հողմը բավական շատ մեղուներ է վոչնչացնում։ Համենայն դեպս, յերբ քամիներ կան, պետք է համարվել նրանց գլխավոր հոսանքներին, այսինքն մեղվանոցը դնել այնպես, վոր մեղուն դեպի բերք թռչելիս քամուն հակառակ լինի, իսկ բերքը բերելիս, յերբ բեռը ծանր է, հնարավորություն ունենա վերադառնալու քամու ուղղությամբ։

3. մեղվի թռիչքի տարածությունը պիտի ուղիղ լինի, այսինքն մեղվանոցի ու բերքի արանքը խոշոր պատվարներ չպիտի լինեն, օրինակ՝ բարձր բլուրներ կամ անտառներ.

4. խոր ձորերով հարուստ վայրերում մեղվանոցը ձեռնտու յե դնել ձորի մեջը, վորպեսզի մեղուն հեշտությամբ թռչի վերև, և վերևից բեռնով իջնի ներքև։

5. կան տեղեր, վորտեղ ձեռնտու յե մեղվանոցը զետեղել լեռնալանջին այնպես, վոր թե դեպի ներքև և թե դեպի վերև մեղրատու տարածություններով ապահովված լինի։ Դրանով մեղուները կօգտվեն ներքևում գտնված բերքերից, վորտեղ ծաղիկները ավելի շուտ են ծաղկում, իսկ հետագայում՝ վերևի բերքերից։

Հայաստանի մեղրատու բազան

Մեզ մոտ մեղուներն օգտվում են արոտատեղիներից, բնական խոտհարքներից, մրջնակներից, քարքարոտ տեղերից և խոպաններից (հարոսներից)։ Բերքի խոշորագույն մասն ստանում ենք այս տարածություններից։

Բացի այդ, շատ վայրերում ցանած տարածություններն իրենց մեջ բուսած մոլախոտերով, դրա հետ միասին նաև գյուղերի սահմաններում բուսած մոլախոտերը յերբեմն, բավական բերք են տալիս։

Կուլտուրական մշակույթներից կորնգանը, վիկը, բոստանները զանազան բանջարաբույսեր և ծամբակիներն (շատ յեղած դեպքում) զգալի բերք են տալիս։

Ընդհանրապես լեռնային վայրերն (ծովի մակերևույթից մոտ մոտ 1500-2000 մետր բարձրության վրա) ամենալավ մեղրատու վայրերն են, վորոնք նույնիսկ ամենաչորային տարիներն ապահովում են մեղվին թե պաշարով և թե ավելցուկ մեղրով։ Դրանից ցածր գտնվող վայրերը առատ բերք տալիս են միայն անձրևաշատ տարիներում, իսկ լինում են տարիներ, վոր մեղուն պաշարով հազիվ է իրեն ապահովում։

Մեղվաբուծության յեվ ուրիշ գյուղատնտեսական ճյուղերի կապակցությունը

Շատերը կարծում են, վոր անասնապահությունը և ուրիշ ճյուղեր մեղվաբուծությանն առհասարակ վնաս են տալիս։ Բայց դա սխալ պատկերացում ե։ Թե՛ արտերի ոգտագործումը թե՛ արհեստական խոտացանությունը և թե ընդհանրապես յերկրագործությունը կարելի յե այնպես կազմակերպել, վոր մեղուներն ավելի ոգտվեն, քան վնասվեն։

Դա առավելապես հնարավոր ե սոցիալիստական գյուղատնտեսության պայմաններում։

Բացի այդ, այժմ միանգամայն հնարավոր ե տարեցտարի հարստացնել ու լայնացնել մեղրատու բազան, տարածելով այնպիսի գյուղատնտեսական բույսեր, վորոնք ընդհանրապես ոգտակար են և անհրաժեշտ, միևնույն ժամանակ լավ մեղրատուներ են։

Այդպիսով, կարճ ժամանակում մեր մեղրատու բազան խոշոր չափով կարող ե աճել, հետևապես և ավելի խոշոր արդյունք տալ մեզ։

Մեր բնական մեղրատու բազան իր ամբողջ տարածությամբ և իր մեղրատու բուսականությամբ կարող ե՛ բավարարել մեծ քանակությամբ մեղվի ընտանիքների։ Մեղվանոցների դասավորությունը պետք ե համապատասխանի տեղի մեղրատու բազայի հնարավորություններին, այսինքն թե տվյալ վայրում ինչ քանակությամբ մեղվանոցներ և ամեն մեկ մեղվանոցում ի՛նչ քանակությամբ ընտանիքներ կարող են լինել։

Մեղրաբերքով հարուստ տեղերում ձեռնտու յե մեղվանոցները մոտիկ դնել, մեկ և կես կիլոմետրից վոչ ավելի, իսկ մեղվանոցում ընտանիքների թիվը լավ կլինի, յեթե 250-ից չանցնի։

Յերբ տվյալ վայրում մեղրատու տարածությունները ընդհատվում են և մեջտեղերում կան անպետք տարածություններ, ուրեմն այդպիսի տեղերում ձեռնտու յե մեղվանոցներն իրարից ավելի հեռու դնել։

Մեղրատու բույսեր

Այստեղ բերում ենք առավել աչքի ընկնող մեղրատու բույսերի ցուցակը՝ իրենց գրական անուններով և տեղական մի քանի անուններով, ապա տալիս ենք կարճ բնութագրումը նրանց ծաղկման ժամանակի, աճեցման տեղի և այլ պայմանների մասին։

1. Աստղաշուշան

Մի քանի տեսակները դեղին ծաղիկներով, թելանման տերևներով աճում ե քարքարոտ (ղըռ) տեղերում, ծաղկում ե վաղ գարնանը, ոժանդակ մեղրատու յե, տալիս ե առատ ծաղկափոշի։

2. Խարածաղիկ կամ գորտնուկ

(Ջանգյուլում) դեղին փայլուն ծաղիկներով, սնամեջ ցողուններով, լայն կտրտված տերևներով բույս ե։ Ծաղկում ե գարնանը՝ խոտհարքներում, չիմաններում, մրջնակներում, ոժանդակ մեղրատու յե, ունի առատ նեկտար և ծաղկափոշի։

3. Աղբաղբուկ

Մանր, դեղնավուն ծաղիկներով, խավիվ, մանրիկ խիտ տերևներով բույս ե. ծաղկում ե գարնան վերջերին, առատ կերպով աճում ե գյուղի սահմաններում, աղբակույտերում և զանազան անպետք տեղերում։ Ոժանդակ մեղրատու յե, խոնավ յեղանակներում տալիս ե առատ ծաղկափոշի ու նեկտար։

4. Նվարդուկ

(Իծի մորուք) լայնափունջ, սպիտակ, մանր ծաղիկներով բույս ե, ծաղկում ե գարնան վերջերին՝ գյուղի սահմաններում, մրջնակներում, ոժանդակ մեղրատու յե, ունի առատ նեկտար և ծաղկափոշի։

5. Շնկոտեմ

(Ջրակոտեմ) սպիտակ, փունջ ծաղիկներով ցածրիկ բույս ե, ծաղկում ե ամառվա սկզբներում, փոքր ի շատ ե խոնավ տեղերում, առվի յեզրերին, չիմաններում։ Խիտ չի աճում, ոժանդակ մեղրատու յե, ունի նեկտար և ծաղկափոշի։

6. Խտուտիկ

Դեղին՝ բարդածաղիկ, գետնի վրա փռված տերևներով, ծաղկում ե գարնանը և ամռանը, ինչպես նաև աշնանը, աճում ե ամեն տեղ, ոժանդակ մեղրատու յե, ունի ծաղկափոշի և քիչ նեկտար։

7. Շաղգմուկ

Ծաղկում ե գարնան վերջերին և ամառվա սկզբներին, բավական բարձր ճյուղավորված բույս ե, դեղին, փնջավոր ծաղիկներով, աճում ե գյուղի սահմաններում, այգիներում, ցանքերի մեջ, ոժանդակ մեղրատու յե, խոնավ յեղանակներին տալիս ե բավականին ծաղկափոշի և նեկտար։

8. Մանանեխ

(Խարդալ) բաց-դեղնավուն ծաղիկներով բույս ե. ծաղկում ե ամռանը՝ ցանքերի մեջ, գլխավորապես կտավհատի արտերում, հաճախ ամբողջ արտը ծածկում ե իր դեղին գույնով և աչքի յե ընկնում հեռվից։ Ուժեղ ոժանդակ մեղրատու յե, ունի առատ նեկտար և քիչ ծաղկափոշի։

9. Դաշտի փրփուր

(Փոքր ջամմուկ) լայնափունջ, մանր, սպիտակ ծաղիկներ ունի, ծաղկում ե ամառվա սկզբներին. մեծ քանակությամբ լինում ե ցանքերի կանաչներում, խոզաններում, հաճախ համատարած սպիտակ ծածկոցով ծածկում ե կանաչը. ունի առատ նեկտար։

10. Ճափրուկ, ճափուկ

Չափազանց տարածված բույս ե, արմատի վրա բազմաթիվ դեպի վեր ցցված ցողուններով, ծաղիկները դեղնավուն, շատ մանր, ցցված ծաղկեփնջերով։ Ծաղկում ե հունիսի վերջերից հուլիսին, գլխավոր մեղրատու յե — առատ նեկտար և ծաղկափոշի։

11. Կատվի անանուխ

(Փիշիկ ոթի) մի քանի տեսակները, բաց և մուգ-կապտավուն ծաղիկներ ունեն, ծաղկում ե ամռանը քարատակերում, ղըռ տեղերում, յերբեմն բռնում ե խոշոր տարածություններ, իսկ նրա մի տեսակը ներքևի գոտիներում հաճախ խիտ աճում ե ու խոշոր տեղ բռնում, գլխավոր մեղրատու յե, ունի առատ նեկտար։

12. Վայրի կորնգան

Մի քանի տեսակները բավականին նմանություն ունեն ցանովի կորնգանին, ծաղկում են ամռանը, աճում են գրեթե ամեն տեղ՝ խոտհարքներում, միջնակներում, ցանքերի մեջ։

Գլխավոր մեղրատու բույս ե, խոնավ տարիներն առատ նեկտար ե տալիս, իսկ չորային տարիները հաճախ շատ քիչ բերք ե տալիս։

13. Յերեքնուկներ

Մի քանի տեսակները սպիտակ և վարդագույն են, ծաղկում են ամռանը փոքր ի շատե խոնավ տեղերում և խոնավ տարիները խոշոր բերք են տալիս, գլխավոր մեղրատու յե, ունի առատ նեկտար։

14. Խոլորձ

(Գիլուլ) կապտավուն ծաղիկներով, մանր, խաժ տերևներով, ծաղկում ե ամռանը ցանքերում, խոզաններում, յերբեմն ձեռնարոտներում, խոնավ տարիներն առատ բերք ե տալիս, գլխավոր մեղրատու յե։

15. Տերեփուկ

(Փնջակոկոր, Թանթանի ծաղիկ) ծաղկում ե ամռանը՝ ցանքերում, խոզաններում, յերբեմն միջնակներում, հաճախ վառ կապույտ ծածկոցով ծածկում ե ցանքերը և խոզանները, իսկ խոնավ տարիները լավ բերք ե տալիս, գլխավոր մեղրատու յե, ունի առատ նեկտար և քիչ ծաղկափոշի։

16. Տատասկափուշ

(Զորաքքյաան) ծաղկում է ամառը, կապտավուն բարդածաղիկ է, աճում է ցանքերի մեջ, խոզաններում։ Օժանդակ մեղրատու յե, ունի նեկտար և քիչ ծաղկափոշի։

17. Իշառվույտ

Դեղին, մանր ծաղիկներով բույս է, ծաղկում է ամառը՝ ավազոտ, փուխր հողերում, գլխավոր մեղրատու յե, ունի առատ նեկտար ու ծաղկափոշի։

18. Բռնձուկ

(Կորնգանի տեսակը) բավական խոշոր, սպիտակ ծաղիկներով բույս է, ծաղկում է ամառը՝ անջրդի արևկող տեղերում, ցանքերում, խոզաններում գլխավոր մեղրատու բույս է, ունի առատ նեկտար և քիչ ծաղկափոշի։

19. Եղնջմայր

Տերևները նման են յեղնջի տերևների, սպիտակ ծաղիկներով, ծաղկում է ամառը խոնավ տեղերում, գյուղամիջում, քանակը քիչ է, ունի առատ նեկտար։

20. Ուրց

Սպիտակ կամ բաց կապտավուն ծաղիկներով, ծաղկում է ամառն անջրդի տեղերում, գլխավոր մեղրատու յե, տալիս է բավական շատ նեկտար։

21. Ծծուկ

(Ծծմոր) կապտավուն, կախ ընկած ծաղիկներով, բավական լայն տերևներով բույս է, աճում է խոնավ վայրերում, գյուղամիջում, քանակը քիչ է, ունի առատ նեկտար։

22. Եղեսպակ

(Տարփակ, պոպոկլոնձ, շալֆեյ) մի քանի տեսակները, վորոնցից գլխավորն են յերկուսը՝ խամի ու վարի, կապտավուն

ծաղիկներ ունեն, ծաղկում են ամառվա վերջերին, մի տեսակը տարածված է ցանքերում, խոզաններում, փուխր սարալանջերում, մյուսը՝ միջնակներում, խոտհարքներում, ամուր տեղերում։ Գլխավոր մեղրատու բույսեր են, դիմանում են ամեն պայմաններին, տալիս են Հայաստանի մեղրի արտադրանքի խոշորագույն մասը, ունեն առատ նեկտար։

23. Աբեղախոտ

Բարձր բույս է, մանր սպիտակ կամ կապտավուն ծաղիկներով, ծաղկում է ամառը միջնակներում, առուների յեզրերին և գյուղի սահմաններում, քիչ քանակությամբ է լինում, ունի առատ նեկտար։

24. Կեղծ յասման (տեուկրիում պոլյում)

Մանր, սպիտակ ծաղիկներով, սպիտակավուն տերևներով և ցողուններով, կարճ թփուտային խոտաբույս է, բուսնում է անջրդի վայրերում, հաճախ մեծ քանակությամբ, ծաղկում է ամառվա վերջերին, դիմանում է ամեն պայմանների, տալիս է խոշոր բերք, գլխավոր մեղրատու յե, ունի առատ նեկտար։

25. Խաղերան (դաշի խնձորախոտ)

Կարմրավուն ծաղիկներով բույս է, ծաղկում է ամառը բլրալանջերին, անջրդի տեղերում, ունի առատ նեկտար։

26. Առյուծագի

Յեղինջանման բույս է, կտրտված տերևներով, մանր ծաղիկներով, ծաղկում է ամբողջ ամառը՝ գյուղամիջում, արտի կողքերին, ավերակների մեջ. քանակը քիչ է, ունի առատ նեկտար։

27. Ջամջամ (զոնբիկ)

Լայնափունջ, մանր սպիտակ ծաղիկներով, բավական բարձր ճյուղվորված բույս է, ծաղկում է ամառը խոզաններում, յեր-

քեմի ցանքերում, ուժեղ օժանդակ բույս է, ունի առատ նեկտար։

28. Ծաղիկ-ավել

Անթառամ բույս է՝ բաց-մանուշակագույն ծաղիկներով, քիչ տերևներ ունի և ճյուղավոր, մերկ ցողուններ, ծաղկում է ամառվա վերջերին անջրդի վայրերում, ուժեղ օժանդակ բույս է, առատ նեկտար է տալիս առավոտյան ժամերին և քիչ ծաղկափոշի։

29. Բոխի (ղանձրափի)

Երկու ձև ունի՝ մեծ և փոքր, սպիտակավուն բարդածաղիկ է, ծաղկում է ամառվա վերջերին՝ չոր, անջրդի տեղերում, միջնակներում, ուժեղ օժանդակ բույս է, ունի նեկտար և ծաղկափոշի։ Մի տարանձին ձևը (փոքրը) ծաղկում է ցածր գոտում սեպտեմբեր ամսին և բավական խոշոր բերք է տալիս։

30. Վայրի կանեփ

Ծաղիկները մանր սպիտակավուն են, ծաղկում է ամառվա վերջերին, թփուտային միջակ բարձրության բույս է, աճում է անջրդի տեղերում, գլխավոր մեղրատու բույս է, ունի առատ նեկտար, դիմանում է ամեն պայմաններին։

31. Խունդաս (տղեկասիկ)

Վառ-դեղին բազմաթիվ ծաղիկներով ճյուղավորված բույս է, ծաղկում է ամառվա վերջերին։ Անձրևային տարիներին նա աճում է խոշոր քանակությամբ և փարթամ, ունի շատ առատ ծաղկափոշի։

32. Աղցպանգ (բարբող)

Բուսնում է գյուղի սահմաններում, անպետք տեղերում, ծաղկում է ամռանը, քիչ քանակությամբ է լինում, ունի առատ նեկտար և ծաղկափոշի։

33. Կռատուկ (կոծոծ, բիբրաղ)

Մեծ բույս է՝ խոշոր տերևներով, կապտավուն փշավոր բար-

դածաղիկ է և աճում է գյուղի սահմաններում, այգիներում, միջնակներում, ծաղկում է աշնան սկզբներին. ունի առատ նեկտար։

34. Բաղեղ գռի

Սպիտակ, զանգակի նման ծաղիկներով կարճ բույս է, գետնատարած, աճում է անջրդի տեղերում, ծաղկում է ամռանը. խոնավ տարիներին ուժեղ օժանդակ բերք է տալիս, ունի նեկտար և ծաղկափոշի։

35. Դաստառակի (կազեծաղիկ, կազ)

Բաց մանուշակագույն ծաղիկներով, ցածրիկ բույս է, աճում է խոտհարքներում, միջնակներում, բնակության մոտիկ խոտավետ տարածություններում, պարարտ հողերում, ուժեղ օժանդակ մեղրատու է, ծաղկում է գարնան վերջերին և ամառվա սկզբներին, ունի նեկտար և ծաղկափոշի։

36. Մկծվուկ (մեխակենի)

Սպիտակ ծաղիկներով բույս է. աճում է ամեն տեղ, բաց, անպետք տեղերում, յերբեմն և ցանքերում ու խոպաններում, սիրում է փուխր ու պարարտ հողեր, առավոտյան ժամերին բավական բերք է տալիս, ապա ծաղիկները թառամում են, այս բույսը քիչ քանակությամբ է լինում, օժանդակ մեղրատու է։

37. Դլփնածաղիկ

Ծաղկում է ամռանը. ծաղիկները սպիտակ են, բույսը բավական բարձր է. քիչ քանակությամբ է լինում, ունի առատ նեկտար, օժանդակ մեղրատու է։

38. Միաբույս (տերուկ, անձխաս, մամուվոչիկ)

Մանր, կարմրավուն ծաղիկներով, մանրիկ խավով տերևներով բույս է, ծաղկում է գարնան վերջերին, փուխր, վարած, կամ փորած տեղերում։ Խոնավ տարիներին առատ օժանդակ բերք է տալիս,

39. Գազ (լոռաշուն, ճոռ)

Խիտ փշավոր, գետնին կպած բույս է դեղին՝ ծաղիկներով ծաղկում է ամռանը, արևկող, անջրդի սարալանջերին. ուժեղ օժանդակ մեղրատու բույս է, ունի առատ նեկտար։

Բացի այս վայրի խոտաբույսերից, մեզ մոտ՝ Հայաստանում բավական խոշոր օժանդակ բերք են տալիս գարնան ընթացքում պտղատու ծառերի ծաղիկները. այդ ծառերն են՝ ծիրանին, խնձորենին, տանձենին, բալենին, կեռասենին, դեղձենին, ալչան, գամբուլը և այլն, իսկ անպտուղ ծառերից—թեղին (ղարաղաջ, չինար), բարդու անճոռնի տեսակը, ուռենի և թթենու վորոշ տեսակները։

Բանջարաբույսերը, շատ յեղած դեպքում, ամառվա ընթացքում բավական բերք են տալիս, գլխավորապես վարունգը, սեխը, դդումը, ձմերուկը և բանջարանոցային մի շարք բույսեր։

Տեխնիկական մշակույթներից ամառվա վերջերից մինչև աշնան կեսերը բավական բերք տալիս են բամբակենին և վորոշ տեղերում արևածաղիկը և այլն։

Անտառոտ և թփուտային վայրերում յերբեմն խոշոր դեր են խաղում զանազան վայրի ծառեր ու թփեր, ինչպես օրինակ՝

40. Լոռենի

Յերբեմն բավական առատ բերք է տալիս, առանձնապես չորային տարիները, յերբ դաշտային ծաղիկները քիչ բերք են տալիս։ Ռուսաստանի պայմաններում համարվում է գլխավոր մեղրատու, իսկ մեզ մոտ քմահաճ մեղրատու յե և յերկրորդական դեր է խաղում։

Ծաղկում է հուլիսի յերկրորդ կեսին։

Մյուս ծառերից բերք են տալիս նեկտարով և ծաղկափոշով—տխկի, սզնի (ցաքոկի, ժամուտանձ), զկռենի, հոնի, նշենի, պտղատու ծառերի վայրի տեսակները—խնձորենի, չլորենի և ուրիշ։

41. Թփեր

Մոշ, մորենի, գժնիկ, հաղարջենի և ուրիշ։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

ՄՈՄԱԹԵՐԹԸ, ՆՐԱ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ՎՈՐԱԿԸ ՅԵՎ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ՁԵՎԸ

Պատրաստելու ձևը

Հալված և կաղապարված մոմը մոմաթերթի արհեստանոցում հալում ենք ջրի հետ խառն, հատուկ կաթսաներում ու մաս յերկու ժամ յեռացնում, վորովհետև կարող է ամեն տեղից հավաքված այդ մոմերի մեջ վարակ լինել։

Յեռացնելու ժամանակ հիվանդության բացիլները վոչնչանում են ու մոմն ախտահանվում է։ Յեռացող մոմը լցնում ենք մոմ զտող անոթի մեջ, վորը կոչվում է տերմոս։ Դա մի լավ անագած պղնձե կաթսա յե մի մեծ թիթեղե ամանի (չանի) մեջ դրած, նրա շուրջը լցնում ենք յեռացող ջուր, իսկ այդ չանի շուրջը լիք լցված է ղարման (մեծ արկղի մեջ)։

3—4 օր մոմը մնում է տերմոսի մեջ հալված վիճակում ու ամբողջ կեղտը նստում է տակը և մոմը լավ զտվում է։

Պղնձե շերեփով (անագած) զտված մոմը վերցնում և լցնում ենք մի կաթսայի մեջ ու առանց ջրի յեռացնում կրակի վրա (չոր հալք)։

Այդ մոմը թողնում ենք հովանում է մինչև 85 աստիճան Ցելսիուսի ու հետո լցնում տափակ թիթեղե կաղապարների մեջ, սառեցնում ու ստանում մեկ սանտիմետրից ավելի հաստություն ունեցող մոմասալեր (պլիտկաներ)։

Այդ մոմասալերը դնում ենք մի ցուրտ տեղ ու մի քանի օր պահում ուժեղ ցրտի տակ (0-ից ցածր), վոր լավ ամրանան։ Յեթե յեղանակը տաք է, գոնե յերկու օր պետք է պահել սառցաջրի մեջ։

Սառեցրած սալերը դնում ենք թիթեղե ավազանի մեջ լցրած գոլ ջրի մեջ, վորը պետք ունենա 40—45 աստիճան տաքություն։ Այդ ջուրը միշտ փոխում ենք ու տաք ջուր ավելացնելով պահում ենք միևնույն աստիճանում, վորից հետո նրանք

այնքան են փափկում, որ հնարավոր է անցկացնել հարթ գլանների միջով: Ստացվում են յերկար ու հարթ թերթեր, որոնք լավաշ հացի նման կախում ենք հատուկ շինած փայտե ձողերի վրա, որտեղ նրանք չորանում և հովանում են: Յեթե տեղը ցուրտ լինի, ավելի լավ:

Մի քանի օր այդպես կախված մնալուց հետո, ջուր ենք տաքացնում ու 35 աստիճան տաքություն ունեցող ջրի մեջ փափկացնում ենք այդ թերթերը:

Այդպես փափուկ ձևով անց ենք կացնում փորագրած գլանների միջով ու դարձնում մոմաթերթի յերկար թերթեր, որոնց աստիճանաբար փաթաթում ենք փայտե գլանի վրա: Այդ թերթը փռում ենք յերկար տախտակի վրա ու ծալելով հետզհետե գոյացնում մի հաստ շերտ: Հետո այդ շերտը կտրտում ենք դանակով շրջանակի չափով (440 մմ) ու արդեն մոմաթերթը պատրաստ է:

Մոմաթերթի տեսակները յեվ որակը

Մոմաթերթ պատրաստելու գլաններն ամրացված են հաստ ու ծանր վոտների վրա: Կան սովորական բջիջներով գլաններ, կան և ավելի խորը բջիջներ ունեցող գլաններ: Խոր բջիջ ունեցող մոմաթերթն ավելի շատ մոմ է պահանջում, բայց չափազանց հեշտացնում է մեղվի աշխատանքը և նա արագ կառուցում է չեչը:



Նկ. 89 Մոմաթերթ պատրաստելու գլաններ

Առայժմ քանի մոմի քանակը շատ չի, մենք գործ ենք ածում սովորական բջիջներով մոմաթերթ: Մոմաթերթը պատրաստված է այնպիսի հաստության, որ մի կգ-ի մեջ լինի մինչև 12 հատ Դադանըլատի և 15 հատ Լանգստրոտի թերթ: Այդպիսի մոմաթերթը գործ ենք ածում բներում, իսկ վերնահարկների համար պահանջվում են ավելի բարակ թերթեր, որոնցով թե մեղրահացն ավելի նուրբ է լինում և թե մոմն է խնայվում:

Բնի շրջանակների համար այդպիսի բարակ մոմաթերթ չենք կարող գործածել, որովհետև շոգից ու մեղուների ծանրությունից ձգվում, փչանում է ու չեչը լինում է անկանոն, բռաբջջավոր:

Միայն հաստությունը չի, որ կարևոր է մոմաթերթի ամրության համար: Վերև նկարագրված մոմաթերթ պատրաստելու ձևը հենց նրա համար է, որ այդ ձևով պատրաստած մոմաթերթերն իր ամրությամբ աչքի յեն ընկնում ու շուտ չի փչանում:

Լավ մոմաթերթի արտաքին տեսքը թափանցիկ է (պղտորություն չունի), բաց գույնի, առանց դանազան բծերի (պղպջակների, փորվածքների և այլն), բջիջները կանոնավոր են, չձգված: Առանձնապես պետք է հետևել, որ մոմաթերթի բջիջները ձգված չլինեն:

Պահպանումը

Կտրտած ու իրար վրա դարսած մոմաթերթը մի որոշ ժամանակ պիտի չոր շենքում պահել, մինչև միջի խոնավությունը վերանա: Հատուկ արկղներ պիտի շինել մեկ կամ մեկ ու կես փութ տարողությամբ ու դարսել մեջը: Լավ կլինի թղթով փաթաթել, որ փոշուց շատ չկեղտոտվի:

Մոմաթերթը բարձր սյուներով կարելի յե շարել իրար վրա. շոգ ժամանակ զգույշ պիտի վարվել, որովհետև հեշտությամբ փչանում է ու կպչում իրար, բջիջները ձգվում են և այլն: Կարելի յե տեղափոխել ուր հարկն է արկղի մեջ պարփակված ու կիպ տեղավորված լինելու դեպքում: Ձմեռը լավ մնում է ու տարիներ շարունակ կարող է մնալ առանց փչանալու: Ցրտից ու հնությունից գույնը փչանում է ու բորբոսի տեսք ընդունում: Բայց դա նշանակություն չունի, այդպիսի մոմաթերթը կարելի յե մի քիչ պահել արևի տակ, որից հետո նա կընդունի իր առաջվա թարմ և մաքուր տեսքը:

Հին և ցրտի տված մոմաթերթը հեշտությամբ փշրվում, փչանում է ձեռքի մեջ: Այդ մոմաթերթն ավելի դիմացկուն է լինում, քան նույն տարվա պատրաստածը:

Մոմաթերթի գործածելու ձևը

Մոմաթերթը կտրվում է 440 մմ յերկարության, այսինքն այնքան, որ դադանըլատի շրջանակի ամեն կողմից մեկ սանտիմետրի չափ ավելանա:

Շաբլոն յեվ ուրիշ պարագաներ

Շրջանակին մոմաթերթ փակցնելու համար անհրաժեշտ է մի տախտակե կաղապար հետևյալ չափերով՝ յերկայնքը 412 մմ, հաստությունը 13 մմ, լայնությունը—դադանըլատինը 250 մմ, իսկ լանգստրոտինը՝ 200 մմ։ Այդ տախտակի ծայրերին տակի կողմից մեխում ենք տախտակի յերկու կտոր, վորպեսզի նրանք թույլ չտան շաբլոնը ծռվելու և միևնույն ժամանակ շրջանակը շաբլոնի վրա հագցնելիս հենվի նրանց վրա։ Մոմաթերթը փակցնելու համար գործ ենք ածում Ադալյուկի հոլինը կամ գլանը և Վուտրեյի խթանը։

Նկ. 40 Ադալյուկի գլան (հոլին)

Բացի այդ, փակցնելու ժամանակ անհրաժեշտ է մի պրիմուս կամ կերոսինկա. յեթե պրիմուս չկա, պիտի կրակ անել։

Շրջանակ մեխելը

Շրջանակը մեխվում է համապատասխան չափով պատրաստված փայտե ձողիկներից, վորոնք ստացվում են փայտամշակման գործարաններից։ Շրջանակին անհրաժեշտ է խփել 10 մեխ, վորոնց ամենալավ չափն է՝ հաստությունը 2 մմ, յերկարությունը 30 մմ։ Յերկու հատ մեխ խփում ենք վերևի ձողիկի վրայի կողմից, այնպես վոր մեխը գնա կողքի պլանկայի մեջը ու վերևից ներքև կողքի ձողիկներն ամրացնի ներքևի ձողիկի հետ։ 4 մեխ խփում ենք կողքի ձողիկներին այնպես, վոր ամեն մեկ ձողիկի վերևի գլուխն ամրանա վերևի ձողիկին՝ յերկու մեխով։ 4 մեխ էլ խփում ենք ներքևի ձողիկին, վորով կողքի ձողիկներն ամրանում են ներքևի ձողիկի հետ։

Շրջանակի ծակելը

Շրջանակը պետք է ծակել բզով, կամ ավելի լավ է հատուկ ծակիչով, վորով աշխատանքը շատ արագ է կատարվում։ Ծակիչը հարմար կերպով ամրացնում ենք սեղանի մի ծայրին ու շրջանակն անցկացնելով ծակիչի համապատասխան տեղով, մի քանի տեղից ծակում ենք սկզբում վերի ձողիկը, հետո նաև ներքևի ձողիկը։ Ծակիչն այնպես պիտի հարմարեցնել, վոր թե վերևի և

թե ներքևի ձողիկներն ուղիղ մեջտեղով ծակվեն և ծակերը մի ուղղության լինեն։ Յեթե ծակողը մի քիչ վարպետանա և աչքն ու ձեռքը սովորեցնի, ծակերը մոտավորապես իրարից հավասար հեռավորության վրա կանի և այնպես, վոր ներքևի ու վերևի ծակերը ուղիղ իրար վրա լինեն ու յերկաթալարը թեք չի ընկնի։ Թեք գցած յերկաթալարը լավ չի, վորովհետև մոմաթերթը փեթակի մեջ վորոշ չափով կձգվի, վորի հետևանքով մոմաթերթի մեջ տոպրակներ են գոյանում, իսկ ուղղահայաց լինելիս հավասար չափով ձգվում, իջնում է։ Շրջանակը պիտի ծակել 5 տեղից. կողքի յերկու ծակը մի քիչ մոտիկ պետք է լինի կողքի ձողերին, իսկ մնացած յերեքն իրարից հավասար հեռավորության վրա։

Բզի (թե ձեռքի և թե ծակիչի) ծայրը մի քիչ տափակացրած ու սուր պիտի լինի և ծակելիս բիզն այնպես պիտի ամրացնել, վոր տափակ և սուր ծայրը փայտը կտրելով մտնի մեջը և վոչ թե ճեղքի։

Մետաղալարեր

Մետաղալարով պատելու համար գործ է ածվում անագած (կլայեկած) փափուկ մետաղալար 27—28 համարի, վորը մի քիչ ավելի հաստ է, քան 30 համարի կարի թելը։ Մետաղալարը հարմար է գործ ածել մի փայտի վրա (կոճի) փաթաթած, վոր չխառնըվի։

Դժբախտաբար մետաղալարը մեզ հասնում է կաժերով (կլոր փաթեթ), վորը հեշտությամբ խառնվում է։ Այդ փաթեթներն ավելի լավ է քանդել փաթաթել կոճերի վրա, քան հենց այդպես գործածել, վորովհետև ավելի չարչարանք է լինում և հաճախ մեծ մասը փչանում է։

Մետաղալարն իր ծայրից բաց ենք անում մոտավորապես ինչքան հարկավոր է մի շրջանակի համար, ծայրն անց ենք կացնում առաջին ծակից, (վերևից կամ ներքևից), հետո դիմացի ծակից, ապա սրա կողքից և այս հետևողականությամբ դուրս բերում վերջին անցքից։ Այստեղ մետաղալարը մեկ անգամ փաթաթում ենք ձողիկին ու ծայրը յերկու անգամ փաթաթում ներսի կողմից ձգված մետաղալարին ու թողնում։ Այդ յերկու փաթեթը պիտի տալ, ինչքան կարելի յե, ձողիկին մոտիկ, վոր հետագայում խթանին չխանգարի։ Ամ-

թողնելով այդ ծայրը, ձախ ձեռքով ձգում ենք մետաղալարն իր դուրս ծայրից բռնած, շրջանակն ուղղահայաց բռնում ենք կողքի վրա ու բզի կոթով կամ ուրիշ կոկ փայտի կտորով ներքևից սկսած քսում ենք ձգված լարերին մի քանի անգամ։ Այդպիսով, ամրացված ծայրերից սկսելով մետաղալարի հորիզոնական ձգված մասերը թե հարթում, ուղղում ենք և թե վերևի մասը հարթելիս ներքևինը ձգվում-ամրանում է, որով ամբողջ լարն է ամրանում, մանավանդ որ ձախ ձեռքով մենք միշտ ձգում ենք նրա ծայրից։ Եթե այս ձևով լավ չի ձգվում, պետք ուղղակի ձեռքով ձգել ու ամեն մեկ մասն առանձին ամրացնել, սկսելով ամրացված ծայրի կողմից։

Երբ մետաղալարը բավական ձիգ է ու թույլ, ծամռված տեղեր չունի, մի տակ փաթաթում ենք ձողիկին, մեջը հանգույց գցում, կտրում ենք ու ծայրն ամրացնում հենց այդտեղ։ Կարելի է նաև մետաղալարն առաջուց չափած կտորներով կտրել և ամեն մեկ կտորը մի շրջանակի համար բանեցնել։ Միայն պետք է աշխատել, որ շրջանակը լարելու ժամանակ մեջը հանգույց չլինի, որովհետև այդ հանգույցի տեղը հեշտությամբ կտրվում է։ Շրջանակի լայնքով (յերկարությամբ հորիզոնական) լարերը ցանկալի չեն, որովհետև մոմաթերթի մեջ տաշքանքներ են գոյանում։

Մոմաթերթ փակցնելը

Այս աշխատանքը կատարելու համար պրիմուսը վառում ենք, գլանն ու խթանը հարմարեցնում ենք թույլ բոցի վրա, որ տաքանա։ Շարլոնի յերեսին մի քիչ սառը ջուր ենք քսում մի կողքին դրած ջրի ամանից։ Մոմաթերթը դցում ենք շարլոնի վրա այնպես, որ յերեք կողմից մեկ-մեկ սանտիմետր չափ յեզրերն ավելանա շարլոնի կողքերից, իսկ 4-րդ յեզրը հավասար լինի շարլոնի ներքևի կողին։

Մոմաթերթի յեզրերի այդ ավելցուկները ծալում ենք ներքև՝ շարլոնի կողերի հետ ու շրջանակն այնպես հագցնում շարլոնի վրա, որ մոմաթերթի ծալված յեզրերը կիպ կպչեն շրջանակի կողքերի և վերևի ձողիկներին։ Շարլոնն այն չափով ենք շինում, որ շրջանակն այդ ձևով վրան հագնելիս, ներքևի ձողիկի վրայից ազատ տարածություն սմ մինչև մեկ սանտիմետր, այսինքն փակցրած մոմաթերթը շարլոնի հետ միասին հավասար լինելով, ներքևի ձողիկից մեկ սանտիմետրի չափ բաց սմ։ Այդ տարածությունն անհրաժեշտ է, որպեսզի մոմաթերթի ներքևի յեզրը կիպ չիջնի ներքևի ձողիկի վրա, որովհետև յերբ մոմաթերթը ձգվում է տոպրակ է գոյանում ու փչանում։

Շրջանակն այդ ձևով շարլոնի վրա ամրացնելով, տաքացրած խթանը յերկու անգամ վերևից ներքև և յետ ենք տանում-բերում լարի վրայով, որպեսզի լարերը թաղվեն մոմաթերթի մեջ ու ամրանան այնտեղ. ապա խթանը նորից դնում ենք կրակի վրա։ Շարլոնի վրայից շրջանակը մոմաթերթի հետ միասին վերցնում ենք (սկզբից շարլոնը մի քիչ պետք թրջել, որ մոմաթերթը չկպչի տախտակին) ու տաքացրած գլանով մոմաթերթի ծալած յեզրերը լավ ամրացնում ենք շրջանակի ձողիկներին։ Թե խթանով և թե գլանով այնպես պետք անել, որ մոմաթերթը չձգվի, չկտրըվի, չծածկվի և կիպ. ամուր ու ուղիղ հարմարվի շրջանակի մեջ։



Նկ. 41. Մոմաթերթի փակցնելը շարլոնի վրա

Պետք է ասել, որ մեզ մոտ նույնիսկ հին մեղվապահներից շատերը շրջանակ մեխելը, լարելը և մոմաթերթ փակցնելը համարում են ոչ այնքան կարևոր գործ և հաճախ չեն կարողանում կանոնավոր կերպով կատարել այն։

Վերնահարկի և սեկցիոն շրջանակների համար նույնպես պետք համապատասխան չափսի տախտակներ (շարլոններ) կտրել ու մոմաթերթի կտորները նրանց վրա հարմարեցնելով այնպես փակցնել շրջանակներին, որ ներքևի կողմից մոմաթերթը մի փոքր բարձր սմ։ Այստեղ տարբերությունն այն է, որ այդ շրջանակներին մետաղալար չենք անցկացնում։

Մոմաթերթած շրջանակների պահպանումը

Զափազանց կարևոր է, որ մոմաթերթը փակցվի շրջանակներին նախքան բերքն սկսվելը և յեթե դա հնարավոր է նույնիսկ ձմեռվա ընթացքում կատարել այդ աշխատանքը։

Պետք է հաշվի առնել և մեղվանոցի ընտանիքների թվի համապատասխան եվ պատրաստել բավարար քանակությամբ շրջանակներ։

Փակցրած շրջանակները մեծ խնամքով պետք պահել, որ չփչանան։ Ամենից լավ ամանը կորպուսն է։ Պետք է կորպուսների մեջ դարսել 3—4 կորպուս իրար հետ ամրացնել ու այս ձևով պահել։

Ց Ա Ն Կ

1. Մեղվաբուծություն 5
2. Մեղվի բնական պատմությունը 13
3. Փեթակն ու մյուս ինվենտարը 35
4. Գարնան աշխատանքները մեղվանոցում 52
5. Մեղվի ընտանիքի զարգացումը և խնամքի ձևերը 78
6. Մայրաբուծություն 83
7. Կթոցները շրջանակավոր փեթակների մեջ փոխադրելը 110
8. Մեղվի ընտանիքների բազմացումը 117
9. Մեղվի հիվանդությունները՝ վնասատուները և պայքար նրանց դեմ 136
10. Քոչվոր մեղվաբուծություն 158
11. Գլխավոր բերքի օգտագործումը 170
12. Ձմեռելու նախապատրաստական աշխատանքները . 187
13. Մեղվի ձմեռելը 195
14. Մեղվի արտադրած նյութերը, նրանց նշանակությունը, որակը և պահպանումը 211
15. Մեղրաբերքը և մեղրատու բույսերը 223
16. Մոմաթերթը, նրա պատրաստումը, որակը և գործածելու ձևը 235

100

ՀՀ Ազգային գրադարան
NL0977295

ЛИБ. 1936

ԳԻՆԸ 3 ՌՈՒԲ.

11
27205

А. Т. АВАКЯН

ПЧЕЛОВОДСТВО

СЕЛЬХОЗГИЗ — ЭРИВАНЬ 1935